Կոփեալ վազերբն 'ի կառափրն գաղանին , ճնղբեալ յերկուս ,  
Չայր եւ ըզձի փահամուռ արեան թաւալ ապր ընդ երկիր :

Բայց յանհուն խուժանէ հրոսոզ սկայիչըն տաքնափառք  
Դիմելոց նիզակաճօճ երկայն հացեօքըն սպառնալեք ,  
Եւ զի տեսին իսկ խորտակեալ ըզբօրութիւն գընդաց իւրեանց  
Չվարտամայ եւ զՊարուրայ յերկոսին թեւըս բանակին ,  
Հարկէին վերջոտնել , եւ քան զանձանցըն փրթութիւն  
Չանձկալի մարմին եզբօրըն պահպանեալ հանել յիւրեանս .

Եւ հասեալ մինչ 'ի վրտակն էին անցեալ իսկ ըզնովաւ :  
Տխտանեանք ըզհետ մըտեալ թորգոմացի քաջորերոյն ,  
Ոչ սակաւ հարանս եւ անդ ընգունէին հըզօր բազկաց  
ՅԱրմենեակայ եւ խոռայ, զի յետս ընդգէմ մաքառէին  
Ձգաջաւանի կործարն տըւեալ հարազատին ամուր պատնէշ :

Իսկ նոցա՝ յազթութեամբն խրոխասացեալ, կամէին ոչ  
Լքբանեւ 'ի ձեռաց ըզյաջողուած բազգին իւրեանց ,  
Այլ հալածեւ ըզհայկեանսն տագնապաւ մինչեւ 'ի բուն :  
Յերեսաց հայկին եւեթ էին 'ի միասն կասկածողք ,  
Գուցէ առիւծըն նընջեալ յանկարծ ըզբուն թօթափիցէ :  
Մեղէն ահա փախըստեայք 'ի ձախտէն հասեալ հայկայ ,  
Ըզբարթնուլ գիւցազինն եւ այլ քան զայն ինչ մեծամեծ  
Դոյժ արկին , ըզպարտութիւն յուգազանեանց եւ ըզխորուստ ,  
Եւ զանշուշտ գարձն առ նոսա նովին հրաշունչ սրբամըտութեամբ :

Ձայս ամեալ Բագ ըզմըտաւ, եւ զի տուընջեան ջահ լուսատու  
Ընդ երեկըս խոնարհեալ՝ տարածամեալ էր օրն 'ի կռիւ ,  
Եւ բազում զօրավարք իւր գանձովէրք յոգիսն յեցեալք ,  
Ըջտեղի կալաւ առ ջրոյն , ազգ ետ փողոց 'ի գուլ՝ ու'ի գարձ :  
Հայկազունք եւ վրտատմեանք ոգի բերեալ գան եւ նոքա ,  
Բայց խուժան խոանամբոի՝ բեռամբ թաղծեալք մեծ գիտկան .  
Յոյց բըռնի ախամայ իբրեւ վարեալ գայր եւ Վըտտամ՝ ,  
Որ թէ յանգուզն արուժեամբ զոգիսն 'ի ձեռս առեալ այն օր  
Սպրեցաւ, իւրում որգւոյն երթեալ կալցի շորհ Արբակայ .  
Ձի մատակ վագեր հանպոյն առ գութ որգւոց՝ գազանասիրտ ,  
Ձամենայն յոչինչ գրելով սրաթուիչ զինուց խիտ թօթափուձն ,  
Այնպիսեաւ շուրջ քննու զհարբն մըտմըտեալ մընջեալ փարեր՝  
Յահագին հըսկայախրոխտ եւ ջըլապինդ հասակին գէշ  
Բարձրապորտ վահան 'ի ձեռս, եւ զամենայն յոխորտ հըրոս  
Յայն ձեռնեքէջ՝ գի ջուրտ թաւալ արկաներ զզօր գաշախն տապաստ :  
Եւ նոցա երկոցունց ըսփոփուձն այն էր ամօթոյ ,  
Ձի ոչ այն օր ինչն եւեթ 'ի պարտութիւն գըտաւ մատնեալ ,  
Այլ՝ եւ բոլոր հայկազունք եւ ամենայն զօրազրուխ քաջ :

Ի մտնրախիճ կարկաջուն կացեալ հոսանըս վրտակին ,  
Մերկացին յարեան թաթաւ զբահից ձորձոց ըզհէքն հայկակ :  
Պազպաշուն լերկամարմին զընէր հասակըն վայելուչ ,  
Վարդ ծիրանի եւ շուշան խոանեալ 'ի փունջ թուէին անգամբն :  
Որպէս մայր սիրայորգոր փեսայութեան որգւոյն լօգիկ  
Դըկարէն նարտ կարծիր 'ի սպիտակի ծաղկեալ հինու ,  
Այնպիսի երփն հարկանէր քաջին արեամբ ներկեալ իրան :  
Վէքն հաստոյր յառոյգ 'ի կողսն խորամուխ դեռ խողխողէր .  
Յայն տեսիլ խոժողեցան քաջաց երեւք, հեղին արտօսք :  
Ի յըստակ յորձանս ուզեփոց լուացին զարիւնն եւ զտպածոյժ

Ի սկսածն եւ լայնալանջ մանկան զինուցն, յազմ անգամոց :  
 Չորեքին զօրավարք ապա գընդին իւր սեփական  
 Վերառեալ զերկայն ասպարս, երկու 'նգ ահեակ, երկուք յաջմէ,  
 Եւ կրցեալ առ միմեանս, բարձին զմարմինն յազմահասակ  
 ԶԻւրեանց նահապետին, տանել 'ի բուն բանակն 'ի սուգ :

Գոյժ ողբոցն ազազակի եղբարցն եւ կոծ զօրականին  
 Հընչեցին 'ի հետուստ 'ի Թորգոմեան ունկըն վրանաց :  
 Աըլանան 'ի խորանէն 'Նոյ, Մանիտոն եւ հայր Թորգոմ,  
 Լըբին կոյսք ըզվըբանս եւ հոսեցան ճըլիւք 'ի գուրս :  
 Իբրեւ ետես հայկ զՈրգին իւր վերաւոր անկեալ 'ի մահ,  
 Հասաչեաց գառնագին իբրեւ առիւծ որդեկոտոր,  
 Որ ըզհետ որսողաց ելեալ մարտիւ յանոյշ բունոյն  
 Եւ եկեալ գըտանիցէ զմանկունան յովազ յափըշտակեալ :  
 « Ո՛հ որդեակ իմ հայկակ, Որգի կորին իմ սիրտուն,  
 Ո՞ր ըզբեզ գօշեաց խոշոջ գազան՝ լափեաց զարկնդ անմեզ,  
 Ո՞ր զէն զասպարգ պատառեաց եւ մըխեցաւ 'ի քաղցր արեւք,  
 Զիմ ըզսօսըզ կոճուպեաց, ըզցուք արար կարթահոտոր :  
 Ի՞բր արկի զբեզ 'ի ժանիս աշտեից սուր, յորկոր մահուն :  
 Անոյ՛ յ՛ մայրըզ մանկըտույս, ակն աղետիցս այսմ 'ինչ կալմը,  
 Կամ 'Թէ յայս հրաւիրէիր, երբ բարբառովք արիական  
 Եւ աչացդ հըրով զօգիս իմ վառէիր 'ի պատերազմ  
 Ընդգէմ բուն յափըշտակօղ չար գազանին ըսպանտողի,  
 Եւ գըտտերդ հայկանուշայ ջերմ արտասուք 'ի ծոցդ իլեալ՝  
 Զայն յայքս քո բորտըբէին խրախուսիչ բոց զիւշազնափայլ :  
 Ո՛վ գու Թուրք Յուզագանու, զընդացեր յիս՝ զի զայս տեսից .  
 Սահայն — տեսցէ Տիտան եկեալ նըմին յերկնուստ վըբեժ . . . . .

Զայս մընչեաց, եւ մեծամեծ վիժեալ ընդ այտոս աղի կայըակս,  
 Չոգաւ ծածկեցաւ 'ի վրանն եւ լայր՝ սիրտ աղէկեզ .  
 Զհետ նորս եւ ծերունիքն եւ հայր Թորգոմ՝ ազրոմ՝ ողբովք,  
 Լային եւ համօրէն եղբարք քաջին ուեղբորորդեակք .  
 Գոյժ ափն կական բարձին մատաղամարք, կոյս օրիորդք :  
 Հայկանոջը լուսածըղի տիգս հոլանեալ անկեալ զմարմնովն,  
 Հոյլ 'ի հոյլ հերք իւր ըսփիս 'ի վերաւոր լանջոս մանկանն,  
 Աչկունքն առկայժ կըկոցեալ 'ի մահաբուն գէմնն անթարթօտի,  
 Դառնալի քան զամենայն հեղըր ողբումն հեկեկանոջք  
 Գեղեցիկ կոյան այրասիրտ նոյնչափ 'ի գուժ գորովազեա .  
 « Ո՛հ եղբայր իմ, մերմղբէր, ո՛հ լըս աչացս հայկակ սիրուն,  
 Մի քան զիս յառաջընծայ երկն արգանդի մօր սիրելոյ,  
 Զի՛ Լըբեր ըմայր եւ զիս, յո՛ մեկնեցար յերկուց գըրկաց :  
 Ամենայն ինձ քաղցր եղբարք, գու քաղցրազոյն ինձ քան զարեւ .  
 Ո՞ւր գըտից ըզբեզ՝ յո՛վ, բալց 'Թէ եկից ըզհետդ առ քեզ  
 Յանուշակ հօրըն վըրին 'ի գըզուանաց սիրոյն 'ի ծոց » :

Իսկ որ գեղ ըզգեղեցիկըն Շուշանիկ նըկարեսցէ  
 Զկին պատանւոյն, ըզդուստր արւոյն Մեհնդակայ վեհ գիւցաղին,  
 Յայն տեսիլ ցաւոց՝ մինչ կայր անկեալ զմարմնովն մահապիլը:  
 Զի ճըչեալ միանգամ, եւ հերարձակ 'ի գին գիմեալ,  
 « Ո՛հ Հայկակ », գոչէր՝ գլորէր, նուազեալ ոգի անեալ զոգւով:  
 Հայկանոյշ զինք մոռացեալ, առեալ ըզհարսն 'ի գիրկէս իւր,  
 Զուր խընդրէր, ըզանջազեղ քակէր կամար եւ զպտիճաւանդ:  
 Կամէին քաջքն բառնալ յաչաց հիբին զտեսիլն ողորմ,  
 'Նա յանկարծ ուշաքերեալ վաղէր փարէր 'ի մերկ իրանն.  
 « Յ՛ գընաս, վայեաց ողորմ, կըրկին Թողուս գին ամայի,  
 'Քաջք իմ արի, եղևկ գին, եղևկ ըզքեղ, ո՛վ իմն Հայկակ,  
 Զինչ ընդ քեզ արարեր զայդ, եւ զինչ ընդ իս ընդ այրեցեալս:  
 Որբացեալ 'ի հօր եւ մօր ծոցոյ 'ի քօ գիրկսըդ անկայ;  
 Վա՛հ իմ առայդ վարուժան, աւանդ զարեւ քօ ցանկալի.  
 Ո՛ւմ լըքեր գին տառապեալս, յո՛ եւ զմանկունս քօ զերկոսին,  
 Ըզբաւուկ եւ ըզՅուսակ՝ զիմ արգանդի քաղցրիկ երկունս:  
 Ա՛յս եր քօ սիրասուր 'ի Շուշանիկանդ 'ի ծոց իմ դարձ.  
 Արդ համբուրից փոխան ջերմոց՝ ցուրտ զաչարգ ցուրտ փակեմ շըր-  
 Մնո՛յ յայր մեր սիրելի, եկ տես զՈրգին քօ զիմն Հայկակ, (Թամբ  
 Որ Թերեւեալ մայրենի մատամբ նըստեալ արդ յօրինես  
 'Կրկարէն փափուկ շապիկս Որգւոյդ քաջի եւ սիրայնոյ  
 Մինչ 'ի մարտես քորանագին դարձցի առ քեզ գեղեցիկափայլ.  
 Արդ ես յարտօսր 'ի ջերմ լուանամ ըզկապուտակ վերին արիւն:  
 Ո՛հ, նըզովք հասցն ժամուն յորում իջերդ 'ի պատերազմ,  
 'Կըսովք եւ 'ի գահիճդ, այսպէս եւ զնա լոցցէ իւր կին:  
 Տայդր իմ խոս, աայդր իմ արի, ո՛ւր է եղբայր քօ սիրասուն,  
 Ի քէն խընդրեմ զեղբայր քօ, 'ի քէն ըզքաղցր հոգւոյս հատոր »:  
 Զայս ասեր եւ վերբասին Թալուկ 'ի սիրան հարեալ գլորէր:  
 Արուսեակ՝ խոս մեկուսի զերդ մեղապարտ հեծեծեն կան:  
 Յակնարկել Արմենակայ բարձին զԹըշուառ գիակն անգէն.  
 Թե ոչ, 'ի մուսս արեւուն եւ ցայդ նըստեալ աշխարհին:  
 Աջկունք կըրկին լըւացեալ 'ի լուարանսն ջերմօղուր,  
 Օծին իւզովք անուշիք լըցեալ ըզվերն ըյնախոց,  
 Եւ յորդ արտօսր հեղուին 'ի գեղազէշ հասակն առայդ:  
 Վըտուակ մի ձիւնափայլ ըզգեցուցեալ մարմնոյն հանդոյն,  
 Հանգուցին 'ի դադաղքն պըսակեալ յուս սարգենի.  
 Եւ 'ի սնարից մինչ յանոտտ արկեալ շըզարշ մի լուսամբիւթ՝  
 Եդին 'ի վան, եւ ըզցայգն աշխար եղեալ կոծ ջայլէին:  
 Իսկ գիտօշն երկնահայեաց գիւցաղըն Հայի հայրըն Հայոց՝  
 Ուխտագրութ արգւոցն եւ իւր իսկ մեղկութեանն 'ի պատուհաս  
 Ընկալեալ զարկածըն չար, նուերեր երկնից ըզսրբօրին զոհ  
 Մանկութեան մեղաց նոցա եւ իւր խղճին 'ի քաւութիւն:

Եւ ազեղօք դիւցաղնական յողջոյն զօրուն խորովեալ գուլթ,  
 Զամենայն փոյլթ եւ խնամ երթայր տանէր առ վերաւորս,  
 Մանաւանգ առ պատանիսն եւ կորովի երեսասարգս,  
 Որ ջիւքն էին բանակին յաւուրն իւրում վեժիւրնգրութեան:  
 Արձակէ նոցա ճեպով զԲաւան ճարտար բըժըչկապեա  
 Եւ գեղս եւ դարմանս եւ զամենայն պէտս արուեստին,  
 Եւ ինքնին անձամբ շըրջի մըխիթարել ըզգըլտաւորս,  
 Ընոյն առնել պատուիրեալ պայազապին Արմենակայ:  
 Հասանէ՛ թէ ոչ ձեռք, սակայն մըտօքն առ ընթանուրս,  
 Բաժանեալ 'ի բիւր կողմանս ձրկտի զոգւոյն ուշ սըրտթախէ:  
 Բոցաթեւ որպէս փայլակն 'ի գրանց ճայթաեալ առաւօտին,  
 Պատուեալ ըզճոց ամաղց՝ ծագաց 'ի ծագս երկին պշտեալ  
 Ընթանայ յական քըլթիթ ընդ անսահման ձիգ սազարեա,  
 Եւ անգուստ ընդասուցեալ 'ի սիրտ երկրի անցանէ Թափ.  
 'Նոյն քաջին միտք սըրտթեւ ընդ՝ ամենայն խոյանայր կէտ:  
 Իսկ արին խոռ յետ այնչափ 'ի գաշտ մարտին քաջարութեանց  
 Զօրէն վեժիտապարտի զօգեալ թաքչէր յիւրըն խորան,  
 Առ ցաւս սըրտին մըւընէր, կըռէր երգումն 'ի մտի անսուս  
 Ի յառնել հօրն 'ի գուպար, ում՝ ակն ունէր այնուհետեւ,  
 Մեծամեծ նորանըշան գործել բազլի զարմանալիս,  
 Հանել թափեալ 'ի Բարայ եւ 'ի Բեշկանց առհասարակ  
 Ըջմահու եղբորն ըզվեժժ, զայն յերեսացն արինս սըրբել:  
 Վըստամ խոնջ եւ կիսամեռ ընդ մըտերիմն անկեալ 'ի վըսն,  
 Աննայն եղելովքն յուզեալ ծըգիւր միտք այլեկոծ,  
 Ոչ գիտէր ես ինչ իրացն նըշմարել ձեռնարկելոյ:  
 Յոր կոյս եւ զաւըն յառեաց, ետես գուժից գործեալ եղերս.  
 Սակայն ոչ բընաւ ուրիք յանձն իւր կըրթէր զիբին վընաս,  
 Այլ՝ 'ի բախան եւ կամ յայլոց զորապետաց գըժիեմ ծուլանս:  
 Դեռ եւս ակն ունէր սոկալ տիտանացւոցն բըռնութեան:  
 « Պարտեցաւ մեզ, սակ, ճակատս այսօր, սակայն փառք,  
 Պընդապէս ընդգիմութեամբ եւ թորգումեանցն ընդ մեզ պարտիւք.  
 Միում եւեթ յազթուլթին կորեաւ աւուր, այլ՝ ոչ եւ յոյս:  
 Ոչ իւիք ինչ արկածիւ բախտին Վըստամ լիցի նըկուռ,  
 Կամ փոխեցի թուլացեալ 'ի խորհրդոց մըտաց իւրոց:  
 Բազմութին յազթեաց մեզ, այլ՝ ոչ պարտեաց, ոչ պարտեցէ.  
 Ըջվըստամ ընկձեացէ ոչ, բայց թէ քան զինքն հոգի մեծանձն:  
 Ի՞ր ինչ Վըստամ վատասիրտ՝ գաւազանիս այսմ արժանի.  
 Մոռացոյց կամ թէ յամ՛թ արարից զօրըն զայն ըզմեծ,  
 Յոր 'ի բարձ զորազրլի ռզմունեցայ 'ի բանակէն,  
 Որ ըզհայի 'ի բաց տարեալ զիս վայնուչ միայն ծանեաւ  
 Զօրութեանց ակըր եւ իշխան ընդգէմ Բեշկայ ձեռն ամբառնալ,  
 Պաշտպանել հայրենեաց եւ զըրուանեան բարձըր գահու: »

Յ՞մ տարայց եւ զՁերուանայ հօրըն տեսլամբք ինձ աւետիս :

« Բայց ըզոյն ոչ ամենայն զընգաց իշնանք խորհին, գիտեմ, Ձամենայն վնասուն պատճառս յիս ինքն եւեթ կըրթեալ թերեւս, Ձմեծամեծ անկզ գործեան այսր բազկի եղեալ յարաստ : Տիրատեաց թըշնամութեան եւ մտխանաց ժըպիհհ բարբառ, Ձի եւ յիննն ուժացցին եւ սարտուցեալ ելցին 'ի բաց : Ժըխտեացին թոզ նոքս զքաջաչընչօզ վըստամեան զէն . Գիտէ զայն Բեյ, գիտեն զօրք եւ զօրավարք տիտանացոց, Գիտեն զաշտք եւ հոզ երկրիս ասորեստան արեամբ զանգեալք . 'Կս եւ կէս նըժարից ճակասազրին գիտէ յերկինս, Որ բազում անգամ անմէս զուգակըշիս եկաց յերկար ի մտառներս բարձողին՝ ընդ տիտանեանս եւ ընդ Վըստամ » :

Ձայս ասեր՝ կէս մի բանիւ եւ կէս յինքեան մըռընչելով, խորհեալ յամեթ պարծելոյն զօրապետացըն լու 'ի լու . Որչափ 'ի նոյն խոկ կայր յամեր, յատելութիւն վառէր Հայկին, Եւ խորհուրդն անգամ 'ի միտս առ նա կըրկին խմարհելոյ՝ Բան ըզմահ եւ քան զըբժոխըս սեաւ եւ գամն յաշուն թըւեր :

Ոչ վերպեր յոր կասկածեացն ըզմեծամեծ աւագանւոյն .

Ձի գոգ բոլորք ժողովեալ առ Աննակայ զնոյն խոսէին, Յուելեալ 'ի վերայ եւ ըզըբժմիտ վայրենութիւնն Եւ զժանտ սիրան անագորոյն 'ի սատակումներն Վառգոշայ : Ձարմանան գողին օրհնեն ըզվէհ Հայկեանն արթութիւն Եւ ըզինամերմ մարգասեր, եւս եւ ըզկնի մահուան որգոյն :

Բազումք եւս, առ նախանձու զլարեալ ընդ նա եւ մտխացեալ, Կուտական բանիւք 'ի մեծ զըրգանն զայրոյթ զբակայց սիրտ .

Ձի եւ Հայկեան խիտս պայմանին զմիտքս նոցա ասգնապէր աս : Էին էին եւ ոչ սակաւ վատք անարիք 'ի զըրուանեանց, Որ վերջըն պարտութեան զիւրեանց բազկին տեսեալ զհանգեա, Կամէին իմըն զընգօք 'ի տիտանեանն հատուածել կողմ, Գիտելով չափ զի Հայկին ընգգէմ իւրեանց գուան էր աղետեալ : Բայց յերկուս յերիս հերձուածըս պատակտեալք միմեանց ընգգէմ, Հասաստանն եւ ոչինչ, յազմուկ 'ի խոռով հատեալք ու 'ի խէթ :

Ազգ եղեալ սատակումն Յուգագանայ եւ Հայկ յազմօզ, Յարուցեալ երթայր Դանան, այն ինչ կանգնեալ 'ի հարուածոյն, Անկաներ յտարս քաջին եւ ըզհզօր ձեռան համբուրեր :

« Չկամէի գտանել, ասէ, զայս զոժացումն արեամբ որգոյոք, Եւ ոչ ըզկեանս խոկ անձին . բայց գու չէիր քաջք առ նըմս : Թէ կայցես տակաւին յարգար յասման քում յամատեալ, Արտասուաց գուցէ մեծաց եւ այլ բազում գործիցին տոյժք » : Հայկ կաւեալ ըզձեռանէն եւ զմեծարոյ կանգնեալ զալինս, « Ոչ ես, ասէ, կամակար պընգեալ կամ ինչ, ծերութիւք քաջ . Գիտես ոչք, զորոց եւ ոչ զանուանս ասից ես 'ի բերան :



Եւ Երկնից ունիմ շքնորհ զի զմբռերմիդ խնայեաց զարեւ .  
 Բեզ յինէն ընծայ կազմած եւ այս սուսեր գուժ վերադիգ .  
 Նորք այսուհետեւ վառեալ մըտցես յիմ պատերազմ ,  
 Եւ 'ի նոճարն Նուարայ զայս կախեսցես յինէն նըւեր » :  
 Եւ տայր ջընա զպողոթանիկ զարիւնտոտ զազակաւորն :  
 Հայեցեալ ջընծայր ալիքն եւ զայս անդրէն արձակէր ձայն .  
 « Զի Թեպետ եւ մերձաւորս կորեաւ ոտոխս իմ ատելի ,  
 Այլ որ երբեմն հեռաւորն էր Թեւ Թիկունք Յուզազանայ՝  
 Նա զօգ շքնէ տակաւին եւ մօտ առ իս քեզ սիերիմ .  
 Ոչ մեկնեցայց յիմ փարախ , կացից որդւոթս իմով հանդերձ ,  
 Յորս արգի աղետոխ գուժ՝ յաւել էջոյց եւ զզուտար իմ ինձ .  
 Ըջո եւ զիմ մըղեցից ըզպատերազմ , մտայց աստէն ,  
 Կամ տեսից եւ զԹըշնամիդ Հայկայ յարեան իւր Թաթաւեալ » :  
 Զուխտըս զայս լըւան Երկինք , եւ զառաջինըն կընքեցին :  
 Մինչ զայնու էին գեւ , կանանւոյն զապը , կոյրք եւ հարսունք  
 Պարազուխ Արուսեկաւ գան անկանին յոտս հօրն Հայոց :  
 Արտասուօք կուսին մեղանըս յանձն ասեալ ներումն հայցեր .  
 « Զանոխակալ գըթուժիւնդ առ քեզ կալեալ մեր բարեխօս ,  
 Եւ 'ի սիրոգ հայրադորով մէք ապաստան ամենեքին ,  
 Հաշտ լինել պազատիմք ընդ մեզ , ընդ գունդդ այրաբատեոն ,  
 Մըղել ըզմարտս եւ փըրկել 'ի սպառապաւուս սատակմանէ  
 Զցանկալի որդիս , զեզբարս , ըզհարս եւ զարս այսր երամոյ  
 Որ յոտըս քո եւ 'ի ծոնկս անկեալ փարեալ կամք Թաւալեալ :  
 Ո՛հ , ըզքեզ գիտեմք եւեթ Թորգոմական բանակին հայր ,  
 Ատելի մեզ Վըստամ 'ի սիրտըս մեր քան ըզցըծոխս :  
 Մընայ քեզ արդ ոչ փայն սարեցելոցս ածել ողորմ ,  
 Այլ եւ վըեժ հատուցանել զանմեզ սպանդի քում զաւակիդ » :  
 Խառվեցան ազիք քաջին , եւ յարտասուս քեկեալ բարբառ ,  
 « Երկուց , ասէ , կայ մեզաց արգտհատել ինձ սաաջի ,  
 Վըստամեան հետաուժեան եւ ուխտազանց անոսատ որդւոց .  
 Յերկրորդ յայս ողորմութիւն յօժարագոյնս ընթանայ սիրտ ,  
 Յուշ ածեալ զի առ սէր եւ 'ի գըթոց սըրտի գըթեցին :  
 Յանկարծ՝ Թէ եւ Բարձրեալն հանգոյն առ այն զըտոյք քաւիչ ,  
 Որում չէք ինչ ակն ունել զաշտ իմ 'ի յիմս արկեալ Հայկակ ,  
 Որ այն մեզաց փոխորէն անկեալ 'ի մտհ կայ վըբաւոր :  
 Օ՛չ Թէ յիս եւ առ Վըստամ սիրտ գոյր Քոստուն ներողաժող .  
 Այլ լիցի , յորժամ նորս գլուխ բարձրավիղ իւրովցն հանգերձ  
 Փոխանակ ընդ ձեր առ ոտս աստ խոնարհեալ անկանիցի :  
 Օրինաց արգարութիւն եւ իրաւանց Ցէր 'ի բարձունս  
 Զայս կամի , զայս կամի եւ Թորգոմեան վեհանձն որդին :  
 « Կողմանքս այսոքիկ , հայրենատուր իմ սեփականք ,  
 Ինքնակամ հնազանդեալք իմոյ ձեռին , հրապուրեցան .

Ընդ նոսա չեն ինչ իմ բանք. իսկ տունն Վաղմնայ զըրուանեամբք հետ  
Անկուշօղբ ասլըստամբիչք արեւելուշօղբ ողնդըժնեայք...

Եւ զնոսա պարտ է նուաձնել. բայց ոչ արժան ինձ բընապար,  
Ախոյեան յարուցելոյս տիտանայւոյն գառզութեան .

Եւ վատութեամբ արերտիւ, չառնու զայդ յանձնն սիրտ Հայկայ :

Չխրաւուան եւ զանձին չափ տացէ նոցա գիտել Երկինք :

Որոյ սուրբ են ճանապարհք, եւ այս ընտրեալ կացցէ առ իս :

Դժբուարակափու պատերազմ է ինձ Վըստամ քան ըզլերբովթ ,

Չայն Երկնից ես հաւատամ, պրտակեսցեն զիս յայս Երկինք :

« Են 'ի մարտիդ եւ Տեան ընտիրը, նոքա զճակատ Տեազն մըզեն ,

Կոցուն բարուկ եւ վերին Հովանին մեծ պաշտպան գընդին :

Իսկ զորդուց հանից վըրեժ, յորժամ ընդ իս տուն Թորգոմնայ ,

Որպէս երգուաքս, անխըլիրտ 'ի բանակիս կացցեն 'ի պահ ,

Եւ սպառեալ Բե'այ զՎըստամ՝ յիս եւ 'ի յիմս յարձակիցի .

Կամ Թէ ես ինչքնին յայնժամ 'ի նա եւ յիւրն իսկ բընաշխարհ :

Իմ զարիւն որգեկիս նուերեալ երկնից քաւութեան զոհ ,

Անգուտ եւ ան ունիմ քինախընդիր պատեհ ժամուն .

Կոյն տացէ, որպէս գիտե եւ երբ, 'ի ձեռս իմ ըզլերբովթ :

Այդ է աւագիկ իմոյ մըտաց կէտ անխախուտ » :

Անդ էին քաջին սերունդք եւ մեծամեծ զօրապարեան ,

Ի բէկն զարմանալեօք զարփական բարբառն ուշիմ ,

Եւ չէլեր որ ձիկ հանել գիւցազն ընդգէմ նահապետին :

Իսկ առեկք Վըստամայ 'ի զըրուանեանց եւ յարթեանց ,

Թեպէտ եւ իրազեկք ամբոխելոյ սկայից սըրտից ,

Չանգիտեալ 'ի հերձուածոցն եւ յերկփեղկեալ զօրականէն

Յերկուս բանակս որերիմս եւ մեծամեծս ընդգէմ միմեանց

Ընդ երկուք ցեղապետք Թորգոմնազինն եւ Վըստամայ ,

Չիշեկին երեւել եւ հաշտ առնել զգիւցազնն վեհ .

Մանաւանդ զի գիտեին եւ զկամուկեր խիտ պարանոց

ԸզՎըստամայ եւ զորդւոյն եւ որ տըւեալ ձեռս 'ի նոսա :

Քանզի ահա եւ կողմանն վըստամեան խումբ կանանւոյն

Գըուե եւ բերան արարեալ աղերսաւոր իւրեանց գառու

Ըգտիկինն Արնակայ եւ զժառանակայ եւ զՉարեհի ,

Յերեսաց Հայկին ելեալ գոյժ 'ի բերան եւ գիտարձակ

Ոգբազին լայահառաջ գիմեալ անկան առ զըրուանեանն ,

Ոգորմել հաշտել ընդ Հայկ , զի մի բնաջինջ բարձցին յերկրէ :

« Թէ արանց քաջաց կանանց ոչ վայելեն այս արտասուք ,

Սակայն , ասեն , յաշխարհի՛ յազգին օգուտ անկ է հոգալ » :

Կա 'ի խրժանն եւ յախորտի կացեալ մերժէ խորխա բարբառով .

« Չիշխանութիւնս ոչ ինձէն առի ես ինձ , այլ ըսպայն ետ .

Ոչ կարեմ արհամարհել ըզբարձն մեծ զոր մատուցին

Ինձ եւ տաննս Չըրուանայ սկայից բանակք եւ սպասալարք :

Ձի եւ զհանրոց ինչ յուսայք 'ի ձեր խորհուրդսդ աւելի,  
 Դուք, եւ որ ըզձեզն հրապուրեալ զրդեցին յիս .  
 Ահա տեսէք զինչ արժեն որդիք եւ գունդք ձեր գիւցազնից,  
 Կա եւ բնաւ խի գումարտակք եւ զօրավարք այն բանակի .  
 Ձայդ Վըստամայ անօրինեաց բախա, զի խելամուտ լիջիք եւ դուք :  
 « Իցէ ինչ Թերեւս աստուած գիւցազնացեալն Թորգոմեան ,  
 Ձի մոյ մայնոյ իւրում անձինն երեւելով  
 Ինոտա եւ 'ի մեզ հրաշացուցէ պանչելիս նոր :  
 Մեզ անշուշտ յազթուծիւն Թէ պատրաստեալ է 'ի վերուսա ,  
 Ո՛չ ապաքէն յազթեացուք, ոչ ինքն ոչ ես, այլ զօրն արի .  
 Չօրականին է պարծանքն, մի 'ի նոցուն կապտե ձեռաց ,  
 Եւ ըզմի զդք կամ Թէ զանձնն համարի մայն կարօզ :  
 Իսկ Թէ մահ եւ պարտութիւն, այսպէս եւ այն՝ մեռանիցիմք .  
 Ո՞ր զմառնն երկնաւորի ժըպրհի շըրջել ճակատագիր :  
 Մեացուք ապա քաջութեամբ եւ մի այլում ասացուք ըզփասա .  
 Վըստամայ գեռ յուսան է դուրի, ոչ անկանի այլում առ ոտս .  
 Վահ որ կրէ դուրի ցայդ տիս յուս, եւ խելս 'ի նմա քան զազատա ոչ : »

Ապա գոյն ինչ մեղմել ըզմըմըռուձնն կամելով,  
 « Բայց, առե, քանզի յոգունց սուգ են եւ ողբք 'ի բանակին ,  
 Ձի Թէպէտ ասարնպատիկ 'ի մէջը հարեալ գըտաւ Տիտան ,  
 Այլ ոչ նոցա զին փայտեայ, եւ ոչ մարմին է մեր պզնձի ,  
 Ինձ հոգ լիջի՝ վայր մի գու՛ յանել զինուց մարտի գազար ,  
 Մինչեւ զանկեալ սիրելիս, զորիս Թաղմամբ վըձարեացուք,  
 Քաջազանց շուք վայելուչ, մընացելոցն մըխիթար ,  
 Եւ միք զանձինըս զըացուք ոգի առեալ եւ կազուրեալ :  
 Հեշտ 'ի հաւան գայցէ Բե՛լ, զի պէտս ունի եւ նա քան զմեզ :  
 Օ՛ն արիք աղէ երթայք դուք եւ մարմնոյ տարայք զարման .  
 Ոչ 'ի գեպ ընդ մեռելոցն մեռանել եւ կենդանեաց,  
 Պիտոյ եմք տան եւ ազգի եւ աշխարհի առհասարակ » :  
 Ելեալ զարձան կորակոր Թախանձալից հեծեծանգր :

Արձակեալ ըզբամբըջանին, չեւ գիշերոյն հասարակեալ  
 ՁԱռնակ զըրուանեան 'ի մըտերմաց կարծեալ իւրոց,  
 Այլ սըրտի մըտաք տենչօզ գու՛ եւ պարսպ առնուլ 'ի գործ ,  
 Եւ գլաբեթեանըն Չարեհ Թորգոմացուցն 'ի կողմանէ,  
 Արքս քաջս եւ իմաստունս առ տիտանեանն առնէ գեսպան ,  
 Դու՛ զինուց առ 'ի Թաղուձն աւուրց երկց մատուցանել :

Ելանն գըձան հրեշտակքն եւ գըտաննն զբնէան բանակի  
 Ըմբըռեալ 'ի նմանավէշտ կիրս ահագին կոտորածին :  
 Խարուկածին բորբոքեալ լուսաւորնն բոցք ըզձամբարն .  
 Ոմանք յողք կային նըստեալ, մըռընէկին առ վերսըն այլք,  
 Կէսք ըզկարծեալ աստուածոյն հայհոյէին գուտղութիւն,  
 Իսկ այլք անթիւք ամեհիք խիզախելին առ վաղուին օր :

Ընդ բանակ մեծտարած անցանեն ոչ ինչ խրախափոք  
 Ընդ անհուն բազմութիւն անաղակոյտ խալ ըսկայից,  
 Եւ ընդ կազմըս ահաւոր ըսպառազէն զինուորութեանց,  
 Բէլ սակաւիկ զի զիեալ յամբարտաւան բարձրութենէն,  
 Ընդունէր ըզգեսպանան 'ի խորանին մեծարանօք:  
 Բազմալ ինքն յիւր գահոյս, ճաճանաւուխա վարագուրեալ,  
 Ըուրջանակի սրբակապանին աւագորեարն եղեալ երաստ,  
 Զահք՝ լրապտերբ բոցաճաճանչ լըրջացուցեալ զարխուր տեօնին:  
 Ատենին լեալ յանգիման՝ արին Զարեհ տայր ըզգապառան:

« Թէ իցեք սակաւին կալոց 'ի կռիւք հանապազօրք,  
 Թէ արգեօք ըզգիորձ առեալ բախտի մարտից եւ մեր մատանց,  
 Թողուլ զերկիրս եւ երթալ իցեք խորհեալ, գուք զիտասոյթք:  
 Իսկ 'ի կռիւ եթէ կայցեք ինչ տակաւին ընդ աշխարհիս,  
 Եւ ձեզ անկ է տեսնել՝ ձեր առ զաղիւշն կրուիցիմք:  
 Զորք ահա եւ հովիւք եւ գաշտ մարտին, լայն ասպարես,  
 Լըջեալ կան աւագիկ եւ լեռնացեալ գիակուտիւ,  
 Խըրտեղոյ իսկ չիք տեղի արի արանց ուերիվարաց.  
 Վըկայ ձեզ զօրավարք հաղիւ ասորեալք 'ի մեր զինուց:  
 Զանկելոց հարկ է ապա խորհել թազումբն ձեզ եւ մեզ,  
 Եւ օրէնք քաջաց մահուն երկուց կողմանց զայն պահանջին,  
 Եւ սրբեւ ռաւոյթիկայ ռազմին բանալ մեզ մըրցարուն:  
 Եւ առ այս՝ աւուրս երես գեթ 'ի զինուց պարս եւ գըլալ,  
 Ապա յեռայ փրկանգամ զայրոյթ եւ զէնք իջնին 'ի գաշտ:  
 Այս է մեր մըտաց խորհուրդ, ակն ունելով թէ ձեզ հաճոյ »:

Զայն յայնժամ՝ յառազաստէն եկն ոչ ողջ պատասխանի.  
 « Կարեւոր մեզ հասեալ է սուգ եւ վըշտ երկուց կողմանց,  
 Բայց առաւել ձեզ կարծեմ որ կորուսեք զօրդի քաջին.  
 Կորուստ այլ ամենայն՝ զայ 'ի տեղին, այլ ոչ զաւակ:  
 Աւելորդ այսուհետեւ են խրոխտական բարբառքըք ձեր  
 Ինձ լու՛ի լու եւ յասնի՛ մեծամեծար հրապարտիկս:  
 Բանքք եւ մեզ ըստ մըտի, քաւ 'ի խօսիցդ յանդրանութեան.  
 Եւ զսրգոյ պատուոյ զօրէն ռաւոյթիկաց եւ սիրելեաց,  
 Որ գահաճաւ բարձրացելոյ փշտ 'ի վերայ ետուն զանձինս,  
 Հատուցցուք մեք աստէն, եւ գուք ըզձեր ծախս անգանոր  
 Մի առ մի մանրր զըննեալ աւուրց յաւուրս համարեոյթիք,  
 Եւ երկեղն զոր խընդրէք՝ շնորհեալ ձեզ զեօթն օր փոխանակ.  
 Թէ արգեօք առ 'ի զմեռեալսքդ տալ հողոյ բաւեացին ձեզ.  
 Թէ եւ բիւք ինչ ունիցիք հեթեթիկ՝ խրարեմք ինչ ոչ,  
 Մինչ յաւուրբոս եօթանց տիտանացիք ոչ առչին զէն »: —

Զայս ասէր առ երեսս, իսկ 'ի գազանիս՝ օր շահելոյ,  
 Զի գուճոք նոր 'ի թիկունս, սւմ ակն ունեք, հասցէ նըմա,  
 Եւ որ ընդ Տոսոպ արշաւեալ ժամանեցէ գործոյն յամբո՛ղի:

Մանաւանդ զի յոյժ իսկ զայր 'ի յառնելոյ Հայկին կասկած : —

« Արդ զայդ , յաւել , ի տէրունի գահուս զիմաց տարայք պատգամ ,  
Եւ զիւցախաւան կենաց շնչոյս բարբառ եւ բերանոյ  
Յարգիխակիզքն արեւէն հաստատութեան ձեզ զաշն ուխտի » :

Յայս վայր տիտանեանն . ըզթեւ բանին ապա Բիւրասայ  
Յինքն առեալ եւ ըզյառնել Հայկին կալեալ 'ի մըտին խէթ ,  
« Ի եւ այլ ինչ , առէ , բան՝ յառաջիկայսդդ կարեւոր ,  
Ձոր բերանովդ առաքելք առ զբուսնեան քաջն Վ քստամ ,  
Ար ողջն աւազանիդ եւ առ ամբողջ ըսպայակոյս :

Յոյժ իմաստուն գործեցէք զարիարար մերժելըդ գուր  
Ոչհըզարար զամբարտաւան թորգումանն Հայկ եւ զնորա տուն ,  
Որ ընդզըգեալ յերկնազէն բընուութենէ տեսունքս բախտին ,  
Ձերով բազիզք եւ արեամբ կանգնէր 'ի ձեզ գտող աթոռ :

Այլ եկայք առէք ազէ բովանդակել , ձեզ յօգուս ,  
Ձարութեանըդ խորհուրդ եւ զհանձարեզն ըզցծութեան :  
Ողորմիմ ձեզ եւ սպայիդ , խընամք զըթոց յիս բարբառին .  
Պագէք թագիս այսմ երկիր , զաստուածատեղ տէրս ընկալեալ  
Հասատոց իշխան եւ տէր միահեծան տիեզերաց .

Ընդ ջրգով անցէք նորա , յաղքտամբէդ որդեցայք ,  
Եւ ապրեալիք 'ի հասեալ նորա զըլխոյն պատուհասէ :

Մէք ապա զարժանաւորս 'ի ձէնը 'ի բնիկ տանուտերանց  
Կարգեսցուք յաշխարհդ 'ի մարդ իշխանապետ եւ թագաւոր :  
Սասանեալ յիւր չիք զարձօք ապրտամբող ձեռ թորգումոյ  
Առաջի ձեր եւ մերով անպարտելի մեծ զօրութեան ,  
Եւ բարիս ըմբռնելիցէք գուր յաւիտեանս ժամանակոց » :

' Մեծասիրտ աննենդն Արեակ զարձոց առ այս պատտութանի ,  
Թէպէտ եւ խռով ընդ Վ քստամ , սակայն պատուոյ զարմին պատկոտ .

« Ձայգպիսի վատութեան ձայն՝ ոչ մէք ունկամք լըսել կամօրք ,  
Թող թէ յարանց տկանըս հեղուլ , խառնել մըտաց նոցա հրտալոցս ,  
Թող թէ պետի զբուսնեանց եւ որ զնովու վեհազն իշխանք :

Ընդ մեզ , ընդ ձեզ եւ ընդ լերինս այս եւ ընդ գաղտ աստերտամ  
Բախան եւ զէնք գատեսցին եւ ընարեսցեն այսուհետեւ :

Մեր քաջացս Այրարատոյ բարձի կըռիւք են ընդ միմեանս ,  
Այսօր թէ կըռուիցիմք , գոյ մեզ վաղիւ գառնալ 'ի հաշտ .

Իսկ իցէ ինչ արկանել օտարտուոյ իմաստութիւն

Ի մէջ երկուց կագերոց մերձաւորաց բան զայրպիսի :

Այլ գրեա թէ չմփարանք՝ կամք կտորիմք մէք զբուսնեանդս ,  
Կամ թէ խառնիմք եւս ընդ ձեզ երկպառակեալքս առհասարակ .  
Թէ անկեզժ ըզճըւմարիան արիարար պարտ է խոսել ,  
Կարող կարծեմ ես ըզհայն՝ ինքնին միայն եւ իւրով տամք  
Ձատորնեայդ ըզձեզ եւ զմեզ եւս հարկանել միանգամայն :  
Տակաւին ոչ ճանաչէք գուր զայրն , եւ ոչ ես զարմանամ .

Բայց քաջիդ տխուհեան գոնե լինե՛լ գոյր խելամուտ .

Այր, որ ասելի թէպէտ ոմանց 'ի մեր գրբոհ,

Կս եւ ինձ իսկ թերեւս, այլ արհամարհ եւ ոչ ուսկը :

Այդ իսկ ձեր բանք եւ խրբատ՝ ահի մշտաց մասն եւ գուշակ » :

Սրբամբոտեալ առ այս Կերբովձ՝ յոխորտագոյն կըրկինաց անգրէն .

« Բզձեր քաջաց զուգուծին տեսաք ցայտօր ըզքեղեցիկ,

Եւ յապայս առաջի տեսանիցեմք յայտըմհետե :

Օն եւ ծն երգուեալ 'ի հայրն արեւ ու 'ի թաղա տխուհեան,

Չար եւս օջտեալ 'ի հերձուածս յառաջիկայդ տատակեալիք :

Ընդ որդին թորդոմեայ թէ խառնիցիք ընդ ապրատամբ,

Տեսաք ահա եւ ըզձեզ եւ ըզնորայսն համագոծեդ :

Եւ ո՞ր այն զորուծին իցե հայկիդ ձեր միայնում,

Ձի անկեալ 'ինըժարդ հակիցե զմեան տատուածաղբ :

Իսկ զոր ցնորիքդ եթէ հայկ իւրով գըլետով եւ իւրայտով

Ձբընուծին վանել գիտե զի՞մ տխուհեան տիեզերատասա,

Խալազատ միտք եւ շամբուշ, գարձուած առ այդ չունի՞մ ինչ այլ,

Քան զինուք, երբ գուք եւ նա միահամուտ գունդ գումարտակ

Յասպարէս մշտանիցեք . բայց ողջանգամ միայն ելլես

Ի սրոյն Տխուհեայ, զոր սպանուցայն՝ տեսցես աչք » :

Ասաց եւ արձակեաց . գարձան եկին յիւրեանց ճամբար,

Եւ ցուցին իշխանաց հրեշտակութեան զելան եւեթ,

Չայլովք վատախարհուրդ իրատուքն անցեալ վեր 'ի վերոյ,

Եւ քընոյ զվատակարեկ տըւեալ անգամսն հանգչէին :

Բայց կոծ եւ արտասուք ցըժագորգայն ոչ գագարիբ

Ի խորան վաղառնիկ որգւոյ քաջի հօրն հայոց,

Ըջճագիկ մանկութեան տիոց հասակն աշխարհլով,

Ըքբարուց եւ զվարուցն պերճուծին գիւշադնական,

Ըջբրտեայ զարի լանջոյն եւ ըզմատանցն պընգուծին,

Չայրեցեալն Ըուշանիկ եւ զորբ մանրիկ մանկաին մասալ

Որ անդ ընդ հանոյն կային անգեաք 'ի հայկաշէն՝

Չինչ սեաւ օր եւ սեաւ ժամ հասեալ եկաց 'ի գլուխ իւրեանց :

Այլք զայլուր անկեալն ողբո՞մ ըզսիրելիսն կոծէին,

Որ յանբաւ գաշտին ասպաստ հողաթաւալ ընդ ապաժոյժ

Երնէին ընդ նըզովեալ զարմին Գամոյ 'նք ոտխա երկիկց

Խառն 'ի խուռն եւ անծանօթ հարազատից անկեալ իրանք :

Իսկ երկինստն այցելու գթացեալ իմնե յանհուն վատակ

Կենդանեացն 'ի ճանաչել յընարել սրբեկ գիւրեանց մուեալս,

Ակնարկեաց արտեւանամբն 'ի շտեմարանըս թեմանայ

Եւ բացեալ ըզգահանս եւ զգրունս թօնուտ թուխ ամպրոպաց

Յարուց 'ի գլուխս Խայթ լերին, ած քաղցր անձրեւ տեղատարափ

Ընդ երեսս ասպարիսի մարտին եւեթ մինչ ցաշալուշ .

Լըւաց տաբաւ զամենայն փոշի զտարաւ եւ ըզթարափ

Եւ զարիւն եւ զսպաժոյժ եւ զսպաւառ 'ի գիտեանց :  
 Ըզգիշեր մինչ առաւօտն մերկանայր ըզարերալից ,  
 Ի ծոց լերանց հարածեալ ըզչամանգալ եւ զմառախուճ ,  
 Դախ բնիւանք ելանէին , կէդք 'ի մայրիս հարկանել փայտ ,  
 Կէդք 'ի կրեւ ձիով , ջորւով , քառահոյով ճորչն չօլ անուրք ,  
 Այլք 'ի գաշան իրեալ մահու՝ զանկեալ մարմինսն ժողովն .  
 Ի տամուկ երեսս երկրին ուիք զեռ զնային արիւնախառն ,  
 Եւ արանց ազի արտօսք 'ի նոյն խառնէր վըտակահոս :

Ի նոյն հարկ եւ նոյն ազէա կանխեալ կային եւ Թորգոմանք .  
 Բալց արի հայկեանց իրանք եւ յարեթեանց եւ զբրուանեանց  
 Սախտակ 'ի յոս փայլէին՝ յընարեալ ազգին 'ի գեղ բշնիկ :  
 Ընարուծեան միւս եւս լինէր նային նըշան , զի քաղք իւրեանց  
 Դիւլտաղնաբար կան տապաստ՝ իբրեւ հըսեայ երկասարգ  
 Որ զչեղեցիկ յալթանգամարն հոլանեալ 'ի քուն լինէ ,  
 Սպանակից երեւմանք նահատակաց 'ի կերպարանս ,  
 Իբրեւ այն թէ կենդանեալ 'ի գէն 'ի մարտ խիզախիցնն :  
 Իսկ բնիւանք ամենեւին անարգաբար կան գիտապաստ ,  
 Եւ սխտանեանն սերունդ գիւտտեով եւ Թըխամորթ՝  
 Ըջմեղաց եւ զանիծից հօրն ըզգեցեալք գոյն արջնաթոյր :  
 Աւանդին զբոյք համբաւան , եթէ Քամայ յոտ նըզովց  
 Փոխեցաւ սպիտակ տեփին 'ի սեաւ ամուխ եւ 'ի խամձող ,  
 Եւ երանգ նոյն ընդ զաւուրն սերեցաւ մինչեւ 'ի սպառ :

Իրեալք այսպէս ողբազին 'ի մահահոտ գաշա բարկութեան  
 Կրէին սայլք ըզմարմինս , կրէին անգուսա եւ Թորգոմանք :  
 Յառաջնում աւուր արկեալ բնիւանց խարոյկըս մեծամեծս ,  
 Յերկրորդում ըստ նորակրօն ատգահակեան անյոյս զենին  
 Այրէին զմեռեալս իւրեանց եւ ջրտէին շարլ ըզհրատիւ ,  
 Զանօզուտ զենըս նոցուն եւ զերթվարս արկեալ 'ի հուր :  
 Ծուխ եւ ճննձեր բոցախառն մըրրիկելով կըցէր յերկինս ,  
 Գոյժ ջրտելոց խըղելոց , կոծանաց ձայնք յամպս որոտայր :  
 Յերրորդում զամբն սուկերց նըշանաւոր հոյակապից ,  
 Յորս առաջին Յուգագան բազմահառաչ աւազելին ,  
 Ի սափորս սուկեզէնս ու 'ի խըբարգետոյս հաւաքելով ,  
 Ըզաւմիկ խառնազանձին ընգաւազեալ ծածկեալ յերկիք ,  
 Հատեալ վիհս եւ վերապս անգընգափորս եւ լայնալիբս ,  
 Եւ երիցս ունաձայն կարգան զանուանըս զնայելոց ,  
 Գիշ ունեղով զալս 'ի խոտնարհ մինչ 'ի խորին սանգարամեաս :

Դաւանային ողբալով քան ըզնոտս զեւրեանց անձինս ,  
 Զի վազիւ եւ ինքեանց վիճակ ողորժ արկեալ կայր նոյն :  
 Որ այսօր յերկրի շըրջին՝ վազիւ 'ի խորս հողին անյուշ ,  
 Եւ 'ի սիրտըս սիրելեաց վազ քան յերկրի մոխրին անհերտ .  
 Ո՛վ բուան եւ անողղք հէք մահացուաց ճակատապիք :

Իսկ ողիք մեղսածածաւ սեւածորմիք գնային յանգունգա .  
 Կայր Հրեշտակ մահուն խարէր գրոյժ ստրաշէկ 'ի սեւա Զակասս ,  
 Առ բարապանըս գըժոխոց նիշ բարկութեան նրզոկէց Ցեանն :

Չայգոսիկ խաժամուժն ըստ հաւատոց իւրոց գործէր .

Իսկ Բէլ՝ եւ Բիւրասպի եւ ոչ ստեղաք յաւադանւոյն ,  
 Համակ միտք ամպարիշտք , ծաղր ըզնոսին առննն եւ զիրօնս :  
 Բայց միայն թէ աչք խոժոռ մի անկչին ինչ 'ի Բելայ թագ .  
 Եւ 'ի բախտ աստուածութեանն , այլն ամենայն քաղցր ժըմոտէր :

Նոցա գործ եւ խորհուրդ՝ ծածկել եւեթ յաչաց ըզգիս .

Իսկ Հայկեանց եւ վրաստանաց զանկեալս իւրեանցըն տոհմայնոց  
 Հանգերձեղում՝ յուզարկել յաւիտենին առ յոյս եւ սէր :

Լըւացեալ եւ վրաստակս ըզցեցուցեալ սպիտակափայլս ,  
 Եւ ջերմոց կարեւորաց ողբանըւազ գառն արտասուօք  
 Ի գազաղս հանգուցեալ , պըսակեալ յոստ մըշտապալար ,  
 Անմահութեան նըշանակ , մըրտի՛ նոճոյ եւ տօսախի ,  
 Ի միջավայր բանակին համուռ 'ի մի տային ժողով :

Չի մահուն սուգ եւ կրօնից մեծամեծար վայելութիւն  
 Ի մտաշցօնս գարձոյց՝ ընաւին կըրից արկեալ թըմբիր ,  
 Եւ 'ի մի խառնեալ ձուլեաց այն օր զկողմանսըն զերկոսին :

Աք ծերքն աստուածամերձ , Նոյ եւ որդին իւր Մանիտան ,  
 Օրհնութեանս առ միայն անեղն անմահ նըւազելով  
 Եւ ազօթս՝ յանցուածոց հանգուցելոցն 'ի քառութիւն ,  
 Բառնային այնուհետեւ միանգամայն գըտլոր գազաղս :  
 Առաջի Մանիտան ազօթելով մըրմընջաձայն ,  
 Եւ 'ի կարգ անկեալ ըզինի աւազանին եւ զօրաց վաշտք ,  
 Եւ որ անգ սիրելիք եւ կարեւոր ինչ թայրաթոպ  
 Հանին թաղեցին 'ի մօտ բըլըւրն անտառախիտ :

Ոչ Աըստամ եւ ոչ յիւրոց պ մըտերմոց գոյր 'ի հանգէնն ,  
 Այլ թէպէտ եւ սիրտ խոցեալ Հայկ 'ի խորին ընկըզմեալ սուգ ,  
 Աւաքեաց ստեղայն յիւրմէ գիմաց զվոռնակ զիւր զինակիր ,  
 Եւ զհաւանակ ծերունի զհաւատարիմ պառազամուր ,  
 Եւ յընարական ընդոճեաց զարին Չարմայր եւ զԱրտաւազ :

Իսկ յաւուրն երրորդի , մինչ յազեցեալ լալեօքն հանգեան ,  
 Կամեցեալ հօրն Հայոց զվաղածարշամ իւր որդեկին  
 Մեծաշուք հանգերձանօք գյուզարկ թաղմանսըն վըճարել ,  
 Ետ հրաման կանգնել կոթոզ 'ի ճամբարին իւր հրապարակ  
 Բարձր յերկրէ բոլորածեւ 'ի սիզարոյս հողակոտոյ .  
 Եւ զամբոին իւր զամենայն շուրջ բոլորէր ըսպատազէնս ,  
 Արնազէն եւ ասպազէն վռոեալ հետի եւ այրուձի .  
 Բամբըշտք , գըստիք եւ հարսունք զբըրգամբըն շուրջ՝ 'ի թուխս համակ ,  
 Ինքն , որդիք իւր եւ թոռունք 'ի նոյն 'ի զէնս հուպ պար առեալք ,  
 Եւ Թորգոմ ծերունի արտասուածոր զողջոյլ ալեօք



Յողորմ մահ սիրեցելոյն կայր առ որդւոյն իւր գիւցազին-  
 Հայրապետ Նոյ, Մանիստոն բազմին սրբոյ յաջ եւ յահեակ,  
 Պրականալք զիրանունս 'ի տրխորեանդ սազարթ նոճի :

Անդ յայնժամ հասակակիցք հէք պատանւոյն գիաբարձիկք  
 Ի վրանէն հանեալ եղին զանշունչն Հայկակ 'ի խարթոխ անգր,  
 Եւ ամբոխ բազմութիւնն արանց կանանց եւ մանկւոց  
 Դառնահեծ ողորմ ողորմ աշխարելի բարձին կական :  
 Հայրըն Հայկ ձըգեալ ըզուր, աչք իւր յերկինս, զենոյր յառաջ  
 Որթ մի մատաղ եւ փափուկ, նոյն եւ օգի մի եւ այծի .  
 Զնոյն արարին եւ որդիք քաջին Թոռունք եւ մըտերիմք,  
 Հարիւրք յանգեայց եւ հօտից անկեալ յարեան Թաւալէին  
 Ամահին պատարագ 'ի հաճութիւն մահկանացուաց,  
 Գնացելոյն, Թորգոմազանց եւ համօրէն սպային ուղաց :  
 Յազգէ մէն մի ողջակէզ Տեան հանէին 'ի սուրբ սեղանն  
 Անարժելի վեմաշէն յասպարիսին կանգնեալ 'ի մէջ :

Մինչ վառեալ բորբոքէին 'ի քառադէմ սեղանոյն կողմ  
 Բուրանոցք չորք ծրխելով կրնդրուկ զբժու ստալին եւ հարուէ,  
 Պաշտօնեայն երկնաւոր աստուածարեալն Մանիստոն  
 Զալս ընդ երկինս ուզերձեալ եւ ընդ նըմին զչաստահօրն սուրբ,  
 Քարողեաց 'ի Տեան հոգւոյ զքամբանակոս քաջի Որդւոյն .

« Որ ես Տէր կենդանութեան, իշխան մահու եւ զբժոխոց,  
 Որով սրբոյ տաճարիդ՝ երկինք զըմբեթ, սեղան երկիր,  
 Ընդ անբան զենմանցս ընկալ Քարձրեալ ըզոր՝ մեր զանարին  
 Ըզբրտին Հայկայ եւ զուան նորս եւ զմեր բոլորեցունց .  
 Զոր ցաւալք եւ մորմոքմամբ յերկնից բազինդ հանեմք նըւէր,  
 Պատարագ քաւութեան եւ հաշա լինել սան Թորգոմոց,  
 Հովանի սիրեցելոյն եւ Զբրուանոց եւ Յաբեթի .

Եւ տալ եյս յաջողուածոց կասկածազին պատերազմոս,  
 Ընկալեալ զ'ինմա զենումըն հաշտութեան ըզքաջիս մահ :

« Կրնա բիւր երանի, զի քաջութեամբ եւ քաջ անուամբ  
 Ի վերայ երկնից Սրբոյն եւ հայրենեաց նահատակեալ,  
 Եւ ոչ վազեալ ինչ արտաքս ըստ պատուիրան հօր գիւցազին ,  
 Անդ ուրեմն 'ի քաղաքըն կենդանեաց պրսակեցաւ  
 Զանթառամ գանձեալ պրսակն հայրենասէր նահատակաց  
 Անկելոց փոխանակ աստուածասէր ազատութեան :  
 Վասն այսր ամենայնի երանեմք քեզ, արի մանուկ,  
 Եւ զու զմեզ յերանութեանդ յիշես յաթոռ անմահին հուոյ :  
 Իսկ կենացրդ հանգէս, մի ազետից դառն յիշատակ  
 Զբրկելոցս յայգալիսի արգար անձնէդ եւ յիմաստուն,  
 Քաղցր եւ հեզ եւ մարդասէր, ամենեցուն բարձր ապաւէն :  
 Ըզքաղուի քո հզօր գոգչէ գարուց գաշա ուղշոունի .  
 Անդ խայտան Թըշնամիք, անդ յողբ նըստի տուն յաբեթեան :

« Եւ գու հայրդդ վեհազն եւ Անոյ մայրդդ հայկազանց,  
 Դիւցաղանց ծընօղդ մեծ, ո՛վ որ անգէտ անսկընկալ  
 Հասելոյ քեզ սըգոյդ՝ ՚ի հայկազն կանգնիս յուսով  
 Իմաստուն պահապան եւ հօգանի վեհ գիւցազինս,  
 Դուք քաջի Որդւոյ ծընօղք, ձեր մանաւանդ մընային գիրկք  
 Յայտ՝ ՚ի հըւ կամեկասար ՚ի ծնողասէր որդւոյ թափուք .  
 Որ ընդբարձքն զանցուցեալ յաստուածակարգ ՚ի սոյն հանգես,  
 Իբրեւ միայն հարազատ զուակ Որդի անուան եհաս .  
 Իակ աղջին ըզքաջաղն հայրանըման՝ ձայնեալ Հայկակ,  
 Զաննախանձ եւ զանյալազ յայլոց ըզփառաւն ժառանգեալ :  
 « Բալց վըշտիդ այդ ըսփոփումն յերկնից ՚ի ձեզ հընչէ գզեկէն,  
 Ուր եհաս ամրացաւ ըզխրեղեացն առեալ զըզուանս  
 Ի ծոց հօր բոլորեցանց՝ հասուցին Նոյի եւ Թորգոմայ .  
 Անուն քաջութեան արձան անընիջ յերկրի կանգնեալ,  
 Զա՛հ ՚ի գլուխ վառեալ նորուն զինքն յառաջնորդ վերին շաւքին  
 Առաջի հարազատացն եւ Թորգոմեան քաջորերոյ :  
 Դուք, հայիսզքն գիւցազունք, հօր մըխիթար լիջիք փոխան :  
 Հուպա քաջք, որպէս չունչն աստուածամուխ յաւէժակոյ  
 Յանմահին ՚ի ծրար կենաց յարփին վերին ամեհոփեցաւ,  
 Մօր մահացուաց մատուցուք եւ զերկրաւոր նըշխարս ՚ի ծոց,  
 Յօր կոյ մեղ ամենեցուն երթալ ՚ի կէտն ըսպաւունթաց .  
 Քաջ լերուք, յարփեմանձ՝ աշտարակին զըացուք զիբարս » :  
 Լուռ եղեւ, եւ գաւք ՚ի կարգ անկանեկն յուզարկաւորք,  
 Յառաջոյ փոքք եւ տուփք եւ նուագածուք ողբերգելի,  
 Ըզչիւնի՛ հետեաց ամբոխ եւ հեծելալն արիագունդ .  
 Ընդ որս գային խառնեկն յայլոց վաշտուցըն մըտերիմք,  
 Եւ Ամնակ իւրով խըմբիւ առ գիւցաղինն եւ մանկան գութ .  
 Գնայր եւ Ընձակ պատանեակ թաղծեալ ՚ի սէր Արմայխի :  
 Ամենեցուն կերպարանք սըգոյ, երկաթ միայն զգեցեալ,  
 Երիվարք ՚ի սեռւ սըթար, զէնք ՚ի խանար՛ շքրէալ յերկիր :  
 Զհետ նոցա պատանիք մանկահասակ եւ սպաւազէնք,  
 Դափնեալըսակք, ՚ի շորից բարձեալ զգազազս սարգենաղարգ,  
 Թուրն առ քաթին, կապարձք, աղեղն, ասպար, նիղակ, զարգ մեծաշուք :  
 Զհետ նոցա Նոյ, Մանիտան, Թորգոմ եւ Հոյի որդուք թոռամբք,  
 Հրատն, Զարեհ եւ Փառնակ եւ այլ սիրուն աւագորեար :  
 Ըզչիւնի նոցա հայկանոյշ եւ Արուսեակ ընդ բամբըշանին .  
 Թող միայն ըզԸուշանիի, զոր ընկերացն արգելին գութք,  
 Յօր եւ Առաջիկ ողորմեալ, յեղեմական սլացեալ գրախտէն,  
 Յեռ ընդ ուղոց պատանեկին անդ գիրկընդգխան համբուրելոյ,  
 Եզիւնընն արոտասուակցորդ զհայկանուշոյ զգեցեալ զերեսս  
 Առեալ ՚ի գիրկըն զըգուէր եւ արծարծէր զոգին առկայծ :  
 Արջնաղջեստ զընան կուսանըն՝ ՚ի ձեռս իւրեանց ուղէք նոձի,

Արտասուք գանձավիժան ընդ գալիահար այս գեղեցիկ,  
 Այլ ոչ ճիշ, ոչ գոյժ կառաչ կականարարձ կոծոյ ջնայեց-  
 Տեսիլ մեծ պատկառելի, անմահութեան յուսոյն հանգէս:

Մեռելոց Թառուտ բըլբոյն հանեալ 'ի գլուխ' ետուն Թաղման,  
 Առ նրոն եւ զարիւնոտ մարտից նըշան ըզքաղին զհնա:  
 Գոչեցին ըսպայազօրք եւ սիրելեաց զհետ նորա պար,  
 « Բարեաւ երթ, եզբայր սիրուն, բարեաւ զընդիս մեր սիրային,  
 Երթ բարեաւ քաջըզ գիւցազն եւ գիւցազին, քաջի որդի:  
 Գամբ եւ մեք հուպ ընդ հուպ, զայս աւետէ մեզ պատերազմս »:  
 Կոյսք անդ կրրկին յաշխարահեծ լացին քըքուսանս ազիտորմ:

Ծածկեցին ըզգերեղմանն հարթեալ զքետիննն կուռ եւ արամ,  
 Յարուցին 'ի վերայ շիրիմ' ահեղ ըսկայազօր  
 Մեծամեծ եւ արաստոյ վիմօք անտաշ երկոտասան,  
 Մի քան զմիս փոքրրկացեալ 'ի յուրան մեծ աւարտելով-  
 Տընկեալ ուսիս գիտարձակս եւ ողբաձեւս 'ի ներքոյ շուրջ,  
 Եւ զնղբք նոճս արտաբոյ' սրածայր գիտակս երկնատըլաց:  
 Եւ գրիչ Խորտար քանգակէր, « Հայկակ Հայկոյ գիւցաղին ճնս »:  
 Արձան յիշատակի քաջի մանկանն յազգ Թորգոտեաց:

Այսպէս ողորմ վըճարեալ գիահանք հէք պատանեկին,  
 Յանգրէն գարձ 'ի բանակսըն գըտանենն զըսպասաւորան  
 Ի սպանդից պատրուձակացըն պատրաստեալ խորտիկ պէտպէս.  
 Զոր գիւցաղն առատասիրտ ուձիկըս տայր տանել զընդից,  
 Անխրտիք եւ անխընայ բաշխել բոլոր 'ի սպայակոյտն,  
 Որոց եւ այլ ինչ բազում յըղեալ յիւրմէ ճոխ մատանաց  
 Ձիք գինւոյ իւղոյ մեղու եւ ազանգեր ազցս անուշից,  
 Ինքն իւրովքն առնոյր ընթրիս, եւ բամբըշանին յիւրեանց խորանս:  
 Այլ չեւ վըստամ, չեւ դեռ եւս իւրքն 'ի սոյնս յարել մերձենային,  
 Որ կամօք սըրտից իւրեանց, եւ որ յահէ խոժոռելոյն.  
 Զի գըժգմեալ կայր մըռմըռեալ ընդ որոց գամ մի առ Հայկին  
 Սէր ցուցեալ մըտերմութեան՝ ընդ նորա իրս գըտան հազօրդ,  
 Ընդ Առնակայ մանուսանդ, ոյր եւ լընոյր տեւելոյն առի:

Զայն գիշեր գումարեալ զտապանին Բէլ 'ի խորհուրդ,  
 « Մերկացայց, ասէ, յատեանդ ըզթաքնութիւն մըտաց իմաց:  
 Վըտտամ մանկտողն, ահա տեսէք, ինքնին կալան ըզմեղ աշխատ,  
 Ոչ սահաւ տխրանացուց արիւնք ըզձորս ողողեցին:  
 Յաղթեցէք, բազմութեան շնորհ, եւ շնորհ քաջաց զօրազըլխաց.  
 Բայց անկեալքս ըզմեր կորուստ բազմապատիկ յանգիմանն:  
 Առնակայ յայտ առնեն խօսք, զի առ նոսս չքնացին ձեր բանք.  
 Իսկ զարգիս եւ Հայկ ինքնին իսկ գըրէտովն մեզ զարթուցեալ,  
 Են եւ զրոյցք Թէ հուպ Թիկանց եւս ակն ունի նս հիւստոյ.  
 Եւ մեր գունդ նիզակակից չեկըն ցայտար չերեւեցաւ,  
 Եւ տոսպականն արշաւան չեհասս 'ի կէտ նըպատակին:

Ի կրօնից հաւանութիւն բրննի նուաձնէ է անհրնար .

Ձայդ գրուի մերոց գաշանց Թողացուցուք Թորդոմացոյն ,  
Եւ հրեշտակ արարեալ առ նա միայն բարեաց խոստամբ ,  
Ձերիւս եւեթ խընդրեսցուք , զհնազանդութիւն եւ զկոյան ալեղ ,  
Ձայլն ամենայն առ յապայն ընձեռեսցէ մեզ ժամանակ :

Վբտտամեանք առ ամեթոյ եւ հերձուածոց գրտան անոստ ,  
Սա 'ի վրէժ քննու նոցա հաւանեսցի մեզ' ակն ունիտ' » :

Անողք գեհպետ Բիւրասպ եւ քրքումպետ կրքիեաց անդէն .  
« Բաբէ , այնպէս ուրեմն հաստատեսցի գահ գիւցազինդ ,  
Եւ շիցէ նրկատութիւն այդ փորձ կրքիկն քում քաջութեանդ .  
Իսկ իցէ դք հնազանդեալ եւ ոչ կրօնից տեառն հըպատակ ,  
Եւ կայցէ ինչ ակն ընկձնէլ զապերասան ըմբտտութիւն  
Յանձնապատան գիւցազին խորհրդական հանձարեղի ,  
Կամ խիթալ թէ զիջի բնաւ ընդ վըտտամեան ընկերչակէլ :  
Այլ իցէ իրպես եւ է , տէր էք կամոց ձեր եւ ըսխտին .  
Ինձ քաւ շիցի Թողանալ ներել նրմա գոյզն 'ի դեհէն  
Ձոր ինձէն իմով շքթամբ քարողեցի յատեան նորս .

Մի յայդ գործ զիս տեսցէ տէրդ , եւ զոր կամիս' արա գեպական » :

Ծանր առ այս իշխանաբար դարձոյց 'Եբրովթ պատտախանի ,  
« Եւ քո իսկ բերանով հաւատք ասպար են տէրութեանց .

Ապրեսցի Թագին կեանք , խորտակեսցի քաջին վահան .

Այդ ոչ նրմա ինչ եպեր , կամ մեզ զուխտից մասն ինչ մատնէլ :

Ձայն յուսոյն յորդորական հընչէ 'ի սիրտս ակեաաւոր ,  
Ձապատում բըրտութիւնն յամով եւ ստէպ նուաձնէլ աղղամբ :

Ոչ 'ի մի հըբոր հարուած սուր տապարին' անկաւ կազնի ,

Արապարն 'ի սըմբակաց ձիոց անցից չիմացաւ ինչ ,

Այլ կակուղ ջուրքն զեռմանց անհատ սահանք ողորկեցին » :

Ձայս ասեր , եւ զխորադէտսըն զԵփլա եւ ըզՍաբա  
Ձաթտանեանս , եգեալ նոցա բան 'ի բերան , յըզէր առ Հայկ .

Որք եկեալ ընդ գողուլիս 'ի լուռ ճամբար Թորդոմազին ,

Մուծան 'ի վրանն ուր նըստէր գիւցազն որդւովք եւ ծերունեօք :

Ողորկ ընդու եւ Թըրթրակ Սաբա յոտին տայր ըզպատգամս .

« Ինչքնապալն աստուածանման ոչ մուսացեալ զիւր սէր նախկին , —

Ձխոժողուցն ատենին տեսեալ էած Թափեաց անդէն , —

Թէ մերով ինչ օրինօք յօգեմք բարբառ' ներեսցէ քաջդ .

Ըզտէրն առ քեզ եւ ըզլլատակ քո զառաջին ոչ անտեսեալ ,

Ձայս պատգամ' առանձինն յըզ՞ առ քեզ իւր արժանիդ :

Ցեսեր ից մինչեւ ցայսօր ծառայեցեր ապանորհաց ,

Ծառայեցեր , չիշխեցեր , եւ գղբա զինչ հատուցին քեզ :

Ձոր ատնէ ինչ դք' ըզնոյն եւ զըտանէ յայլոց կըշիս .

Ձի մերժեցար , եւ զորդիդ քո կորուսեր ըզտրանսունդ :

« Ի նանիւր եգիւր 'ի մտիդ ըզլլայրենիսդ յերիւրել մարդ ,

Եւ արդար իրաւամբք արիւել երկրիդ զոր քո հաշուիս :  
 Այլ աշխարհ եւ տերութիւն որում անմահ տացի արգիին,  
 Նա՛ յերկնուսա, եւ յերկրէս հըզորնն Բէլ՛ նորուն պատիեր,  
 Նորա է, եւ նա է տեր : Եկ ազէ գու գարծիր առ իս,  
 Եւ յերկց հրամանացս զառաջինն շնորհեալ քեզ,  
 Երթ զոր կամես պաշտես զաստուած, բայց հնազանդես տիրող ձեռինս,  
 Եւ ասցես ինձ զորիորդ ըզգուտորք քո զե՛մ ցանկալի .  
 Արա ի՛մ անգիմամարտա զգրութեամբ ընկձեալ զցոսա,  
 Տէր ըզքեզ ՚ի վերայ գրքոց նոցա կանգնեմ յաւե՛ժ,  
 Եւ անկտակած վայելես ընդ հովանեաւ մեծի Թազիս .

Դու քեզնն իսկ արդ տեսեր՝ ձեր քանձօն է գրութիւն :  
 « Իսկ ապա թէ այսքանոյ ներողութեան կացես անասա,  
 Դիտասիր անա եւ զայս առ քեզ սիրոյ նըշան անխաբ,  
 Վըստամենց խոտոր խորհուրդք եւ աչք մընան ակնարկութեանս՝  
 Համազունգ յիս անցանել . եւ զու յայնժամ զինչ մընաս՝ անս .  
 Թէ ՚ի հիւսիս յաւացար, հարաւ հանգեալ կայ մըտընչեալ » :

Արանց զայդ, որպէս օրէնն է գոռոզոց նենդապատիր :  
 Դիւցազին սիրան ըսկըսաւ արտփել ՚ի ըննջըն Թաւարծի,  
 Եւ բարբառ հատուկըիր, բայց աննազէս զայս արձակեաց .

« Աւելորդ իմն էր առ մեզ այդ փոփոխումն պատգամիդ,  
 Ասացար իսկ կանխաւ առ ձեր հրեշտակ երկիցս անգամ,  
 Եւ ոչ ըզմիդ անձուք յանձն ՚ի զեղծուցիչ պատեր բանից :  
 Բաւ քաջիս ընդ բընասար ձեռամբ ըզերտօտան արկանել զլուսի,  
 Առ գիւրբ կամ ճոխութեան զազգ իւր մասնել ՚ի գերութիւն :  
 Ոչ այն խոյ է գիւցազն Հայի, ճեռ անգրանիկ Թորգմանձին,  
 Զոր գիցես հեղինակ աւագ հօտիս պարարտարոս,  
 Զկամն ուսել, զքեզնն ըզգենուլ, զենուլ ՚ի պորտ աստուածութեանդ :

« Կարող են զգաստմանք, յայսր ՚ի վերայ մեծ ապախտեաց  
 Որում քո իսկ շըրթունք յախամայ կամըս վըհայնն,  
 Եւսելուլ կանգնել աւարտ եւ զոր սպաննաւոր փառութիւն :  
 Այն նոցա հոգւոյն պարծանք՝ որով գիւրեանցն յայանն ըզրան .  
 Իսկ եռ յայնժամ շնորհ կալոյց աւետալուր Երկինց ձայնին,  
 Որ յանգործ գատարկութեանց զերծուցանէ զիս յարուցեալ,  
 Յորս ըմբընենաց զիս օրէնք արգարութեան եւ արքնութեան :  
 Եւ տացէ նա յայնժամ զպողովատիկ իւր ինձ ՚ի ձեռս .  
 Եւ ՚ի մի կոյս Բէլ իւրովն, Աստուծով Հայի սոսկ ՚ի միւսում,  
 Ի՛նչուք ՚ի գաշա առ միմեանս, երեմեացուք գե՛մ յանգիման,  
 Տեսցուք ըզգլուխըք պահեսցես, ապա թէ զիս իշտան կանգնել :

« Արանց ի՛մ չիք մեր ճակատ, տեսէք գուք զայսա, եւ զիս տեսէք,  
 Եւ զարմանք են քաջաց պատգամանիդ ձեր անպատկառ :  
 Ի՛մ կամք սրբոտի այն էին, գոռալ մարտի ընդ ամապրէսս,  
 Իսկ թէ յոյր ձեռնն՝ չէ փոյթ . ոչ մարդ է ձեզ պատերազմոց,

Այլ Աստուած. այսօր 'ի ձեռքն Վըստամայ զմարտը մըզեալ,  
 Եւ ըզձեզ եւ ըզնա մասնէ, յամօթ յոյժ վատթարեալս.  
 Վաղիւ ինքնն գիտէ՝ որպէս տայ զձեզ 'ի բուռն Հայկայ:  
 Չիք ինչ ինձ 'ի վըստամանց տոչ ձեզ երկիւզ կասկածանայ.  
 Վանեալիք մինչեւ առ իս, այնուհետեւ Տէր ինք տեսցէ:

« Օ'ն արիք, Հայկ ոչ 'ի մարդ է խարըստեալ ըզոյս սըբոփն,  
 Ձանգիտէ ոչ յուսկէք, բայց թէ միայն յերկնից Տեսանէն:  
 Եւ ոչ անտի կասկածէ՝ որ զերկնայնոյն ուրացաւ զահ.  
 Որ յԵրկնէցն շերկընէ՝ նըմն Նրկինք են սիւրիմ »:

Ելանեն կոր 'ի գըւտ ընդ խիստ պատգամն պակուցեալ,  
 Եւ գարձեալ գալապոզի՝ Թարգմանեցին յունիքն Բե'այ:  
 Զըջանայր տիտանեանն եւ գենպետին տայր իբառունս,  
 Սնըջանայր Բիւբասափ, սեզ առեալ պերճ նազէր անձայն,  
 Եւ խորագետ հանձարով ըզգըժպըհի զանձըն ծածկէր:

Ըզգընէն ողջն Հայկ յուղեալ ծըբէր 'ի սըբոփն խորս,  
 Իբր 'ի ծով մըբըկածին անկանիցին այսք յամենուստ,  
 Եւ ալիք զալիս առեալ կոհակք զիտհակըն մըզիցեն,  
 Եւ համօրէն ծոգափոռք մըբընիցին տհաղմագոյ:  
 Մերթ յեկեալ զեսնն ակնարկէր, մերթ յառաջիւ ըսպանայեալս,  
 Հապ յեղբարն 'ի հիւսիսի սլանայր մըթօք երազածիւ,  
 Հապ ընդ իւրն Մանաւազ, յարի որդին յԱպահոսնիս,  
 Ի քաջացն ակընկտընալ գալուստ գետտին ամբանայր ցանգ.  
 Զի զանկուտն վըստամանցն նըջմարեր անկանգնիլի:

Իսկ Վըստամ խոնջ եւ վատասակ եւ յուսակուուր յեղից մարտին  
 Հայեցեալ յանալընկալ եօթնեակ աւուրց տիտանեան շնորհ,  
 Տեսանէր զի ժամ էր այն վաղիւ մարտին նորոգելոյ.  
 Այլ զընգին իւր խարտակումն օգնականօքն Հայկապանց՝  
 Լըռութեամբ տայր հեծեծել, չիշխել բըռնի վարել զըսկայս:  
 Թէպէտ վերին երեսօք զուարթատեփլ զինքըն բերեր,  
 Մերսն յարեան ընկըւզեալ ծով անկեալ խորգայր քուն յուսահատ:

Այս ամենայն մինչ տարուբըրք էին յերկուց մէջ բանակաց,  
 Մանաւազ քաջ եւ համհարօքն՝ արին Թաթուլ, Ներսէն ուշիմ  
 Ըզբերանցն ապահոսեաց հարկանէին ըզձանապարհ,  
 Որ յանուն արի որդւոյն հօրն Հայոց կոչին ցայսօր:  
 Զի նորա վիճակ հասեալ ժառանգութիւն՝ եւ անգ նըստեր,  
 Յորմէհեաէ աշխուժիւքն ըմբատ հարեալ երիտասարդ  
 Ի Բերսր ալաղեզ օրիորդ գուտորր Ռահանայ,  
 Էր իւր 'ի կինն առազաստեալ՝ զիւցաղին հօր իւրում յանկամս,  
 Եւ առ գուժ սիրոյ կուտին առ սոն հարեալ զամենայն ինչ:

Գիտեք Մանաւազ ըզբնակութեան քաջին ըզկայս,  
 Այլ մոցեալ յորմէհեաէ եւ մենացեալ օժէր անգէն,  
 Զի էին այն ամբ երիք, չեւ էր երբէք երթեալ առ նա:

Ամբռնային 'իւլերինս' ուստի գիտեալ անհարկէին  
 Յաղմէ 'ի ծով բըզնունեաց եւ յահեկէ 'ի Հայկաշէն,  
 Ի Հարբայ գաւառին գեղապարոյր հովաց պարզուած:  
 Իբրեւ անցեալ ընդ անտառ մի ծմականիստ եւ Թանձրաբոխ  
 Ելանեն արտաքս 'ի գլուխ զառ'իվայրի միոջ բարձու,  
 Երեւէր բըլուրն հանգեպ բոլորածեւ գեղեցկանիստ  
 Ըզթիկանց կապոյտ վեմքն իբր 'ի տասաակրս նրկարէն,  
 Աս 'ի կողմն անկեալ ընդ մեջ խոսխոտունեաց եւ գընունեաց,  
 Յոյր կանգնեալ էր 'ի դագաթն Հայոց քաջին բարձր ապարանք:

Ապարանք տաճարածեւ բոլորաշէն եւ գըմբեթարդ  
 Ի կըճեայ 'ի սրբատաշ բոլորչէ սիւնրս կառուցեալ,  
 Որ պատէին դրոլրակ դաւիթ 'ի շուրջ սալայատակ:  
 Ի միջին կտրկաջանք եւ ըզբօտանք ջուրջ 'ի ջընցուզս,  
 Որ իջեալ ժողովէին փոքր 'ի լըճակ կտրակնակերտ,  
 Ըջնոճաւ բազմականք 'ի ձիւնափայլ ջինջ մարմարից:  
 Բզեսամբքն վարդենիք գալարածոյ սողեալք 'ի վեր,  
 Ի վերնայարկ լուսանցոյցս հովանանան տան եւ դաւթին:  
 Արտաքոյ՝ շուրջ բարաստանք ցիր ծաղկոյցաց շուրջանակաւ,  
 Խուսիք եւ տունկք ամենազցի բազմաբուրեան ծաղկաբերաց,  
 Ուր յասմիկք վարպէ եւ յակինթք հօրուտք մօրուտք եւ մանկէշակք  
 Բիւր ազգի ազգի նարտ սըփոռեալ կըկեն գերկրին երեսս,  
 Եւ բիւրուց երգինց նըկար՝ ծիածանի հարկանէ փայլ:  
 Անքր յեզեր սպառուածին շուրջանակի վանգակեալ ցանդ  
 Ի կարմիր եւ 'ի մանունց սեանց կըճեից կարգեալ 'ի ծիր:  
 Եւ անտի անգր 'ի բաց՝ անթառամ ծագք եւ Թաւաթուսիք,  
 Մուրտք եւ նոճք եւ սուսիք եւ սարգենին քաջաց պըտակ:

Իսկ անգուստ արտաքս 'ի վայր՝ փայտք պըտղաբերք եւ մըրդաւէտք  
 Խընձորոյ տանձի բալից նըռան գեզձի եւ ծիրանի  
 Յարեւուն արեւալ ճաճանչս եւ հոտ անոյշ յօգըս շքեշեալ:  
 Ուրք որթոյ գետնանախանձք եւ կէպք փարեալ ըզբըջարեոք,  
 Ի ներքոյ յերեսս հողոյն պէսպէս բանջարք, համեղ խաւարոք:  
 Եւ 'ի վերին լըճակէն վըտակեալ ջրոյն ականախիտ,  
 Ջեռացեալ մեղմիկ խոխոջ գալարածեւ խաղայր գընայր  
 Սողոսկեալ շուրջ ըզբըլլոմն եւ 'ի բնուին երեւեալ գէմս,  
 Որպէս վիշապ ահագին պարոյրս ստեալ ոլորաապարոյտ:  
 Թերեւս այսպէս պատ առնոյր 'ի սոտուարաբուն ծառ գիտութեան  
 Ի գրախան անեղաշէն՝ խօսուն վիշապն անգընգային,  
 Որ զարտուլ աընկոյն կորդեալ գեեւս 'ի գըլխոյ շոպեաց կանանց.  
 Եւ խարաման Պիւթոն զեռուն շողեալ 'ի լոյս արեգական՝  
 Յայսպոյն ողորկ նոր քընթըռնոց պատէր զՊանաս ի նըն պարոյր:  
 Եւ իջեալ ուղիք գընային խոխոմէին ըզհովտին գոգ,  
 Այլ յուզուլ աստի անտի արծաթափայլ հանեալ սոտու

Եւ ընդ կորիս Թաւաշեալ՝ ոռոգանեն զանդ եւ զգարասաւ :  
 Ըրբը ջրոյն վերուսա 'ի վայր բազմաճեախ ծառք վարտագեղք,  
 Անդ սօսք եւ սարոյք, անդ կազմախ, Թեղօշ եւ շօճ,  
 Անդ բարախն, հաշի, սղոշի, նըշտար, Թըմբի, գի եւ խըլեփ,  
 Հինաւուրց ծերօն կազնիք կըքեալ ամբն եւ խորշոմեալ,  
 Ձհովանիս աային 'ի վտակն եւ ըմպէին առ 'ի նմանէն  
 Ըջգորուծիւնըս իւրեանց, եւ զուարթացեալ պարարէին  
 Իրբեւ բնաւ անծանօթք 'ի տօթ տապոյ եւ յեղեմանց,  
 Այլ համակ յամերախառն օգս ուռնացեալ զարնանաղուարձ :  
 Եւ այդեացն բարունակք որ տաշտագեղ զընկեղքն ելեալ,  
 Պատէին իջանէին զեզերք գետոյն մինչ 'ի ստորոտ  
 Ծառոյ 'ի ծառ փայլ 'ի փայլ ողկուղակց կախեալ զրասանդք :  
 Ընդ սոսա եւ ընդ վըտակըն՝ ծագկալից զնալի գետափն  
 Ոտից մարգկան՝ ելանել ներքուս 'ի վեր մինչ յապարանան,  
 Եւ ձողաբարձ ցանգապատ յորսարանացն զատուցեալ :  
 Եւ կամուրջ յափնէ յափն արկեալ բաժնից անջրոգեաց,  
 Կամուրջ կըճեայք, ուր եւ մէն մի աւազանք ջուրց խոխոջմանց  
 Անդք իջեաց ըտտրերկրեայ 'ի բարձրաւանդ զարե ձորոյն,  
 Ուռնեկք ասախ անտի անտառախիտ հովանացեալք,  
 Որ զվարտագեղըն հասակաց կան նըկատեն 'ի նայն բիւրեղ :  
 Եւ ջրդէժ սահանդն 'ի ջինջ անտի կոնքաց անդրէն  
 Ելեալ սրացեալ փախէին ոտնակառեալ ալեաց խաղացք  
 Խայտալից կայտուելով ընդ նոյն յատակ պարուրածու :  
 Եւ ուրիք ուրիք առ ջրովն այլք եւ անձաւք հովանաւորք,  
 Ըրբը 'ի գրոշուս եւ զջըմբեթաւ բաղնիկապատք եւ որթաճնիք,  
 Որ 'ի սեք քաղցրիկ օգոյն հողմոյ Թեւոյ սօսափելոյ՝  
 Ըարժեալ տատանէին զաղարթագեղ բազուկս իւրեանց  
 Յակընթակապ ողկուղքք ծանրաբեռնիս եւ վայրահակս :  
 Իսկ արօտք 'ի պարուրոց մէջ գետակին գալարաբերք  
 Եւ արնկախիտ գարեւանդք՝ առ 'ի միմեանց ուրոյն ցանկեալք,  
 Արձակեալ անդր երէոց բոլոս եւ զասակըս պաճարաց :  
 Արեւիք վիթք այծեմունք յամոյրք եզնորթք եզնրագեղք  
 Թափ առեալ խաղային 'ի ստորոտին շըրջանապատոյ .  
 Անտի կարգաւ ցըվերին մանուածապատ՝ ձիք երիվարք,  
 Երբնէք եւ զուարակք Թեթեւ որթուք խայտացելովք .  
 Ապա խոյք եւ մարիք, բըրգեղ գառանց բերկրեալ վըտառ .  
 Ըջինի այծից՝ նոխազաց հօրանք ուլուք կայտառ զըւարթ :  
 Անդուսա 'ի վեր տարմատարմ՝ երփնանըկար հաւուց երամք,  
 Լօրից, սալամբաց եւ պարաց եւ կաքաւուց,  
 Արօտք եւ փափանք, շնորրք եւ այլ հաւք ընանանիք  
 Ձագախառն ընդ խրտատաճայն պատերազմօղ պաղազաց .  
 Բապք եւ սպք եւ ձիւնաթոյր պորք եւ կարափք երկայնավիք,



Որ լայնամասերն թեւոք մթխիր՝ հարեալ լուսին 'ի լինա :  
 Աղբ աղբ պէտպէս բարբառով կանչեաք ըզմարան հընչեցուցեալ,  
 Զերմագութ ամուսնասեր հաւալք տասարակք եւ աղանիք  
 Ընդ մարիս վարուժանակք զորգւովք վուժու գորովէին :

Ընդ թաւութ անտառափեա մայրեացն 'ի վեր մինչ յապարանս  
 'Նուազաւոր քաղցրափօսիկ սիրակարկալ հոյք օգուպար  
 Վարմահըտուց կեանեիաց եւ սարեկաց շքթուսիք սուլիքք ,  
 Աստուճակք եւ սոխակք եւ ճըտուական սրածայն ճրպուսնք  
 Ըզեւանակն համբրէն զըմերձաւոր բլուրս եւ հովետս  
 Լընուին 'ի ժամուն 'ի դայլայլիկ գուսանական :

Կաժիշոք Բերբայ եւ ազափնայք հանգրինձանէք  
 Իրբեւ թիթուսիք գարնայնի գեղեցկաձեմ անդ պարէին ,  
 Ինքն իսկ բաճբէն երեւեալ յաւերժահարսն գեղուհի :

Այս ամենայն յորինեալ 'ի տիպ փոքու նրմանութեան  
 Ագին գրախօփ նախահօրն, ուր պարէին ընդ իւր Հրեշտակք  
 Եւ ընդ մօր մարդկութեանս ընդ գեղեցկին յազգես կուսից ,  
 Ագինասերն Ատաղղիան վեհից Մոհաց շեմարանին  
 Ատերեալ զնրկար ձեւայն, մինչ չեւ քաջիս հօրն խեւեալ :  
 Քառասունք, պարտիզապան այգորգ հովիւ եւ անգէտոգ  
 Տուարատած եւ խաշարած, ձիազարման եւ կցտապան  
 Հըսկէին տիւ եւ գիշեր 'ի պետս 'ի ինամ գերգասազանին :

Երեցուն քաջայն իբեալ յառա բըլըոյն ըզանչելոյ,  
 Ընդ որմածըն շքջապատ գուրբս խընգրեալ մըտից 'ի նեղք՝  
 Յեւա հասաննն վըտակին խազայեղցն անգր 'ի հովիւն ,  
 Յոր անկեալ հանգչեք յերկայն մանուածաւալ մարմաննէն :

Ընդ գետեղբ ահեկի սկըսանէին տալ գոյթ 'ի վեր,  
 Համբրէն զբայնովք զմայլեալ եւ սքանչացեալ յամենայն քաջս  
 Ընդ պէտպէս չքնազաղիւտ գեղեցկութեանցն յորնուածս ,  
 Ընդ օգոցն սըրբութիւն եւ քաղցրաշունչ անտար սիք

Որ ըզթուսիքն ճօձնելով գըոյս գալարոյ շեմեցուցեալ,  
 Տանէին բերէին զբազմաբուրեան հոստ անուշից :

Իրեոց եւ անսանոց բոյք բընչէին բառայ պէտպէս,  
 Հաւք նըւազս հանեալ կարկաւս 'ի բազմեւձայն լեզուայ չքափնչ  
 Եկեւոյն ոջըն հիւրոց կամ երկիւղի տան գոյթ 'ի վեր :  
 Զուրցն հոսանք ընդ ջինջ քարինսն խոփոջիք բերեղափայլ  
 Խօսեին զբոլոր ափանց խանդազակամ քաղցր համբուրիք,  
 Բարեաւ մընալ աստցեալ, ոչ եւս տեսցուք այլ ըզմեմանս ,  
 Եւ աջկուսիք յերգ եւ 'ի նուազ 'ի սմափ ոտին կոյթէին պարս :

Ո՛վ քաջայն սըրբից անվանելի կարծր աբութիւն .  
 Եթժընպատիկ պըզընձի պարիսպ սծեալ զերիկամանալք՝  
 Ոչ լուծան, ոչ մեղեցան յայն փափկութեանց տեսիլ ու 'ի շունչ :  
 Քաջազանց փայլեւն զինուն եւ կըմբեկց շալ վահանայ ,

Ընդհան հոգին եւ գրքնդին խորհրդնջամայն ոսնաարոքից,  
 Կեդ տեւեւք, ՚ի զարմացումն զերեսցն ամէկին ջոկո:  
 Կեդ պըռուցեալ հայեին հանգարուն(Թաց) սրբեալ զոկանջս,  
 Այլք հարթուցեալ խուսափեն ՚ի հովանուս մայրեացն ՚ի խորս:

Ի գահի՛ննն սինազարգ առ աղբերացն ըզբօսանօք  
 Կայր Ազահ յառաւօտին պահու նըստեալ ընդ սիրուհւոյն,  
 Ըստ խընդոյ նորին պատմիք զարեական զիւր քալութիւնս  
 Ի Շիննեար եւ յարեւելս ընդ հօր իւրում շահատակեալ,  
 Եւ զնախկին իւր պատահումն ընդ գեղեցկին յանգ Ռահանայ՝  
 ՅՈրեգայ ՚ի սահմանս եւ յԱրքազայ պայծառ շինից,  
 Զայր փոխան մինչ գորովեալ ոսկեծըղի բերեալ բաղիցք  
 Ըջաաստք հովուն մանկան արբուցանէր կամն անուշակ,  
 Եւ ՚ի գուժ թընգուն սրբան, մեղմ ՚ի չըրթունս ժրփո ու՛ի բիբս,  
 Մերթ ՚ի գեղ նորին գիտէր, մարթ ՚ի բոյն զոյգ ծիծեանըկին:  
 Եւ խընդրեալ՝ ետ ընթա հայրն, ընդ արութիւնսն սրբարցեալ:  
 « Այլ՛ աւազ, զի յայնժամ ընդ Կերովթայ սրբամբանեալ հայկ  
 Հեծանէին՝ 'ի գիծի հարկանէին արիարար .

Այլ սքրթոցն անդ կէս անկաւ խուճապական 'ի յարհաւրաց :  
 Չարհուրելի խառնաձայն գոցմանն ըզհետ գայր լըուժիւն  
 Արաւել սոսկալի . եւ զառաջինն ոչ այլ ինչ լուր ,  
 Բայց շաչիւն շհահիւն զինուց եւ աղեղանց ճայթմունք լարից  
 Եւ կոփիւնք վահանաց , սըմբակազոփ ոտին արոփմունք .  
 Արգս յետոյ հեծուժիւն վերաւորաց , թառանք մահու ,  
 Եւ արեւմոք հեղեղատեալ ընթանայր գաշտըն մեծանիսս :  
 Կախուտս վայր մի խառնամբոխ մեծ կոտորած կայր 'ի տեղուին ,  
 Որ հարկանէրն՝ ոչ յայտնի , եւ ոչ իսկ այն որ անկանէրն :  
 Իսկ ապա մինչ ոչ սակաւ խրամատէին բեշեան ճակատք ,  
 Առ միտեանս այնուհետեւ բախեալ երես մաս առ երես ,  
 Ի բաժաց այր այր յայնժամ զիւր արուժիւնսնց ցուցանէր :

Չուարթմունք երկնաւոր , իմոյ տաղից շունչ հրաբերան ,  
 Չոգւոյս գու վառեա զխանդ 'ի բոցաթեւալզ սաւառնել ,  
 Դու զսքրթոխ իբր ըզքնարիդ 'ի քո մատունս ըզար պընդեա ,  
 Չուուրն ասա գու զնախճիրս , եւ ճ հհար նախ զախոյեան :

Պատանին նախ գեղեցիկըն հիւսիսի եւ արին Գոռաչ ,  
 Ի հիւսիսոյ 'ի մարզէն ընդ եգերեան գիմեալ հըրոս ,  
 Հայհոյութիւն 'ի բերան առ Բէլն աստուած եւ պաշտօնեայս ,  
 Յաւըն բոց փայլակնացայտ , վազակաւոր կայծակն 'ի ձեռս ,  
 Պատահեալ Սաթենի՝ գուժէր ընդգէմ որոտընգոսս :  
 Սաթեն զուր արկեալ նիզակ , սուր անգոգն մերկացեալ գայր .  
 Երբեքարք գաղանացեալ կանգնին հանգէպ կոխել վերեարս ,

Ջերդ գարննայ կըռան հեծեալք կոփեն սուսեր յասպար 'ի զըռւիս :  
Արք զարամբքն ըզնոյն մոլեալ՝ բազկեն զմիմեանս յերկուց կողմանց .  
Ծածկի գետին քիտկամք, գազանք հարեալ գափր առաթուր  
Խորտակեն զէն այր ասպար, ցայտեն սրմբակք զարեան բոսոր  
Ըուրջ 'ի զէն 'ի զարդ արանց, յերեսս, 'ի յաչա, 'ի զարգմանակս :

Անգ խըռանն 'ի տաքնապի՝ յոտոտս ձիոյն 'ի սասանել,  
Սաթենի մերկեալ ձախ ուս, էջ շանթահար նըրան Կուսաշայ,  
Հերձ զօձիս զրահիցն, եհար զուս եւ զանրակ . վէր ոչ 'ի մահ,  
Այլ քաջին թեւ անկաներ 'ի վահանին պէտս ապիկար :

Յայն ազէտ տարակուսի պատեն ըսպայք ըզգորսպեան,  
Ամբարձեալ ասպարս 'ի պահ՝ յետս 'ի գարման գառնալ գոչեն :  
Ոչ այնչափ առ ցաւոց՝ քան յամօթոյ կայր նա փոռնչէր,  
Բայց հարկէր տալ տեղի, փոխանակէր զինք Մահազան :

Իսկ արին Կուս յաջ յահեակ, աստի անտի շուրջ ըզնովաւ .  
Կոտորէր հինգ հինգ այր 'ի վահանացն անպատրաստարս .  
Հարկանել կամեր եւ զնա, հերձով ըզրազմն եւ անցանել,  
Խուժէին 'ի վերայ վեշապացեալ ընէտան ջոկառք .

Այլ յառաջնոյ խուճապէն եւ յարհարաց անտի նորոց  
Ըրփոթեալ էր եւ խոռվեալ ըսկայակոյտ բանակին ազո՞մ :

Անգ մեծըն Քարթլ եւ Եգեր իր ըզկըրկին վայրի վարազ,  
Որ փրփուր ընդ երախ արիւն ակամբ մըզին 'ի սուկն,  
Քաջալանջ եւ թաւարծի գընդիւք զերդ ծով անհեղադոյ  
Յարուցեալ մըւմըռեալ, յափն ընդ պարեխս անկեալ 'ի թափ,  
Հասին հարին գիթաւալ ըզգիմակացս արկեալ տապաստ :

« Եկայք փութով ընդ կարճոյ յուզարկեսլիք դուր ճանտապարհ  
Առ գիւցազն Հայկ թորգոմեան, որ էր գիմել 'ի մահ անշուշտ » ,  
Գոչէին . եւ 'ի Քարթլայ սուր նիզակէն անկանէին  
Վին ընդ լանջօրն խոցեալ, Արզուն ընդ թէկն 'ի փխրստի,  
Արին խոռեան ընդ ճակատ, եւ ընդ ծոծրակ վառըն Քայտուն .  
Սա ճախր առեալ կործանէր ընդ պարանոց երիվարին,  
Ոտուցեալ նա 'նդ գաւակն յորսայս յերկիր տախտապարեալ :

Ջերկասյրին ածեալ Եգեր եւ զԱրքարայ զազգըն զաջոյ  
Յանցանէն հարկանէ, զտապատանգէն կախին սըրուչքն .

Անտի 'նդ անհակն ընկեցեալ զահեղ փայլակնըն սատակիչ,  
Թուցանէ զջըռուս Ունիտանայ, եւ զԱրփային հերձեալ զտապար  
Ընդ անհակ ըտախն 'ի կողսն պատառէ զամուր զըրահս :

Մինչ կամէր պատրաստել 'ի դորդմանէն եւ կալ ընգգէմ,  
Որբեթեանն հասեալ հացի յերիվարին ականջամէջս,  
Ոսանոյր կանգնէր յոտս յետոյ, եւ տապալեալ ճըմէր զըսկայն :

Մըծիթիայ ժամն հարուստ մի ոգորեալ մենամարտիկ  
'Պանճոռնի չըսկայն Դըրուսասա՞ ոչ յոյժ ընգհատ եւ ոչ յարուեստ  
Կեողք քարինք 'ի ճակատուց կարկրոահոս շառաչէին ,

Երկուցուն քաջացն ասպար փրքնաց յեղէզըն շամբացեալ :  
 Մոռնքնեալ քարթնեան մանուկն յետս յետս երթ երիվարաւն ,  
 Եւ անգրէն Թափ 'ի Դրրուասոյն զըզըբքեալ բերեալ գերանն  
 Ահագին ըրկայմածեւ 'ի հրահային ընկենայր ընծա .  
 Այնու բուռն կործանմամբ յետս ընդ գաւակ տասպալէր նա ,  
 Ձի ոլորտս առեալ հեծանն 'ի Թաւալել անդ զիրագին  
 Ձգեանեալ լինէր կառափնատս եւ խորտակեալս հինգ այր հեռի :  
 Մինչ իւրոցն կողոպտել ըզնա 'ի դին հարան խանձեալ ,  
 Գոչեաց Քարթլ եւ կից նըմին համբակն արի հայրանըմն .  
 « Մի հայքբ , քաջք , 'ի կապուտ , յաղթել տեսեք , մեր է բանակս » :  
 Ոչ ընդհատ ինչ 'ի սոցոց ընդ արեւելս եւ ընդ հարաւ .  
 Ասպատակքըն բարգեան եւ Մովսանայ գիւցաղարմի ,  
 Եւ քաղաշու պընգակաղմ հեռեւակորըն լէկ եւ Հէր ,  
 Միագունք խառն յարձակեալ ելանէին 'ի գարանաց :  
 Յաջ եւ յահեակ Թեւակցեալ պաշարեին զսոխն յետուտ ,  
 Եւ գրոհեալ յասպարէս Թորգոմական բաղկին փառաց ,  
 Ձերդ զոհմակս ինչ ամեհիս արիննախանձ գիշոզ գայլոց ,  
 Որ 'ի գրուխ ամսոյն Յրէ ներքուտ 'ի համն յաւիւն ջեռեալք  
 Դառնացեալ երկայն սովով , փոր եւ սոսորդ երաշտացեալ ,  
 Քան յայլ ժամս զայրագին գունդ գունդ յաւար ասպատակին ,  
 Ահհարին հանին նախճիրս 'ի խոռեմեան եւ Բաքբայ վաշտ :  
 Յետ խառն 'ի խուռն կըռուոյ՝ Բաքբայ վիրագըն սոսկալի  
 Փատանին 'ի Թորգոմեանց խրղեաց կրքիին հաստաբազուկս .  
 Դու ես մին , արիդ Չուրա եւ գեղեցիկ երիտասարդ ,  
 Որ երբեմն առ հայրենի Մուրս ծովակին արնեալ աղատ  
 Ձբանուիր 'ի ցանց 'ի կարթ , 'ի գազանացն որոաց հանդիստ  
 Ի լիակիր յալին 'ի լիւղ լեալ լուղակաց նախանձաւոր :  
 Ձարի սիրան եւ ըզբազուկ եւ զվայելուչ ծաղիկ հասակ  
 Յինքն էր արկեալ քաջըն Բարդ եւ ընդ հրջօրս Թըրեալ զօրուն :  
 Մինչ յանգուզըն գիմագրաւ գայր՝ լողանալ կարծեալ 'ի ծով ,  
 Ի գիւցաղանց արեանց ուխտ ըզկնի երկչուտըն լուղակաց ,  
 Մառնչելով յօգս հասանէր 'ի կուշան հարուտս նեղակ Բաքբայ :  
 Տասպալէր բաղկատարած ասոյդ հասակըն գեղեցիկ ,  
 Իբրեւ սօս զոր խրլեաց մրրրիկաշունչ բարի հիւսիսակ ,  
 Եւ անկեալ զուռն սրփոեալ ծածկէ զլըճակն , հեծէ երկիր :  
 Սըրսմբտեալ Բարդ եւ Շաւասպ ընդ այն տեսիլ աղիողորմ՝ ,  
 Հաստաբուն նոճո 'ի Բաքբայ ճօճեալ ոստեան յարեանն 'ի վրէժ .  
 Ձերկոցուն նա զցէմ ունէր , մինչեւ անդուտ խրոխտըն Փառոխ  
 Բքնիզակն արձակեալ վարտէր 'ի սիրտ ձիոյն 'ի խոր :  
 Ահհարին մոռեալ կանգնէր պատըսպարէր զլորեալ ըսկայն ,  
 Այլ ձի կաշեալ ամբառնայր . ընդ երեւելն անդ 'ի բարձունս  
 Հարկանէր արս այլ երկուս 'ի մոլիանեան հեռեւակաց :

Այլ յաւէտ ռազմամուկ՝ 'ի Թըշնամեացն պաշարեալ  
Յաջ եւ յահեակ 'ի հեռի եւ 'ի հեծեալ հիւսիսայնոց,  
Խառվեալ եւ պարտասեալ գարձուցանէր զերեսանակ:

Չեւ վահան 'ի Թիկոնս՝ էր տէգընկէց մի աարսկաց,  
Քաջն Բարդ ըսկայազոր՝ իբրեւ ըզնեա 'ի բազմաորէ  
Կամ ումբաբար ճայթեցեալ 'ի բարանէ պարբոսամարա,  
Ճօճեալ զեղեգնաբունն ըզհողմավար արին նիզակ  
Ի Թամբ առջոյ գաւակի ձիոյն վարսեալ նըստուցանէ,  
Եւ ուզուկ մի մեծ մըխեալ սըլաքն յերանս իսկ հըսկայն:  
Վըցայեր մոլեալ գազանն, ազմրկէր շատ զգբ պըզտորեր.  
Ի ջանել ջանայր արին, այլ կայր կարեալ 'ի նիւն ձիոյն:

Ապա յոգիսն ապաստան յանհընարին տանջանաց ցաւ,  
Անձին բուռն առնէ, վարն մըրարկ 'ի կուշտ ըզգիւսաբան,  
Առաթուր հարեալ անցեալ ըստ խուռն 'ի գերծ, հոգալ տնձին:  
Ոչ սբ մօտ երթալ իշխէր յազէտ վըշտին մոլեալ գրաստուն,  
Վորովին մինչեւ Թուլի բոււրն հարեալ զեղեգանին,  
Եւ ձին 'ի վեր ոստուցեալ, ելանէր գայր սըլաքեալ տէգն,  
Եւ արին իբրեւ ազրիւր Թըխատեսիլ ժայտոյ 'ի ծերոյ  
Խախոջեալ բըղեալ ցայտեր ընդ ահագին վերաբերան:  
Տապալէր Բարբայ՝ մեռեալ Թէ կենդանի, ոչ սբ գիտաց  
Ոչ յայտժամ եւ ոչ յապա մինչեւ ցայտօր ժամանակի.

Սակայն 'ի կոյտ ըսկայազանց ոչ եւս ուրիշ հընէր համբուն:

Յայն աղմուկ եւ յահափեարս տխրանեանց՝ արին Մովկան  
Ընդ ամենին Լաշայի եւ Արզոնի անվանելոյն  
Սուր 'ի կող ամենայն զիմակացաց արշաւէին,  
Որպէս բոց համաձարակ ընդ Թաւ խարձից ընթացեալ շամբ:  
Անկանէին 'ի ձիոց յերկիր արի երիտասարդք  
Իբր յաւուրս ամարայնոյ Թօթափի Թութ 'ի գիտակաց,  
Յոր ելեալ մանկափ ժիլ՝ ոտիւք 'ի յոստօրն տրոփեցնին:  
Ահաւորն Մովկան յերկայն կաղնին իւր սոսկալի  
Էր մի մի, էր եւ երկուս շամփրեալ ընդ օգս անդր ընկենոյր.  
Որպէս ձըկնորս որ 'ի ծայր նըստեալ վիմին առ ծովափամբ  
Եւ ձըգեալ զերեքարձէնն անհոգ յանքոյթ, շոյտ շոյտ շեշտեալ  
Չանմըռուռնչ զանբան պաճարն եւ 'ի ցամաք Թօթափիցէ:

Էր 'ի մէջ հերեան զընգին Գոռակ գազեան հուժկու մանուկ  
Միամօր մօր իւրում եւ մընացեալ որբ 'ի հօրէն,  
Տեսնամբ խոշորագեղ, սակայն բարուքըն քաղցրութեամբ  
Եւ մըտօքն ըզգոնութեան ամենեցուն սերտ սիրելի,  
Եւս առաւել խապատայ, զի անժառանգ որգիտացոյց  
Չեղբորորդեակն յիւր 'ի գուսար 'ի լուսածղին Սեգայ չըքնալ:  
Գատանեակն ինքն անյօժար յարին 'ի կուլ 'ի պատերազմ,  
Եւ զի այն ինչ խանձեալ 'ի նորամուտ ամուսնութիւն,

Չիշխեաց ստիպոյն անստատել եւ սայթալել առ պատկառանս :

Խոռեմայ զբաեալ ըզսա խոնջ եւ վաստակ յանհուն նախճիրս Ի հետեւակս իւր, ախաւ հարեալ ընդ պորտըն տապալէր, Ոսն 'ի վերայ արտփելով կըրծիցն հաներ զերկաթն անգուծ, Եւ արիւն խառն ընդ աղիս խուռն ջրովէր խորտիւելով : « ԶԻ՛ ըզքեզ մատուցանեմ, ասէ, Բեյլայ մեծ աստուածոյն, Տիտանայ հաս սուր յարեւք » : Իսկ եղիւլին ատեալ Թաւալ Յապաւառ եւ յապաժոյժ եւ մորնչելով փրչէր զողփն, Երկաթի քուն եւ գիշեր անառաւօտ զաջը մածեալ :

Յայն ողորմ՝ աեսիլ խապատ մոլեալ՝ ճարպոյ եկեալ զպիամբ, Յամբոթին կոյտ յարձակեալ եւ կտորէր յախերական Ըզհասակս արբ արանց եւ զքեղեցիկ պատանեկաց, Որպէս մըշակ զի գերանդեաւ հարկանիցէ խոտ 'ի դաշտի : Առ մորմոք, առ գուծ սիրոյն կամակար զանձն 'ի մահ տըւեալ, « Ո՛վ որգեակ, Գոռակ որգեակ », գոչէր, 'ի խառն անդ անկանէր, Ո՛ գիտէ յորմէ բաղիէ, չեւ 'ի խոռեմ հասեալ վիրաք . Եւ 'ի սող երթեալ փարեալ զհէք պատանեաւն հանէր զողփն, հաղիւ մընչեալ, « Յ՛մ գնացեր, լքբեր զՍեպայգ գեղահեւակ, Որ 'ի կիցս անցից շինին քեզ սըրտաւժունք գէտակն ունի . Իսկ էնձ իբր էր երեւել՝ զքեզ 'ի ծոցոյն բըւնի խըլեալ » :

Չայն տեսեալ գիւցաղնն հեր՝ կըրկին ըզսիրտն ճըմէր սուգ . վեշապաշունչ սըրամբուծեամբ գէմ՝ 'ի խոռեմ եղեալ խազար, Եւ ածեալ պողովատիկ տապար զկառափնն հարկանէ Եւ ընդ մէջ ճեղքէ զըրկայն՝ իրան եւ զէն մինչև 'ի սափնս : Չահազին տեսեալ հարուածն եւ զմեծ անկումն աշտարակին, Գաւնք բնիւան սասանեցան, անդ Լէկ, Արգոն, գրժնայն Լաշա Իբր ըզբաղէս սըրամբոյն անկեալ յերկչոտ հաւփալից տարմ, Կամ զերդ առիւծ 'ի խաշանցըն մոլելով հոց առ քաղտ Կամ կորեանցն յորինակ եւ 'ի կուր գեշ արկանիցէ, Չքակայից քաջաց հասակս մի առ միջ տապաստ յերկիր Ծարաւի ժանեաց սըրոյ եւ նիզակի տային ճարակ : Հարկանէր Արգոն ընդ փոզն ըզլիթխարի սկայն խուլմնայ, Այր մեծ նըշանաւոր ընդ բարեխեան բանակն ողջոյն . Լէկ զՄովան իշխանազարմ եւ զխոռեմեան գընդին հոգի Ի հողաց ընդ ձախ ըստինն, եւ ընդ աջոյ հաներ անուծ, Եւ երկս 'ի մոլեգին մարտկացն ընդ իւր ընկէց տապաստ . Լաշա զվըշնասպ շահինեան Թանճրամարմն կարճ եւ ըստուար, Ընք որով ոչ ամենայն ժուժկալէր ձի պատերազմիկ, Այլ ուղտածեւ երթվարն իւր ահարկու եւ աստկանդամ . Գայր հըզոր քաղին կազին ընդ Թանճր ասպարն անցանէր Թափ, Եւ մինչ չեւ ընդ շաղալիցջ մարմինն 'ի սիրտըն ժամանեալ, Փաշլակէր Թորգոմեանն երկայն սուսերն ընդ ուն աջոյ,



Եւ թիկամբքն հևա զանրակ եւ ըզբազուկ շեշտեալ համայն,  
Ընդ նրմին պատառեր եւ զահագին գազանին կողս :

Մի զմիով անգ խառն'ի խուտըն տառապելն թառախազլոր :

Իսկ զալոց հիւսիսական պատանեկացքն կորովեաց  
Ո՞ զհարուածսն թըւեսցէ զքաջաբազուկ բազմամբոխին :  
Օրինակ իմըն փայտատ 'ի ձեւին գունգ գունգ մայրեւոր  
ժողովեալ յանտառախիտ պուրակսն փայտ հարկանիցեն,  
Ի խրախոյս ձայնի մանկոցն հընչեն լերինք բըլուզք եւ ձորք,  
Կոտորին հաչեն անզոր մայրք հաստաբուն զմիմեամք տապալ :  
Ձմարդիկեղէն անտառաց իրանս հանդոյն ջարդէին անգ :  
Որ յառաջ խողանացեալ քրտմներ հովիտն յրկայ հասակս,  
Ի կանգուն աէգ նիգակաց, գընէր գեանի հարթ հաւասար  
Առ սոս արեացն հիւսիսի, արեւելից եւ հարաւոյ :

Բայց թէպէտ եւ ամենայն այս սըխրալի քաջաց հանգէպ,  
Երկնաւոր պարգեւաբաշին եւ բողորից բախտիցն տեր  
Ի նրժարս իւրոյ կըշոց մասն եւ բաժին հանէր զայն օր  
Հայկազինն Ապահայ քաջին փառաց եւ պարծանաց,  
Աքանչելի գընել յաջս գիւցայնոց թորգոմազանց,  
Արձան մեծ առաքինի նահատակացն 'ի յիշատակս,  
Մուրք յամենայն արատոյ տանել 'ի գիրկս հօր զհագին  
Լուացեալ յարին տիտանացւոց առելեաց Տեառն ամբարբշտոց :

Ի ձայն փողոց գոչելոյ խրախուտական պատերազմի  
Յարձակեալ հինգ հարիւրովքն յարեւմտից մարդէ Ադահ,  
Եղբայրն արի Մանաւազ զիւրեւ եւ քաջք թաթուլ, Ներսէհ,  
Ասպատակ գեմ՝ Սեբոխոսայ, Բերայ 'ի գաշտ ասպարիսին,  
Ձերք փայլատակն որոտընթաց 'ի ճայթմանն թառցեալ ամպոց  
Ի մայրիս ընգոստնուցու 'ի թաւաթուփ լերանց բարձանց,  
Խորտակել շտեղծիսել լցփել ըզփայտս 'ի բոց հրոյ,  
Դըզըրգել պատառել ըզժայտս եւ զլեմս անդընդախորս,  
Մինչ 'ի վիհ սանգարամետս երերանաց գող եւ թընգին  
Առաքել զահագին զլայնածաւալ գընգին երկրիս :  
Վովկասեան սկայից գուգաղ յաջ յահեակ թեւան ահեղախորտոք,  
Յաջում ինքնն հարազատ Հայկայ Վովկաս սարսափելին,  
Ի ձախմէ քաջայանդուքն եւ մըրըրկոտն արին Սուրս :

Ձահաւոր զայս յարձակումն 'ի հանգիպոյ սանձել կարծեն  
Տիտանեան զօրութեան արիստերո ըսպարապետք,  
Սեբոխտ հետի մեծ ամբախիւ, Բեր յասպատակ հեծելախուճք :  
Այլ ըստ մտել ճակատուն ահեղ ռազմին սըրտմտուութեան՝  
Մտովոր ահիւ տրոփել ըսկըսան սիրտք բելեան գընգաց :  
Ձոր օրինակ մըշակի՝ որ 'ի բարձանց գարեւանգին  
Տեառնէ զսեաւ մըրըրգի ընդ մըկանունս ալեաց ծովուն,  
Որ զուռուցիկ անգընոց վարեալ զկոհակսն զամեհիս՝

Փոթորկեալ հասեալ բախէ զցամաքն անբաւ եւ զքարաժայռս,  
 Զանտառս, ըզգաշտ, զանգաստան համանգամայն վերդովելով,  
 Ըզտուարածս եւ զերկս արդեանց գրչեալ գումամբ վիշապաձայն՝  
 Հոյն 'ի տեսիլ թորգոմեանց՝ տխտանացուց հեծեցին սիրաբ:

Անդ 'ի բուսն խաղայման, չեւ առ իրեարս հասեալ կողմանք,  
 Զհացի նիզակս ուեղեգնեայս արձակեցին զերազաթեւս.  
 Զասպարէզն որ 'ի միջի՝ խաւար ծածկեաց ըտուտերամած,  
 Ահաւոր հասան բոմբիւնք 'ի վահանաց եւ պտտենից  
 Բախելոյ պաքաց յարանց ճակատս 'ի լանջս եւ 'ի ձիոց.  
 Ծածկէր երկիր գիակամք ներկեալ 'ի թուխ արեան վրտակ:  
 Ծարհաւրաց երկնից 'ի սիրո՞ բեշեան բազուկէք ընգարմացեալ  
 Զէնս անգործ արձակէին, հարկանէին հայկեայք 'ի մահ:  
 Ո՛վ, քանի՞ սկայից իրանք ուերիվարաց տապալին արդ,  
 Անշնչացեալ ատամամբ խածեալ զերկիրն յոր գան տիրել:

Կողկասեան կորովեաց պեղնաւորք եւ պարսաւորք  
 Յերկոսին թեւս, լայնալիճրս մեծամեծ եւ պարս երկայն  
 Շէտհեալ 'ի գործ արկանեն, եւ թօթափին 'ի տխտանեայց  
 Որպէս կապինք թանձրախիտ 'ի յաշնայնոյ մրրկէն հոսեալք:  
 Յահագին շահատակմանց նախ թեւ բեշեան սասանեալ աջ,  
 Դարձուցին բեկեալ կապարձս՝ յերիվարացն ոտս ապաստան:  
 Անդ իւրով նիզակակցօք Սուրա քաջոտն հետի մլտեալ  
 Ըզկնի փախըտեին 'ի դլուխ ձախոյ թեւին իւրոյ,  
 Սկայաբար 'ի վար արկեալ զկողկասական՝ հոյն ծայրասուր  
 Հարկանէր ըզնոսին առ 'ի թիկանց վէրըս վատաց:  
 Յամենայն յարձակման մէն մի այր գիցուրտ ընկենոյր,  
 Որ 'ի սուր, որ 'ի նիզակ, յերիվարացն յերկիր տապատտ:  
 Չէր ասել, ձեռքն եթէ ոտքն ով զո գրէր երագութեամբ:

« Արք, զեմրդ ոչ շիկնէք — որ մօտ յայն թեւ կայր գուեաց Բեր —  
 Ի փախուտս առաջի հետեւակից գտնալ հեծեալքդ,  
 Եւ ձրրի անընտուրան տայք կոտորել ըզձեզ յամբայր:  
 Մի թէ գէւ այրդ իցե՛. պինգ կացէք, մի զուզմ՝ քայքայէք՝  
 Աղէ աչս ածեք ըզձեօք, իցե՛ ուրեք յոյս փախըտեանս.  
 Աստ է կալ, բազկօք զոգին մեր գրտանել կամ զանուռ քաջ՝ »:

Յայն բարբառ սրտապընգեալ գառնային փողըր մի տարէն՝  
 Անդ Արեթըն խոտրովեան, բոց յերեսացն հատեալ զամօթ,  
 Խոյաջեալ բերէր տապար՝ ջաղինւ զկառափրն Սուրայի՝  
 Խըզէր եւեթ ըզնորան սաղաւարտին եւ զգարգմանակ:  
 Բայց սակուրն 'ի ձեռանէն զերծեալ թուռցեալ գայր հարկանէր  
 Ըջքաթին Արտակայ զպըզընձապատ կարծր իրանուռս,  
 Եւ ցըրեալ զխելապատակ, ցընդեալ զուղիղըն սատակէ:  
 Ընթացեալ փայլակնարար զօգապարիկ երիվարան  
 Անց Սուրա, եւ ստակապէս թուպեալ լախախւ զձիոյն խալամ՝

Զափե՛ր տապալ, տապալէ՛ր եւ սասանեալ հըսկայն 'ի նփւան .  
 Եւ նըմին կոփ մ'ի գլուխ տօփեալ Սուրայ տափե՛ր անդէն :  
 Եւ որ զիւրեան արեք արանց գուն ինչ ընդհատ գաւարեկին :  
 Իսկ զընդին տպահանց յաջուած թուի Վովկան սահեղ  
 Սոսկալի անահընկալ գիպուած սաստիկ տարակուսի  
 Իւրովքն քաջազամբ հասուցանէր տխուհացոց :  
 Թուր թափեալ գիմեալ 'ի գոյթ, ոչ զինուոր այր կտորէր,  
 Այլ որպէս դը պարտիզական զմանգազն տուեալ յարտ խաշխաշից  
 Ի զքօսանըս զուարճասցի մի մի երկու երկու հինգ հինգ  
 Հասանել ընկենուլ հասուն զըլուխըս մեծամեծս ,  
 Ժազդիւլ 'ի մըթերս արգեանց իւրոյ շտեմարանաց ,  
 'Կըւիրեալք այնպէս 'ի մահ տխուհացի խրոխտ կառափունչ  
 Թորգոմայ իբըեալք 'ի փառս' 'ի Վովկասեան զըրին սուսեր .  
 Որ բըթացեալ եւ անգործ, մինչցեռ գլետինն անէր նըւադ  
 Յանարի վեստ ըսկային 'ի Ղուպիլայ պինգ զըլխանոց,  
 Իբր ասպիկի փըջեալ ընգ օգս արիւնարբուն թըւէր պողպատ ,  
 Քաջին մընայր 'ի մատունն երափօտեալ եւեթ երկաթ :  
 Սըրամըտեալ՝ մահ արձակէր սկային Վտհայ զըյն 'ի ճակատ .  
 Զմեծ ասպարն անեալ զիւրեւ՝ ձըգէր ըզպիտուն կառափոյ ,  
 Եւ նովին վարեալ զինով ըզՂուպիլայն նախ խորտակէր .  
 Եւ յամենայն 'ի ճայթմունըս կորովի բազկին շանթից՝  
 Մին մի սկալ ճըմըեալ տափէր, կամ սպառըսպուռ տայր ջոխբախանս ,  
 Եւ գոչէր . « Հայկին է մարտըս, նա զձեզ նա սատակէ տոս » :  
 Աչ արուեստ էր, ոչ հընարք ճարտարութեան անգ 'ի տեղաջն ,  
 Այլ իւր, ընգ իւր համայնից գազանեզէն կատաղութիւն :  
 Սակայն ոչ ինչ լըքանին, ոչ վերջունեն եւ տխուհեանք .  
 Գոռայր Սեբախ, « Քաջ լըրուք, այսօր է օր պարծանաց, արք ,  
 Արաջի սասուածանման տեան եւ մեծաց յոյս պարգեւաց » :  
 Ահեղասոսս ուժգին բանց ընգզէմ՝ գան վաշտը, կուսին զմիմեամբք ,  
 Ամբոխիցն ըստուարութիւն զըլել կարծեալ զոյժ պընգութեանն :  
 Որպէս գետ գարնանազայր մինչ ուռուցեալ եւ մըռմըռեալ  
 Ահագնացոյս բարկութեամբ գայցէ ալեւոջն փըրփրոտէլ ,  
 Զոր 'ի լըրանց բացիկց գողեալ բերէ յուսեր գաշտաց .  
 Ցառապի քըրտնահոծ մըշակ եւ շէնն ամենախումբ  
 Յարձանայն յարուցանել թումբ ամբարտակ մինչեւ յերկինս ,  
 Բառ չափոյ բարձուն սոստիկ գործէ քանդումն եւ անբաժ .  
 Սապէս բնիւանք կուտակեալ կովկասեան բուռն թափոյն գեմ՝  
 Թանձրակոյտ թօթափէկին՝ այր երեկար՝ յարեան 'ի ծով ,  
 Մինչ նըւազեալ սրտաբեկ առնուլ սկրասն ընգ կրուկ նահանջ :  
 Իսկ որ ինչ ըսկայախրոխտ 'ի բուն ճակատ միջլուպոյրի  
 Հօրամոյն քաջաջըն գործք՝ Մանասազայ եւ Ապահայ ,  
 Զունեկին ինչ զուգական յաշխարհափուժս ըսկայազանց .

Եւ ոչինչ վեհագոյն քան զարարուածս հօր գեւցազին :  
 Գեր 'ի վեր յեզբօրէն յետեզակալ մարտ Մանաւալ՝  
 Ըզլահանն անգրծելի անեալ զիւրեւ ամուր պատենէ,  
 Եւ զնիզակն ամեհամուղ մոլեցուցեալ 'ի դաստակին ,  
 Հասանէր խորտակէր , չէր խուն ինչ զարկ որ խոց թաղար ,  
 Զի առաքէր մահ 'ի սիրտ . կայեալ անվան՝ պուզէր զտոխ ,  
 Համայն իւրոցն հովանի գոյր նիզական եւ ասպարաւ :  
 Մինչ քրսան այր 'ի կարի յանգրգնագոյն եւ անարեաց  
 Արկ տապաստ , մոլեգնեալ անդուատ ըսկայն գոյր հասանէր  
 Տիտանեան , սոսկավիթիար երկայնագէզ կուպտար հասակ ,  
 Թոխթամիջն լեռնաբերձ եւ խոխարնթաց հետիոտիւք  
 Ուս առ ուս եւ գլուխ առ գլուխ Մանուազայ հարթ ընթացեալ :  
 Որ 'ի տան Կապուկայ յանկամս յահէ Հայկին նըստէր լըտիկ ,  
 Ի բեկեանցն արշաւան վըտարունջեալ ըստամբակին՝  
 Խաանէր ընդ հէնն նոցան հանել ըզհինն սիս 'ի հայկեանց :  
 Արտ բեկեալ նոխ ըզնիզակն յասպար քաջին Մանաւազայ ,  
 Խանարհէր յափըշտակեր որձաքար վէճ մի արաստոյ  
 Անորի եւ անարգիլ իբրեւ զերկան մեծ ազօրեաց .  
 Յարուցեալ ամբանայր լեռնակարկաւըն լարընթեամբ ,  
 Զերկնաբերձըն գագաթմաճ պըտուտեալ , քայլս երես քայլեալ ,  
 Փոթորկաբեր հոլովիւք պարսեր յերեսս հայկեան որդւոյն :  
 Արահեանցն հինգ հարիւրոց սարսուռ 'ի սիրտ անդ ընթացաւ ,  
 « Գընաց քաջն » , առէին . իսկ նա զվահանն արկեալ հըբր ,  
 Եւ վերին ասպարն անըւշտ հասեալ 'ի գլուխն սիրելի ,  
 Թըբեխն ահագնագորգ կուռ պըզընձոյն հընչեաց բախման ,  
 Իբր 'ի շանթից ասպատակ որոտընգոսս թընգայ գեաին :  
 Յեսս ընդգէճ յոզնուլարին քաջն 'ի վերայ կործանեցաւ .  
 Անկաւ ժայռն ընդ երկիր , կանգնեցաւ ձին 'ի վեր վաղեաց :  
 Յարձակել քաջն կամէր գազանալար 'ի Թոխթամիջ ,  
 Կորովն անդուատ ներսէ հըրեալ պարեխ ոչինչ ընդհատ ,  
 Մինչ սա գեռ յա անօրէն եղերան կայր բըրէր ապուշ ,  
 Յուհնապիկ ջըլաց կորով գոգ ումբաձիգ մանգիթոնաց՝  
 Շտապեալ ասսակութեամբ եհար զկատափըն վերագին :  
 Երկողին ցրակին ալքն , արիւն ընդ քիթս աղբերանայ ,  
 Եւ ուղիւն ընդ երեսս՝ ընդ տեսարանս խառն յապաժոյժ  
 Հասի զերուզն , եւ ջախջախ ըզքեանի գանգն հարեալ ցըրուի :  
 Արին Թաթուլ եւ Գամեր գընգին սալար հաստաբազուկ ,  
 Յաւ յակեակ քաջայն 'ի թեւս ահագնացայտ լախտաւ շարժեալ ,  
 Տափեալ յարիւն լուանային ըզգէն եւ զայր եւ զերիվար ,  
 Զըտկայից ջաղեալ գըլուխս , որպէս թէ մայր մանկանցն 'ի ճաշ  
 Ըջ հայտնիւն բաժանեալ եւ զթակն 'ի ձեռն առեալ նըստցի  
 Բեկանել նոցա կողին կամ ընդոյլ քաղցր 'ի կերակուր :

Կից կողից Մանաւազայ՝ նահատակին քաջն երկզեան ,  
ՅԱպահայ պատուիրելոյ կենաց եղբօրն ըզտուչացեալ :

Ձի ո՞վ այն օր գոյր ժաման անպարտելոյն քաջն Ապահայ  
Հասանել հըսկայաքայլ ահեղն(ծաց գնացիցն ոտից •  
Յօր վայր եւ շըրջէր զաշըղճ՝ անգէն անգ զբռանէր ,  
Ձօր եւ ասեա զէն 'ի կիր արկեալ առ գուժարն մարտացու ,  
Եւ հեօի շահատակեալ եւ 'ի հրաշունչ սեւոյն սարափ :  
Անձն , ասպարն եւ սաղաւարտ փայլատակունս հատանէին ,  
Թընդէր ամուր զըլխանոցն եւ որոտայր վահանն հարուստ  
Ի բախմանէ մեծամեծ կարկրտելոցն 'ի նա քարանց :  
Ինք գիմեալ գիմադրաւ յառաջամուկս կինճ կատաղի  
Յեղեգնուտն ելեալ շամբէ 'ի քաջաղէն որորդ արբուն ,  
Ոյց բիւր զիջլ եւ ապաշաւ ամ եւ հըպելն 'ի թաւալոցն  
Եւ ըզժանտ զարթուցանել , թող թէ յարեան հարկանել զէն •  
Աչք հրացայտ , խղանաստեւ կամակոր ողն աշանակեալ ,  
Ըզժանինն ընգ ըստուար սրեալ ողորկ բունս եղեգանց՝  
Ի կերկեր բերէ խանչին շղացուցեալ իբրեւ զփայլակն ,  
Ի հեռուստ անգամ սըրտից ըսպանացեալ ամեհից մահ :

Ո՞ զպէսպէս մահուամբ անկեայնս յորհասարբր թուեսցէ բաղկէն ,  
Այլ ըզմեծ նըշանաւորս 'ի Բեր՝ Խոռեմ՝ զընգաց եւեթ :  
ՁՄաւուն նիզակ սատակէր ընգ փողն անցեալ եւ ընգ ծածրակ ,  
Տեք ըզթուլի՝ նգ երանս շամիրէ , մինչ յասպատանգարն յարուցեալ  
Կայր ածել ումեք ուժգին փայլակնաբեր ձեռին վաղերբ •  
Ձախոյ զթեւ՝ զազգր 'ի մի սայր տուպարահար քըշտն զԻբդուչ ,  
Անգամէն անգ ընգ ասպարին , իրանն 'ի բաց յայնկոյս զըրերբ :

Սուր սըլացեալ գոյր 'ի թիկունս ըսկայն ջըլա մեծ սաքայեան ,  
Անլըթար եւ վերտ վառեալ զրահիւք , սուսեր յաջն երկապրի ,  
Ի ձախում եօթընտակեան վահանս պղընձի սլաքեալ 'ի կումբ ,  
Եւ զանձամբն առիւծենի զձիրանն 'ի յուսս արկեալ ճարմանգ ,  
Խրոխտարար շարժեալ ընգ զըւխ զահեղ ցըցունս սաղաւարտին :  
« Այ սպրտամբ Թորգոմայ խեռեալ Հայկին շամշտ զաւակք ,  
Էր՝ նենդաւ , թէ արք էիք , 'ի քմին մըտէք մեր յերեսաց •  
Ճողպարել խորհեցայք յորգւոց Քամայ գերութենէն ,  
Աւասիկ քեզ սուր Քանանու , յո՞ թաքեցես » , գոչէր եւ գաղջր •  
« Ահա եւ քեզ նախ բազուկ որդւոյն Հայկայ , գոռաց Ապահ ,  
Սատակիչ ճոկանն օրհնեալ շըրթանց 'տոյի հօր հասցէ քեզ » :

Եւ անգէն մըրճով կոփեալ յերիվարին զըւխս զառացոյց •  
Ի վերայ զգազանացեալ սեան յըսկային կործանիլոյ  
Անցուցեալ որոտընգոտս՝ եւ խորտակէ զվանդակ կըրծիցն :  
Անհեղեղ բերանաքաց անկեալ նըման ճանառ ձրկան ,  
Ահագին փեռեկ կոկորզն արտաքս երկու թիղ ընկեցեալ  
Ձհայհոյիչ ըզբեյապաշտ լեզուն , զհոգին թըքանէր պիղճ :

Իսկ քաջին պակուցանող փայլակնածեւ վազակաւոր  
 ՁԵՆԱԿԵՂ ընդ ուս աջը եւ ընդ փայծազն հերձեալ ճեղքէր,  
 ՁԵՆԱԿԱՅՆ տհեղ 'ի Թիկունս գիմեալ Բերայ զօրագրելին.  
 Ապա եւ զսոյն պատանի բազկեալ 'ի մի սուսերին սայր,  
 Մինչ կրեալ ձրգէր զնիզակն 'ի Դարեսի քաջին լերգէ,  
 Ընդ Թիկունսն միջակաուր տաներ եւ զսոյ զզնիոյն վեղ.  
 Երկզքին միահազոյն խառն ընդ երկիր տօփեցին պուխք:

Սեբոստ միայն մընացեալ 'ի հընգեցունց զօրավարաց,  
 Մօրմընեալ յայն տեսիլ ընդ պարմանւոյն քաջի կորուստ  
 'Ներսիմոյ սիրելոյն' ընտիր ընտիր սպասադինոք,  
 Գայր քննու գառնուԹեամբ տանու վըրժ կամ մտաննել:  
 « Եմւշ ձեզ, որք, կանայք որգիք ձեր սիրասունք եւ ապարանք  
 Բարեօք զեզուն 'ի շնորհէ տատուածանման ինքնակալին.  
 Ո՞չ եւս այլ աչք ձեր տեսցեն զգտրելիսոք եւ զհայրենիս.  
 Ամենայն ինչ քաջաց՝ յամրի գընի, վատաց ոչինչ ».  
 Գոչէր առ իւրսն գռութեալ ամհաբար յանօր 'ի ռազմ: —

— « Եկ, քեան իմոյ սիեսաւեր, եկ զհայկանոյշ տանել առ Բե՛լ,  
 Եկ տարայց ըզքեղ առ նա 'ի հայկաշէն 'ի հարսանիս.  
 Մտօկոյն նախ համբուրեացես զու զեղեգանքս սայր կակուզ,  
 Յօր արեամբ արտանացոց զըրեմ կարմիր գաղըն սիրոյ » : —

« Այլ զու նախ զիմոյս » — ասել, եւ գիմեցմանն 'ի փոթորիկ  
 Արձակէ Սեբոստ արի զնոճի նիղակն իւր ահաւոր:  
 Մըխեալ սըւինն 'ի վահանն կարծրակուռ՝ կանգնեցաւ կայ.  
 Գայր Սեբոստ ձրգէլ ըզնա. յայնժամ ուժգին մըղեալ Ապահ  
 Ձըբնակօթն՝ յեցուցաներ 'ի լայնալանջ կուրծս ըսկային.  
 Բուռն յետս հըրայր կործանել եւ հանել զտուն յարպատանգէն,  
 Ժուժկալէր հրակայն քաջին ահեղազօրըն բըռնուԹեան,  
 Ճտփր տուեալ գառնային երիվարօքն յաջ եւ յահեակն,  
 Եւ հարուստ մի պրտուտեալ, ապա յանկարծ որդոյն հայկայ  
 Յետս ըզսեան ոտնատրոփ ընդտատուցեալ մեծ ասպարեղ  
 Մըկունդ վահան խառն 'ի խուռն յերեսս 'ի լանջսն ընկենու:  
 Կային ըսփայք հիացեալ յահեղ տեսիլ ըզբանչելեաց:

Տեսանեանն յորտոյս փըբաւ զերդ մահարձան կամ ամբարտակ  
 Յանհեղեղ բարանաց բախեալ վիմէ կամ 'ի հոյոց:  
 Փայլակնագեա երազութեամբ անապարեալ գիւցաղն հայկեան  
 Ձահադին ձողակաւորն հանեալ ասպար եւ մարտացու,  
 Մինչ նա գեռ յառնէր նքստել զերեսանակն օրոնելով,  
 Իբր ըզսնթ փայլատականց յերկիր յամպոց սպասառմանէ  
 Թօթափեալ զերկամբն սուր եւ կռճոպեալ ըզպարանոցն,  
 Ըջկառափն ընդ գաւակին Թանձր հասորոյ ւաղւղ ձիոյն  
 Աջկանն յերկիր, եւ ազնն անտանեղէն ջրակեալ Թափի  
 Ի սլուխ անգր արեամբ Թաթախ եւ 'ի բերանն հայհոյի:

« Աստ մարմնոց եւ անգամոց քոց 'ի վերայ, ձայնէր Ազահ, Ձեր խննչոյս պարարտութեան խոմբեսցեն սան եւ հարսանիս Յինք, անգեղք եւ ազաւք, գազանք վայրի եւ շունք լերանց » :

Անգ յազատ մերկ տապաւորիլն տայր Ազահայ գեմ գուրթ յառաջ, 'տրով պաճոյճ վահանու պարածածուկ գիմեալ յարձակ, Պատանի մի վայելուչ, տեօիլ՝ հասակ ըսկայակերպ, Ուսուցիկ կուրծք լանջաբերձ, աւոյգաբարձ երանք յերաշխ, Ի գէն 'ի զարգ սոկի վառեալ, արբաբար ճօճեալ նիզակ, Ի խորան սաղաւարտին Թուսչեալ ցըրունս յորդան կարմիր, Յասպարին նըկար ըսկայ երիտասարգ՝ կոյս հափափեալ :

Յանգիմանն ընտլ հայկազնն, վայր մի անգէն կայր մըտախոս. Մօտ եւս տպա մատուցեալ ընկեց բարբառ 'նուրբ մեծմայն .

« Դու իցես արին Ազահ, որպէս աստէն ընթանայ զըսց . Աջըզկանց հրապուրիչ, 'ի մարց զըրկայ տեսանցօղ » :

« Այո ես եմ Ազահ, լրսէր անգրէն պատասխանի, Ես տոյնեան արձանացեալ տիտանացւոցըզ կուտելոց Ի քարել ըզկոյսն հայկայ՝ զքոյր Ազահայ . Իսկ ո՞վ ես դու Որ 'ի կենաց ըզյոյսզ հատեալ՝ մահու եկեալ ես 'ի խննդիր » :

« Վրեմիքնդիր հափափելոց դոմ գեղեցկաց, — միւսըն կըրկնէր, Եւ հայէր եւ ցուցանէր նըմա զգըծած պերճ վահանին . —

Ձայս 'ի յաչս ունիմ՝ յօրե յորմէ յարեայս 'ի կուր մարտիս հասանել 'ի սիրտ սոցուն մինչ 'ի խորանսըն Թորգոմայ :

Եւ զ՞ գուք, յայս ժրմբրտեալք, կոյս մի սիրոյն զ՞ զըրանայք լնծայել սըմն փոխան տիեզերաց տեսունն տենչեց :

Թէ անշուշտ տառուած է Բէլ, զիմ եւ զնորուն հատուցչոյ քնն » :

« Յայգ խորհուրդ, կըրկնեաց Ազահ, զմահ քո եկիր խննդրել անգեղք . Ոգորմես յաւայզզ 'ի գեղ, գարձիր յո քոյքզ աճապարին .

Ձք՝ երազ, ո՞չ տեսանես, սըմբակք եւ սոք են 'ի փափուստ » : — « Իսկ արգ ո՞չ Թօշնեցոյց ըզքեղ Բեբար 'ի գերկրա իւր, —

Ան Թափեաց միւսն 'ի վերայ, — չեհամբ գաշցն 'ի սիրտըզ քո հայրտննեզ փափրատուկանն եւ ուրացողըն մագչեղանց :

Այլ այս նիզակ եւ սուտեր աստուածամուխ վառեալ 'ի Բէլ՝ Մըսցէ այժմ 'ի սիրտզ », ասէ, ձըզէ զեղեղնն հաղմատան,

Որ Թուսչեալ անց զընաց ըզճնծաիւ յազթ տապարին :

Մըզընեալ յայնժամ արւայն՝ արձակէ զհոյնն ապահոճի . Երթեալ վարսի մօտ 'ի կուրնն ելեալ յայնկոյս յարեան ծորաւ .

Մազապուր 'ի հարուածոյն կըշեւ 'ի սիրան ընթացելոյ,

Եւ անգոր խըլել զերկաթըն խորամուխ 'ի վահանին, Ձարհուրեալ եւ յապահեան 'ի սոսկալի սեւայն եկից,

Ընկեցեալ յանձնէ զասպարն, ոստնու յերկիր յափըշտակէ Արատաճ մի կարմրորակ եւ անարգիլ, կայր յընկնուլ :

Վաղէ եւ քաջն 'ի ձիոյն՝ գիմեալ եւ նա սուտերամերկ,

Ձի ոչ քաջի էր գուպար հետեւամարտ ընդ հեծելում :  
 Գայր պարեմին անհեղեղ եւ որոտայր յապահեան կուճը .  
 Յանկելոցն ապա քաջաց շորթեալ վահան, սուր հանեալ գայր,  
 Ձի ետես ըզհայկազնն խոնարհեալ կորզել խարակ,  
 Ձոր եւ պարսեալ զհատոր լերին՝ զպատանեկին ջաղկեք ասպար :  
 Անքր եւ զայն ընկեցեալ, եւ երկզբուճք ձեռքք 'ի վեր  
 Ամբարձեալ վազակաւոր՝ իբրեւ մրըրիկ գայր փայլական  
 Ի քաջին գահել կառափն : Առնու կրմբէն եւ զայն գիպուած,  
 Ճընգի թուրն անգէն 'ի փշուրս, Ապահ կոփէ 'ի գրլխանոցն,  
 Այլ յողորկ կորննթեացն իջեալ սողոպ սրոյն յաջ անրակն,  
 Եւ քըշտեալ թեւըն կախէր, եւ պատանին անկանէր քաջ :

Սաղաւարտին թռուցեալ գըլուխ մի հոլանի գեղեցկագեղ,  
 Թուի ընտիր կուածոյ վարսից փունջ փունջ հիւսակք, երեպք փափուկ .  
 Ձրեհք լուծեալ լուսափայլեն լերկ լանջք եւ սափնք կուսարուսիկ,  
 Այլ բալոր առ ետեղ՝ յարեան վըտակ բոտորաբուլի :  
 Թառամէր ծոցոյն ծաղիկք որպէս շուշան հովափն հընձեալ,  
 Ձոր անգուլթ գերանգին 'ի հարկանել խոտոյն խըզեաց :

Պակեալ Ապահ, տեսանել թըլք գիւրբոր, գոյնըն հատան,  
 « Աղէ, գոչէր, ով ես գու » . նա՝ « Տուր տանել զիս առ Բեբոր,  
 Ի նորին ընտանեկացն եմ, անգ, ասէ, լուիցես զերաւն .  
 Այժմ՝ օրհասին ձեռքք տաղնապեն, մեծն յայս եւեթ ստիպէ Երկինք՝  
 Ձի գուք սուրբ էք, Ապահ, Բեբոր արգար, Աստուածդ ըստոյգ » .  
 Եւ նուազի շքնչասպառ : Բարձեալ հապձեալ արք ապահեան  
 Տանէին առ բամբիշն 'ի վրան նորուն յանքոյթ վայրին .  
 Իակ արի որդին հայկայ կայր իբր յերկնից փայլակնահար,  
 Այր առ ոտարն թափիցի որոտընգոսս շանթից եռանդն,  
 Եւ յերկբայս կայցէ կենացն, արդեօք հարան բընոյն արմատ,  
 Թէ իցէ ինչ տակաւին յոյս 'ի յարեւ կենդանութեան .  
 Եւ Ապահն անուն հըզօր՝ անդ զառաջինն ծանեալ զահ :







**ՀԱՅԿ**

**Դ Ի Ի Տ Ա Ջ Ն**

---

**Դ Ր Ո Ի Ա Գ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Գ**

## Ն Ա Խ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի սպա իորտակեալ Թորգոմանց զննացողս բեղեանց՝ Իջնն յԱր-  
ճել, եւ վազբալ ընդ առաւօսն նաւեն: Մբրիկ մեծ եւ աղէկածութիւն, սպ  
խաղաղութիւն: Բեղեանք իրազգացք գալստեան նոցա՝ գումարին ՚ի ծովքն, եւ  
նաւուք ընդզէմ՝ գնան նոցա. նաւամարս սաստիկ. բեղեանք պարտեալ գա-  
նան յետս. Թորգոմանք նաւեն յարեմտակողն կոյս ծովուն ելանել ՚ի յամբ:

# Հ Ա Յ Կ

## Դ Ի Ի Տ Ա Ջ Ն



### Դ Ի Ռ Ի Ա Գ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

**Չ**արհուրեալ փրօմանացաց 'ի ապառաջսուս սատակմանէն  
Ի փախուստ դառնային ըզլեց ժամաւ տուընջեան լուսոյն :  
Ըստ բախտի նոցա բարգեան եւ մովկանեանն հեծելախուժք  
Ընդ Լեկայ եւ Հերայ հետեւակացն յառաջ փարեալ,  
Եւ տեսեալ զի բելեան սալարք կրրկին, Բէր եւ Սերտխա,  
Եւ զօրութիւն նոցա մեծ ասպատակեալ հինախաղաց  
Սաստկանայր ընդ կովկասեան եւ սպահեան ճակատուն գէմ .  
Ընդ հարաւ արեւալ զթիկունս եւ 'ի կողաց հարեալ ըզհրոսն ,  
Եւ տակաւ ընդ ահեակ եւ յարեւմուտըս կոյս գըրդեալ ,  
Անցեալ էին գալ խառնել նըպաստ յԱզահ եւ 'ի Ղովկաս ,  
Եւ զԲերկոյ մերկ 'ի զինուց թողեալ 'ի բաց ըզճանապարհ :  
Թըշնամուոյն ընդ այն տեսեալ յոյս մտաւլուտ դառն օրհասին ,  
Ոչ սակաւք , հեախ' հեծեալ , 'ի մարտամբոխ անդ 'ի ժամուն  
Յուսացեալ յերագութիւն ձիոց ւտախց' առին փախուստ  
Ընդ ծանօթ շաւիղն ընդ նոյն , որ 'ի կորուստ երէր զնոսա .  
Ընդ որս արի սյրուձին եւ զվերաւորն հանին Սաթէն :  
Չհեա նոցին ել Մահագան , ապա եւ այլք մի 'ստ միոջէ  
Որ անձին որ հրամայեաց , թողեալ զճամբարն հայկեանց 'ի ձեռս :  
Որպէս բողք ախծակք գոռեխք արիւնախանձ հրոսեալ յանգեայ  
Եւ բազում հանեալ արեանց սեաւ ճապաղէս' մոլին զնախիր ,  
Եւ փարատին փախրստեայք 'ի ծուխ մեծի հրոյն բարկութեան  
Չոր 'ի տամուկ լուցանիցէ հովիւ խոշոտ եւ խոտ խրոխ ,  
Ոչ ընդհատ յօրինակեղ խոլին քաջացն 'ի ցասմանէ :  
Պարանդ ընախր քաջամիոց առնեն սղբա զօրահատոյց ,

Հինահար հալածեւ եւ կրծանել ինչ 'ի թիկանց :

Բայց ոչ նըւազք ինչ քուչացուց, ընդ այրոսի եւ հեռեակ,  
Ի խոխոսն եւ խորածորս անկան լերանցն արեւելից,  
Առ ահին տաղնապի չմարթացեալ ուշ ընդ այլ առնել,  
Կամ՝ յանձուկըն յուսացեալ վայրացն յանձանց պահպանութիւն  
Յերեսաց թըշնամայն որ թէ 'ի ներքս արշաւից :

Արահ քաջ ընտիր ընտիր մանկամբ զարին իւր հարազատ  
Ի բերան թողեալ կրքձիցն ըզտիտանեանց պահել գաղութ,  
Եւ ալեաց եւ խոնջիւղց պատուէր տըւեալ ոգի առնուլ,  
Իւր խըմբեալ զերիտասարգս արիագոսնդ առնեւձիոյ  
Սպասակ զհետ ելանէր փոխըտեկին պախուցածափ  
ժամանել տարածել եւ կրքձառել ըզվերջ նոցա :

Մինչ լեռնամուտ ծակախիթ զնացեալ բէլեանք ժողովեցան  
Ի կապանս լերանց յամուրս եւ 'ի ծործորս խոխոմաձիգս,  
Որջառոյզ այծեմանց կամ եղջերուաց պէս սարսափեալ  
Եւ յահէ հալածչացն յետս ընդ կրուկ ակնարկելով,  
Ուստի ոչ ակն ունեին չըլամիտ աչք մահկանացուք՝  
Ի բարձանց հասանէր յանկարծ նոցա շփնդ ստատկման :

Մուքեհան եւ Կովկասոյ սկայից կորով հաստարարուկ  
Անդ 'ի գլուխս եւ յարեւանս առապարացն դարանեալ,  
Անձոռնի վիմն ապաւածըս լեռնաձեւ եւ անհեղեղ  
Որձաբար ժայռից հատորս ըսկայաբար դըրեալ 'ի գլլ,  
Եւ հարեալ պըսցի արձակեկն վերուստ 'ի վայր  
Ի վերայ յապահոսեալ կարծեցեւոյն 'ի սրոյն Հոյկոյ,  
Թող թէ բնու յամնահաս Նրկիկի բաղկին 'ի ցամամնին :

Կեք յարանցն արեւախորք յասպար 'ի տեղ խոխոտուսական  
Թէ գաթեալ ընդ զառ'ի վեր մշարակեկն յանտեսն սոփս,  
Ձի մեռանել թէ հասցէ՝ մեծագնի զկեանքն վաճառել,  
Թաւալցուք թափ անդ տաեալ եւ հողովեալ սրտունգոտս  
Բարկոտոյտ պարեկքն ահեղ, վիճք 'ի լերին, լերից 'ի դաշտ,  
Սոսկալի փոթորկափտան հողմոյ գողգամմբ մըռնչեւոյ  
Ճախրընդուրտս իջանելով հասանիին հարկանիին  
Ձայր զառնաղէն զերիվար զասպաղէն խառն խորտակեալ,  
Անդ շըմէալ ջարջախեալ, կամ իրբու զունդ ցընդեալ յարգի :

Յոր եւ կոյս խուսափին կամ զընեն գեմ, անդ զլառանն  
Ըզմբարանս ահաւոր զանգիմամարտ օրհասարեւոյ :  
Ոտուցեալ պատիժ խորտկըն պատուհաս գայ լլըրենի,  
Ատա տաեալ տանի կառափն, անդ բարձս իրան մահազոյն,  
Ատա զբախոյն ցուրր բնալիմի կորուսանէ հետախաղաղ,  
Անդ ըզլուտի զերիվարին եւ զվեղ խղճեալ Յուսցեալ ընդ օգս -  
Ի զի զչաւակըն շոփեալ ցըրուեալ՝ երկուս Յուրու սրտանս,  
Ի զի 'նդ հեծեալքն բախմամբ կամ 'ի բարձանց նըտակող իջիւք

չըմէ կուտակն ահագին՝ զայր եւ ըզձէ համանգամայն,  
 էր ուրեք զի գերիվար եւ զվերելակ միահամուս  
 Յօփըշտակեալ վեկանգեալ վանեալ յաչաց վանգէր անհետ:  
 Վէ՛մ վիճի պատահեալք, յամպոց շայթմաննքս պտտառին,  
 Զախոյախուն թուռցեալ բեկորք՝ պէսպէս ցանկն մահուան շուրջ:

Չորսմէն 'ի սեաւ արեանց գընայր վշտակ խոխոխելոյ,  
 Անորմ խաղայր խոյտայր յարինայեղց գիակունս Մահ:  
 Բամբիւնք վիմայն եւ շայթիւն, հաշմանգամոյ հաշումն եւ շուշ  
 Ամբոխին վերսուրաց խորտակելոց սատակելոց  
 Յահափեառն յակելեալ, զուշ եւ զուրուշ կորուտաներ,  
 Մինչ 'ի մեծ 'ի հեռաստան զգրս կոծեալ ահագնաւուր՝  
 Հանգոյն ջրբլէ՛ժ սահանաց ժայռիցն 'ի վիհ որոտալոյ:

Չիք իսկ տակ վերս ըզտոգունց, այլ սատակումն յական քըթթել,  
 Զի ճիկ անգամ հանելոյ գրտաներ ոչ գու՛լ եւ օճան:  
 Ազազակ գառնակոտոչ զարհուրական հարուածելոցն  
 Ընդ երկայն փող մանուածոյ խոխոսմա՛իդ խորածորոյն  
 Ուրս առեալ գալարեալ ելաներ զայր արտաքս 'ի գաշտ  
 Թորգոմեանց անշուշտ գուշակ անցիցն 'ի ներքս անդ անցելոց:

Ընդ գուժիցն ահա յանկարծ 'ի բերանոյ կըրճից ուստեք  
 Զխօթափ 'ի գուրս ոտաչէր մըրըրկաբար սկայն ահարկու  
 Թորգուգառ, որ զառաջին անկիւնակալ վէ՛ճն արտատոյ  
 Ըզհեմաննն շամբուժեան զամբարտակին Բաբելոնի  
 Ինքն բերեալ եւ արկեալ էր անգամոցն յայթուժեամբ,  
 Առաջին եւ պտակերին երկիր անկեալ պագեալ Բնչայ:

Յամենածափ 'ի ժայռից սատակչական կործանմանն  
 Մագապուր հազիւ գերծեալ եւ ճոզոպրեալ 'ի սուր փախուսա,  
 Յուսացեալ զքարակոշիո՛ճ սայթաքեալ վը՛ժ գառ 'ի բարձանցն,  
 Եւ դիտեալ ըզհովիտն հայակոյս լի որերով,  
 Երասան շըրջեալ յա՛լ կայս, մըտրակ 'ի կուշտ ընդ գառ'ի վեր  
 Զօրէն երազաթեւ իմըն թըռչոյ պանայր սաստիկ,  
 Եւ 'ի միտս իբրեւ անվընդ ըզփըրկութիւն գըտեալ խընգայր:

Եւ ահա 'ի մովկանեան գընդէն Փառօխ ըսկոյազօր  
 Լարեալ զլոյտալի՛ճն, որ 'ի կանգնեան եղճերց քօչից  
 Երասխայ եւ կապանեան գըժնեայ սարոցն էր կարակնեալ,  
 Ընդ գիրկը մըտանն 'ի բըռնաւոր բազկաց կորով:  
 Եւ շայթումն ազէյարմար հատեալ լարին եւ ազկան,  
 Զկարծրատոր ոտուցանէ գերեքկանգնեան հոյն սայրատուր  
 Ի թիկնամէջս ըսկային փախուցելում ընդ առապարն:  
 Եւ գհերձակըն գըժընգակ յոշնայարին շարս հարրոտեալ,  
 Ճախր 'ի վայր տանալ ընդ գլուխ երիվարին զուշամբելոյ  
 Բերանեալ թաւալ երթեալ, ձին 'ի վերայ արոփեալ սուրայր:  
 Ամենայն հովան եւ քլուր հընչեաց յամբոխ ազազակէ

Գընդից գընդից եւ վեհազանց՝ յարեղնաւոր քաջին գովեսա,  
Երկրորդ ընա կարգալով գիւցազն Հայկայ նետողն մեծ :

Ձլեմաստոյզ ջոկն ըսպատեալ վիմահոյովքն քարագիւք,  
Անանուն պատերազմօղք, դան իջանեն անգր 'ի հովեան :

Անէր զարձ եւ Ապահ 'ի վանեցոյ փախըստեխն,  
Հալածեալ մինչ յուզեալուր եւ քարածեռ Ահանց աղբիւրն,  
Եւ առաջ մի յայնկոյս՝ մինչեւ 'ի մեծ խորափախն ոփ :

Սըրտառուչ անձն 'ի տիկինն եւ միտք 'ի կոյսըն կարեվէր,

Առաջին գործ զայն առնէ՝ յողջոյն երթալ 'ի տես նորուն,

Չոր յանքոյթս եր կացուցեալ լքել անգուստ զիւր քաղութիւնս :

Իսկ բամբիշըն գեղեցիկ յինչ եղկուծեան գընէր սա՛ման :

Թող զաղեսաըն սըրտաթափ մարտին ժամու վանն իւր քաջին,

Իբրեւ այն ինչ զօրիորդն վերաւոր բերին առ ինքն,

Հայեցեալ ծանեաւ գերեսան եւ ըզնովաւ անկեալ չքչէր .

« Ո՛հ քոյր իմ Բորանէ, ո՛ւր գրասնիս, յո՛ր կերպարանս .

Ա՛յս պահեալ էր հանգիպումն ինձ յետ հընգից ամաց, աւա՛ղ :

Բաց աղէ զքաղցր բերանդ, յունկըն խօսեաց քոյգ Բերորայ,

Կամ թէ թող ծըծեմ շըրթամբքս ըզմնացուած յետին շընչոյդ » :

Եւ փարէր յարեւնուող գիրկան 'ի համբոյր մածեալ շըրթանցն .

Երկնից ակն եւեթ ընտրէր՝ ո՛ր յերկոցունցն էր ապրանաց :

Իջերմիկ ծոցոյն՝ ոգի բերեալ կենաց շիջեալն անշունչ,

Ա՛չս առկայծեալս բացեալ ծախս՝ զայս արձակէր նըւազ աւա՛լ .

« Եթէ գու՛ իցես Բերոր, իմ քոյր եւ զուստըր Ռահանայ,

Դո՛ւ ճիւղազ արեւնարբու հօր քում սըրտի, թերեւս եւ մօր .

Երթ թափեաց 'ի գըրկացս, արդարութեան կամ տուր համար,

Ապահայ գու՛ 'ի հրապոյրս առեւանգեալ՝ հօրդ ըսպանօղ » :

« Եզուկ քոյր, կըրկնեաց Բերոր, մահուն խաւար զաւարդ կապեալ .

Ճընորէ խուճապանօք մըտաց լեզուիդ տալ զառանցել :

Ո՛ր հրապոյրք, զե՛նչ առեւանգ, իբր հայրենի մահուն ոճիր .

Երգնում 'ի գու՛ ծընողին եւ յԱպահայ, 'ի քոյգ արեւն,

Չեմ ինչ պարս յորոց խօսիսդ . հացեկ ինձ աստ երկնից փայլափն

Եթէ յալ կամ թէ յահեակ ինչ գիտեցեմ՝ յորոց քըքու՛սան,

Եւ թէ ոչ ձեռնն ծնողին տանալ զիս ետ քաջին 'ի գիրկս » :

Յոգոց երեւալ Բորանէ, ձախ իւր ըզբերն, սաէ յայնժամ .

« Ապա ներես ինձ, Բերոր, արեան անուան քում վերագիս .

Եթէ շորհան հեքիս Երկնից շունչ 'ի լըրումն ըզձեցրս, լուր :

Գիտես իսկ, իմրս Բերոր, իբր 'ի խաղմիցըն փախուցեալ

հօր մերոյ գիւցազին զԱմրիկ ըզմայր մեր գեղաղէ

Յաջևարհ անգր Մադայի, անգրր եւ զիս իսկ վարեցին

Առնացի ախորժակք, կամք հօր՝ յեղբարց առ 'ի չքոյէ,

Լուր եղեալ մահ՝ ծընողին, զարձաք ողբովք յանդ մեր յՈրեդ .

Եւ ըզքեզ խընգրեալ եւ ոչ գրտեալ լըւոյք 'ի համբաւուց,

Չոր բնիկանք բանասերիկեցին խորամանկեալ 'ի մեր կորուստ,  
Հափափեալ Արատայ, յանյոյս ցաւոցն հայր մոռնդնեալ՝  
Տըւեալ զանձն 'ի հուր մարտից, անմըխիթար մօր անկեալ սուգ:  
Յայնժամ ես, Արտ է, ասեմ, արուձեան սիրտ՝ բազուկ պիտոյ-  
Արեան գուժ, շանթիք ցաման, շառագունանք եւ մօր աշխար  
Վառեցին բոց յերակունս, 'ի քէն վրեժուց մոլեցան միտք,  
Երգուայ զալ կորուսանեւ ռիզեիս եւ քոյր հայրախոշոշ:  
Այլ Երկնից դատաստանք հատուցին ինձ զայս աւասիկ,  
Արգարուձեան խելամուտ լինել եւ սուտ աստուածութեան »:

Չայս մընչէր եւ նուազէին ոգիքն յարեան հոսեալ հեղեղ-  
Արիկար անեկան ըզքոյրն 'ի ծոցն յինչըն ձգէր,  
Եւ կային անմըտուչ եւ շքնչասպառ յերկար նըւագ:  
Նշնհետայն եմուտ Ապահ յերոցն ուսեալ զանցեցն ըզվեայ-  
Չայն բարձեալ ելաց բամբին, ելաց Ապահ 'ի սիրտ նորին,  
Ոգբային հեծեծելի եւ երկղբին նաժիշտք տիկնոջն:  
Երիցս երաց Բորանէ զաւառն խրփեալս 'ի քուն մահու,  
Եւ ըզք իւր յերրորդումն 'ի գատարկ սիրտն ժողովեալ,  
Եւ կաբեալ զաջո քաջին իւրով արեամբ գեռ ներկելոյ,  
« Ներեսցես քաջք եւ գու, մի ռիս, ասէ, կայլիք ուրուխ-  
Մի լայք մի, զի յարժանի մեռանիմ ես ձեր փոխանակ,  
Ոչինչ այլ ցաւ սրբոխ քան զոգորմ մայրս անմըխիթար:  
Անբաց մըտալ պատէ զբերտ, եւ ճեպին զիս երկունք մահու...  
Անիծեալ Բե՛լ եւ Բիւրասպ, աստուածութիւն իւր նըրզվեալ-  
Բռնաւորաց եւ զըրպարուից ոչ է Աստուածըն ճըշմարիտ:  
Օրհնեալ Հայի եւ իւրն Աստուած, որում զողիս իմ ասանդեմ՝  
Իծոց քո, իմբս Բերոր, եւ գու 'ի ծոց քում սիրելոյդ:  
Կեցիք երանիկք միմեանց 'ի գիրկս եւ յանմահ սիրտ-  
Ես ոգի գանձացեալ իջից 'ի խոր անդարամաստ,  
Ըսփոփումն ընդ իս միայն ներուամըն ձեր՝ թէ շորհհայիք »:

Ասաց, եւ ցուրտ արտօսը 'ի սորելոց վիժեալ աչացն  
Եւ քիրտըն ցուրտ ընդ մարմինն, արկեալ ըզնօսն՝ եհան զողի:  
« Ո՛հ Բորանէ, յո՛վ եկիր եւ յո՛ թրուեար, գուժեաց Բերոր,  
Գընաց քոյրդ իմ, Ապահ »... եւ զլանջըն մերկ լուանոյր լուեօք:  
Ա՛ռ 'ի գիրկս իւր քաջն ըզնա, ջընջէր ձեռք զաղի վիժեակն,  
Եւ համբոյր խանդակաթ աւեալ շքրթանցըն զալկահար  
Եւ կաթողի արաստուացն աղբերականց՝ հեծէ 'ի մտուչ-  
« Դու ներեա, իմբս Բերոր, ինձ ակամայ վրեժապարտիս,  
Թէ յարեան հարազատիդ ներկեալ բազիօք քեզ գիրկս ածեմ:  
Ինձ եւ քեզ՝ այս մըխիթար, նա երթ 'ի ծոց մեր Աստուծոյն,  
Թոր եւ գու եւ ես ընդ քեզ ժողովելոց եմբ անբաժին:  
Ամբիկ տիկին՝ եւ իմ է մայր, եւ մեր պըրշակք միայն իւր տուն,  
Դու կըրկին նըմա սփոփանք, պատուոյն՝ կենացն եւ ապաւեն »:



Ի գլուխդ երգուեալ սիրային, տեսիլք առ քեզ զայն 'ի մտայ .  
Լքուես զողբալդ արգար, մի գլազմանակ մեր խաւարեր ։

Ձայս ասէ, եւ անկարկէ բառնալ մանկայն զտեսիլն ողբմ .

Տայր ապա՝ լու 'ի լու բամբռն՝ պատուէր գիտարդեւլ,

Եւ երկուց յարանց իւրոց անուլ տանել յԱզատհունիս,

Ի բլուր ի բար ապարանից թաղել յուսեաց անտառակին

Չորրորդի բարձու նոճոյն 'ի հովանի ջուրցն աղբերաց ։

Դիւցազանց փողն գոչէր, ժողովին գունդք 'ի մի վայր,

Կապտէին ըզգիակունս, անուին առ աւար ապուռ ։

Ձվերաւորսն պատեցին, ետուն հողոյ զանկեալս իւրեանց,

Ձոգի զմարմն կազգուրեալ 'ի կերակուր եւ յմտելիս,

Հաւաքեալ զաղի բանակին՝ կազմ 'ի հրաման կացին չբայ ։

Կարեկից առ Ապահ մըտին գումար մեծ գիւցազունք,

Եւ հանեալ յողբոց վրանէն՝ խառնեն յիւրեանց չու հանգիսին ։

Տիկինն երթեալ զանձն հեղոյր զանշընչացեալ քեռն մարմնով,

Եւ յողջոյն հրաժեշտի գելլոյր ըզձայնս աղեղորմ .

« Տայր որ, քոյր, յերկինս ընդ քեզ, ընդ քեզ 'ի մի գընալ տապան .

Ներեա, քոյր իմ, քոյր քաղցրիկ, այսպէս փութով անջատելոցս .

Բարեաւ մընա, երթ բարեաւ, զԲերորայ սերտ ընդ քեզ տարեալ,

Ի գրախախն իմում քունել 'ի հող փափուկ խոր հանգրտեան ։

Անթառամ գարաստանին ուրք վարսաւորք քեզ հովանի,

Եւ վրասկացըն լի ծորանք՝ յորդ արտատուտըս ծաւալմունք ։

Փըթթեացէ երկիր ըզքեւ գունեսան ծաղիկ ծիւծիւրանի .

Գամ ընդ հուռ 'ի ստոյգ աչացս ոտդել ցօղ, կանգնել չիբմ,

Եւ 'ի սիք անուշահոտ բուրմանցն երգինց շնչել զոգիդ,

Եւ ըզկնի անդ գրբկախառն ընդ քեզ յաւեժ նընջել սիրով ։

Մինչ կամեր գեւ ոյլ յերկար զազէտ սըրտին յողբս յեղեղել,

Յափըշտակեալ նաժըշտացն, հեծեալ հազձեալ անկան յաղի ։

Ի ծովեզըն Արձիղոյ բանակն եհաս ասղարիսեալ ։

Յաւազաց անդ ոչ սակաք յերկրին քաջաց զեղծուցելոց

Ի բեկեան զօրապետաց ուրանալ զհայկ, զԱրտուած հայկոյ,

Պինդ կացեալք եւ անյողջողք՝ եկեալ խառնին 'ի գունգն հայկեան,

Ոչ փոքու լինին նըպաստ նաւաքն 'ի չուն անգընգահերձ ։

Անդ զամենայն ինչ կազմ գրտեալ, եւ նըսեմաւ ասեալ ընթրիս,

Տան զանձինս անուորք թնոյ, զհողմն առ վաղիւ մաղթեալ յաբող,

Վաղ քաջ ընդ այգն հատանել զկապոյտ անգունգըս կոհակաց,

Երեսացն յանձուկ ջեռեալ մեծին հայկոյ վեհ գիւցազին ։

Բիւրասպեան մանուկ սատան, որ 'ի բարձանց Լիճն կըզգըցն

Գան զարծուոյ կայր քան զանգեղ սրտեսն ահամբ 'ի մարտըն գէտ

Ի յաղթանակ թորգամզանց եւ 'ի կորանս սխտանացուց,

Դառնահեծ շըչեաց գուժիւ . անգրէն կրբինեալ մըռնչեցին

Անձաւք ըրանց եւ փապարք ափանց ծափուն եւ շուրջ մայրեաց :  
 Անտի տաւառնեալ եւ դահազին տարածեալ Թեւ  
 Ի վերայ ջուրց մեղանանցն իբրու զճիւղալ չըզլիկանի,  
 Ի հարաւ կոյս սրլանայ ինքն եւ ըստուեր իւր այլանգակ  
 Յանգընգոցն երես դրոշմեալ ահ լողակաց, հաւուց խուճապ :  
 Ի ճամբարն եհաս բեղնան, մինչ յուզարկեալ զմեռեալս իւրեանց  
 Ի թուն էին այր 'ի խորանս իւր սըրտմուլծեամբ ծանրալծափոծ :

Ձմաշխաթեան յինքն ամենոփեալ յիւր կերպարանս անգրէն գառնայ,  
 Մերկանայ ծրզիս բազուկըս պատանայ լանջս եւ երանս  
 Եւ ազգերո եւ բարձըս Թուխ՝ իբր հարազատ մանուկ Քանան,  
 Եւ փայլունս եւ պաղպղոնս՝ որպէս 'ի ժամն օծեալ իւղով :  
 Իակ զըլուխն չարեաց պատկանդարան՝ հանդոյն կապկի,  
 Հերք զերդ սարս խրոււացեալ, ճակաս տափեալ ողնեալ յեակոյս,  
 Ահանջք մեծաբերձք, արիւնանիչ աչք յարաճօճք,  
 Գիթ տափունչ, ծընօտք ցըցուեալ, լայնի բերանս եւ Թանձրաշուրթն,  
 Եւ կըզակ՝ սպիտակ ժանեզք ցըրկեալ յաւալ եւ յունչս 'ի վեր :

Անցանէ մեղմաբայլ, 'ի Բիւրասպեայ մըտեալ վըրան  
 Տեսանէ զի սկէր անքունս եւ զմըրազէր յոճիր խոճոճ  
 Սիրելեացն Ատուծոյ Թորդոմական բանակին սուրբ .  
 'Արտեալ ծունկ ըզծընկով, արմուկն յազգեր եւ ձեռն 'ի ծնօտ,  
 Ձմրգական կախարդասար յուլթից մատենանըն Թաւալէր :  
 Մատուցեալ ըստ օրինին զուս համբուրէ մանուկ սատան,  
 Յունկնըն կամի չըշնջել . « Յայտ իսկ խօսեաց, ասէ Բիւրասպ .  
 Եւ յումէ զանգիտես . իսկ մըր էիր զաւուզոս այշափ » :

« Ձատեղի Ատուծոյն իւրեանց անուն, ասէ, հայկեանց  
 Յանգըն կարգալով 'ի պաշտամունսն՝ խոյս ետու .  
 Եւ զի մի զազէս մահու զկոտորածի մերում տեսից :  
 Սակայն ոչ ինչ նըւալ պատահեցի պատուհասի .  
 Եղբարք Հայկին եւ Ագահ սատակեցին ըզմեղ 'ի սպառ  
 Ի հոգիտարն գնունիս յարինայեղց եւ դեակոյս :  
 Չիք պատմել զահագին ըզյարձակումըն դիւշազանց,  
 Ձահաւար յաղորւած զօրեղ բողկաց Թորգոմացոց,  
 Եւ զարեանցըն ճապաղին յորգահեղեղ գնացելոց ուղի .  
 Ձընջեցին ըզմեղ, ընդ այդն այտր նաւն անեղ բանակ :  
 Ձողին Հայկայ զարթեացեալն յարուացն արդ դիւշազանց խումբ,  
 Լըսեցնն ամենայն ոստիաութիւնք եւ յաչաղանք .  
 Ձինչ յայժամ մեղ յայնքանոյ սկայից զընգէն խիզախեց » :

Ի մտընջան գառնութեան յոգոց Բիւրասպ եւ եւ ասէ .  
 « Ոչ կարծեմ Թէ մուսայի վըստամ ըզխէթ իւր ընդ Հայկայ,  
 Եւ ոչ սա զսըրտմըտութեան ամբարտաւան ոգւոյն ըզքէն .  
 Այլ Թէպէս եւ տիտանեան սպառեացէ սուր զմըտամանն ջակս,  
 Գաւարտափ տափաւին կայցնն բանակք մեղ անվերկանդ » :

« Միս այս ինչ, դեւն սուէ չար, հատցե զասգնասայ՝ ի մէնջ եւ զտոյժ .  
 Ունկըն գիր եւ լուիցեա ի լուր քո չեւ յայտնեալ խորհուրդ :  
 Ի հալածել Տեառն երկնից եւ Թօթափել ըզմեզ յանդունդս,  
 Յահեզասայայ ի մեր խոսնէն կէզք յօգս եւ յամարս զօղեցան,  
 Այլք ի վիհս, յանձաւս լերանց մբտեալ Թաքեան, ի սորս երկրի :  
 Ոգի գըժնեայ մբբիկայոյզ ամպրոպային այս խաւարուս  
 Ի խոր այրին որջանայ ի մըթին լեառն ի Վասպուտոզն,  
 Մի յայնցանէ որ ի մելել անդընգասպոյտ ջուրցն հեղեղաց  
 Մատակել զատելին Աստուծոյ զաղցն եւ մեզ սիրուն,  
 Յարուցեալ ի նոյեան խոյանային մեծ լասափայտ  
 Փոթորիկել զալեաց կոհակարն կուտակել լեռնակարկառ  
 Ի կորուստ խորակուլ՝ սիրաւնունդ երկնից զարմին :  
 Այլ ի գոչել յորձանաց յորգահոսան ծովուն անեղբ  
 Եւ ծածկել զվաւկաս Մասիս եւ զԵմաւոն՝ խրոխս գագաթունս,  
 Փախուցեալ սուղաւ յանդունդս ի վերապին իւր խորխորատ,  
 Եւ ապա ի վերըստին եկն եւ այսրէն յիւր որջ ծանօթ :  
 Ես չերթամ առ նա, զի գեւ գիւի սպաս զայս ոչ հարկանէ,  
 Զի եւ ահն իմիք չունի . որպէս գիտեսդ երթ զարթունջեր  
 Ելանել թուխ փոթորիկ, Թաղել զթորգոմ՝ ի ծողուն վիհ :  
 Կոր իմն եւ մեծ այս քեզ յաչքս Տեառնայ պարծանք եւ շնորհ : »

« Ըստ է արդ, սուէ Բիւրասայ . սանգարամեղք ինձ օժանգակ » :  
 Եւ արտաքս ի խորանէն ելեալ հայեր, կայր պըշուցեալ  
 Ընդ աստեղս երկնից զըմգին, նըշանք ժամուց ժամանակաց :  
 Նըկատեր զի Զըրհոսն ելանէր գայր ի գրանց երկնից  
 Ըզթակոյղըն մեծ լցեալ ի յորձանաց լուսոյն աղբեր,  
 Տուլն յերկնից զըմբեթ՝ յեղբերսն բազմաստեղք բոցաճաճանջ,  
 Խեցգեղեմին ի մառախուլջ եղեր ծագաց արեւմտից  
 Լիւզէր լայն ճիրանգն եւ մըխրձէր զըլուփն յանդունդս,  
 Եթնարփին սայլն ընդ հարաւ շըրջէր զանիւս՝ քեզի՝ նդ հիւսփս .  
 Գիտաց զի եր գիշերոյն զընթացըս իւր հասարակեալ,  
 Եւ ընդ ծիր անցեալ արփից երկնակաճառ ասպարիսին :

Եմուս ի ներքս, եւ զհանգիսի արկաւ զհանգեւածըն զահաւոր .  
 Տառասոկ կարմիր՝ յոսկի ժապաւինեալ, պինդ ընդ իրան,  
 Սեղմ ոսկեձոյլ օղակք կոճկէն ի լանջս առ շէկ գօտեամբ .  
 Ծընկօք չափ՝ լոյծ եւ ջախջախ գեղնափայլ Թօշ անդրափարափս  
 Յարծաթի լամբեալ խոյօզս ամիտօի եւ զուսպ զանկապանօք .  
 Յոտսըն կօշիկ ծիրանի, սրածայր կապոյտ խոյր մեծ ի գլուփս,  
 Լայն կանաչ բազմակուզի զնովաւ փաթոյթ հարիւր կանգուն .  
 Ի վերուստ լօզիկ սեաւ լայնածաւալ ստորոտաքարջ,  
 Թըզեան օձեղք, ճարմանգիւ ականակուս պընգեալ զուլտմբ :

Ա՛ս ի ձեռս ըզցաւազանըն սոսկալի զոպնիսպեայ,  
 Ի դիւսաց քերեալ պատկերս եւ ի խորհուրդս ամպարըշտաց,

Եւ 'ի գլուխն զ՛ գալարուն բոցակնագոյն հրաշունչ միշապ  
 Յոսկւոյ, յոսկնազէ եւ 'ի փղոսկրէ խայտաճամուկ .  
 Յուպ անհզ, զոր էր տըւեալ Դրժոխապետն իւր 'ի պարգեւ,  
 Շառաւիղ մի մականին ապրտտամբօզ հարրատուծեան,  
 Որ ստեղնեալ ըողբոյ 'ի խոր սանդարամետս յոտս պըակեցաւ,  
 Յորմէ մասըն զըրուծիւնք բաժանեցան անդընգայնոց .  
 Յուպ՝ զբժոխոց պատկառանք, անմեղ ոգւոց խըրտուկը խուճապ :  
 Զայն 'ի ձեռն առեալ հեծաւ փոյլժ 'ի թամբեալ թուխ անդրուվար,  
 Միայնիկ գընայր լըրիկ 'ի լըս լուսնին ազօտաջահ .  
 Թոյլ էտուն պարեկապանքն եւ յանուանէն իսկ սասանեալ :

Ի գիւէն վարեալ եհաս 'ի Կապուտողն յասպատակի .  
 Ահարկու քարանձաւին առ սեամս եկեալ զէպ մըլծին գրաց՝  
 Որ հանդոյն տարտարոսին բանայր բերան անդընգական,  
 Իջանէ յերիվարէն . եւ պագեալ նախ ոգւոյն երկիր  
 Ի վիհս անդ որջացելում, կանգնեալ ամբարձ ըզցուակն յերկինս,  
 ԶԱրտուծոյն 'տոյն երկցս եւ զհայկին նոյնպէս հայհոյեաց  
 Զանաւն սուրբ եւ ըզբարձրեալ, եւ յալեւորըն նահապետ  
 Եւ յօրհնեալ ճնան յարեթեան կուսեաց նըզոյս ունայնաթուպս :

Զերգ Զարպալից կաթասայի որ 'ի հուր մեծ եռացելոյ,  
 Մըռընչիւն հեծուծեան՝ լըրինն ընդ փապս եւ ընդ անտառս  
 Ահեղ ընթացաւ, զբոսմընեցին օգբ եւ տարեբք :  
 Եւ զերկիր գաւազանաւն հարեալ կարգաց երկցս անդամ՝  
 Նոքին լըզուաւ պըզժաշուրծըն բերանոյ զԱնգընգեհակեան  
 Եւ զանուանաըն սոսկալիս ըզգահերեցըն բարձակցաց :  
 Յոյն բարառ՝ սանդարամետք եւ լեռան ինքնին յոտից ջըզլուխ  
 Մայրեկք աղբերքք վրտակօք զցողի հարեալ երերկին :

Զհայհոյիչ բացեալ ապա զհազագն ըզվիհ ժանտից՝ ասէ .  
 « Ոգիդ գու, մըրրկաց այս, փոթորկարեր ամպրոպաց Քաջ,  
 Արի օն առ իս մատիր առ Սժգահակըս Բիւրասպի :  
 Ոխերիմ երկնարնակին եւ սիրելեաց իւրոց դահիճ՝  
 Թէ իցես գու ճըշմարտիւ, ազէ ինձ հաշտ այսըր մատիր,  
 Որ 'ի ջուրըն սատակման համաշխարհի՝ զազքն յողացեր  
 Կորուսանել ծովանոյն ըզյակն առեալն երկնից սիրոյն :  
 Նոյն զաւակ անիծից ընդ ձեզ եւ մեզ կըրկին լըրեալ,  
 Զպետականն հանէ զՔամայ մական՝ տիրել զըլլոց նորին,  
 Յօրհնուծիւնս յուսացեալ իսկըզբանէ ձեզ ատելոյդ :  
 Արգ ծովուգ 'ի հանգիւղոյ, յոր ակնարկէ քոյդ արտեւան,  
 Մեզ նաւն . հապա զարթիր եւ զհին քնուոգ հանցես վըրեժ .  
 Ի մըրրիկ հողմոյ մեծի ոգւոյ ցասման քոյ բարկուծեան  
 Եւ ջըրուեա, կոծես զնոսին ընդ խուծս, ընկլս ի՞նչ յանգանգս » :  
 Խուլ իմն ակեղ մըռընչիւն յուսկըն մոգին գայր 'ի խորոց .  
 « Երկընչիմ ես 'ի ծերոյն, որ յամենայն ալեաց ձմերուսն

Իբր ըզվեմ՝ կայ հաստատուն, եւ յոտոխէն երկնից սուկամ՝  
Որ վայրիկ մ՝ եւ ջրահեղձոց զիս անգընդոցն ընկենդոց կուր,  
Թէ առ ժամ մի ապաստան չէր զատելիս արարեալ վիհ:

Եւ ՚ի պետէն սուկալի գողամ դարձեալ խոր խաւարին,  
Ոյր լարեալ կան նեղք յաղեղն ըստանալից՝ թէ չաղովմ՝:

« Եւ սահայն յանգընելոց բախան է նըպաստ, ասէ Բփւրասայ:  
Միթէ եւ ձեր թըշնամին կարօզ լինել զօրեանց ՚ի սպաս:  
Ոչ յարեաւ յարիասիրտ վրտարաննջօզ զընդդո յողոր  
Յանհնարին մըրդիկեալ մըզձկեալ սըրտմըտութեան զայրութից բոց  
Ահաբեկըս նըւաճել կամ սատակել բառնալ լուփլէզ:  
Ուր են արդ բոհմունք սաստիցն, յայցցանէ ինչ մի թէ կացնց:  
Օն արի, եւ ոչ ձըրի աղաչեմք ինչ զերեսըս քո »:

« Եւ զինչ ինձ, կըրկնէր Քաջն, աջոզ եթէ հարից ըստաս »:

« Քեզ կըձնայ մի սուրբ բազին աստ ՚ի լերինըս կանգնեցնց,  
Երկրորդեայ Բփւրասայի, ամի ամի հանել քեզ զոր,  
Եւ հոյսեալս անուն փառայդ ընդ տիեզերս հընչեացէ,  
Եւ ընդ այլ գիսն ՚ի Բաբել՝ պատկեր սակի կացցես ՚ի բեմ.  
Խաւնկք եւ նըւէքք ՚ի սեղան եւ գահամունք ելլեն եւ քեզ,  
Յաւիտեան Բել՝ եւ Բփւրասայ երախտատու քեզ գաւանեալ:  
Արի օն. ոչ թէ ձըրի յաղերս ինչ մեք առ քեզ մտտեք »:

« Երգողի ինձ », ասէ Քաջն. — եւ Բփւրասայ ձըգեալ յերկից

Ըջձայր գաւազանին եւ ՚ի վերայ ծոզուն զահեակն,  
Սե՛ւ. « Ունիմ՝ քեզ վըկայ զլեռանըդ զահեղ քոյգ օթեւան,  
Ըջծոզուդ խորոց անգունդս՝ հըզօր աջոզ վիժուց զահիճ՝,  
Եւ գնեքքին սանգարամետս՝ ուստի ձեռինս է ցուպ պարգեւ.  
Գոսասցի խաւարեացի սըմին հանգոյն բախտ Բփւրասայեայ »:  
Ասաց, եւ ՚ի հմայս հաւանութեան մընչէր քարայրն:

Առաւօտըն քըքքմագցեստ, վարգասլըսակ, սակի ոտամք  
Նաղելով ՚ի թեւս հողմոց դայր ընդ լերինսն հարաւոյ,  
Քաղցր եւ զով մանրասիք արձակելով իւր կարուպետ:  
Թորդումեանք վազայարոյցք քան զարշալուչ՝ գիշերափառն  
Մեքարձեալք ՚ի նաւս հարիւր, եւ մեղմաշունչ հիւսիսակաւ  
Տոկ օդոյն պարգեալ ըզթեւս եւ գոգ գործեալ մեծ ուռուցիկ  
Ի կապոյտ կոհակաւէտ պիտըն ճօճ փռեալ ձեռին,  
Որ զառաջք եւ վիտգիւք ըստասփայտիցն եւ ըզեկոցք  
Վէտ վէտ ՚ի լըս լուսնակին պաղպաղելով ծիծաղափետ՝  
Մէտ ՚ի մէտ երթեւեկըքն կայտուէին խոխոջսձայն:

Յաղթական երգս ՚ի բերան ասեալ նուագն զլուարթութեանք,  
Ծայրայանգս յեղեղելով զօրհնից Նոյն յազգ յարեթեան,  
Քամայ եւ Քանանու զարմից նորա կարգալին սուր,  
Հայկայ՝ « Քեզ աւետին, գոչէին, քաջըզ գիւցազանց,  
Սղբարք քո վեհազունք, Լորգեքք ահա խըմքն առ քեզ,

Բեշոյ բօժ յիւր 'ի բանակս, տխտանացոց 'ի խորանս ահ ։  
 Հնչեկն մարտաբառս անձեիւր նուաջ արուեստականք,  
 Բուռն 'ի փանդիս Բերոր բամբիշքն վարդահաթ կրտօր մատանք ։  
 Աս մեմտանք արշուէին, մի 'սա մտղն նըւազելով  
 Ձգիւցազունս եւ զարուծիւն նոցին 'ի գաշարն զընուծի ։  
 Մինչ եկին յարին Ազաս, ձայն աւին նաւք ընդ մի բերան  
 Մնտփանձ մինչեւ յերկինս ըզքաշուծիւնսն ամբասնալով ։  
 Հաւասար հօրն երգեկն, ոչ մտացեալ 'ի նորն հանգես  
 Եւ զտակային խաւարանս, բայց լըտեցին ըզբարանէ ։  
 Գաշէին ալիք ծոփուն եւ ծոփափունք զանուն քաջին,  
 Անք բամբշանն ամեթադեղ պարկեշտուծիւն, սէր պատկառաս  
 ՉԱւարազայ ծիրաներփեան զարեւանգից եւ զԱնտասալայ  
 Յանեցին վարդ 'ի շուշանս առայգ սյափցն եւ ճակատուն ։

Արեգակն ընդ հայ լերինսն ծաւալէր ծայրակարմիր ։  
 Կայր Բիւրասալ ակըն կալեալ արձանացեալ այրին առ զուրս ։  
 Ըսկըսաւ խաղճ ոգին 'ի սեսաւ վէսէն խոր մըտընչմամբ,  
 Գաղճ գայր սյալն մերբկատ եւ ցըլանայր տակա յերկինս ։  
 Ըարժէին ծայրք եւ գիտակք մայրեաց բարձանց եւ հնծեկն,  
 Ծուփս եւ մէք, մըրբրեփտան ըզլուփս լերին պատեկն ամուք ։  
 Գեղեցիկ սյալն 'ի մըտայլ 'ի մուծ ըզէնսնն ներկաներ,  
 Ի հարաւ կուսէ երկինք խոժոռեկն լըթմաստեփ ։  
 Ի ծայրեց ծըփանացըն թեւս հանեալ սաւաննաձայն  
 Փախեկն հազամազք կարկաշեղճ 'ի ցամաք կոյս ։  
 Անկասկած անխէթ 'ի սիրա հաշուին զանձինս արգ 'ի բանակն,  
 Յերրազարձ խոր անգընգոցըն ծըփանաց 'ի հնչտ հանգիստ :  
 Անք յանկարծ յեզակարծու՛մ տարակարծի ահեղ գոռմամբ  
 Ելեալ Բար եւ Ամբոփալ ըսկոյակոյտ վաշտիւք սպայից  
 Ի մայրեացըն գարանաց եւ ծործորոց 'ի ձայն փողոյ  
 Բարբաւով որոտազոչ հընչեցուցեալ զծովափն եւ զծայրս,  
 Հասեալ անկեալ 'ի վերայ մըրքիստարափ նեռաձգութեամբ  
 Չըտալ Թոյլ՝ ոտն 'ի ցամուք կոխել, այլ անդ յառաջին քոյլ  
 Ի նակկին ողջոն երկրին՝ զայն գերեզման գընել նոցա,  
 Քաշտի մակոյկ զոր նաւաստի կորուսանել անգընգակուլ :  
 Անհաւատ էր Թանձրախուան յորք շառաւմանց տեղատարափ  
 Քարանց վիմաց խարակաց՝ զորըս խըլեալ ամհաբար  
 Ի լերանցն առապարէն Թօթափէին 'ի Թորդոմեանս :  
 Յերեաց կուռ կոփուածոցըն սասանեալ հեծեցին նաւք .  
 Ի ցամուք Թէ անկանէր ըբրա պարեխազըն խուան ամբոխ,  
 Մեծ խմըն լեռան ապառաժ կարկուտակոյտըն Թանձրախա  
 Ի տեղալ անդ կոթողէր արձանացեալ յազցս յաւիտեանց :  
 Չսոք բարձրաթուփ յարձակմունք երեքթեւեան սլացից փըքնաց  
 Ի հաստաձիգ աղեղանցն 'ի լայնալիճըն ճայթմանէ  
 Զարփային խաւարեցին նըշոյս յաւաց Թորդոմացոց,  
 Յառազաստըն Թերաքամս վարսեալ ցըցուեալ խողանացեալ :  
 Կայր Բար սոսկաժիթխարըն հասակաւ յեզըր ծոփուն  
 Որպէս ժայռ սարաւանդեալ որ փըրփորագէղ կուտակելովք  
 Ամհնի ալեօք բեկմամբ մեծ գոչիցէ, ձայնէր յոխորա .  
 « Այս չէ գաշտ գընունի գարանամուս աղուեսուց որլ,  
 Ոչ զինու եւ ամբոխիւ նաւամարտի կռիւ աննըման .  
 Զերկոցուն վեճժս հասուջիք վըտարանջօքք եւ ապրասածիք  
 Յօրինաց իշխանութեան 'ի մեծազօր տեռնէն Բիւլայ » :  
 Մոզկանեան եւ ապահեան գընգին կորովք հաստ աղեղանց  
 Եւ յոտալոյ հիւսիսին աճապարեալ նիզակաւորք,

Գուէր Բարթէլ եւ Բարդըն գոռ, եւ զօրագլուխք եւ զօրաժառք  
 Միահամուռ գուէրքին. « Ի ընաւ իսկ ժամս եւ 'ի տեղիս  
 Միշա է քաջ լինել քաջաց, առջիք եւ սաս ըզմեր ճաշակ,  
 Մինչդեռ ձեր ոսն 'ի հաստի, փախուստ առ կռան, վէճք սպաւէն,  
 Մերս յերերի տառանման 'ի սարսուտեր մըկանանց ծուփս:  
 Հակա քաջք, քաւ ըզկըրկին մեր յազթանակս առնել յամօթ.  
 Յճ զարձցուք, զինուք մեզ կայ ստանալ զերկիրս յանիրաւաց:  
 Թորդումեան սա թէ իցէ ժառանգութեան արդար բաժին,  
 Եւ բընիկ ազատութեան մեզ եւ որդւոց տուն հայրենի,  
 Աստէն իսկ առ ետեզ ըմբռնեացուք այժմ՝ ըզցամաքս »:

Ի կողմանց երկոյունց ընթանային նեղք եւ նիզակք.  
 Անկանին սասի անտի, այլ առաւել 'ի տխրանեանց  
 Յաճախագունոք բանակօք ըզծովեղերր կուտակեոց,  
 Յոր 'ի հարկէ Թորգումեանցն հարկանէին զըզ զէնք 'ի խանս.  
 Իոկ նոցայն՝ բազում այն էր զի վրէպեալ ջընդէր ընդ վայր  
 Ի յողջողջուն երերմանցն եւ յոցտելոյ կարկուրէից:

Թորդումեանց կըրկին վաստակ էր եւ սագնադ անհընարին,  
 Կալ 'ի կուէ ընդ Թըշնամուշն եւ զնաւատորմ՝ վարել յառաջ,  
 Եւ զկամուրջսն մեծամեծ ձըզել կապել ըզցամաքէն,  
 Ձէ լըջք դամ մի նոցա յերերագին յատակաց զերծ  
 Ձստս 'ի գաշա 'ի բոյս հարեալ ըզզէնս եւթ առնուլ 'ի գործ:  
 Կեպք եւ ոչ կամըրջացն արկանելոյ սպասեալ մընան,  
 Ոյց յաղոյ էր վայրն եւ հուն՝ մըզեալ զնաւակսն սաստկապէս  
 Պատասեն զծովայտակն եւ զաւազուտ եւ ըզցամաք,  
 Եւ վազել ընկենուլ մըրջին զանձինս իւրեանց յերկիր:

Այլուր ձիոց երամակին խըրխիջ եւ գոփ զըզըզէր զըզունս.  
 Ոստուցեալ 'ի նիւս նոցա քաջ եւ արփ երիտասարդք  
 Ընդ ծանծաղսն ծովամուխ, ընդ խորս պեաց անկեալ 'ի լիւզ,  
 Ձէն 'ի կիր արկեալ համայն՝ նըկըրտէին 'ի ցամաք կոյս:  
 Էր ուրուք զի վերերեակք խոցեալ անզուտ տապալեցան,  
 Բայց երէքն յարեան 'ի հոս 'ի մարտ խանձեալ գիմն յառաջ  
 Բոցառունչ աչք ունդամբք, ականջք 'ի ցից, վիզ կարակնեալ,  
 Եւ բաշիցն հոյլ ազբախումբ Թաւուցեալ 'ի Թեւս հիւսիտակին:

Պատանի խարտիչապեղ Խարէն անուն յերեւանայ  
 Խայտաղով 'ի նիւս ձիոյն յուսով ըզհուպ ըմբռնէր ափն,  
 Եւ զիւրումն հրազանայ զխոխոջաձայն եզր երազէր:  
 Անդ չըւեաց 'ի հանգիպոյն երեքթեւեանն Արեշի նեա,  
 Անց ընդ փող պարանոցին կըտրեալ զմաճառն շընչերակ.  
 Ձերիվարին ըզգաւակաւ քաջն յետըս կոյս անկաւ կործան:  
 Նա ցանկալի ցամաքին յանձուկ սիրոյ խանգաղատեալ,  
 Ձի մի զառոյգ տացէ զմարմինս անզընգոց կուր, բաժին զեւնոց,  
 Պատըսպարեալ բուռն հարեալ զերկայն սգւոյն ընդ քարշ զընայր՝



Գնայր ըզրունչն եւ զձերմ ողինն ընդ լայն հոսեալ վերաբերան :  
 Կապուսակ ալիքն յարին ներկանէին բոսորաբուզն,  
 Աղօսեալ կարմիր հեղեղն հիքին ըզինի զնուրց մըկանունս .  
 Մինչեւ յերկիր ժամանեալ եւ ուժամթափ ձեռն անկանէր,  
 Անկանէր եւ նա ճակատ զցետնի հարեալ փրփուեր արին,  
 Ի գիշեր անծագելի եւ մահաբուն փակէին բիբջ :

Սոսկալին լալա հերեան զընգին սաշար վահան 'ի ձեռս  
 Եւ նիզակ ահաւոր ճօճեալ ալոյն, ըսկայսբայլ  
 Ընդ կապեալ վազէր կամուրջն, ըսկայք արիք փողեալ ըզհետ :  
 Ելանէր թուրոս սեգ յահեղ կանչին նրմին գիմակ  
 Պար բոլոր յահեակ եւ յալ 'ի կորովն տիգաւորաց :

Ի քաջաց տխրանացւոց անկանէին կէսք վիրաւոր,  
 Հայկեանց խոց գառնային արին Գեղամ, կորովին Մուշկ  
 Եւ Արան քաջաւանջ, բեկաէր նիզակըն լալայի :

Յայնժամ սուր փայլատակեալ մըզէր գուշեր առիւծաբար,  
 Այնպիսի կոփէր ուժով մակ թուրոսի խրոխա դազաման,  
 Զի փըշերեալ ցերտակալն՝ յետս հառանէր ընկըրկէլ հարկ :  
 Յանգըմնեալ բարեխախումբն փողէին ըզինի թուրեայ .

Մինչ որեար լի էր կամուրջն՝ սոսկալին լալա դարձեալ  
 Բուռն հարեալ յական քըթթեւ կարշնեղ բազկօք ըզտախտակէն  
 Ամբասնայր եւ սասակութեամբ ուժոյն ցընցեալ շրջէր 'ի կործ :  
 Թօթափին ըսկայք 'ի ծով, անդունցք գուշն բամբ 'ի բոմբին .  
 Թուրոս 'ի լիւզ փըրծանէր, տեալ թեթեւ վէրս ընդ արմուկ,  
 Այլք 'ի ջուրսն թորգոմեանց եղեն քաջաց նիզակազոհ,  
 Թոպամահ կէսք ընդ քաշտեօք սասակէին, կէսք հեղձամահ :

Մոլեղնին արին Բար եւ Ամարփալ առիւծացեալ .  
 Աղբային Հիններայ թուրցեալ մըկունդ 'ի մաղեղ սիրտ  
 Երուսաղայ զընայ քաջի, ոսկայն վեկեալ անգր անցանէ  
 Ի ներքուստ աջոյ բազկին, մինչ վերտուեալ ճօճէր նիզակ,  
 Երթեալ հարկանէ յարայն Բարկան մերկ որնակուշտ .

Անկանի յորսայսեալ յոզնափայտին տախտակամածս,  
 Հընչեն զէնքն ըզնովաւ, թընդէ մակոյն յոտից զըզուլս :  
 Իսկ բարեան տեգ 'ի Հաւասոյ, 'ի մեծ բարդեան լատափայտին,  
 Թափ անկեալ, հերձեալ զկորան սազաւարտին երթայ վարոփ  
 Ի Տերկան քաջին ճակատ, զէ 'նդ գերկս եղջիրքըն մշտանէր  
 Յեգերեան հըզօր լաստէն . եւ սա եւս անդ գըրեալ թաւալ  
 Խաւար աղջամըջին ըզպատաննոյն պատեր բըբօք :

Կան զորավորք թորգոմեան 'ի գլուխ նաւաց հարեալ խրափոցս .  
 Կըտուին գազանաբար եւ տան մըզէլ զմոկոյիս յոտաջ,  
 Այր այր իւրաբանչիւր զառ 'ի քաջացըն տխրանեանց  
 Մէն մի սկայ գիտապաստ արկանէին յափըն ծովուն :  
 Մանաւազ ընտրիւք ոմամբք 'ի ցուռկ նաւին նահատակեալ .

Յարգունս 'ի նեաս 'ի բարեայ տարափ գրեյեանն անօսեր գունգ :

Իսկ Ապահ յառաջ ելեալ եւ զանհեգեգն արկեալ կամուրջ,  
Հրոսանուէր գլորգամօք 'ի գոռ ու 'ի տրոփ ոտին գոգման  
Իբրեւ բոց արշաւեր սուսերամերկ փայլահեակերայ :  
Ախոյեան գիտէ նրմին ըսկայ Դմաւունգ սոսկավթիթխար,  
Յազթ երկայն եւ ոստաղից ճօճեալ նոճի երկամազէն .  
Ազահայ զնրրանն ածեալ շեշտեր ըզնայրըն տիգաւոր,  
Նա զհեծանն անօգուա արկեալ ցամամք յամբոխ նաւին՝  
Հար ուժգին ըզբասայ ըննջս, որ տապալեալ ժայթքեաց արին :  
Մինչ կայր ուր 'ի վեր Ապահ, ինչն ընգ նոգու մըտեալ փարեր .  
Մեգործ եղեալ քաջին թուր, գրրկախառնէր եւ նա զնոգու,  
Ըջփմեամբք ջուրեկին ոտիւք բազիք բընամարտիկ,  
Խեղքամահ կորուսանել կամ թէ յանգունգս հոսել զրիւրարս :

Հիացեալ կաջին ըսկայք յամհուծեան գործոյն զընին,  
Ոչ որ տանի զյազթուծին, ոչ պարտուծին խոստովանի,  
Բոց յերեսս, արին ընգ աչս, անգամք 'ի բիրտն եւ յապաժոյժ .  
Մինչեւ ապա երկոցուն մեծաւ գորգով զըլեալ 'ի ջուրս,  
Վե՛հ վերապ յուժգին ճողգին բերանացեալ պատասեցու,  
Ատի անտի բանակայ գոռայ երկին 'ի մեծ ձայնից :  
Մանաւազ զերկայն հացին կարկառ վերուստ 'ի Դմաւունգ .  
« Մի, գոչեաց Ապահ, մահու սա երկամոյ չէ արժանի » :  
Եւ առեալ տանէր 'ի խորս . « Իբրեւ ըջուն մի հեղձուցից »,   
Ատէ 'նգ այեգքն զօղեալ, եւ ստոտիէ հեղձամղձուկ :  
Կապուան 'ի ձեռս եկն եւ յիւրսն, աւին հայկեանք ձայն զընծութեան .  
« Բերոր բամբիշն, աւտիս . սրբեա զարտօսր, յազթօղ ել քոյք » :

Փրքփրքեալ մոլի Բաբ, վարազարար ցիւրսն գոչէ .  
« Ժամ է արգ առէք առ իս, աղէ առէք զոր կազմն կայ  
Հուր եւ ջահ նաւթիւ ձիթով եւ 'ի ժըժան բոց բորբաքեալ :  
Ճաշակեսցն զոր նոքայն ուսուցին զէն սասակչական .  
Խանձոտեալս 'ի նոյն զցոսս եւ սողորեալքս կորուսից,  
Կենդանոյն յորս յուսացանն 'ի նաւս իւրեանց հրով ձենձերեալ :  
Սուրըն Բեյայ եւ բարեան կերիցէ զայն անգ անողորմ » :  
Մեգին հարիւր եւ հազար բիւր նեոք եւ աեղք հուրք բոցաժառ  
Թըռեան ընգ օգս հրրգեհակեղ, 'ի լայնալե՛ճ գրրկայ քաջաց  
Բիւրաւորացըն Բաբայ եւ յարզնընկէջ բազիէ սկայից :

Քարթլեան զօրն եւ նաւազն օրհասական բարձ աղազակ,  
Աւերած վերջին հասեալ ւանդոյք վախճան յարանցն 'ի գլուխ,  
Գոյն գալկան հարաւ յերեսս ըսպայակոյտ խառնազանձին :  
Չուր գիւցազունք գործեն գուն սաստիկ զերկիրն ըմբռանելոյ,  
Ըջկամուրջն ընկննու, արիարար վազել 'ի գուրս :  
Աւատիկ վառին պաստաւք, բոցոյն ժանիք խանձին 'ի կողս,

Որ 'ի չնջ զիւթան արիք՝ յարիւն 'ի հուր կան Թաւաղար .  
 Ոչ բազուկ եւ ոչ անօթ օգնեն 'ի ջուր պարտեւ ըզհրոս ,  
 Ծով յերկոյ գոսայ գիմայ , 'ի հանգիպոյ սուր Տխտանայ :  
 Յայն տագնապ հաս Թորգոմեան գիւշտգնն չայկ զբժնէ զընդգ .  
 Ոչ այնպէս ինչ գունգագունչ զեռան մեղուք 'ի փեթակէ  
 Գուամորտակ կապեալ խըմբեալ շուրջ զըշխոյն յերկնից 'ի գաշա  
 Յասպարէս քաջութեան մարտից ընգգեմ ախոյնայ  
 Մեծամեծ ուղուք կըրծից , գոռիւք փողոց սըրտմտութեան ,  
 Յորժամ հուր հարցի յեռանգն անկեալ 'ի մէջ բամբռննցն երկոց ,  
 Որպէս յահեղ բարբառայ ու՛ր շեփորաց գոչին հայկեայք  
 Ձեղուին յանտառայ յովտայ 'ի ծովն ասպաատկեալ  
 Դիւշտգնն ըզկնի մեծի եւ ճակատեալք 'ի պատերազմ :  
 Ի շահնգն ազազակին որ 'ի ծովէ եւ ցամաքէ ,  
 Ի փայլուն զինու զարգու հրգոր վաշտուցն եւ ըսկայից  
 Պակեան ընդարմացան բե՛լեանց արիւնք պաղեալ 'ի սիրտ .  
 Ձերգ յապուշ հարեալ Թըմբրի խաշնագարման այր 'ի լերինս ,  
 Ոյր առ ոտան էջ շանթընկէց յերկնից որոտ փայլակնընդոտ :  
 Եւ զոր օրէն ուզեալ 'ի գազանուտ անկոխ մայրիս  
 Ոգորեալ 'գ արինարբու գայլ 'ի ժանեաց զանձնն Թափել ,  
 Յանկարծ նըմին 'ի Թիկանց կօշեսցէ արջ կամ սեգ ախեւծ ,  
 Եւ զճիրանսն սայրասուր արկանիցէ յուան ահաբեկ .  
 Կամ զամպարշա՛ զոր երկնից հալածեն սիւք աստուածավքէժք ,  
 Փախուցեալ 'ի զայրագին բերանացեալ ալեաց խորոց  
 Կըմին 'ի կուլ , կարծիցէ 'ի ցամաք զանձնն մազապուր  
 Եւ յալթօզ ըսպանալեացն ելեալ յանգորր յորեւ լուսոյս .  
 Անք երկիրն ընգ ոտիւքն փախնուցու երրաստատան  
 Դըզըրգեալ եւ ասպալեալ եւ ըզնովաւ փլուզեալ յատակ  
 Դըժոխակուլ , վեհ որկորոյն անգընդասոյղ յափըշտակէ ,  
 Երկնից նեռք բարկացայոք յամարոպային Թուխ ազեզանց  
 Ըզնովաւ փայլատակեալ 'ի վերագին ճայթեն ճակատ  
 Ի ձայնէ որոտայլ չուր անուի Տեառն զօրութեանց .  
 Այսպիսոյ իմն էր եկեալ հասեալ բե՛լեանց առ ոտս օրհաս :  
 Հարկանէր Հայկ ըզնոսս զընգիւքն 'ի կողս եւ 'ի Թիկունս .  
 Ճեպ եհաս ախտանացոյ ըզյառաջոյն մոռանալ մարտ ,  
 Եւ 'ի Թիկունսն եւեթ ըզմիտս եւ զգնն գարձույանն ,  
 Ռազմամուտ ըսպային ըստ օրինի կարգեալ ճակատ .  
 Դարձան յայնկոյս լաստեցան ընգգեմ նորոգ պատուհասին :  
 Որպէս ծով վայրենացեալ յորգեալ ալի , մընեալ փրքփուր  
 Վերացեալ իբրեւ փոշի 'նք ոտիւք մըրրիկն արշաւասոյր ,  
 Բախիցէ զմեծամարմին նաւ 'ի կողից եւ 'ի խելոց ,  
 Եւ զմածուածս ամուր լաստիցն խարխարեալ քայլայիցէ ,  
 Կոյն փեռեկէր պատառեր խրամատեր նեա՛ նիզակ քաջին

Ըջբարեան ճակատուն ըզպընդակազմ կուռ սերտութիւն:

Յառաջ քան զամենայն առ հորամոյնըն Մանասազ  
Չապց ձայնի հօրն եւ ծանեաւ ըզմեծ ասպարն եւ աղաւարտ.  
Սըզին ամբարձ եւ ոստեաւ ինքն 'ի ցամայք ձայն առ Ապահ:  
« Աջ, քաջ, հա հայրն եւ եղբարք, ահա բանակ արխազանց »: —  
« Ո՛վ լցարդ Թորգոմայ՝ եւ ուստ ուստեք մեզ ծագեցար », —  
Հընչեաց տորմիլն համօրէն, որոտացին ասք կորափիտ:

Սոսկալի անուանն 'ի լուր՝ սարտուռ յոսկերս սողէր բնիւանց,  
Դալուին 'ի գէմն: Ի վեր վազէր Ապահ 'ի մեծ խընդութենէն  
Գե՛գք յառաջ եղբօրն ըզկնի, այլ նահանջին ոտք յետաւ կոյս.  
Անկանէր Բերոր 'ի միտ, ձայն առ Գամեր՝ 'Երսեհ՝ Թաթուռ,  
« Ի ձեզ յանձն, ահեզ գոչէր, քաջքրդ, բամբիշըն ձեր եւ իւրք.  
Յորժամ շունքս յահն սաստիցս 'ի ծովափանց փարատեացին,  
Հանեւ հանգուցանել յամուր ուրիք յանկասկածի  
Մինչ 'ի դարձ յազմանակաւ ընդ գիւցազին հօր 'ի խորանս »:

Ատք, Թաաներ 'ի ցամայք, զհեռ գիւցազունքն հիւսիսականք,  
Ըզկնի գունդք ամենայն ահեղագոչ աղաղակաւ,  
Եւ Թոպամբ ահագնագըրդ ըզմեծ կամուրջըն ընկեցեալ՝  
Հեա ընդ հեա ելանէին հեծելազօր եւ հետեակ:  
Կային ազգիկ երիվօրք կոկողակիլ պերճաստորդ  
Խորխընջեալ յոզոզոց կամուրջըն եւ միմեանց ակն ունելով,  
Վազէին յընկերան արտաքս՝ ըզբաշս եւ զջլուխըն տատանեալ  
Եւ զագին կամարելով, յաշխոյժ կայտերս խայտային.  
Յեա երկար արգելանաց զերկիր տեսեալ եւ զմարտի ազմ,  
Կիցս ընդ օգս ընկենուն եւ մարտորոտ գափր հասաննն:

Հեա զհեռէ ելեալքըն գունդ լինին կապն սեաւ ասպատակ,  
Սպարապետ իւրաքանչիւր աշխարհաբնակ իւրով զօրուն.  
Ընդ իւրով զօրափարաւ մէն մի ջոլիւր ջոկատ եւ վաշտ  
Ընդ գիւցազին հրամանի խառնին 'ի մեծ մարտի ճակատ:  
Գոռաց հիւսիս. « Թորգոմեան ողջն քաջի մեծ գիւցազինդ »: —  
« Ողջն եւ ձեզ գիւցազանց իմոց եղբարցըս », կըրկնեաց Հայկ:  
Եւ բանակն հիւսիսի եւ գունդն հայկեան գոչէր բորր.  
« Կեցցէ կեցցէ Թորգոմեան գիւցազնըն վեհ մեր նահապետ »:

Չայս բարբառ արձակեալ, յաջմէ ձախմէ եւ 'ի գիւցոց  
Անկանէին 'ի վերայ բարեան ազգին միահամուռ:  
Ոչ գոռամբ ահագնագոչ յամուրց մըթին էջ փոթօրիկ  
Վեր 'ի վայր հարեալ ըզլեռն ըզքաշտ՝ փոշէ 'նդ արգին գիղեալ,  
Դիմեալ 'ի ծով կապուտակ՝ տասպալել զայն իոկ յանգընգոց.  
Եւ ոչ 'ի մայլ Կանգարաց որոտաձայն խաղաղին ուրիք  
Հեղեղասատտ փոթօրիկեալ գերփեալ ըզէն զանդ եւ զայգի,  
Թաւալեալ վէմն եւ կազնիս մինչեւ 'ի դաշտ ու 'ի ծոց ծովու,  
Ուրպէս հարան 'ի գիմի եւ բախեցան քաջազանց խումբք

Ըշկնի մեծին ընդ ճակատ արուեստական սկայակուտին :

Ձերդ աշնային պարիւրըքն 'ի Պարիարայ բարի հիւսիսակ Յերկնաշննն Աղեղնաւոր սաստիկ մաշնչմամբ անկեալ զայդեղք թօթափէ զսաղարթախիտ տերեւ փայտին պըտղաբերաց , եւ հողմաժար պըտուակեալ մըրըրկէ 'նդ երես երկրի խըռեւ , 'տյնդունակ կուռ կառափունք թօթափէին մանկտոյն Բնշայ եւ պատանեաց գեղեցիկ հասակք 'ի սրոյ եւ 'ի նեակից Աղեղնաւոր հըսկայն քաջայանգուզըն մըրցանաց Թորդուտան հաստարազուկ գեղազանգուր պայտղատին Եղբարըքն հանգերձ եւ որդուք եւ համազունգ գումարտակդք , եւ թաւալ յոտս ըսկայից օւերիվարաց խաղայնն զլոր :

Անդ գիւցազանց առաջինն զլմեծամեծ եւ զբարձրաբերձ Ճարակեւ ջըրգի դուխս ախոյնեկց զօրաւորաց .

Իսկ նոցա սոսկացեալ յահագին սրոյն եւ նիզակէն , խուսափեալ յերեսացն՝ ընդ նըմանիս մարտընչէն .

Եւ քաջին վազակաւոր մըտեալ 'ի խուսն հընձէր յամբայր , հասանեւ յորըս խընդրէն յարուրդ սրբոյն տալ ծարաւոյ : Որպէս մըշակ կորովի՝ որ նորաթիք սուր գերանդեաւ խոտ ընդ դաշտ հարկանիցէ կամ զանգաստանըս ցորենոյ , Բարդ 'ի բարդ տաղայէին զմեմտմբ քաջազն գիսկունք :

Յահաւոր բազկէն անկան ըսկայազունք եւս անուանիք .

Խոռեմանն անդ Արշէղ 'ի հասակին յուսացեալ կոյտս , Յազթանգամ իբրեւ բուրդն ինչ համբարտակ կայր կուռ վտռեալ ,

Ազարակաց բազմաց տէր , բազմաշուքի գերգաստանաց ,

Ձորս ընդ իւր էր զինուորեալ եւ ըջնովաւ առնուէն պար ,

Այլ ջօգնեցին ինչ առ մեծ փայլահնարեր երկաթոյն թափ :

Հարկաներ խոսիս կառափին եւ հերձաներ մինչեւ յերանս

Ըզզընձաձոյլ սազաւորան եւ զկուռ վառուածն անգըծելիս :

Կէս ճակառք բախին ընդ ծունկս եւ մեծ զաւակն 'ի կրրկունս իւր ,

Անգէն ինքն յիւր վերայ փլաներ բըլլարըն մըսեզէն ,

Ախոնգանքն 'ի հող հեղեալ 'ի լող գնային յարեանց ողող :

Անտի անգրը պատահէ 'նդ առաջ Արեալըն մըշկանեան Յաստեղազէտ հանձարոյն պանծացեալ պերճ ճարտարուծիւն .

Աին եգեալ քըրմուծեան Արափաթայ մեծ քաղաքն ,

Երգնոյր եւ հայհոյեր զԱստուած 'տյի եւ զԹորգումաց ,

Եւ զՏէտան 'ի թիկունըս կարգաշով իւր խրափուսեր

Ի մըրդիեալ բարկութենէ գէթ թորգումանն ապրել կորեան :

Այլ ըսկայն երկայնատեղ՝ զայն ընդ ճակատն հարեալ շամփուր ,

Եւ 'ի վեր ամբարձեալ , « Արդ նըշմարեան զաստեղազք քաջ

Թէ գրոշմեալ ընթեռնուցուս քեզ քըրմուծեան անգէն պատիւ » ,

Ասէ , եւ զձեռնըն ուժգին ճօճեցուցեալ եւ թօթափեալ ,

Քաղեալ զչօզս ոսկերաց՝ ցընցմամբ ընկեց զհաղար արամբ ,

Որպէս հոգիւ մի զի զցուպ իւր 'ի խեղեղ հօտըս խաչին ,  
 Ի մէջ մտերմեղց սկային զընդաջըն տխտանեանց .  
 Ուր նա զայլըս ճըմէր եւ յայլմանէ լինէր կոխան ,  
 Եւ լիւզէր յարեան իւրում որ ընդ ճակատն հեղեղառեակ ,  
 Եւ զոր ժայթքէր գունդագունդ ընդ հայհոյիչ բերանոյն ծերպ :

Ի վերջին գիպեցայ բեշեան խորմեցն անկանեկն

Մագառ , Դարա եւ Տէյաս , Մաւուս , Որմիւց , Արեթ , Դեմուր  
 Եւ Վըշնապ ութ ըսկայազունք ահեղք կալեալ 'ի բռին զոգին ,  
 Պայմանեալ 'սերբովթայ իւրաքանչիւր մէն մի կառափն  
 Յորդուցն ածել թորգոմանն , եւ զհայկ ինքնին 'ի գրլետփն :  
 Բայց զերգմունսն տարան հողմք , ջրուռեայ մըրբիկ զքաջայ ջուր .  
 Որ սըրով , որ նիզակաւ , որ մեծամեծ բռնաբարտմք  
 Ընդ աւազ եւ ընդ կապիճ անկեալ անդէն թաւալէին ,  
 Եւ խորակք ներկան եւ ժայռք 'ի մեղաւոր արեանջըն ցայտս :  
 Պակուցեալ կային ըսկայք , ոչ կարէին կալ 'ի վերայ  
 Հաւատեալ թէ հայկն իցն , թէ յանձնից ոք զեհօղանց  
 Իջեալ նոցին 'ի թիկունս 'ի տաքնապին տարակուսի :

Անք կապեալըն Զամասպ եւ ընկեցեալ նաւուցն 'ի խոր  
 Զայն ժամուն զտեալ պատեհ զնաւամարտին ափանց ազըպ ,  
 Խորտակեալ ըզարիտն եւ 'ի ցամաք առ իւրան անկեալ ,  
 Ատեալ նիզակ եւ վահան՝ յանձին չքմիզս 'ի մարտ գիմէ :  
 Պատահէ յոխորտընթաց մեծ ըսկային քայլեցն հանդեպ .

Քըտտունք յանձն եւ յաչըն մահ՝ գալունկն 'ի գեմըն ներկանեն  
 Մինչ յինքն ետես ըզձօճել յազթօղ նոճոյն ճակատամուզ :  
 Հասանէր իբրեւ փայլակն Ազահ բարձեալ ձայն առ գիւշաղն .

« Ենս , հայր , ինձ պահի գա , գա իմ գերի եւ սխերիմ :  
 Իսկ քեզ ո՛չ շատ ինչ թուեցեալ լըրտես յիմ տուն գալ եւ գուշակ ,  
 Արդ եւ զէն բերես ընդգէմ . » . ասաց եւ զոգ արկ ըզլըկունդն ,  
 Հարեալ ընդ սընակուշտն , երբ նա զասպար գէմ տայր նեակց ,  
 Թափ ընդ լեարդըն հանեալ եւ բեւեռեր անդ ընդ գետինն ,  
 Եւ զընկատս համատիոցն 'ի գէնն , 'ի հոյն տարածանէր :

Իսկ գիւշաղն ըսկայն զարձեալ յաջկոյս՝ առ ոտս եզկտ անդէն  
 Եղբարս երկուս հարազատըս պատանեակս ըսկայաջափս ,  
 Վայելուչ գեղ փողփողեալ յոսկի յարծաթ զէն միտոյն ,  
 Արմեկինք միմանց 'ի բախտ , որպէս 'ի կեանս եւ 'ի մահու :  
 Յերկեղէն տարապիական պաղատեկն վահանընկէց  
 Ի գութ ողորմ հասակին ինայել յարեւն , ունել գերի :

« Ո՞վ էք դուք , » եհարց գիւշաղն . ահ սոսկալի որոտալուր  
 Ըզբարբառ գելցր նոցա . բայց ըսկային հուպ անդր հասեալ  
 Ճանաչէ զԼապուհ եւ Վրիւ՝ ըզհարձորդին Ամարփալայ :  
 « Սերմըն ժանտ , օճին ծընունդք խարամանի , ճետք անխեղց ,  
 Հաղորդք մեղաց ծընողիդ , լերուք յառաջ գուք եւ մահուանն ,

Որ առ կռան նորա հասեալ կայ մտաւորաւ պատեալ զրոբիք :  
 Եւջք զո՛հ ի՛մ հայկակիս, զոր Թերեւս հայրք ըսպան կամ գուք :  
 Ասեր, միոյն ըզկաւափին Թաուցաներ նրբան փայլուն,  
 Եւ միւսոյն ըզգանձակին պատառեալ հասէր ըզփոր,  
 Խոխոջեւով իբրեւ ջուր վիժեալ հեղան աղկին 'ի հող :  
 Սեւազէմ մահ ըզնորջ սրբութեաց ըզԹեւարն խաւարին :  
 Ի ըսզկէն անվանելի իրախոյս ըարձեալ ըսլոր հայկեանց,  
 Բայ ընդ եղէզն առնուին արշաւասոյր ճախր ընդ ճակասն :

Անդ նախձիբք եւ արարուածք անհրնարին կայր 'ի վերայ,  
 Ի սպառազարու սասակումն ասորեստան գասականին .  
 Բայց Ամարփալ իրազեկ ողորմ մահու իւրում մանկացոյն,  
 Գայր գուէր առեւծարար առ Բար եւ յոյլ զօրավերանն .  
 « Զ՛ի այբաբնք եւ այսպիսիք կամք այժեմանց պէս ստանեալ  
 Յերեսաց միրազիս, 'ի մեւմ առն այսր երեսաց :  
 Հնապա պետք եւ զօրագլուխք՝ պնդեալ զանձինս համագումար  
 Գընդեսցուք 'ի մի ջուլիւր մեծ ամբակուս եւ հաստարեստ,  
 Ուս զիցուք, ելլուք գիմիւ մելգանիւյ ճիւղալ գիւնս :  
 Թէ հասեալ է մեզ օրհաս, մեռցուք, սակայն արիւարար,  
 Կամ ոգի վառեսցուք եւ լոյս մահուս մուծ մըտայլի,  
 Որ մածեալ է զլաչարաւ տեսանացուցս . զն արիք քաջք » :

Անայոն մըտագիւր ինկախական իրախուսանցն .  
 Ի մի վայր զան ընդ նրմա Բար եւ Թուրոս, Էամփր, Սուսա,  
 Ըհհհն եւ Թուշի, Արեւ եւ Բուրզ նոյճիբական,  
 Եւ զբրուանեանք ոչ սակաւ՝ երկրորդ երրորդ ըսպատալարք :  
 Ըզգրլիտոք մած ըզվահանն հարեալ գործեն ստպարափակ,  
 Սպարախիր ազգմ եռակարգ, հո՛ծ ըզմիմեամբք աշտիճանեալ,  
 Յահազին կարկառ 'ի տէգս, ընդգէմ միոյ զան գիւցազին :  
 Այլ գուգազն ուժգին ըզկնի մըրրկէին Թուխ ամպոյ զունակ,  
 Եւ ամբոխ ազգազակին պատառեալ զամպս յերկին կրցեր :  
 Ի կռիւ այսպէս սղքս հարկանեն զէմ ընդգէմ կաբու,  
 Արիւնտոս ստամբ ահեղ գոփմամբ զցետին Թընդեսցուցեալ :

Յարմէհետե ստպատակն հայկեան զընգին գիմեաց 'ի ծով,  
 Արտակակըն գեղեցեկ մըտեալ 'ի վրան նրստեր 'ի սուգ :  
 Փախեաւ ուրախութիւն 'ի զուարթ աչացն եւ 'ի գիմեաց,  
 Հառաչէր եւ զցերարտոսը աղբերաբար ջընդէր վիժակն :  
 Մարմնովն անդ, հոգւով մըտք սըրտիւ առ հօրն եւ առ խաւայ,  
 Ի ճակատուն գեղերի յարեանց 'ի մէջ եւ նիկակայ,  
 Ոչ այլ ինչ տեսանէ քան ըզվրասանդ իւր անձկալոյն .  
 Ամենայն զէն վերացեալ յօգս ամենայն երեքԹեւեան  
 Ի յառայգ Թըւեր նրմա եւ քաջալանջն ընԹանալ սիրս :

Ընդ տեփըն սոսկացեալ Թըշնամաներ զանձն անարփ .  
 « Իսկ զիմորդ էր, ասե, զնա հնարաւոր աստ արդեւուլ,

Զամահին զայն առիւծ զ'ի ձայն մարտիչն խայտացեալ,  
 Զմթընչօրն եւ զպատառօղ յարիւնտազաւս պատերազմի,  
 Մանաւանդ ուր իմ եւ իւր հայրն եւ եղբարք շահատակին:  
 Այլ թէ չէր նրմա մընալ, չէր ինձ ընդ իւր երթալ 'ի մահ:  
 Եւ չեւ ընալ արժանի գրրկաց նորին եւ համբուրից,  
 Գէթ հոգևոլ կըցել յերկինս, հանգչել առ իւր կողս 'ի շիրիմ' »:

Այսպէս սուգ արխարագին ըզմնաւոր պատէր խորանս:  
 Իսկ արին հայկանոյշ յերրազարձ ծուփս ալեաց կոծեալ  
 Արբո՛ւ՛ հոգայ եւ մըտաց, այսր անգր ըզմի անձն հերձանէր.  
 Էր զի առ հօր սիրային, առ մէն մ' եղբարց հարազատաց,  
 Էր առ Հրանասայ ցանկալւոյն՝ յորմէ հաղիւ թէ մեկնէր հաղ:  
 Ահրա վըստահ եւ մեծայոյս 'ի գիւցազանչն քաջութիւն  
 Եւ յերկնամուկս ասպարին գըլետոց սըրբոցն հովանի,  
 Այլ ըզբարան յեզյեղուկ անյայա բաշխից շահատաղրին,  
 Եւ զերկնից ըզխորհուրդ անքընին խոր դատաստանաց  
 Յաւ յածեալ, նոր ի՞նչ եւ բուռն յանձըն կըրթէր վըշտ եւ տազնապ:  
 Սերտն մեծ ուերիկամունչն ըզբող առեալ կայր 'ի թընգալ,

Կուսապան վարդապարմիր արինս յերեսսն ցոլանայր:  
 Ելանէ 'ի խորանէն՝ գէմք եւ աչիռնք 'ի ծովն կոյս,  
 Քաղըրասիք միջօրէին հողմն սողեալ 'ի Թանձրափեռ  
 Գեղգեղեալ երկայն ծամիցն սամուրից խաղայր 'ի հոյլս,  
 Տըրուէր յոյս կոյս եւ յայն 'ի ձինափոյշ ուան եւ թիկունս:  
 Կարկառի յայնկոյս ունկամբ եւ զգաստ ողւորն շահանջել  
 Թէ շըռուկ ինչ հարցի կամ թէ զինուց խաղմին շըռինգ:  
 Զերկոսին շուշաներփեան բազուկան եւ ծղիս հարբատաղեզս  
 Ընդ աչաց փայլակնափայլ եւ թոյրաթուխ արսեւանանց  
 Ընդ արփին ամբարձեալ, մինչ զի դողցես թէ իսկ անգէն  
 Հեղձամբղձուկ հերձանէր ուուցիկ լանջըն կուսաբեղ,  
 Ամբըուռնչ հեծութեամբ երկնից աղերս արկանէ շատ,  
 Ելոյս 'ի միտսն փայլակել, գուրս ինչ բանալ, հորդել ուղի:

Արուսեակն ցաւագին ամայութեանն եւ արտասուաց  
 Զհանգուրժեալ յայնրմ վայրի դայ ելանէ եւ ինչն արտաքս,  
 Բտփոփանս յուզել սըրտին կամ 'ի մարտէն համբաւաբեր:  
 Տեսանէ զկոյսն Հայոց արձանացեալ թեւատարած.

« Ո՛վ տայք իմ, քաջք տալ իմ անուշակ, արգ անողորմ,  
 Օտանձն եւեթ հոգաս, չհայնս 'ի տաւապեալ հարմնրք ըննալ:  
 Ահրա 'ի բաղումս բաժանեալ՝ ցաւոց բաժինս հանէ թեթեւ,  
 Իմ չբժուժէ յազբերէ միոյ գեմեալ յորդ վըտակաց:

Ո՛ւր յիս այդ արիական յոգունց արանց վեհաբոյն սիրտ.

Ո՛հ, զք՛ արգեզք եղեւ հայրս, եւ զի՛ եղբայրդ եղեւ քո խոո...  
 Եւ զբոլոց անգամ չեհաս 'ի ճակատէ պատերազմին.

Հէ՛ թէ քոյդ էր յիս սիրտ, թէ արութիւն յանգամս իմ զլոյդ » ...



Ատէր, եւ բեկբեկեալ Թերահատար գեղջր ըզխօսս :

« Աւասիկ լոյսն երկնաւոր, առէ 'ի միտսն Հայկանոյշ, լոյս յաննիզ բրբեալ շքթմանց, 'ի գեղեցիկ սիրոյ սրբոտէ » . — Ո՛վ միտք մահկանացոյք՝ որ ըզխաւարն ողջունեն լոյս — . Եւ առ հարսնն նազելի՝ « Էր Թէ քեզ այգ՝ զի գործէիր . Եւ յոր քեզէն շիշխէիրք՝ համարձակիս ընդ իս այժմիկ » :

« Այո, կրրկնեաց Արուսեակ, ընդ քեզ եւ ուր եղբայրդ խոս » :

Ուժգնասիրտ կուսին յայնժամ՝ ըզձեռանէն առեալ նրւոյն , Եւ ձայնեալ զԱրեգնազան նաժիշտն՝ եմոյծ 'ի վրան զինուոց . Մերկացոյց յոտից ջրգլուխ 'ի կուսակերպ պատմուձմանց , Զիւր մանկութեան վառապանս ած ըզքընքուշ նուրբ հասական . Յազգերան 'ի բարձս եւ յողջքնն փղոսկրեայ ճախարակեալս Արծաթիս ազոյց կիտուած զանկապանաց ամրածածուկ , Ի Թաթա ոտից գեղեցիկ գիրք եւ մանուան՝ մոյլ ծիրանիս , Ի փափուկ ոսկեծըզի տիգարն բազալանս ոսկեճամուկս , Եւ զուսովքն արկանէր կապարձս ոսկի արծաթաղեզն , Որպէս զըստերք գիւցազանց սովոր են յորս շահատակել . Անխորան սոսկ փետրազարգ ոսկեթիթեղն գլխանոց Ի ծածկոյթ ոսկեթեւ Հիւսից վարտիցն եւ ճակատուն :

Ինքն ապ՝ անգէն կոյս օրիորդն Հայկաբերձ գեղազիտակ Արձակեալ հոսեաց յանձնէն ըզպարեգօտսն կուսաձեւս , Վըտաւակ ներքնակ եւ ձորձ՝ բոլոր զօրէնքն կանաչի : Հօրանէր քաջաբազուկ առդապախոյ տիգըս ծըրեաց , Լանջու լուսաթոյրս արիականս եւ կուսագեղս , Ազգերոս կորովիս եւ ամրաբարձ Թամբուս սրունից : — Ո՛վ պարկեշտ անձնագեղին վայելութիւն արուորական , Ո՛վ աշխոյժ աստեւոր կեանք որ 'ի մարմնոց անտի կաթեր : —

Արնոյր 'ի մէն մի անգամն ըզգիւցաղին հօր սպառազէնս , Արուսեակ՝ Արեգնազան ըսպաս հարեալ օգնեն կուսին . Արկաւ նախ վարսպանակ զինուորական ըզերկ մարմնով , Զանկապան եւ բարձապան 'ի զխոս , յազգերան Թամբայոյրս , Մընապաննս պըզընձիս յորքս 'ի սրունս առյուգագեղս : Ապս կապէր ըզհեփեանն 'ի Թաթագեղ մաքուր ներբանս Ոլորեալ վայելահիւս յոսկէնրկար խրոցս ասղնեգործ , Զխրանան հաստկագեղ եւ ըզլանջօք գեղախամար Եւ զԹիկնաւէտ առ զուսովք զպատենազէնարն զահագին , Եւ զլիախի ծոցոյն շուշանս , կուսածագիկ բողբոջոց բոյսս , Ընդ առնաձեւ արուրին ճընշէր վերտիցըն կարծրութեամբ : Արկ 'ի Թեւան հաստաբազուկս ըզպահպանակսն պընձակուտս , Զհայրենին վազակաւոր կապեալ ընդ մէջ ոսկեգօտի՝ Ոսկեձոյլ՝ ճարմանգաւ առ հարթարդակ պընդեալ պորտոյն , Ըղչկապարձս եւ զայնալիճն ուարնգանութ ձըզէր ակեղ ,

Եւ ըզջուին երկնանքման եւ ըզճական արփիափայլ  
 Ծածկէք ծանու երկաթեալ բազմախորան սաղաւարտիւ  
 Որ կըշու գողցես հայկեան վե՛հ գաղաթան գոյր համեմատ .  
 Իխորանացն 'ի միջոյ սպիտակ ազիք ձեոյ՝ ղերգ բաշք  
 Սըփուէին գարգամանակ, զուտովն հեղեալ 'ի ծուխ ծածան ,  
 Եւ զթիկամօքն այեայ ծամօցն հոյլ հոյլ գանդբուսապք վէտ վէտ ծաւալ :  
 Ըստ անձին լամբէր տապ յահեակ զասպարն 'ի ողջինձ փայլուն  
 Ձահաւոր զայնակամոր, իբր օրիորդ մի զհայելին .  
 Գէր ձեռամբ բազկին աջոյ ճօճեալ կրկին նիզակաբունս  
 Երկայնատեղ սայրասուբս՝ ամեհամուզ սկայից օրհաս :

Ելանէր գայր 'ի վրանէն, սեր եւ ցասոյթ բասրապեղ,  
 Սպարապեան որպէս երբեմն երկնից զբուն 'ի գրանցն ընգոստ  
 Յերկնաւոր զինարանէն առ զօրութիւնան սալլատամբօզ :  
 Ձերթեալքն հայրենի գէտ հրամանին պատրաստ եւ կազմ,  
 Վարուանգասապաս մանկրաւոյն սթարեալ 'ի թամբ՝ պընգեալ ըզթանգ,  
 Ձողնուլարն ընգ ապեաակ լարեալ, կըշու զոսք սասպատանս,  
 Սանձս յամեկին հարեալ կըզակ՝ ճըմկեալ շրուշակ գանդանաւանգ,  
 Եւ քարշեալ ձիգ ըզթամբիւ պըրկեալ փայլուն երեսանակք :

Ահնարկէր բակայաբերձ կոյսն առ Խաչաքըն գանանեան,  
 Եջոս որպէս էրն զինեալ՝ Արուսեկիւ հեծանել հետ .  
 « Ուսիր, ասէ, բաժանել 'ի Յաշխուրեղ գուն մի եւ գու » :  
 Յոսնասարոփ սալաւորբակն ոսանոյր եւ ինքն անեալ զերանսն,  
 Եւ մըտրակ ձեոցն 'ի կուշտ՝ գաթթ անգ տային փոյթ անգանգաղ,  
 Հայկանմանն առաջի եւ երկզբեան ըզհետ նորս  
 Որ հոգւովն զօրութեամբ յափըշտակեալ տանէր ընգ իւր :

Աղջ լինէր Արմենակոյ բանն եւ գըրնգիւն երկվարաց ,  
 Ելանէր տեսանէր ըզթոյրն աբի եւ գեղազէշ,  
 'Կոյնպիսի տխործակացն եւ յալլ նըւազս սշ անծանօթ  
 Այրտախրս քաթի գըստերն Հայկայ, Հայոց օրիորդին :  
 « Իսկ արգ ղեմբդ, քոյր իմ յով », ասէ յողջը կակուզ բարբառ : —  
 « Տեսանել հեռուս եւեթ եւ 'ի ղերծի գճականն, ասէ,  
 Տեսանել զհայրն եւ գեղբարս, Արուսեկին հանգիցէ սերտ » :  
 Ոչ ուշիմն քաղբոգի խանգիցն իշխեալ կանգնել գիմակ  
 Եւ այնքան սիրոյ կուսին աշտպեղոյ գըստերն Հայոց,  
 « Ողջ երթայք, ասէ, բարեաւ գարձիջք պարեն թերեւ զըրոյց,  
 Թէ ոչ նախ գիւցազն յալթօզ եւ գիւցազանց ընգ նըմա պարք » :

Ի մըրթիկ փառւոյ գաթթէր կոյսն չքքնաղ արիտարբ,  
 Արուսեակ կասեծազին, աչք յայս եւ յայն կոյս սըբտաթունգ :  
 Ըսկըսան անուզ զօռչիւն պատերազմին, զինուոց շաթին,  
 Օրփորդն երազէր քաթ, այլ գանդազէր հարսն քընքուշ :  
 Ըստ անտատն ելեալ հասին կային 'ի գահ գարեւանդի  
 Որ 'ի թիկանց թորգոմեանց ընգ ասպարէս մարտին հայեր .

Բուճան անձինն եւ Արուսեակ առնէր զխոնկ 'ի սիրելին :

Տեսանեն գալտ եւ ուղղովկ, զէն, երիվար յարին ներկեալ.

Վերաւորք օրհասակնք աստի անտի անկեալ բաղում

Տապալեալ թաւալչոր եւ ընդ ոգիտն ջանացեալ.

Բազմակոյտ զիականց կոտորելոց սատակամահ

Խառն'ի խուռն արանց ձիոց ընդ զէն ասպար նիզակաբեկ

Առաթուր հարեալ ստից եւ սրմբակացն գազանաց,

Եւ զնորք՝ միմեանց յարին սկայք զիշամուխ ահազնատես,

Եւ բարբառ՝ խիզախ խրախոյս, եւ մանրամաղ մէջ մառախուլ

Յերկոցունց կողմանց փոշին յերկրէ յերկինս ամպ փոթորկեալ :

Գային Բաբ եւ Ամարփալ, ողջոյն բելեան վահանափանի

Ընգրգէմ Հայկայ. պատէին զնովաւ Ագահ Խոս Մանասաղ

Որդիքն հօրամոյնք, կազմես եւ Բաղ թոռունք հուժկու :

Դշնդէին 'ի նոյն եւ Հրանտ Փառնակ Չարեհ եւ Առնակ քալ

Իջեալք յերկվարաց, հետի գիմեալ 'ի սպարափանին :

Անք էր յայնժամ նըկասել որպէս կրկին բորբոքեալ բոց

Թուփս 'ի մայրեաց թանձրափոս վիշապաձայն յերեսր խառնեալ.

Յերկոցունց կողմանց մրցումն եւ գուպարած անպարտելի :

Ձի երկուց եւ աշխարհի բոլոր կողմանց քաջք անուանիք

Ճակատեալ գլտանէին գէմ ախոյեան ընդգէմ միմեանց :

Մինչ Բարձրեալն ամենակալ ընդ անիրաւ մընչեալ աշխարհ

Չահաբին յատակ երկրի, զէրինս շարժեալ զբզբոքիցէ

Հարեալ սասառք զպատուանգան երկնածեզուն մեծ աթոռոյն,

Ոչ այնպէս ոստուցեալ բախին կրկին ժայռք ընդ միմեանս,

Որպէս գունդ կրկին սկայիցն պընգակազմ եւ ամրակուռ

Բանակացն հատորք, եկեալ գիմեալ զարկան անգ 'ի գիմի :

Որպիսի գայ 'ի հեռուստ փոթորկաբեր խուլ մընչիւն,

Յորժամ մրբրիկ գիւազունգ յանապատէ ետ ասպտտակ :

Չոր օրինակ սուսափիւն գոչման օգոյն յահէ ընուժեան,

Եւ ճիչ եւ հեծումն 'ի յանդընգաց սրբոս բըզեալ

Յառաջ քան զտատանել սասանութեան ըզքունտ երկրի,

Այապիսի էր մրոմըռումն ոգւոց քաջաց սրբամբունոց,

Եւ ստեղծմն ըսկայաքայլ սարսափելի խրոխտ ընթացից :

Ի փայլուն սպաւազինաց, 'ի վահանաց զինուց կոփիւն

Ոչինչ այլ հասանիցէ նըմանութեան առակ հանգէտ,

Գան թէ կուռ որտաընդոտս կայծակնաշունչ ամպոց ճայթումն,

Եւ շանթից փայլատակմանցն պատասել ըզգլուփ լըրանց :

Իւրով ոգւով բարկութեամբ խաղար 'ի ուղմն Հայկ պարտառջ.

Սահայն եզիտ զառաջեաւ անակընկալ բըռնախոյեան :

Մոլեգին հիկէն հեղեղ արշաւասոյր փըրփրակուտակ

Որ 'ի կապոյտն կոհակաց ընդոստուցեալ սուր թափ տուալ

Դիւեացէ, եւ մեծայազմ բունքս ծառոց գըլեալ եւ վէմն

Եւ աղետազենեալ տանկցի գիմացն հանդէպ Թաւալազդոր,  
 Իսկ յանկարծ պարբիս առ ոտսն անպարտելի Թէ պատահեաց,  
 Եւ կամ Թումբ ամբարտակ 'ի ճարտարոզ ձեռաց մարդկան,  
 Անդ առեալ խոռն մի զկայ եւ մըտայոյդ յանձըն ծըպի,  
 Արբէ զզայրուցս 'ի վանեղ երկայնամիտ ժուժկալելով  
 Չապառուժին բրբառութեան ըզկութոզեալ ժուլերէ վերազն-  
 'Նոյն հայկեան բուռն աժխուժից վայր մի բեկեալ խոյս առ եռանդն  
 Յերեսաց յոգնախոսմբ եւ միազունգ բեյեան սկայից,  
 Որ յանգուզըն գիմեցմամբ իբրեւ պարբնայ մի հաստամեա  
 Միաձոյլ սերտ ըզմիմեամբ մածեալ անքակ յորդոր զային,  
 Չըպ եւ զըպ ոտս ամբարձեալ արտփեալ 'ի գաշտըն միահեա,  
 Տառանեալ զըլուխս ահեղ Թուռցիկ վերջիւք սազաւարտից:

Այլ տեսեալ զի վայրապար պընդին 'ի գունգ անխորշելի,  
 Չեւ յերեար խեթկեալ ոգոր, արձակէին նախ տիտանեայք  
 Ըզհացինն առհասարակ երկայնաբունս եւ սոտայլց,  
 Որ շըչելով ըշկահմամբ զային յարեան ծարաւ պաղքեայք  
 Քաջալանջ եւ Թաւ կրքծից հօրըն հայոց եւ զաւակացն:  
 Այլ սոքա զծունկըն աջինս անգէն եւ անդ իբրեւ մի այր  
 Ըզքեանի հարեալ, ածեալ զցրլեովքն 'ի վեր ասպար 'ի շէղ,  
 Վասնէին յօգս առաւիր զեկեալ արգունսն արինձախանձ,  
 Որ սրտթեւ շքփեալ ընթացս անցանէին ըզվահանգք-  
 Եւ քիքեանք իսկ եւ իսկ միահաղցն կանգնեալ անգէն  
 Բըրդէին բարկ փութորիկ ըզհաստաբունս զիւրեանց նոճին:

Յայն հարուած ահեղասաստ, 'ի սոսկալին աարակուսի,  
 Սասանեալ ռազմըն բեյեան՝ վերջոտնէին խոռն մի 'նդ կըրուկ,  
 Աբբս ինն 'ի սպարակիր արի սկայիցըն կորուսեալ:  
 Ի բազումկան անտառացան վահանքն 'ի մուխ սըւնակութոց-  
 Ճըզնին խըլել բեկանել, եւ անհնարին երազութեամբ  
 Հանեալ սուսեր խըզեցին մօտակըտուր եւ զան գիմեալ:  
 Անկանէր 'ի վերայ եւ գունգ հայկեան սուսերամերկ,  
 Կոփէին զազանաբար Թուրք 'ի վահան եւ զըլխանոց,  
 Կայծակունք յամպոց հանգոյն հատանէին փայլառաակնց,  
 Քարգամանակք խորտակեալ քըշտեալ առ ոտն Թաւալին,  
 Սաղաւարտք եւ զըւկք հերձք, ընդ ասպարոց պատառեալ սիրտք-  
 Ամենայն զարկուած՝ Թէ ոչ յարեւ մըխեր, սակայն յարին,  
 Չըզայր ոք ողջ անվըթար, բայց հայրն հայոց գիւշաղներն հայկ-  
 Լեզուի խրոխտունն ամենայն լըռեալ՝ ձեռացն եւեթ խօսեր:

Դէտանին ուշիմն ամբարձեալ եւ քաջըն Քարթլ յեղակարծուստ  
 Յայն անձուկ տազնայ կըբորըն գիւշաղին ուղբօրորգւոց,  
 Քաջազանց հիւսիսական՝ որոց վանեալ էր առաջի  
 Վասհատակացն ըզճակատ յաջմէ Թեւէ եւ յահեկէ,  
 Չայն ընկէց վարազաձայն՝ գալ 'ի մի գունգ խըռնել ընդ իւր:

Հասանելին հարազատք եւ զօրաժարք իւրաքանչիւր ,  
 Համագունգ խուճք արտրեալ եւ հարկանել սկըսանելին  
 Ի կողաց եւ 'ի կիսոյ կընթանց ըզուազմին տիտանեան .  
 Որ ըզնուութեանն ոչ ծուժեալ եւ 'ի թիկանց իսկ ահարեկ ,  
 Ի ցամաք կոյս՝ կողմ 'ի միւս ըստիպեցաւ առնուլ նահանջ :

Աշնայնի որպէս մըրքիկ փոթորկելով զանկեալ տերեւս  
 Պըստուտեալ շուրջանակի գընդէ 'ի շեղ 'ի հրապարակ ,  
 Եւ զերգ հոգուին բարկութիւն ըստանական ընկեցեալ ցուպ  
 Ժողովեալ զհօան ըտտահակ վարէ քըշէ յո եւ կամփ ,  
 Հանգոյն Հայկին բարկացայտ սըրտմըտութեան պատեալ ոգին  
 Զվարտանեալս ուազմին բարեան շուրջ յամենուսա վանեալ հանգէպ  
 Ոլորեալ 'ի մի ջոյր հալածական տանէր 'ի ծով :

Ատփ մահ եղիկեացն եւ անտի մահ գարանակալ .  
 Կիսոցն յանդուգն յարձակմամբ մեռանելով արիաբար ,  
 Կէպ բազուկըս տարածեալ ազերսէին 'ի գերութիւն ,  
 Էր որ այր ցընկեր գոչէր , « Հար զիս եւ մի թողոր դերի » .  
 Այլ 'ի ծովն անտաղէն գարահոսեալք եւ ասպազէն ,  
 Կետահար կորնէլէին յարիւն ներկեալ զհապոյտ կոհակս ,  
 Գէշ անկեալ զեռնոց յանգունգս եւ պլանդակին ժիժմակաց ,  
 Զոր այլըցըն նիւթեցին ողորմ՝ մահու վեժժս հատուցեալ :

Ի շըրջէն հայկեան գընդին ընդ ձախակողմին գէժ ընդգէժ՝  
 Խոռ մոլեալ յարեանց նախաճիրս 'ի քէն վրիժուց եզբօրն արեան  
 Լուծանէ զըլուութիւնն , առ փառանակեան գոչէ Հըրստա .

« Լերուք արք , քաջքըզ տեսէք՝ անդր 'ի վեր յիջ կան 'ի զընին .  
 Ըզգեժժն Աստուծոյ հանցուք , ըզգեժժն Հայկակայ » :

Զի սկան դիպեր նըմա յայնժամ անգէն անգ 'ի բարձուն  
 Արուսեակ , եւ օրիորդն Հայոց հայկեան հրակայաբերձ  
 Արձանացեալ 'ի բըլրին իբրեւ ըզլեառն ինչ ձիւնեզէն  
 Յոր ընդ երեկ սըփոկցի արեգակն շող վարգազոյն ,  
 Ի նըշոյլս արեւուն յերկաթ ու 'ի պղինձ փայլակնացեալ :

Ամբարձեալ գէտակն 'ի վեր գոչէր առ իւրն եւ Ամարփալ .

« Ի Բէլ աստուածանման խրափոյտ առեալ ժիբ լերուք , արք ,  
 Տեսէք յիջ կան մեզ յաւար եւ 'ի պարգեւ 'ի պատրաստի .  
 Հապա միջ այր զախոյեան , եւ մեր լիցին կոյք թորգոմայ » :

Յայն տեսիլ արփիտագեղ եւ յատելին այն գուժ բարբառ  
 Խոռ եւ Հըրստա բարձեալ խրափոյտ՝ այր զանձն ըզմի տասընպատիկ  
 Կանգնեն հանգէպ ցանկատեր աչաց իւրեանցըն սիրուհեաց ,  
 Որ գէտակըն կառուցեալ քան յամենայն՝ յինքեանս պըշնուն :  
 Հայկ 'ի լուր անուան որգոյն վաղամեռնիկըն զրուսելոյ ,  
 Աըրամըտութեան հուր շանթեռանդն յաղին անկեալ՝ բոց անդ չընէր :  
 Իբրեւ առիժ ամենի՝ որ գիտեալ ցուլ պատերազմոց  
 Ողորեալ խեթիկէ եղբերքը ընդ հոգմս երկիւրջ եւ հող հանեալ ,

Ոստնուցու 'ի գաշտականն որս ընդ անտառն զառ 'ի վայր,  
 Ի վերայ կայծակնաբար նոյնպէս անկեալ Ամբարփալայ,  
 Ի յուցեալ զպողոճատիկ հարուածն 'ի գլուխն աշակաբաւ,  
 « Ա՜սն քեզ, առ 'ի ձեռաց աստի, ասէ, զի այն Թորգոմայ » :  
 Եւ սաստիկ այնպէս ճայթեր երկաթն 'ի պղինձ զըլխանոցին,  
 Որպէս միայն իջանէ փայլակն ընթաց նեան Աստուծոյ  
 Ի կառափըն բարձրայոն 'ի մալլ ծոցոյ խիտ ամպրոպաց :  
 Եւ Թէ չէր զիպեալ յուզւոյ զէմ ամբարձեալ Թըշնամին Թուր,  
 Ընդ երկու ճեղքէր պնշուշտ սաղաւարտ՝ զէն եւ յալթ հասակ :  
 Թըմբերեցաւ, ընդարմացաւ, զբրբջն անկաւ սեաւ մտախուշ,  
 Երբերէր երկին երկիր, տուընջեանն 'ի մուծ Թաթաւէր Զահ :  
 Հազել յետս հարեալ եւ խոյս առ իւրան առեալ, անկեալ 'ի գուճս  
 Արիւն ժայթքէր ընդ բերանն, ընդ քըթաց փողս եւ ընդ ականջս.  
 Սակաւիկ մի եւ անգէն Թըքանէր անդ զոգին չըւառ,  
 Եւ Շիննեար եւ պերճուծեանն եւ Թագին փուք յօգըս փըչէր :  
 Մըսին իւրքն՝ ըսկայեց գունդ վահանաւոր՝ բարձին 'ի բաց.  
 Յահէ անտի վըրգովեալ քակտեցաւ ազգմն տխրանեան :  
 Անդ կըրկին ոգի զգեցեալ, եւ սուր 'ի վեր առեալ չըբանտ  
 Յափայեան իւր 'ի Սուսառ, զուս հարկանէր նորա զահեակ,  
 « Սուր քաջի գըստերն Հայեայ », գոչէր, եւ նա ելանէր խոց :  
 Իսկ արին խոռ յարձակեալ 'ի վատըւէր հըսկայն Թուշի,  
 Ընդ աջուն որ վերառեալ սուսեր ամէր, խոցեաց ընդ լեարդ,  
 Եւ Թաղէր զվազակաւորն 'ի ճարպ փորոյն Թանձրաթաղանթ.  
 « Եւ այս քեզ քապըր զըգուանք զոլորիկ Թաթիցն իմ Արուսկան »,  
 Ձայնարկէր. եւ նա յորոտայ անկեալ անգէն մեծասարած  
 Տապալէր, երկցս աչքն եւ բերանովն բացխրիկի,  
 Թաւալէր յարեանն, ոգին հայհայելով խազայր 'ի գժոխս :  
 Յայն բարբառ քաջացն երկուց արի կուսին ցընծացաւ սիրտ,  
 Իսկ Արուսկան շինէր վարդակարմիր գոյն քընջանաց :  
 Խառնակէր այնուհետեւ խոռվէր բանակ՝ ազմ համերէն,  
 Յեր լինէր պատերազմ իւրաքանչիւր զորսպետի  
 Արանձինն իւրում գընդին մարտիւ 'ի գլուխ գուպարելոյ :  
 Տիտանացոց 'ի Թիկունս հասանէին գունդ գունդ ըսկայք.  
 Մինչ Հայի այսր անգը ընթանայր իրախուսեւ զիւրսն 'ի մարտամբոխն,  
 Եւ սալ ձեռն սակաւուք ոմամքը ընտրիւք յիւր ընդոծնաց՝  
 Յայց առաքէր զորովեմն որգւոց իւրոց 'ի տագնապին,  
 Եւ քաջն անկան Յըլիկ, Վըրկէն, արին Սուրիկ, Փառէն, Մոռչեղ,  
 Կայր միայն ոգիքն 'ի բոխն կանգուն Արբուն ամեհին այր,  
 Սոսկալէ սկայք զորաւորք պատեցին անդ ըզհայրն Հայոց :  
 Յարեաւ մարտ ահաւոր, անկան զիւրեւ արի՝ նգոծիւք,  
 Ինչքն եւեթ կայր ժուժկալէր ընդ բոլորից գէմ ախոյեանս.  
 Էր զոր նիզակ սատակէր, զոր բըռնաբար, զոր Թուր, զոր կափ.

Գոյր մէն միում առ ոսոս սօսին, չէր զգրաձիգն ուսնք նըպաստ :  
 Որպէս հըրդեհ իսկ եւ իսկ մըրըրկեալ այսոյն 'ի մեծ քաղաք,  
 Բոցադեղ 'ի սուր բորբոք յառաջն առաջն բարժանի .  
 Եւ 'ի սկիզբն հրայրեցաց, մինչ յօգնութիւն սըրժան ամբօրք,  
 Ի հարիւր կոյս սստուցեալ շանդիցն 'ի թեւս սաստիկ հօղոյ'  
 Տոչորի հրատ համաճարակ փութօրկելով բոցածաւալ .  
 Օգնութեան ոչ ուստեք յոյս, ոչ որ ուսնք ձեռն 'ի ժաման,  
 Տալ բոցոյն լափէ զաստեղս, հրաչէկ վառին երկնից կամալք :  
 Ի բարձանց անտի գէտ կոյան հայկանըման 'ի շփոթ խաղձին  
 Չեռես զիւրան ամենեսեան, եւ հրանտ ըստ աշուն անկաներ :  
 Ետես ըզհայրն 'ի վտանդին յահեղախրոխտ խուժան սկայից  
 Թօթափեալ յամենեցունց գրեթէ անդք եւ ամոյթ,  
 Թանձրախուսուն կարկըտից զինուց թիրախ մեծ նըշաւակ .  
 Որ թէ ջեայր որ 'ի թիկունս, 'ի գրունս մահա գիմեր գէւցաղն :  
 Ի զայրոյթ վառէր, յամթ, կասկած 'ի միտ կոյան աշաղեղ,  
 Ոչ ընդ բան ինչ ածեալ՝ զերեսանակարն թողացոյց,  
 « Օն արի, իսալք, ձայներ, արգ հայր ըզպարտաւն պահանջն .  
 Արի սուսերգ հայրենի, եւ մի 'կուսէս յամթ լիբիր .  
 Ողկաջիբիս Արուսեակ, Հրեշտակ քո քեղ զուարթուն պահպան » :  
 Մըտակ 'ի կուշտ արարեալ երիվարացն իլանիին  
 Երկդեան թափառնակի սապատակաւ ընդ գարն 'ի վայր .  
 Որպէս առիւծ յանասակ որդեկորոյս զազանասիրտ  
 Յահեղ մեղնիւն բարբառոյ զուլամբ ըզբաշուն տատանեալ,  
 Ագեաւ զիտղ եւ գրամակ ծեծեալ սըրէ զըբրտմըտութիւն,  
 Յարձակի մղեգին ընդգեմ գընգի մանկանց հաղուաց,  
 Ընդ ջահիցըն թռուցելոց եւ հաստարուսըն գեղարգանց,  
 Կոյն մըմընեալ սիրտ 'ի գաշտ պատերազմին էլ Հայկանոց :  
 Ի վտանդիցն հուզ սապարէս՝ ըզհօրն յալ թեւ ետես տազնալ,  
 Այլ անգէն յահեակ թեւին յակն անկաներ իւրըն շըբանտ  
 Պաշարեալ 'ի տարակոյս բարեխտտան քալ պարմանեաց .  
 Կայր քըթթեւ մի ահան 'ի խորհըրդոց մըրըրկեալ մեդ,  
 Եւ թողեալ զհայրն՝ 'ի թիկունս առ անձկալին իւր սըլանայր . —  
 Վահ չըքնալ կոյս իմաստուն, որ զայս ըզմի նըւազ եւեթ  
 Ոչ մըտացք հարցեր խորհուրդ, այլ 'ի մնասող սըրտեդ մոյն : —  
 Ամենակալ բարձրեալըն Տէր, հայր ամենայն արարածոց,  
 Որ յերկնիցըն գահէն հայեր յակն մի թօթափել  
 Ընդ երես տիեղերաց, եւ յասպարէս մարտին յայն կէտ  
 Սեւեռեալ ունէր ըզնուրք զամենատես ահանըն ըբրտ,  
 Անգոսնեալ յերաւունս արարչականըն հայրութեան՝  
 Յողոց եւ ընդ բախտ կուսին, եւ ըզցըլուին սահեղ շարժեալ՝  
 Տատաներ ընդ նըմն զերկին՝ զերկիր՝ զմոլոց անգոսնադ,  
 Եւ հեծութիւն ընթանայր 'ի հանգրին ընութեան 'ի սիրտ :

Արժամայն զաչարն խրփեալ, ապա 'լբաց զարձուցանէր .  
Երգեցորդ երգումն ահաւոր 'ի հայրաբուն իւրում էին,  
Չրպասիկ ըզմարտին գլուխ, մինչեւ աղէիկն հատուցեց  
Չհատուցումն արգարութեան յաւիտեանից դատաստանաց:  
Լուսերամն երկնից մանկտի թեւաքօղն տըրտում զերեսս:

Չոգաւ հայկանոյշ 'ի տարփելին, չարաւ չոգաւ  
Եւ 'ի չար ժամու երկնից 'ի տեառնակոյս 'ի կողմանէն:  
Այլ սրբտի արութիւն, այլ քաջութեան ձեռաց կորով  
Յաջողեալ նրմա յանդեզ աստուածաշորհրճն պարգեւաց,  
Հասանէր խոշարաւ իբր ուսուցիկ ենչ փոթորիկ,  
Ձթընամոյն անկեալ զընդամն՝ ըզբարկացայա թուուցեալ նիղակն  
Հարկանէր կործանէր ըզտիտանեան ըսկայն Չարմիհր:  
Ապա զհայկեան սուսերին շոգացուցեալ զփոյլական թափ,  
Հընձէր ըզհառափունըս Սուրինայ եւ Աղկունայ  
Եւ զթուլեայ խրոխտացելոյն, բարեկացի սեգ պատանեաց,  
Որ ըզարմանին պաշարեալ չառնէին թոյլ կըլանել շունչ:

Փարատեալ 'ի սիրելւոյն զեղեռն, այլ ոչ յագէր մոլեալ .  
Գլուխս եւ լանջըս հերձոյր, զհարըստայեղջ տաշէր հասակս .  
Իբր առիւծ զարանամուտ զաղբերակամբք 'ի թաւ մայրիս  
Փայլակնարար յեղն ոստնու յեկեալ զպատուքն արուցանել,  
Չուր եղուկն օրհասին մըրցեալ ընդդէմ՝ կարգայ թիկունս,  
Պատառեալ վերագըն դուժ ըզփոր նորա՝ ձըրձե զընդերս,  
Չարեան լսփե զանապակն արբեալ զմայլեալ 'ի համ ու 'ի հոտ .  
Պատուհաս սյապէս յանկարծ կոյսն 'ի բեկեանս անկանէր յորս՝  
Չոր Երկինք յաւուր յայնմիկ մատնեաց յայն սուր փայլակնասուր:

Անդ ելանէր նրմին դիպան քաջն Աթիւնեաւ մոլեալ Վարշիր,  
Չերծանէր զինքն յամօթոյ եւ զՄադայի կոյսն յատելւոյն  
Ի մի սուր սայր ընդ գըլխոյն ըզոյս եւ զտէր 'ի բաց երեալ:  
Իայր ընդդէմ յանդըգնարար 'ի հայհոյիչ լեզուի գոչեւն  
Վարազ վրսեմական, երրորդ իշխան յագգին իւրում .  
Սուր 'ի վեր, «Աստուածըն Բել հարցէ զարեւոգ», գոռայր եւ գայր:  
Օրթորգն աճապարեալ շեշտեր 'ի սուր ըզվիզն ըստուար .  
Ի թղթոցն իշեալ հազագն 'ի կոկորդին մնացեալ անխուզ,  
Թաւալէր կառափն յահուր եւ հայհոյէր գեռ լեզուն խուժ .  
Ողբն ընդ գեղ մանկութեանն 'ի ստուերս մահուն էջ դառնահեծ:

Ի տաքնապող վրսանգէն զերծեալ հրրանա եւ գունգըն իւր,  
Խրախուսեալ յանակընկալ նիղակակիցն յանկարծահաս,  
Հարկանեն ըզաչհինեան գունգն հալածեալ ձիգ ասպարեզ:  
Հայկանոյշ հրանա անմեկինք՝ ազգըր առ ազգըր կող առ կող  
Մազառեկն միաբան եւ զոյգ միմեանց պաշտպանէին:  
Չարհուրեալ շահինեանց եւ մերձաւոր սալարաց ջոկ  
Ընդ գիպուածն յեղափոխ, արկանէին գոյժ առ միմեանս .



« Վըճարեալ զըլլալն Հայկին՝ աւափի աստ հասեալ կայ մեզ » .  
 Եւ կեդք . « Երկինք սխերիմ՝ երկրորդեցին զմի անձն Հայկայ » .  
 Եւ ցընորք խուճապական անկեալ զնորք՝ հեղ 'ի փախուստ :

Բայց 'ի վարան տաղնապի գիւցազնն Հայկ կայր յանհարին ,  
 Եւ մղէր գուպարած ընդ ամենի գընդին մըրցեալ ,  
 Ասպարեւ Հաղիւ գըլխոյն անտառամըւ լայն վահանան :  
 Քիրան յանձնէն եւ յերեսացն հեղեղատեալ ուղեխնահատ ,  
 Սաղաւարտ եւ վերջաւոր զարգք զագաթան մածեալ փոշաւ ,  
 Յոտից ջըզլուխ իւր յարին եւ յապաժոյժ Թուխ Թաթուակալ .  
 Կորովին Կոռնակ քաջին կայր զինակիրըն մեկուսի ,  
 Զամենին Հաղիւ սանձեալ Յուսի հրաշունչ սանձակոտոր :  
 Խըրիւնընք անասունն մըտացի եւ մըտերիմ ,  
 Փըրփրէր գափր հտաններ եւ ստամբակեալ ըմբոստանայր .  
 Սլանալ կամեր 'ի Թիկունքս գիւցազնն սիրեցելոյ  
 Եւ ընդ նըմտ հարկանել զԹորգոմեականն պատերազմ :

Ո՛վ աւին արփեհարատ՝ երգոց տաղիցս յորգոր մատանց ,  
 Ե՛մ առեալ զիս վարես ըլխոնքս ահա եւ զպարտասեալ :  
 Երկնաւոր միթէ զուարթուն իցեմ ես կալ զըուցել ընդ քեւ  
 Ահատական բարբառով զարեական գործոց հանդես  
 Այնչափ անչափ ըսկալից նահատակացն վեհազանց :  
 Այլ ըզՄոկիան եւ զՎոզկաս Թորգոմեանս ոչ ունիմ լըռել  
 Զհարազաւարս գիւցազնն , որ զսայրսնայն ընկեալ պատուար  
 Եւ 'ի խրտաւուն փառուխ եւ 'ի քաջոտն յանձնեալ Սուրա ,  
 Դիմեալ եղբորն 'ի Թիկունս հասանկին վճատանդելոյ :  
 Զերգ կըրկին զըժոխահեռ վարադք յորտորգըն սաստկանգառք ,  
 Որ աջք արեւնըռուչտ եւ 'ի խանչին կերկերամայն  
 Փըրփրերափ սուր եւ սպիտակ բերին ժանիս զինուց ընդգէմ ,  
 Եւ 'ի հեռուստ 'ի փախուստ անկցն եւեթ տաղնապի ճեղ ,  
 Այնպէս անկեալ 'ի վերայ՝ փոթարկին ստակ արհաւիրք մեծ  
 Զքունգըն ցանեալ ջըրուկցին Թիկնագարձոյց վարտական :

Ո՛ր ձայն զվանդեալան երգեսցէ յերկուց բազկացն ահաւորաց .  
 Օրինակ իմն 'ի վայրէ եկեալ պոռտ բարկ հիւսիսակ՝  
 Մըրըրկեալ եւ վեր'ի վայր հարեալ ցընգէ զկալ մըշտակի ,  
 Զունգ յարգին հոսեալ անգոց գաշտաց լերանց ցիր սալ 'ի շէք .  
 Ստպես հոգւով բարկուժեան քաջոցն հեղան հակառակորգք :  
 Ողի աւնայր գոյցն ինչ Հայկ , որ յայն ժամուն զամ մի եւեթ  
 Արժանի ողորմութեան վայր մի ցուցաւ 'ի կեանս իւրում :

Գըձձեալ փետեալ վեկանդեալ հալածական գայր փախըտեալ  
 Ընդ Վարաժ քաջ եւ ընդ գունգըն գերջանեան արին Առնակ ,  
 Զջր ըզհեռ մըտեալ վանեն Թուրոս՝ Շամիր եւ ոկայսիցոս :  
 Գունգ նըւալ սինլըքոր , յարին Թաթաւ եւ յապաժոյժ ,  
 Հաղիւ այր Թէ ժամաներ զանձն 'ի ժանեաց Թափել մահուն :

Իսկ Աննայ՝ զինուք կոչո՞ւ՞մ՝ յահաւորաց պատեալ սկսելոյ,  
Ի վինել կայր մասն եւ սուր անձինն՝ ի ձեռքս Թըշնամունչ,  
Կամ օրհասին, եւ մահու չարաւ յոչոչ անկանել գէշ:

Իբրեւ զայն տեսանէր Հայկ, աբէ հրակայն անընկճինք, —  
Որպէս ամպրոպ որոտալիք փայլակներէ բացէ լւանկաս  
Մըտախոհ մըմըռեալ ՚ի բարկութիւն նիւթեալ սըրբին,  
Մեծ եւս ոյժ ըզգեցեալ ՚ի տապ շողիցն արեգական,  
Նքիտեալ որայցն սըրտմըտութեան իւր նըշաւակ,  
Եւ անգուտ մըբըրկելով ՚ի փոթորկին վարազաթեւս՝  
Եւքս չար այնուհետեւ հանեալ ճայթմունս՝ սըբուէ շանգիս, —  
Դարձուցեալ զաչս եւ ըզմտս ՚ի գերարփին վերին ճաճանչն,  
Ընկըվեալ զոթիցն բոց ՚ի մեծ սըրտին անգընդոց ծով,  
Ձայն առ Կոռնակ արկաներ. « Մաստ յիս շոյս զարին Յուլակ »:

Ելանէր յոտնատրոփ սալտաըմբակն անգրակերպ,  
Եւ զփայլակն սուսերին շողացուցեալ զերկայն եւ լայն,  
Խորտառձայն կանչիւք գոռայր, ճօճէր զասպարն արփիտափայլ,  
Հասանէր անկանէր իբրեւ ըզսեաւ մի սուր մըբըրկ  
Ի յուսակաուրն Աննայ եւ խորխորն թաց ըսկայից մեջ:  
Մեծատուար վահանան ՚ի խուան արգանց պահեալ ըզքաջն,  
Յառաջին ածել նրանին ՚ի մի շերտեալ սայր սուսերի  
Կոճոպէր ըզկառափունս Պերոզ Նիխոր եւ Մըրուանայ,  
Երեքեան պղնձափուռ եւ գիւտարփառ անուանի սկայք:  
Ժամանել ՚ի սա եւ նա գուն վիթխարիք գործէին խուք.  
Սա կայր շուրջ պըտուակէր ըզկենախուզ փայլականն ահ,  
Նա ՚ի խուան ամբոխին յետկոյս տըւեալ խոյս ամբանայր,  
Սակաւիկ մի գէթ ոգէ կլանել կըռւին՝ անձին ըզգալ:  
Համախուճը ջրլիւրն յայնժամ քաջալերեալ ւարին Վարաժ,  
Աղաղակ խրախուսական՝ անգնանձայն հարեալ գոռիւք,  
Հպածական ըզՇամիր ասնին զթուրոս ընդ զառ ՚ի վեր:  
Այսպէս առիւծ գարանակալ ըզլի գաւթիւ սովալըլուկ,  
Յոր շիշիէին հուպ մասջել արուարագոյն հոփուաց մանկունք,  
Մինչ սըլայք օրհասարեր ՚ի կուշտ առեալ ընդ կրուկ գարձցի,  
Անք սպա ըսլոր շինին խրախոյս բարձեալ յառնեն խիզախ,  
Ձայնք գոռան, Թըռչին քարբիք, զէնք եւ մահակք եւ վառ խանձոքք:

Ատո յա՞րձէ կուտէ հայկեանց պատահէր Բուրզն գարայեան,  
Փախըտուայ երթեալ իւրոնն ազնւոգորջ ասպատախու  
Առաջի պարուրեան գումարտակացն Հաշտենից:  
Երթային Ճապաղէին նետս ՚ի վերայ հայկեան գընգաց,  
Ճընգեցին միահամուռ եւ ՚ի ջրկատըն գիւշալին: —

Ո՛վ ասպարք աղամանդեայ սուրբ երկնային Հայոց Զուարթնոյն,  
Զ՞ի ԼԵՔԵՐ ըզբո գիւշալն ՚ի հոփանուդ անպաաքսպար...  
Ա՛յլ գու զհետ գեղեցիկ պացար կուսին մեզուցելոյ

Ընդ անհունն ասպարէզ ասպատակի պատերազմին,  
 Ի մեծ եւս հարուածոյ զՋերմագուլթ հօր պահել ըզբիբ,  
 Քան զքաջին սիրտ՝ լաւ հարուեալ զյաղթանակին հարկանել ոտս: —

Ուներիմ՝ մի գայ քաջին նետ եռասայր յազգրնն աշոյ,  
 Ընդ կարանն 'ի ներքս անկեալ թանձր 'ի թամբին գիպի բարձից:  
 Ո՛վ սուգ թորգամայ, եւ արտասուաց օր խաւարին .  
 Ո՛վ գըրկացըն կորովեաց՝ յորմէ սլաքին ոստեալ պարծանք,  
 Թէ գիտեր . նետ ընկըրկեալ ըզյաղթութեան ճեմն րոխց ճոխ .  
 Թէ ոչ, օր էր այն վերջին Բե՛լայ կենաց լատուածութեան:  
 « Ի՛ վերին գատակնիք, զցուարըն թողեալ զհայրն ըմբռնես », —  
 Հեծեն Զուարթուչք . ձայն առ նոսա, « Կացեք մնացեք երկայնամիտք »:

Չիմանայր քաջն յեռանդան անդ գուպարին, չըզայր ցաւոց .  
 Իսկ 'ի ճօճել նիգակին փախրստեից ճակատամուչ,  
 Եւ արմըկանն 'ի գիպել՝ վարսեալ եղէգնն բեկանի .  
 Յայնժամ զազգ առնու վերին . եւ տակաւին չհամարեալ յինչ,  
 Զյաղթութիւնն յառաջ վարէ, նախ վըճարել քան ըզնրսեմ,  
 Եւ մի զցուռն յաղթական 'ի պըսակէն հանել թափուր:  
 Այլ վերացըն ժանտացեալ յերեկորին 'ի զով օրոց,  
 Յերաշխեպ դանակըսկիծ կըտուտք 'ի սիրտ՝ յաչս անկեալ մեգ,  
 « Կարեվէր եմ ես, — սակ մեղմով առ իւրսն՝ որ մերձ կային  
 Զօրովարք եւ զօրագլուխք վաշտուց վաշտուց հոյեալք 'ի մի,  
 Եւ յորդուցըն գիւցաղին արին Ապահ եւ Մանաւաղ, —  
 Ի ձեզ, ի՞վ քաջք, տպաստան, 'ի ձեզ բանակս եւ յաղթանակ »:

Եւ ըզմին չըրջեալ յանքոյթ, պատին զիւրեւ աըրտում սալարք,  
 Տեսանեն զի թուփ արինն ընդ պաղպաղուն պղպղբէր զհնա:  
 Ի գընգէն հաշտենից ըզՊարեա քաջ եւ ըզՇաւարշ  
 Եւ զՎոռնակ կապարճակիրն առեալ ընդ իւր կամեր գընտալ .  
 Անդ ընդ ողորմ պատահարն հեծեծելով արին Առնակ,  
 « Վասն իմ, սակեր, ի՞վ գիւցաղն, յիմ փըրկութիւն առեր ըզվերք .  
 Ճանաչեմ զիս պարտ բաշխի, քո են իմ կեանք այսուհետեւ:  
 Ո՛հ, չմարթեմ ինչ 'ի ցաւոցըդ փոփոգել, ոչ դալ ընդ քեզ,  
 Փոխանակ աչացս աղբերց՝ ըզսըրտիս ուխտ հեղից վերիք .  
 Ես 'ի վրէժ քո սլանամ եւ 'ի լուանալ արեամբո ըզկեղտ »:  
 « Իմ ոչ վասն իմ ինչ, սակ գիւցաղն, յարեւրդ զըթացեալ,  
 Այլ վաքն քո, երթ ո՛վ քաջ, որպէս գիտես ծախես 'ի փառս,  
 Յոր Երկնիք ողորմեցան առոյգ տիրոց եւ մանկըտոյգ .  
 Ասարիկ քեզ առաջի եւ գինի փառաց հանգիստարսն »:

Բանքս 'ի սըրտին՝ խոյանայր Առնակ ըզհետ յաղթօղ գընգին .  
 Ի վերայ պարտելոցն անկանեին վարազաբար:  
 Կըրկին նոր երեւեալ մարդ Առնակ 'ի գլուխ նահատակաց,  
 Զայն բարձեալ գոռայր խընդրէր ըզհարկանողն գիւցաղին .  
 Զէր դք այն որ ցուցաներ, ոչ որ խրոխտեր զպարծանան առնուչ:

Միտումը հարկանէին խորտակէին ըզպատերազմն,  
Եւ իբրեւ բոց 'ի մայրիս մողեալ մաշին ըզտիտանեանս :

Երթայր Հայկ մեղմեցայլ, հեծեն միայն արքն ըզնովաւ,  
Հեծէր եւ զգօն երիվարն եւ խեղամուտ վըշտի վտանդին,  
Ճեպընթաց հանդարտաբայլ ինամուտ փութով տանէր 'ի բաց :  
Յանցանել զգարեւանդին՝ հարցանէ Հայկ ըզբարտերէն,  
« Չն եղև, զի յանկարծոյն աներեւոյթ լեալ՝ ոչ տեսի » :  
Տան նրմա զբրոյց հակիրճ, թէ 'նգ խաշաբայ իջեալ 'ի կոխ,  
Սաստիկապէս ըզթըշնամին վարեալ սուրան 'ի յազթուութին :  
Յանցանաց դրստերն անդէտ սիրան հայրենի յալիս ծրփէր,  
Ի տազնապ խրուան մարտին չէր ինչ իմիջ եղեալ ըզգաստ :

Գուժիկանք առ Բէլ՝ եւ Բիւրասպ հասեալ էին յառաջադոյն  
Հայկայ սրոյն յառնելոյ եւ պարտութեան պատերազմին :  
Մինչդեռ կազմեր գումարտակ կուտել թիկունքս կորանացն,  
Եւ Բէլ՝ ինքն, ոչ եւս խրատուց աւազանւոյն իւր ունկընդիր՝  
Ինայելոյ զաստուածատիպ գրլուփն, անձամբ խաղալ կամեր  
Պատահել թորգումայնոյն ակոյնինն իւր վայելուչ,  
Բաբեանք նրկուն խորտակեալ եւ մազապուր 'ի սրոյն Հայկայ  
Անգր 'ի բլուրն հասանէին անկանէին 'ի բուն բանակս :

Ձայն բոթ ակընկոր ընգ Բիւրասպին յակն արկեալ Բէլ՝,  
Մըռնչեալ՝ 'ի սիրտս իւրեանց հայհոյէին զճակատագիր :  
Ի խոր խոցեալ՝ ծածկէին ըզվէրան 'ի գէմն արեաբար,  
Մըխիթար եւ քաջալերս եւ փարաւազըս տան զորուն՝  
Ձոյգ ընգ մեծ զորավարեան . « Մերթ այսպէս սուրն ուտէ մերթ այն,  
Վազիւ չար եւս ընգ կառափն հանջիք վրիժուցն ըզփոխորէնս » :

Վայր արին Բաբ եւ պատմեր զմիոյ միոյ զորապետաց  
Չարութիւն քաղութեան, եւ զնահատակն առաքինիս  
Պարգեւաց քարոզէր քան արժանիս պատուհասի :  
Մեծապանծ օձանաց հըզօր կըռուոյն երաշխաւոր  
Ղեկտիս տայր եւ նըշան հաւատ ըզվէր խոց գիւցազին .  
« Սակայն բանակք հիւսիսի յաճախագունդ քան զքօ ծառայս  
Եւ Հայկ ըզբուն թօթափեալ եւ յարուցեալ զըլխոյն 'ի մարտ, ...  
Որում տէրդ աստուածակերպ թէ 'ի գիմի երեւեցիս,  
Են փոշի ամարայնոյ հոզմով 'ի ցունդ հալածական » :



**ՀԱՅԿ**

**Դ Ի Ի Ց Ա Ջ Ն**

---

**ԴՐՈՒԱԳ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ**

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Դարմանի Հայկ 'ի վրանին : Ապահ առեալ զայ զԲերբոր զկին իւր եւ զԱրուսեակ 'ի հանգրուանեն ուր անկեալն էին 'ի մարտին ապահու. հաշտ ընդ հօր իւրում : Գիշեր : Արամ զայրացեալ ընդ հետաւթիւն Առնակայ եւ իւրոց զնպոցն՝ յուսահատ ինն կատարութեամբ յորդորէ զԻւրան՝ պինդ կալ : Հայկ կարեղէր՝ ննջէ, հսկեն առ նմա 'ի վրանին եւ արտաքոյ ապահ ունին : Բնիւած պահանգք զիշերոյ նիւթեն գաւ 'ի վերայ Հայկայ եւ ձեռն 'ի գործ առնին :

# Հ Ա Յ Կ

## Դ Ի Ի Ց Ա Ջ Ն



### Դ Ի Ռ Ի Ա Գ Ե Բ Կ Ո Տ Ա Ս Ա Ն Ե Բ Ր Ո Ր Գ

**Յ**աղթական օրհներգութեամբ զան ժողովին հայկեան բանակ  
Ի կողմանց կողմանց 'ի գաշա մարտի առւրջըն առաջնոց :  
Տընծութիւնն 'ի սուգ փսիւեր 'ի գոյժ մեծին վերառնութեան ,  
Ջոր զեղեալ էր 'ի յագունց՝ զօրավարացն իմաստութիւն :  
Լբօեր ընդ այլս հայկանոց ըզգտանութեան աղետին բօթ .  
Դեմք 'ի գոյն հարեալ գալչան , լոյսն արփինի ներկեալ 'ի մուկ ,  
Եւ յաղթութիւն իւր խաւար 'ի մեծագեղ աչաւն պատեալ :  
Ի բանակսն ճեպեցան կասկածագին վարանամբս .  
Օրիորդն իւրում միասուն խրզնիւ խարեալ եւ խելամուտ ,  
Տըրամագին գնայր , չըգիտէր աչաց ծնողին իբր երեւել .  
Յասպարէս մարտին կամեր գտնալ 'ի վեհժ եւ կամ 'ի մահ :  
Ոչ ըստ իւր ինչ փութոյ յօժարութեան , ոչ ըստ խոռայն  
Շարժէր յնծացս ահագին բանակն յաղթօղ խոնջ եւ վաստակ ,  
Յոր եւ բազումք վերաւոր յամիաց եւ քաղ գունդալարաց ,  
Թեպէտ եւ յոյժ ընդ կարճոյ հատանեկն ըզճանապարհն :  
Երկողքն գնային յառաջ , եւ լըսէ խոռ յարի կուսն  
Չհարեւոր հանգամանս եկին իւրեանց անգր 'ի զքնին .  
Վարանէր ընդ միայնուկ Արուսեկին անհեռանալ :  
Մըկեթար մատուցանէ քոյրն օրիորդ արխաւերս ,  
Թէ վարձ անգրէն 'ի բանակն իցէ անգէն արարեալ կոյսն ,  
Եւ խառն ընդ հօրըն խրզնի վանխընամ հարսն իւր զըզմանայ :  
Արփինուոյն սկըն լուսոյ գտնայր 'ի մօրն հանգչել 'ի ծոց ,  
Չիւր ըզգին պայծառ ցանեալ ոսկի եւ վարդ ծերաներփեան  
Յերկնեց զըմբէթ խորանարդ ու 'ի գլուխ լըբանց վարասարաց .



Եւ տամուկ սըխուր գիշեր հողածեւօքն 'ի մուծ Թաթաւ  
 Ելեալ գայր 'ի ստուերանիստ խոր անձաւաց ծմակին ծերպից :  
 Աստուատ սքա, Հայկ անգուատ Թիկնապահօքն հասին 'ի բունն .  
Արտասուալից Բաւոնի անկանէին ձեռք 'ի հնարից ,  
Օճառ բըժիժ եւ հեթեթ ընկեց , յերկինըս վերազեղեր :

Եւ Հզարդ հայրապետին զբազմազարեան բազուկան յայնժամ  
Ընդ երկինս ամբարձեալ արտասրաթոր հանգերձ աջք ,  
Աղազակէր մեղմական մըրմունչ յաթուրն Բարձրերցն .  
« Ո՛վ որ զինն ապրեցուցեր 'ի համաջունչ ջուրցն ծըփմանց ,  
Եւ ետուր չընչին փայտին հրամանն պահել զանդունգս յինն ,  
Հոտոտեցար 'ի գըլխոց Մասեաց 'ի հոռ պատարազիս  
Ի խորան վրանաձեւ ծիրաներփեան պերճ կամարիք ,  
Անք կտիեալ ըզցրրիկալիւր եւ զլայնալիճք աղեղն ահեղ ,  
Եւ զաշխարհ համօրէն ետուր ինձ տուն ժառանգութեան  
Տիրազուրկ երից ցեղեցրս բաժանել վեճակ արգար ,

Հայեաց եւ այժմ հաշտ տկամբ յաղօթըս լուս շըրթանցըս, Տէր :  
 Լուր, Տէր, ունկըն մատտ 'ի խընդըրուածս ուր առաքեմ'  
 Ի խորանսդ լուսեզէն՝ յոտս աթոռացդ սըրբութեան .

Որ զժառայգ ընտրեալ ըզքո հաւատարիմ յերկիւղ քո սուրբ՝  
 Օրհնեցեր յորոտաձայն ամպոց երկնից փայլատականց,  
 Եւ ետուր զքո զօրհնութիւնդ 'ի գաւանօզ քեզ յայս շըրթունս  
 Արփուել 'ի գլուխն Յարեթի, Սեմայ, Հայկայ՝ քոց սիրելեաց,  
 Եւ զանէծս 'ի ցասմանէ շտեմարանացդ գառնութեան  
 Ի բաժին աստուածամարտ եւ անօրէն որդւոյն Քամայ,  
 Դու եւ արդ, յաւիտենից Տէր անյողդոզ եւ աննախանձ,  
 Հասաստեա 'ի քո գանձուցդ ըզնոյն անէծս եւ զօրհնութիւնս  
 Ի վերայ գագաթանց իւրաքանչիւր կողման գըլխոց :

« Հաս 'ի Թիկոնըս Ծառայիս՝ կանգնեալ յանյոյս կործանմանէն .

Այլ ինչ չիք տկընկալիք՝ բայց 'ի քէն, Տէր, միայն հըզօր,  
 Որ ըզգէժ անարգանաց աստուածական հանցէ գահուգ,  
 Զօրհնեց եւ ըզկրօնից քոյինսաուր սըրբութեանց  
 Զիմքնատէր ազատութեան նըմանութեան քում պատկերիք :  
 Յետ այսչափ գառնազէտ վըշտաց սըրտի, մարմնոց ցաւոց,  
 Արժանի ողորմութիւնքդ հասցեն սըմա 'ի քաջաւերս :

Որ վերացեալ բարձրացեալ խրոխտանայ գլուխ ամբարտաւան  
 Ընդգէմ փայլակնացայտ ահաւորիդ բարձր աթոռոյ,  
 Կորացի 'նդ ոտիւք սորա, խորտակեցի ալ ամպարիշա  
 Որ նիզակ ընդգէմ ճօճէ հրեշտակախումբ քոց բանական  
 Զօրութեանց արփից փայլմանց երկնականառ բուլից վէհից :

« Դու եւ ըզգուսարըս Հայկայ եւ զփարելին մեր զՀայկանոյշ  
 Մնարատ 'ի քարուականն ածեալ Բեկայ 'ի պըզծութեանց,  
 Թէ պահես եւ կենդանի գորովագութ հօրն գըրկաց,  
 Որ նուիրեալք է 'ի տեղան մեծի փառացդ 'ի հոտ անոյշ, —  
 Զի ոչ իմիք կարօտի ամենազօր աջ աննիադ, —  
 Կըրկին եւա օրհնեցուք զամեներան անուն քո սուրբ,  
 Ըջբազըր առ սիրելիս, զառ առեկեալ ահաւոր, Տէր » :

Զայս մաղթէր մեծ նահապետն եւ յորդահոս հեղոյր արտօսը  
 Ընդ խորշոմն այտից կորիս, ընդ ձիւնաթոյք ալիս մօրուացն,  
 Իբր ըզփայլակս ազբերաց 'ի սառնահալ ծորեալ լերանց :  
 Ընդ նըմա հեծեծելով լային Թորգոմ եւ Մանիտոն  
 Եւ երկզքին գեղեցկայտ բամբըանք՝ Հրեշտակք պահպանք Հայկայ :

Բարբառ մեծ զիւցաղինն՝ անյիշաչար, անոխակալ,  
 Որ շնորհեաց կեանս ոսոխաց եւ առեկեաց անուան իւրոյ,  
 Եւ զենուան ինքնանուէր անձին կուսին 'ի վերայ հօր,  
 Եւ ձայնն աղետաւոր՝ զի պատառեալ եւ ըզհօր սիրտ,  
 « Զօհնեցին Հայկանոյշ յաստուածայնոյ փառաց բազին », —  
 Եւ աղօթք խընկանուէր նահապետին եւ կոյս շըրթանցն,

Եղին այս ամենայն յարարչականն հընչեցին գահ :  
 Եւ գարձոյց զաչս իւր հըզօրն ըզգըթուութեանց իւրոց 'ի Հայկ ,  
 Եբաց ըզգրուես երկնային ապէնիազ գանձուցն առ նա՝  
 Չանըսպառ ողորմութեանց շնորհաց իւրոց եւ պարգեւաց :

Ի գըլխոյ յաւիտենից եւ անմատոյց լերին սըրբոյ ,  
 Յաթոռոցն 'ի բարձանց փայլակնացոյտ ոսկի ամալոց ,  
 Չայն առ իւրսն ընթացաւ ընթերակացսըն վեհադոյնս ,  
 Պաշտօնեայս աստուածեղէն թաքուն մըտացըն խորհըրդոց :  
 « Զօրութիւնք առաջակացք աստուածակարգ իմոյ գահուս ,  
 Թեպէտ եւ չիք ինչ հեշտային բարձրանըկառ աչացս հանդէպ  
 Քան զօրութիւն ակոյտեան ընդ չարութեան առաքինեալ  
 Եւ ընդ հարանըս կենաց առուզեկան մահկանացուի ,  
 Որպէս տեսին աչք իմ ցայժմ 'ի Հայկ վեհադն իմ նահատակ ,  
 Բայց նորա թէ ժուժկալէ է ճըգնութեան 'ի հանդիսի ,  
 Զինքն յանգորր հանել հանդիստ՝ իմ եղեցի ստոյգ փոխարէն ,  
 Եւ 'ի կէտն աննել ժաման պատկահամբար նըպատակին -  
 Զի եւ երկրորդ բերկրութիւն հանդիսադրիս սըրտի՝ այն մեծ ,  
 Վրէժխընդիր ամզարըշտաց եւ անիրաւ յառնել ժամանից ,  
 Եւ յաղթական զհամբերող զառաքինին իմ ակոյտեան  
 Ի վերայ կանդնել նոցուն աւերակին եւ փրատակի :

Ժամ է արգ եկեալ հասեալ յանկէա ոլորտս յաւիտենից  
 Ի խրախոյս խընդութեան վառել զարին զիմ շահատակ :

« Դու Հըբշտակ պարգեւատեա , իմոյ գանձուցս շնորհարաշէ ,  
 Արի փութա երթ առ նա , եւ 'ի ցաւոց նորա մահի՞նս  
 Արաջին պարգեւ ըզքուն արկցես յանգաման , յարտեւանունս ,  
 Եւ ջըլացն արկեալ թըմբիր սքանչելադործ նոր զօրութեամբ՝  
 Առեալ զողին թառցեալ ելցես յիմ խորհըրդոց մըտաց դիւան -  
 Եւ անդ , իմ հրամայեալ , գիւանապետըն Զըւարթուն  
 Ի տեսիլս անցելոցն առ հաստատել զհաւատս նորա  
 Եւ 'ի յոյս եւ 'ի խրախոյս վռուել ըզտիրան հանգերձերոց ,  
 Ցուցցն նըմա զամենայն ըզնախեկիցըն հրաշակերաս ,  
 Եւ զնըկատեալ բախտն եւ փառս աղջին իւրում ուխտեցելոց ,  
 Որ նըկարեալ 'ի պատկերս յապայ ժամուց պահին նըմա :  
 Պահին նըմա եւ զարմին , թէ յարութեան անդեգեւուն  
 Ժուժկալէ մարտիւ 'ի տեւ ընդ բըճնաւորն աստուածատեաց ,  
 Զատեղին աչացս ասեմ զըսկայն Կերթովթ եւ զիւր սերունդ :

« Այս ոգւոցըն զօրութիւն . իսկ 'ի պընդել զմարմնոյն կորտիւ .  
 Ի նետէն բըժըշկել զոր խոցեցին իմ թըշնամիք ,  
 Հըբշտակդ իմ այցելու քաջին՝ տարցիս յինէն պատգամ՝  
 Եւ Ասաղիկ կոյս երկնակրօն՝ ըսարըշնազ գարձեալ յԱզին ,  
 Արգ իմով հրամանաւ եւ զօրութեամբ անվերջական  
 Իջէ փութանակի , եւ շնորհելով նըմա յինէն՝

Արուեստիւք իմաստութեամբ աւաքեսցե՛ք զարին իմ՝ այր :

Զի այգուցն աստուածամարտ գոռոզն ինքնին իւրով գրվեով  
 Ըարժեւոյ է՝ ի վերայ նորա ՚ի կուխ մեծ գուպարած :

Իսկ հայկեան օրիորդին ՚ի մութ պատի ճակատն եւ գիր » :

Լուս եղև, եւ լուսութեւ սրովբէագունգն ակըմբահոյլ  
 Մըսերիմբ Հայկայ՝ զանմահ եւ ըզբարձրեալն արքայութիւն  
 Օրհնեցին, ըզջօրավիզն եւ զպըսակիչ առաքինեաց,  
 Եւ խընդանցին լուսեղէն երեսք նոցա ՚ի յոյս զըւարթ :

Կսակածեղի մնային սակայն ելլց իբացըն խորհրդոյ,  
 Որ ՚ի մըտաց գիւցազինն յանմղկեղի հաստատութիւն  
 Եւ ՚ի սիրտն արիական կայր սպաստան նահատակին .

Զի զպատարուն զընծութեանց յօրինեսցեն յայնժամ ըզտօն,  
 Չայն յերգ արձակ եւ ոտն ՚ի պար, ձեռն յամենայն արուեստականս :

Մնիրհ ակն ամենատես, Չըւարթնոց աչաց արուանունը  
 Մնքթիթ պիչ ՚ի յերկնից պատըշքամբաց էին ՚ի Հայկ :

Գընայր գայր սաւառնութեւ Հրեշտակն երկնից պարգեւարեր,  
 Յարեւելից էջ ՚ի գրանց ընգ աստիճան երկնից կամբար,  
 Եւ հասեալ ՚ի պարունակ լուանին՝ անգէն առնոյր ըզկայ :

Հայեցեալ ընգ արեւելս եւ զարեգակըն տեսանէ  
 Զի գայր ամբառնայր առ ՚ի ներքուստ անբաւ երկրի,  
 Եւ զմթթին երես լուանին լուսաւորէր ճառագայթիւքն :

Ակնարկեալ անտի՝ խոնարհ զհայկեան խորանսըն նըշմարէլ,  
 Կըկտակ զի երկիր ընգ լոյս յըստակ եւ ընգ խաւար  
 Կայր յերկունս ՚ի շամանգազ եւ յերկեան տարակուսի :

Նըշմարէր նախ ձիւնափայլ սպիտակափառ Մասեաց դագաթի  
 Արփնեւոյն ըսկըզքնալոյսըն նըշուլից դեռ անհաղորդ,  
 Բընիկ իւրով սպետափառ ալեաց փայլմամբըն ցօլացեալ :

Դարձուցեալ յահեկակողմ ըզբատեսիլ աչացըն բիբա,  
 Ըջրանակացն երկոցուն մեծատարած հայի խորանս :

Մնգուստ սաւառնեալ հոլութեւեան կայտառ Չըւարթնոյն՝  
 Խայանայ քան զարծուի եւ քան զբազէ սրաթեւ ճախրեալ,  
 Իջանէ ՚ի լուս բանակն որ գըտան նընջէր զառաւօտին :

Նուագաւոր եւ քաջամատն արուեստականիք երաժըշտաց  
 Երգէին ժայն առ Հայկ ՚ի ծերունեացըն հրամանէ  
 Քաղցրաձայն մեղմիկ մըրմունջս յորդորականս ՚ի յոյս հաստուն,  
 Յառ Աստուած վըստահութիւն եւ յարութիւն առաքինի,  
 Ի ներհ աչաց հանգըստեան մեծի հոգւոյն վըհատելոյ :

Ի խորան անգր առ գիւցազն եմուտ Քերովըն աներեւոյթ .  
 Սարսուռ ընգ անձն ընթանայր աստուածարեալ նահապետին,  
 Որ ոչ ինչ նըշմարեալ երեւելի մարմնոյն աչքք,  
 Բայց տուեալ ըզսասափիւնըն՝ խելամուտ լինէր ՚ի սիրտ,  
 Թէ ՚ի վերին զօրութեանց եկն դք եմուտ անգր ՚ի վըբան .

Ձի անց ընդ անձն իւր Հրեշտակ, եւ յապուշ միտքս կտայ հարեալ  
 Մարտափեալ, եւ ակն ունէր պցելութեան ինչ Բարձրելոյն :  
 Ձի ոգիք գերամաքուրք երկնացեղիկք աստուածամուկք  
 Հաղորդ գոն, գիւրեաւ առնուն զաստուածեղէն զօրութեանն ապ :  
 Անկանէր նախ 'ի վերայ նոցա յերկնուստ խոր ԹմբուԹիւն .  
 Կերհեցին ծերքն երեքեան յաԹոսս իւրեանց ըզքնող անկեալ,  
 Արուսեակ 'ի սնարից, եւ յանտօից քաջին Բեբոր,  
 Եւ Բաւոն բրժըչկապեա՝ զլուխ 'ի քանուն գահոյիցն յեց :

Մատուցեալ ՋուարԹոյն 'ի տախտըս գիւցողին ծանրաԹափծ  
 Ջըզգայունն 'ի նորապահնչ ձեռնն արուեստ ընգարմացոյց :  
 Եւ ահա քուն մի խորին, Թանձր եւ անոյշ, եղբայր մահու,  
 Իջեալ յաշտն Թմբորեցոյց, ոխրան եւեթ յինքն էր կենդանի,  
 Եւ յուրնգունսն շունչ ըզհուր արծարծանէր կենդանութեան :  
 Իակ զաննիւթ զանքուն ոգին յափրչտակեալ Սերովքն անգէն,  
 Ի խորս երկնից անգընգոց լուսաԹեւօք Թուցեալ սրտաւ :  
 Աւ երկնաւոր տաճարին կացուցեալ գուրըս գիւսնի  
 Խորհրդոցն յաւիտենից արարչտկերտ Էին մրտաց,  
 Աւանգեր զինքն եւ զպատգամն 'ի մեծ ՋուարԹուն գիւանապետ  
 Որ անգէն ակընկալեալ մընայր Ղեմեալ ընդ անգաստակս,  
 Եւ Թեւածեալ ինքն անդուստ ճեպէր 'ի նոր վեհին հրաման :

Ուահ մինչ յայն գործեալ աշխարհս՝ ոչինչ ի միջ ըզգայր գիւցողն .  
 Եւ անգէն առ ոսկեձոյլ՝ ականակուռ տաճարի գուրս  
 Եգիտ զանձն, յոր ամենայն ինչ շինուածոյն յոտից ցրզլուի  
 Փոխան քարի ազամանդ, ոսկի 'նդ պղնձոյ եւ երկաթոյ :  
 Աւ սեմովք՝ Հրեշտակապեա մի մեծ ահեղ եւ վեհափառ,  
 Գեղ եւ մոյն յերեսս յանգամս առոյգ ծաղկեալ պատանեկի,  
 Ոսկեվարսք գանգրագեղ գալարք զուսովքն փաղփապեալ,  
 Աչք մի մի արեգակունք յաներեւոյթ Թափանցիկ խորս  
 Անցելոց եւ ապառնեաց ժամանակացն յաւերժից,  
 Ըզքանութիւն այրական նըկարէին յոնքն եւ ճակատ .  
 Եւ հանգերձ ըզլուսանիւթ գեղովն արկեալ զանախտութիւն :  
 Ի ձեռն ոսկի բանալի ականակապ անեղաչէն

Կայր յայնժամ՝ անդ 'ի գաւԹին առ գահար սեամբք շրջանակաւ :  
 Մատուցեալ քաղցր եւ համբոյր գիմօք եւ բուռն հարեալ հեղեկ  
 ԼըւսաԹեւ փափկամարմին բաղկզն 'ի գաստըս գիւցողան,  
 Եւ հանեալ ընդ աշտիճանն, « Ըզքաստ լեր, հայրք հայոց, առէ .  
 Այս տաճար հրաշակերտ խորհրդարան է անեղին,  
 Ուր յաննիւթ գըծեալ պատկերս ամենարուեստ Էին մտամբ՝  
 Գանձեալ պահին, նըկարեալ իմանալեաց մրտաց հանգեալ,  
 Ամենայն աստուածեղէն հանձարոյն սուրբ խորհրդոց տիպք,  
 Կախազղք եւ որ կանս եւ նըկատեալքն հանգերձելոց,  
 Եւ որպէս ընդ հայեկիս օրինակաւ զան յերեւոյթ

Ի հոգւոյն այլս մըտաց՝ զորս արժանիս արասցէ Տէր  
Մըտանէլ ի ներքս յառել, որպէս եւ այսօր ըզքեզ, քաջ:  
Եւ տեսանին — նոր քեզ զարմանք — ոչ անիրան, անկերպաւոր,  
Այլ անձնաւորք կենդանիք՝ մարմինքն եւ ձայնքն բարբառոց:  
Ձե նախ աստ էանալ աճնուն եւ գալ ի կերպարանս,  
Ապա ի դոյ ելեալ ճախրեն ի սիբ օգոյ յերկնից ի լոյս:

« Ի քաջաւերս արուժեան, ի հասաստել ըզքաւարս քո  
Նախեկցն հաւատովք, եւ զապառնեաց բանալ ըզքրունս,  
Թէ զի արիքն յաջողին, զասաց ընգդէմքն պատահեն,  
Խմաստոյն պահին պըսակք, անըզգամին մեծ պատուհաս,  
Հրաման եհաս ինձ այժմիկ յամենակալ բարձր ի գահէն  
Մուծանել ըզքեզ այսր ի վեհաձայրս հանգիստարան,  
Եւ ըզքաւարս պարծանաց աղցիգ մեծի ցուցանել քեզ:  
Որոյ լիցիս արժանի, թէ անսայթաք եւ աներկմիտ  
Արաքինի նահատակ տոկաս յաւէժ աղցաւգ ի կիւիւ  
Մեզարիշտ գոռոզութեանց եւ բըռնազատ նորակրօնից:  
Եւ որգիք քո եւ թոռունք ըզնոյն պայծառ պահեցեն շնորհ,  
Մինչեւ հօրն իւրեանց քաջի եւ իշխեցօղ գաւազոնին  
Նբմանապէս տարեալ փոյթ խոհեմընթաց արիութեան՝  
Հայրասերք հայրենասերք մի շունչ եւ մի վառիցին միտք »:

Առեալ այնուհետեւ լուսածրզի Քերովքն սուրբ,  
Արկանէր զոսկի փականսն յեմըս փակաց, զարձուցանէր.  
Դըրգեցան ազեքն ոսկիք, որոտացին ալք տաճարին,  
Երկրացիկ փեռեկեցան գրանգք ի ծրինիսն ազամանգեայ,  
Եւաջի իւրեանց բացաւ գուռն ոսկեզէն բարձրակառոյց,  
Եւ մըտեալ նոցա ի ներքըս՝ փակեցան ինքնին անգրէն:





**ՀԱՅԿ**

**Դ Ի Ի Ց Ա Ջ Ն**

---

**ԴՐՈՒԱԳ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ**

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Դիւանագետ Հրեշտակին մտնեալ զՀայկ հողաօրէն 'ի տանօր խոհրդոցն Ատուծոյ՝ եւ 'ի յառաջագոյն եղելոցն սկսեալ 'ի հաւաստ շքմարտութեան առաջիկայիցն հանգերսնելոց, համառօտս իմն ցաւցանէ նմա զերեսիլ երեսիլ բախտս ազգին, 'ի միտ առնուլ եւ իրախուսել՝ զի առաքինեաց պահն յաղաւանք, իսկ անարի ծուլից՝ հակառակքն :

# Հ Ա Յ Կ

## Դ Ի Ի Յ Ա Ջ Ն



### Դ Բ Ո Ւ Ա Գ Վ Ե Շ Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ

**Մ**ինուած էր պերճ հոյակապ անկազնաւ զարմանալի,  
Անկեանդ քան զազամանդ եւ յաւիտեանցն յազմական:  
Առաջին մուտքն սրբահ մի գըմբեթարդ բարձրաձեղուն,  
Լայնածիր, երկայնածիւղ, որ ընդ ոսկի գրունս այլեւայլ  
Յայլ անթիւ եւ անբաւ հաներ գահլիճըս զանազան:  
Լուսամուտ երգք երկնապիշ՝ կաթեն շող անգր աստուածահոս:  
Հիացումն անկաներ 'ի միտսն 'նոր' մեծ գիւցազին.  
Ձեռն 'ի ձեռն Ջըւարթնոյն շուրջ հայեցեալ եւ տեսանէ  
Ի տախտակս իմանալիս սրբախ աչացն յանգիման  
Աքանջելիս կենդանագրեալ զիսկըբանէն արարածոց:  
Ետես նախ ըզխանձարուբս երկանց ծննդեան տիեզերաց.  
Անորոտ Չինն 'ի մի թեր, խաւար եւ վիհ անթրունդ անունջ,  
Թոհ եւ բոհ մութ խաւ 'ի խաւ մանուածապատ 'ի խոր անգունգա.  
Եւ 'ի միւս՝ Էնն անեղ, յաւեժալոյս ծերն հինաուրց,  
Պատարուն բուն ճըմարիտ, առոյգագեղ, բարութեանց հայր,  
Չորութիւն, հանձար անհոն, հոգի թուցեալ յանեղ ափին,  
Իմաստութեանն ընդ աջէն՝ եւ յահեկէն Գեղզն պառչեկք.  
Որ ձգեալ զամենազօր զարարչագործ բազուկան յայն կոյս,  
Ահեղ յունիւքն ակնարկեալ յանգոյութեան վիհ խորխորատ՝  
Ի թափուր յամուլ արգանդ համապարփակ մըալլ միզին,  
Արձակեր զօրեղապէս անգր ըզհրամանն ամենահար,  
Յերրորուն հութենէն սերմէն սիրոյ յորոյ տըւեալ  
Ի համբոյրս յազապատանս կանխանըկաս արարածոյն:  
Յանգընգախօր 'ի վեհէն տիեզերասոյլ կոյր խաւարի

Ի սաղմաբոյն իբր 'ի մըզանց գայր ելանէր 'ի գուրս աշխարհ :  
 Զոր յերկից 'ի նախասկիզբն եւեթ պարզ նուր թոյլ տարերաց  
 Թըրեալ էր եւ զանգեալ ամենարուեստ հըզորին ալ :  
 Զի յերկուց ոչինչ 'ի նոր բարգեալ իրան յօգի քան զժի :  
 Եւ աւելին քան զերիս՝ արարչակերտ մեծ զօրութեան  
 Աւելորդ էր 'ի պէսպէս էից սեպիցս անթիւ խառնուած :

Հուր հոգին կենդանարար թեւապարփակ ըզլայ ընտթեամբ  
 Գըրգայր տածէր, յաստուածային ջերոյն տապով անեալ յեռանգն ,  
 Իբր ըզձուս 'ի թուխս հաւուն նըստեալ՝ ջերմին մօր ընդ թեւալք ,  
 Զարկեալ սերմին զօրութեան 'ի կենդանայն յաւիտենից ,  
 Յորմէ անգամք եւ հասակ մեծամարմին տիեզերաց  
 Ունէին բըզխել զեռալ եւ յօգանալ կանգնել 'ի վեր ,  
 Կամ զերգ բուն ոստ եւ ըստեզն աճունաճիւղ պըտկել ծառայ՝  
 Արձակել եւ բանալ փըթթել սրփուել եւ տարածել :

Ընդ յերուլ թազանթապատ անգընդամած աղջախըջին  
 Յաստուածարուզին աղբերէն ծագեալ յայտէր լյան համասփէս  
 Քայքայել զաշխարհակուլ ըզերըթնի մութն ըսկըզբնազայ :  
 Անմահից ընդ նըմին գապք, սաւառնաթեւ լուսազարմից ,  
 Լոյսք զըւարթք հոյտնէին շուրջ զաթոռովն արարութեան :  
 Եւ կիսոցըն բարձրակիւ ստամբակութեամբ ապարթանեալ ,  
 Ի նըսեմ փոխեալ տըխուր, հալածական թօթափէին  
 Ի մոյլ վերտալ անգընդոց անէ անծինըն խաւարի ,  
 Որ մերկացեալ կեղեւեալ արտաքոյ մնայր տիեզերաց  
 Յերեսաց լուսոյն գնացեալ փախըտտակուն յանհետ կորուստ :

Ընդ երեւել նըշուլից անգըսնկածնունդ գեղոյ լուսոյն՝  
 Հրաբորբոք փառէր տօթով տիեզերաց լյոծըն զանգուած ,  
 Անտի ձեռքն արարչագործ գընտեալ ըզբոյլըն բիւբուր  
 Զաստեղազարգ կամարին բոցաճաճանչ լուսաւորաց ,  
 Եւ զանուանցըն յորթորթումն 'ի կերպ գիմաց նոցս կընքեալ :  
 Ընկենոցր մեծագորն ահեղ ուժով կարօզ բազմին  
 Ընդ երեսս երկնից ցանեալ, զանազանեալ փառք եւ հասակ ,  
 Ըստ պէսպէս խառնըւածոյ տարերցն երկց եւ յօգուածոց :  
 Եւ սահմանս իշխանութեան չափեալ նոցին իւրով քըլու ,  
 Թաւաղջոր թըռչել յանկեա եւ յանպարոյր սապարփոն ,  
 Եւ պատել միանգամայն փարել զմիմեամք գաբուց 'ի գաբս  
 Սիրելութեան համբուրիւք 'ի գիրկընդփառն աղապտանտ :  
 Իսկ խըմբից գասուց նոցս գեղեցկակարգ բուն յօրինուած  
 Ոչ յերկրէ երեւի, այլ յանսահման ըզլոր երկնից  
 Ի գընդին միջակայրէ, յաստուածութեան վեհ աթոռոյ :

Զահաւարեալ փայլէին իւրաբանչիւր յիւր գառակարգ  
 Օթեւանք արեգական՝ երկոտասան աստեղաստունք,  
 Արեւակն ընդ նոսին երկնից հըսկայն ճոխ ճեմելով,

Աստեղաց եւ այլ կաճառք, բոլլ բազմաստեղքն եւ ջիբ արփիք,  
 Սայն եւ բազմոյթ եւ շամփուղքն եւ յարգողին ծիր կաթնաթոցր,  
 Որ մի մի ամենեքին արեգակունչք փայլակնացայոք:

Եւ զնոգք մանունց առեալ լուսաւորաց պար բոցավառ  
 Թօթափեկոց Թոռցեկոց հրոյ կայծականց պէս 'ի նոցունց,  
 Զորս ընդ իւրեանս յափըշտակեալ՝ պատին զհանուրց միջնակիտաւ:

Արփուէր լընոյր զընդհանուրս եւ նուրբ արփին ճապաղ ձեւով  
 Յանդընգասոյզ մինչ 'ի ծագս անտարրափակ տիեզերաց:  
 Գունգք անթիւք փայլակնացեալք յոգնահորով գարս յաւիտեանց՝  
 Ճախր առեալ ընթանային ընդ անյատակ անդունդս երկնից:  
 Ոստնուին 'ի նոցանէն հրոճըգութեանց կայծականց շանդք՝  
 Վարտափոյ ահեղ տեսիլք յանհեա փախուստ մոլորականք  
 Յամենայն 'ի կայս 'ի կոյս, եւ հրահոսան փոր նոցա լոյծ  
 Եռացեալ գողորեալ յորտա ուժգին Թընգմամբ եւ շառաջմամբ,  
 Եւ 'ի շունչ բոցոյն շողք՝ վեր ցրացեալ շամանդակեալ՝  
 Դառնայր պայր իջանէր անդրէն 'ի նոցնս անձրեւ հրեղէն,  
 Եւ բնութիւն եւ արար զընդի զընդի իւրպքանչիւր  
 Յազգ ազգ 'ի նոր խառնըւած ու՛ի կերպարանրս փոփոխեր:

Յանհամար յօգուածոյ նախնի տարերցըն զանգուածոց  
 Թուլացեալ ըսփեռ տարած եւ ոգեսպառ հրոյն բընուութեան,  
 Եւ կիսոյն 'ի ներքն 'ի խոր Թաղուն մարմնոցն ամփոփեալ սիրտ,  
 Ուժանակ սկընտէրին տակաւ հրատապ զընդդին երեք  
 Ըստ միոյ միոյ բնութեան եւ մեծութեանն համեմատի:  
 Ըստահակ խոտոր ընթացք յօրինաւոր սահմանին չափս,  
 Ի հեղուկ գան նուրբ սըղոխք, հոսանք պընդին 'ի կարծրութիւն:  
 Սկիզբն առնուն եռալ զեռալ կարկաջասահ ջուրց խոտորանք  
 Ընդ երեսս երկրի մերում որ կայր ընդ այլս անկերպարան,  
 Եւ սըլուէր օգն ըզնովաւ ծրարեալ զանբաւ գունտն 'ի ծոցին:

Սակայն հուրն յանդընգային սանդարամետրս զըժոխոց,  
 Ընդ նըմին սըղոխքն անօսըր գարանեալ յընգերս երկրի,  
 Ոչ կային աակաւին, ոչ գիտէին գուլ եւ գագար:  
 Այլ ներքուստ անհընարին բուռն ցոլմամբ սլացեալ 'ի վեր,  
 Երկնաբերձ յարուցանեն կանգնեն զուզխիցըն մըկանամբք  
 Բարձրայն լըրինս հրակայս, սարս եւ բըլուրս եւ գարեւանդս,  
 ԶԹմանն եւ ըզՄասիս, զԱթլաս, զԱլլպիս եւ ըզՎովլաս,  
 Ժայտս եւ խուլթըս ծայրասուրս կարծըր պարեխս եւ սեւա խարակս,  
 Փոխան մայրից պալարի հրաշեկ հերք վարսաւորեալս  
 Իբրեւ փունջ ցրցունք ծամոց կամ ձեղանակ ընդ գագաթունս,  
 Հուր եւ բոց ցընդէր 'ի ծոցս, եւ գետս հոսեր հրեղէն ուղիփոց:  
 Յարոց էր որ սասանմամբ ահագնազգորդ յինքնն փլուզեալ,  
 Սուզանէր անդրէն յանգունդս, եւ էր դարձեալ որ միւսանդամ  
 Բարկութեամբ որտաընդոստ գլուխ ամբարձեալ յառնէր եւ կայր:

Եւ անգէն գաշտք եւ հոգեւոր, խորտոմբ եւ վեհք եւ խորածորք  
Ընդ ողուն թիկանց երկրի լայն պատառմամբ առնունքն գագ:

Անդ յայնժամ ամպք լըրթապոյնք բարձանց՝ ի գլուխը կուտակեալք,

Զուր եւ հուր ՚ի վերուստ որոտային փայլատակմամբք,  
Զուր եւ հուր ՚ի ներքուստ լինին անգրէն անդ ձայնատու .

Եւ յորձանք ուղիփնահոս հեղեղածուփ յայտ կոյս եւ յայն  
Թաւալցուր յափշտակեալ լերինս եւ բլուրս եւ քարածայտս ,

Ըզգաշտն ՚ի սար փոխէին եւ զառապարն ՚ի հարթարգակ,  
Յոփս անկեալ՝ զաշխարհածոփն կուտէին, ծովակս եւ լիճս:

Մեծանայն ինչ զբտեալ եւ յըստակեալ սրբերք մագուր ,  
Եւ մըրուրն յանգունգս ՚ի խոր իջեալ յատակ անդ ընկըզմէր:

Յայնժամ սեռն եւ վըճիտ, կենսացընցուղ, արփիահարստ  
Թափանցիկ յերկիր ցայտեալ արեգական ծագէր ճաճանջ .

Եւ երեւք արծաթափայլ անծայրածիր ծովուն ալեաց  
Իբր հանգէպ ջինջ հայելի ապակեղէն՝ արձակէր ցոլս ,

Չանբաւ էին մեծութեան տըպաւորեալ յինքն ըզպակեր ,  
Նըշտիքն անգրէն յետս ընդդէմ շողիք յերկնից զունս ծիծաղեալ:

Սկիզբն առնոյր լուսոյ ստուերաց կարգ տըւընջտան եւ գիշերոյ ,  
Մաւաւորն վարդագէտ՝ եւ երեկոյն ոսկեղեմակ

Բանսրխալ օրէնս ոճոյ զմիմեանս առեալ յաջրգէլին:

Բոյսք եւ թուփք գալարագեղ եւ անառապ ծառք երկնուղէք  
Զերգ լու յեղաիւր եւ ՚ի մարգ եւ քարաբոս ՚ի վեճ մամոււ ,

Կառարոյս, կենդանարոյս, սպունգ, քարատունի, թընջուղք բոկայք .  
Կանգնէին անդ ըզգլուխս , եւ երկնըմայ Ծայրից գիտակք

Սոսափեալ ՚ի բարձրաբերձ բարձունս օդոյ ճապուկ ճօճին  
Յընթանալ արշաւասոյր փոթորկոյտոյղ սոփց մըրբկաց .

Վայելուչ անդ հասակաւ գեղով նազէր արմաւենի:

Փըջանայր ուանոյր տակաւ անգընդափակ ծովուն յատակ ,  
Եւ ՚ի լոյս ելանէին աշխարհի հին սանգարամետք .

Աճէր ցամաքն , այրք անձաւք փապարք եւ սորք խոռուղէին ,  
Իանդիսըն ջուրք սուզեալ ժողովէին յանգունգս ՚ի վեհս:

Անդ գարունս առաջնոյ կենդանախումբ զարմ անգրանիկ՝  
Խեփորք ազգիազգիք եւ խեցեմորթք եւ գաղտակուրք ,

Անարի ձուկն եւ վըշապըն կայտուէին եռալ զեռալ:

Հաւ թըւոցուն եւ սարմատարմ՝ օգապարիցըն թեւաւորք  
Թեւածեալ ՚ի ջուրց անտի սաւառնէին յօգս եւ յանասաւ:

Խոտ բանջար բոյս գալարոյ կանաչազգեստ պըճներ գերբիք  
Եւ թըփուս մայրիք ըզլեանն եւ զքարեւանդ զարգարէին:

Յերկրորդէլ գարուն՝ երկրորդ ազգ շընչաւոր կենդանասեր  
Խըլըրտեր ՚ի մէջ կըրկին կենաց ծովու եւ ցամաքի ,  
Յափն ուղիսից ՚ի յամբ ՚ի խարձ ՚ի լուստարգ ՚ի գէճ պուրակս ,  
Ընդ գետս, ընդ լիճս, ընդ ճահիճս, ընդ մեծածոփն համասարած ,

Ընդհանր նշանք ուժ վերապ մոզէս տիտեան եւ սալամանդր,  
 Սողունք զեռունք թեփամորթք խեցեպատեանք լերկամարմինք .  
 Է որ յերկիր խաղացեալ, է որ լիւզեալ ընդ օդս երկնից,  
 Քառընթացք երկոտանիք պատենաթեւք թաղանթաթեւք,  
 Ի կրկին սըլացեալ թեւս եւ չորեքուք սաւառնացեալ:  
 Մեծամեծք յաղթահասակք սոսկավիթխարք եւ անարգիւք,  
 Եղբերիկք եւ ճիրանեղք բըռնածանի վըրժակաղէնք,  
 Երեւոյթ ճիւղալ հըրեշք յուշխապարիկ խառնազաղանք,  
 Աւ այժմու մերով արգեամբքս նըկատեալ՝ զարհուրագինք:  
 Որ եւ է զի զանտառաց եւ ըզհովտաց կանաչութիւն  
 Ի վըսեր եկեալ միմեանց՝ միմեանց արեամբ ներկանէին,  
 Եւ էր ուրեք զի զկոհակրս փըրփրացայտ ծովուն այեաց,  
 Ոյր մաքնչիւն գազանացեալ ընդ վայրենի ժըպիրճ խանչիւնս  
 Վերազացն գոչելոյ՝ զմայրիս զանձաւս թընդէր եւ զվէմն:  
 Ըստ բախտի՝ զեռ արհարացն սկըն մարդոյ չէր 'ի նըկատ,  
 Եւ ոչ սիրտ 'ի բերտն վաղել ընդոտ սարսափելիքք:

Յարուցեալ մերթ ընդ մերթ անգընդային հըրոյն մոլութիւն  
 Ահեղ թընդիւք տատանեալ զյաղթանգամ գունտըն գըղըրդէր,  
 Պատասեալ վիհն ահագինս, եւ ընկլուզեալ հետախաղաղ  
 Թաղէր կորուսանէր խորասուզեալ ըզսերմըն ժանտ  
 Ըզճիւղաղացըն զեռնոց եւ զայլանգակըն կայտառաց:  
 Միւսանգամ երկիր նոր, 'ի վեր բըղեւէր նոր գար երրորդ,  
 Անարի չըրքոտանեաց պաճարեղէն հարստի տոհմ  
 Անձոտնի եւ անհեղեղ 'ի ջի՛ եւ յոսկրր սաստկանգամ,  
 Զորոյ չիք դք երկրածին պատմել զարարն եւ զկերպարանս:

Ի վերայ նոցա յառեւէր գայր ապա գար յետին չըրրորդ,  
 Յարգանգէ անգընդոց երկրին երեւք նոր նորածնեալ .  
 Ընդ նոսին բողբոջին նորատեսիլ բերրի բուսակք,  
 Ծաղկանց եւ գարաստից գունակ գունակ փըթթեալ սերունդք:  
 Յորենոյն ոսկեգիսակ ատղք հասկաց ծով ծածանեալ,  
 Հաճարն եւ գարին, թեղօշ, սարոյ, սօս, զի եւ նո՞՞:

Տաշտագեղ ողկուզալի որթ յուսս ոսկին յակինթ փայլուն,  
 Ձիթաստանք, տանձուղք, գեղձի, թուզ եւ ծիրան, նուռն եւ խընձոր .  
 Ծիրանի ծիլ ծալ 'ի ծալ թերթեալ վարդին տիպ վառ 'ի վառ,  
 Ըուշանին անուշահոտ լուսաթաղանթք, ձիւնիկ յասմիկք,  
 Մանիշակ պարկեշտագեղ, ոսկերտղօշ փափկիկ բըրբըռմ:  
 Գեա՞ վշտակ ընդ գար ընդ ձոր սազապաճեմ զեռեալ խոխո՞՞  
 Առողեալ 'ի զով ծորանս արբուցանել զբոյս գալարի,  
 Եւ երկին զուարճացուցեալ 'ի ցօղ զըւարթ արփեցընցուլ:

Սաւառնեալ վարաղաթեւն արծուի սլանայր ընդ ամպս երկնից,  
 Աճող հիւր նորեկ՝ ծերպ վիմի, եւ արագիլ խընդրէր իւր բոյն,  
 Կռուռնի հաւփալ եւ տատրակ, լոր եւ արտուտ թեւէին յօգս,



Աղանկաց պար ձիւնացեալ, սիրամարդին տրտուն սեպտը .  
 Եւ սոխակ զանաաւախիտ մըթին մայրեաց պատուեալ Թաւուս  
 Գարնային երաժիշտ՝ մանուկ գուսան ծաղիկեալ գրաստեղ,  
 Որոճայր մըմընջածայն զերկնային երգն յէջն ուսեալ,  
 Յոտս մի նըստեալ սազարթուն՝ անձկակարօտ հանել գեղգեղաւ :  
 Անայութ, միեղջերու, փիղ եւ արջաւ, ոչխար եւ ջիւս,  
 Այծեամն, յամոյր եւ խարբուլ, եղջերուք վիթիք առինք Թեթեւք  
 Լայնասփիւռ ընդ գաշտ ընդ բլուր արածէին վրտառ վրտառ .  
 Սալաւըմբակն ոտնատրոփ լընայր զերկնիս վըրընջմաճք :  
 Իսկ առիւծ օսկերաշ, արջ անտիպար, դայլ եւ յովազ  
 Կըտտէին գարննակալ մայրեաց 'ի Թաւուս եւ քարոնձաւս,  
 Կենդ եւ գաւ երկնելով 'ի սիրտ՝ պորտոյն առ վրտանդի :  
 Օձ եւ քարք, կովագիաց, քարաթոթոշ եւ օձասանդր  
 Քըմնափուշ բազմազաւար սողիք 'ի ծակսն ճեպէին  
 Սարդ 'ի տաքն ընդ օգա՝ 'ի կախ, եւ խիւս գնայուն ցղի ընդ գերբուկս :  
 Զըկանց եւ լուրակաց կայտառք երանդք խայտախորիւ  
 Զեւէին ըզլուծական կոհակս 'ի դաշտաքն կապուտակս .  
 Ընդ նոսին փայլուն կարապք եւ օսգ եւ բաղ եւ հօգտմազ  
 Շողացեալ վարդէին 'ի մըկանունս ճօճեալ տընաց :  
 Հեշտանուն քաղցր համբուրիք գեղապարեալ ամենեցուն  
 Առ միմանս այր ընդ ընկեր յամերբախան օգս անուշից  
 Միխաւան եւ հեղասիք չքնջմանց գարուն ժամանակի,  
 Յօր արեւ կենդանարար 'գ երկնից զընդին միջնաշաւիզ  
 Ճեմ՝ զընայր՝ զերխտագործ ճառագայլից տապ յընդհանուրս  
 Յաջ յահեակ միտիքչիւ անայլայլակ արւեալ ծաւալ :  
 Բեհմովթ յերկրի Թազաւորեր, լեւիաթան՝ յաշխարհածով :  
 Էնն էից արարչական զըւարթ բրբօք յիւրն արարած  
 Կալեալ գետակն հեշտաբար եւ խընդամիտ ժըմտեք սըրտիւ :  
 Երազք անդ նորոյ երկրին ընդ անասուն պաճարաց հոյսս,  
 Ի պանծալի արնկախիտ 'ի փափկութեան գըրգարանին  
 Քառավըտակն Ադինայ, յանմահ 'ի կեանս երանուկս,  
 Անդ զակամքք Արածանայ Տիգրիս Ճարթի եւ Նրապոսայ  
 Քաղցրածորան ծաւալքք աղբերահոս սահեալ գետոց .  
 Յանթաւաճ 'ի ծողկազարդ գարնանաղեղ վայելըութիւնս  
 Հասուչին մատախք եւ չընչով կանգնէր եւ կայր մարգն առաջին,  
 Տիրական բանիւ պատուեալ եւ կենսակէք անմեռ ոգւով  
 Զատուածաղբծ պատկերին ճակատ յերկինս ամբարձեալ վեհ .  
 Առ նըմին կոյսն կայտառ, ամենագեղ ճեմեալ հասակ :  
 Այլ աւանդ, ոչ 'ի նոցուն գէմս երեսաց խընդայ ստեղծօղն,  
 Զե 'նդ կանգնէն եւ գլորին . անդէն առ ոտսն գարննեալ  
 Սողայր ոտիս հին վըշապն, 'ի պատարանաց սողոսկեր ծառ,  
 Վեշապն հին՝ որոյ տըտունն ընդ քարշ տանէր զարեկըն բոյս :

Անկանին երկնիցն հեւրք 'ի հրապուրող վայրն սրտոզն ,  
 Օձաթամբ շաշակոզն ըմբոյննելով ըզմահ մարմնոյն ,  
 Եւ անհանձնաբ բարբառով սուսերբ խրզեալ զողւոյն արեւ :  
 Անվերեպ յաւեժադոյ խըրատ որդւոց նախառտեղծին ,  
 Ընդ բերան մուտ մարմնոյ մահ , եւ ընդ բերան եւ մահ ողւոց :

Մահացեալքն կենդանւոյն յանմահական կենաց գրախտէն  
 Ելանեն տարազիր յերկիր մահու եւ անիծից ,  
 Եւ հրապուրչ լուսակերպիցն եւ բոցանիւթ սուրըն ցանկէ  
 Զբրբանաց մարդկուժեանս ըզցանկալի շըրջաբողորս :

Տեսանէր անտի յառաջ՝ կրրկին սեղանս 'ի բացօթեայս ,  
 Մին ցանեալ սոփն արգեամբք , եւ առ նըմին այր երկրագործ ,  
 Միւսըն լի գեր պատարուձեակք , եւ առ նըմին համբակ հոգիւ .  
 Երկոգին բազինք ծըխեալ 'ի հուր 'ի բոյր ողջակիցին :

Էնն էից կայր 'ի վերոյ 'ոցա՝ զերեսուն զուարթալոյս  
 Դարձուցեալ 'ի խաշնարածն , 'ի պատարազն անուշահոտ ,  
 Եւ զյետոյս տըւեալ թիկանցն 'ի հողագործն եւ յեւր նըւերս :

Անդէն առ սուրբ սեղանովք եւ սուրբ աչաց անառն յանդիման  
 Յառնէ վայրագըն մըշակ հարազատին իւրում գըժխեմ ,  
 Աչք հրաբոց , կապոյտ շըրթուք , եւ ռոտախիտ լուսն մ 'ի ձեռնն .  
 Յայն 'ի զէն զայն զառեալ զարիւնարբու զիննգախոշոշ ,

Հարկանէ զկառապն անմեղ , տապալ ջախջախ տայր պատանեակն  
 Իրբեւ զժաղկի ծիրանի ճըմլեալ եզին բիրտ կըձղակաւ ,  
 Ի բոսոր արեան թաւալ՝ ներեր գահձին քաղցրր դիմոք :

Ի վերայ կային ծընօղք մանկանն եւ զհերսըն փեռէին ,  
 Լուսնային զապագոյժ վերին աչաց ջերմ ազբերք :  
 Էն սիրով ողջագութեալ զոգին ամբիժ առեալ գընայր ,  
 Զանիծից քինուց գըրոյժ՝ 'ի վերագին կընքեալ ճակատ .

Արիւնն անպարտ բերանացեալ՝ յերկրէ յերկինս գոչեր բողբ :  
 Գազանն երբ եւ տատան 'ի խոր անառբս թափառոտ  
 Զերդ վայրի մի որս յարեանըն նետահար վըէժ սատակելր :

Անոր 'ի միւս կողմ հոյեցեալ եւ անանն գիւցազնըն վեհ ,  
 Զի աւանդ եւ գաստակերտք կանգնեալ , քաղաքք , շէնք կառուցեալք ,  
 Կոթողք՝ բըրգուիք եւ գըմբէթք , բերդք՝ աշտարակք եւ գիւտանոցք  
 Պերձացեալ բարձրայտակ խրոխտանային յերկնից կամբոս :

Անդ ճարտարք ամենայն հայթայթէին գիւտս արուեստից ,  
 Կարակին 'ի ձեռս կային ճարտարասփոք տային հրաման :  
 Փող եւ քնար՝ երգս եւ գեղանս գուսանական ծնանէր Յովթալ ,  
 Հայր եղեալ երաժըշտից յարուեստականս պէսպէս գործեաց ,  
 Կուսագաւոր մատանց՝ պարուց հընչէին ձայնս այգիք եւ բլուրք :

Կայծակունս 'ի շունչ փըքոց արծաթեղով մըրձոտ թօթէլ ,  
 Կռէ կոփէ ձուլէ զերկաթ եւ զէկ պըղինձ յարօր ու 'ի խոփ ,  
 Ի բերս կահ տանց ըսպատու 'ի պէտս , յանօթ պատերազմի :

Արտորայք ահօս ահօս քրտնին հատկօք 'ի սիք օգոց,  
 Եւ մարմանդք եւ բուրաստանք ծառայ ծաղկանց պըճինն երբինիւք :  
 Գեղեցկոսն եւ լուսածղին նըստեալ 'նոյնմ առ սուր բինան  
 Երթայր զայր նուրբ կրկոցաւ ընդ ձինաթոյր ազրին առէրս,  
 Եւ զմըմուննըս անոյը շըթմանցն ընդ սուր սըւելքս բարտրին  
 Ու 'նդ ելեւէջքս ձինափայլ թաթիցն սոխց զաշնաւորէր :

Յօրաննս մարդկան սերունդք եւ անտպատք փոխին յապտտ,  
 Շէնք եւ զիւզք աւանանան, լայնին աւանք 'ի ճոխ քաղաքս :  
 Յալէզորդ նահապետացն 'ի յարեգեան գընդէ անտի  
 'Կախահաւ 'նոյի Ենտվք՝ արգարագործ եւ իմաստուն,  
 Յանկալի լեալ յաշ Երկնից, յամպ լուսափայլ 'ի Թեւա հողոց  
 Թեթեւ Թառուցեալ յափըշտակէր յանմահից կոյս 'ի գրտեան Ագին :

Օջտեալ սրգւոցն Արտուծոյ 'ի նզովեալ գեղ գըստերց մարդկան  
 Անանորէն գիմնցմամբ անարգել հրոս ճակաճանաց,  
 Ի հուժկու վարար վաւաշ եւ խարըտի անխուզ խառնից  
 Երանէին կանգնէին հանգէպ երկնից համբարտակեալ  
 Հասակաց կոյտք, վէս հըսկայք, սասկալիթիտար արք անուանիք :  
 Ի նոցանց, պըղծաշաղախ եւ մըծղընեայ մոլի վըրնժմամբք,  
 Ամկարիշա եւ ապիրատ գտողահար բըւանց գտիւք  
 Ի բազում անկեալ արեանց եւ արտասոււացըն ճաղգափոխ  
 Գիճացեալ ողողեալ ապականէր երկրին երեզք :

Զձեռանէ ձրգեալ գըստերն՝ Արգարութիւն զխաղաղութեան,  
 Մեկնեալ թաղծագէմ 'ի գիւր գաշտաց՝ Մասեացն 'ի գըւի,  
 Անդ վայրկեան ողբագին յորգիս մարդկան ակընկաւոյց,  
 Ոսն յերկիր արոփեալ Թըռչէր յերկինս առ Էն՝ խիտա գտատաղ :  
 Երկինք սուրբ՝ տիգը աշայ հայեր յերկիր խոժոտագէմ :  
 Սըամըտութիւն բարկութեանն երկնասահան յորգ անձրեւք,  
 Պատասմամբ շտեմարանաց յանգընդային սանդարմետա,  
 Եւ անգուտ երկնապող եւ յորձնեանդն ուղիւց զըւկմամբ,  
 Եւ թափից անգընդասոյղ ծոփուց հիմանցըն կուտակօք  
 Ուռուցեալ յատակք զյորձանըն գերետօք հեղեալ երկրի,  
 Ողողեալ լուանայր ըզժահ խահերտկան ժանտագործացն,  
 Ի խորս անեզր եւ անունը ծոփու 'նկըզմեալ ըզընակ եղերս :  
 Ամնայն ինչ կորուսեալ բայց 'ի յուսոյ յարգարոյն սիրտ :  
 Եւ վարսամ մի ահաւոր զհեղեղաբեր հրաշէկ արտունն  
 Հոսեալ ճօճէր սպանանալից յաշեարհակուլէ համատարած :

'Կահապետրն 'նոյ նախնի բարեպաշտօն արգարութեան  
 Հայր երկրորդ՝ Իւրովքն եւեթ ընդ տապանին լատտ եւաւցարի  
 Ի ծանծաղ ելանէր յարեգնաճնմ Մասեաց զազաթն :  
 Ուր 'ի սեղան արգարոյն բոլորանուէր ողջակիզայ  
 Հուր յերկնից հատեալ թափեալ ըզպատարագան ուտէր բոցով,  
 Եւ զքըլեոճք փըրկեւոցն Էին գօտի ծիրանածունն

Կըշիւ հանգեալ նըշուկից արեգականըն ցլօ հատեալ,  
 Սըփոեալ կամարանայր իբրեւ զազեղեն լայնալիճ,  
 Զէրգ կամուրջ անեղաշէն՝ որգւոց մարդկան ուղ ընթացից  
 Ելանել յազգից երկրէ 'ի հաշտութիւն սուրբ անմահին :

Անք 'ի մարմանգս Ակոուայ հայրապետին ծաղկաւետեալ  
 Ուրք ծիրանի ողկուղիւք զուարճանային յակընթափայլք .  
 Եւացեալ տաշօք խազմըղով, անապակաւ պարզեալ փըրփրեր :  
 Յընծայր սիրտ ալեւորին, զամրեալ զըւարթ լի բաժակդ  
 Զէրանուանս ալեզք ծաղկեալ 'ի քաղցրաբուն խոնարհէր նինջ :  
 Զարթուցեալ երկնաւոր տեսլամբք՝ զանէծան աստուածուսոց  
 Արձակէր թուք 'ի ժպտիւրհ խըլըրգենի լըրբենի գէմս  
 Լէպեշտի կըրտսերոյն իւրոյ Քամայ եւ ծընընգոցն ,  
 Երկնից յաշայ ելանել անկեալ յէկն սուրբ երեսայ ,  
 Ի Սեմայ եւ Յարեթի մըտանել լուծ ծառայութեան :

Ընկայից անտի գազուձք հատուած 'ի գաշտըն Ընններայ  
 Անցանէկն կանգնէկն զամբարտակին բուրդըն կոթող  
 Ընդգէմ երկնից , այր բարկութեան բըրգեալ հազմ հարթ գընէր գետնի ,  
 Եւ միաշուրթըն լնզուաց յանկրցելի ծըւէնս հերձմամբ  
 Պատանաւք յանհընարին , եւ այր զարամբ յազմուկ 'ի շփոթ՝  
 Յէր ընդ ջեր ելանէկն յերկրին 'ի կայս հազմահողով :  
 Կերբողթ վայրազըն վերագ՝ բարձեալ յաստեգս ակն ամպարիշտ ,  
 Գըրլուկ շարժէր եւ բազուկ յերոց վերայ հոնացեղից : —

Յայն տեսիլ՝ հայրըն հայոց , հուր բոց ընդ աշտըն ցլօացեալ,  
 Յազգերէն ձըգեաց ըզուրն եւ զըրնաւորըն հարկանէր ,  
 Քաղցրաժըպիտ թէ Զըւարթունըն շարգելոյր զաջ գիւցաղին ,  
 « Զայդ մի 'նդ ուրուս , ասելով , այլ ճըշմարտիւ 'ի Ռըշտունիս : —

« Մինչև ցայսր , յաւել Սերովըն , հասարակաց մարդկութեան զարմ ,  
 Մի տուն եւ մի ազգասոհմ 'ի մի սըրահ նըկարակերտ :  
 Ատախ անգը՝ յանսահման յանթիւ գահլիճ արոհի տաճարդ  
 Ըստ լնզուաց իւրաքանչիւր , զորոց ահա 'նթեանուս զսնուանս  
 Ի գրանգեացըն բարաւորս 'ի լոյս ու 'ի մութ քանգակեալ գրողմ՝  
 Ըստ լուսաւոր հանգիսից կամ խաւարին գործոց իւրեանց :  
 Կտի գրոհիդ յարեթական ճակատագիր փայլէ եւ բախաց՝  
 Եւ 'ի նմս նախամեծար քոյոյ տոհմիդ՝ յոր մըտցես արդ :

« Թէ նախէքն արգեանց իրաց էր ճըշմարտ հասաստութիւն ,  
 Կոյն ապա եւ ապանիքն՝ որ յառաջոյ քեզ պատրաստեալ :  
 Բարիք , թէ կամակար կացիլիք մըտք գու եւ յետինքդ  
 Յառաքինի ճըգնութեանդ արիաքար մըրցեալ 'ի մարտ .  
 Եւ շարիք , թէ վէհերեալ՝ ըզբաշուութեամբ եւ դիրաւամբք  
 Եւ զսիրով հայրենեաց վատախտարակք անէք ապախտ :  
 Յեղբուց որք յինքնիճեան կամս ապաստան կան յաստուածուստ՝  
 Զայս պահին պայման անշարժ , զի պըստեաց՝ պատժոց կըշիւք

Ընարող կամացն արժանի յարգարտեմա չափին նըժարս :  
 Եւ զոր ցայսր տեսեր, չէր ինչ լուսոյ բանից կարօտ  
 Առ մերձ 'ի քեզդ ունելոյ զանցից իրացն ըզքիշտօակ  
 Անաբօտ կերպարանօք ծանօթական գուշակաւոր :

Իսկ որ արգ ինչ առաջիգ կան հանգերձեալք՝ եօ պատմեցից » :

Ձայս ասացեալ եւ շարժէր 'ի մեծ մի գուան ոսկեաձայլ,  
 Յորում էր ՀԱՅԿ 'ի ճահատն ոսկեքանդակ գրտմալ գրծիւք :  
 Ի ձրգել ձեռին Չուարթնոյն յաղխս երկբաջիկ զըննափականն՝  
 Ինքնին բացան, առաջին երեւելով Հայոց գիւանն :

Ի մուտս անգ ետես վեհազն ըզճերունի հայրն թորգամ,  
 Ձի զհարազատն Աբքանալ աղու շըրթանք եւ իրաւամբք  
 Ողբեալ արձակէր յիւրօձ զծովովն հիւսիսի,

ՁԱյրատան հայրենատուր սեփականեալ յինքն զաշխարհ՝  
 Բերս անուն եւ 'ի փուսս յորջորջելով տուն թորգամայ :

Անտի անգրը նըկատէր ահեղ սկայից ճահատամարտ,  
 Դաշաք եւ ձորք յարանց հեղեղս թաթմաւալ, սարք 'ի բոսոր,

Ախոյեանք ըսպառազէնք թանձրաթմաւալ զփմաւմբք տապատս :  
 Կոյս մի վեհ արփիտգեղ 'ի փայտակոյտ մեծ խարուկի

Մերկանգամ կապեալ, յոր ալ զըժոխազէն հարկանէք հուր,  
 Եւ շողայր սուսեր անգութ 'ի պարանոց մարգարտափայլ :

Գեւաւ արի սիրտ քային, 'ի գող եղև թէ զինչ իցէ :

« Ձոհ մի մեծ, ասէ Բերովքն, յազատութիւն ելցէ սզգեդ » :

Հայրական միտքն յայնժամ նըկարեին աչացն հանգեղ

Ըզգուստոր իւր սիրասուն մասնեալ 'ի ձեռս փրագին,

Թեպէտ եւ ոչ նըշմարէր ողջն զերեսուն կիսափծ :

Ձհայրագութ աղեաց խորով ոչ հովեցին արաստուաց ուղիք :

Բայց լըւեալ ապս կրգին 'ի թարգմանէն խորհրդակիր

Անօրինեալ ըզփոյն առ հայրն, ոգի աւնոյր հայրն Հայոց,

Միտքն առ իւր ասելով 'ի գրստերէս քաւ այդ վընաս :

Եւ ետես անգէն ըզնա յափըշտակեալ ընգ ամբս երկնից :

Ոչ յամեալ 'ի տեսիլն՝ անգրէն գարձոյց ըզնա հրեշտակն,

Եւ եցոյց այնուհետեւ աշխարհ մի մեծ շէն եւ խաղաղ

Յալեւոր Մասեաց սարցն հօք հոփանի լայն տաւաղեալ :

Արօպք 'ի հօտ լուսակիցն, 'ի բառաչոտ ծածկեալ անգեոյս,

Ահօք փն փն գեղածրփեալ յասկեղարսից փունջ ցորենոյ,

Փայլ երգին երգին առեալ այգիք յողջուղաւէտ ուս սաղարթուն,

Եւ 'ի կութս եւ 'ի հընժանս անոյլ ուղեից զըւարթացեալք :

Դրբախաք եւ զարաստանք ծաղկեալ պարտեղք բուրաստանաց

Յերանգ երանգ ծիրանի, յանուշահամ հասոց 'ի բոյս :

Մարգախիտ քաղաքք եւ գիւղք, շէնք օրինք հանդարտացեալ

Հընչեին 'ի պարս եւ յերզրս հարսանեաց կոյս ամբից,

Ի մընչեան պարգիշտ հարսին, 'ի փեսային ձայն իրախձանաց :

« Օ՞ր աստի գակն անգրք բարձ, քաջաղերեաց, ասէ Սերովին,  
Ահա գունդ առայգարարձ պատանեկացըդ դիւցազանց,  
Որ աստուած յասպարիզէ մարտիդ գընան սրփովն ընդ Սայլն,  
Եւ լընուն ըզփիեզերս, որդիք են քո Լորդուց որդիք-  
Ձանարինն աշխարհակալ ձրգեալ բազուկսն ասրածեն  
Մինչեւ յԵրասխ ուղիսալուր յորձանահոս կարկաջածահ,  
Մինչ 'ի մէջ երկուց ծովուց եւ 'ի Վաւկաս սառամանուտ-  
Հարազատ Թորգոմական բերեալ արեաննն հանգուցիւք  
Առ քո՝ հորդ եղբորորդեակս, ընդ որս սիրով մըտերմական  
Համատոհմի գաւակօք ազգախառնեալ լինիցին մի :

« Անդրանիկդ 'ի մէջ եղբարցնն գիւցազանց Արամանեակ  
Աւաջին ինքն հասանէ 'ի սեփական լեռնն ազգային  
Սպիտակափառնն Մատեաց արփիաձեւ՝ գըլեոյն 'ի շուք,  
Եւ մինչ յեզր Երասխայ յորգահեղեղն կարկաջից :  
Հայրաբարն իշխանութեան անալէկո՞ծ խաղաղութեամբ  
Չազգն ուղղն միապետեալ, եւ քաջութեամբ լի հանձարով  
Հըզօր եղեալ անուանի չորեքծագեան դիմաց 'ի սփիւս-  
Մինչ զի գո՞դ, որ ոչ գոյզն է խընդութիւն սրբաի ծնողի,  
Ըզհարբն իսկ զանցուցեալ ըզգիւցազամբ՝ առ արտայքինս,  
Ձանունն եւ զհովանին սրփոնեցէ մեծ գազգին գըլեով :  
Եւ կարգաց աստուածապաշտ եւ հանգիսից բերեալ նախանձ,  
Որտէ միակրօն ուխտից նուիրաց վայր եւ սահման,  
Եւ զանիտու յորո՞ձս 'ի լուս՝ խորհրդարանն սրբանըւր,  
Տընկեով սազարթագեղ զհովանաւոր սօսեացն անսառ-  
Անդ յափին 'ի հայկական հըզօր գետոյն գարեւանդի,  
Որ անուն ժառանգեցէ զըքնաղ Թոռինըդ զԱրմաւիր :

« Ոչ այդ եւեթ եղիցի պարծանք Թոռինըդ սիրայնոյ  
Որ 'ի հօրն եւ 'ի Թեւոցդ արդ հովանի գերդ գաւազան  
Ընձիւղեալ նորաբողբո՞ջ շառաւիղեալ վերաթեւէ-  
Այլ յորժամ հասցէ յարս, եւ յինքն առցէ արիապէս  
Չաշխարհինն երասանակս 'ի գողգոջուն հօրնն ձեռաց,  
Դիտութեանց եւ արուեստից կենցաղօգուտ աշխարհաշէն  
Հայր եղեալ, զայրարատեանն եւ զկովկասեան գոռոզ լեքինս  
Երփներանդ սառաարակարկառ վիմաց իւրեանց կարծր արձանաց  
Հարկատուս իւր կացուցէ 'ի պերճ պայծառ աւանաց շէնս,  
Ի կառուցըս բերգերոյ ամբոցայնոյ եւ զըղեկաց,  
Ամբարտակաց եւ բրդգանց աշտարակաց երկնածայրից,  
Չարգարին տունք, տպարանք եւ ձեմարանք եւ հրասարակք :

« Արաւել քան զոր յիւրմէն՝ նախաշակիլ յորգորական  
Օրլեակ կացցէ զկընեաց 'ի յօրինուած պէսպէս գունից-  
Եւ նախ՝ հայրանըման որդուցն իւրով՝ Մմտախայ,  
Չոր կարակին, լար եւ կանգուն ճարտարութեան յաստի մատունս

Ազանես 'ի մեծածախ հաստահեղոյս եւ հոյակապ  
Ի կերտուածս ամենազեղ եւ պատարուն գերգաստանաց  
Պարապեալ 'ի լայնանիստ աստուածային Մասեաց ստորոտս ,  
Որ անուամբըն վեհազին մինչ յաւիտեաննս պանծասցի :

« Բայց ոգին հայրենագութ եւ կրօնասէր յաւեաց ծերոյթ  
Դարձ աննէ աւազիկ 'ի հայրենին իւր բուն օստան ,  
Եւ ընդ հաւուն սիրելոյ ճօճեալ սօսեաց պերճըն ճեմոց  
Ընդ հովանեաւ 'ի նուիրական վայր պաշտամանցն՝ յօգ քաղցրաբոյր  
Կարօթի սիր շնչել , եւ անդ ըզբուն հանգչել մահուն :

Ո՛հ , մի մայրոյդ հովանիք թառամեցին քաջիդ 'ի գլուխ ,  
Եւ ծաղիկք ծիրանիք պարունակեալ պրտակեսցեն :

« Զհիւսիսի լըճին ակունս տես անգր 'ի բայ խրունեալ շինիւք  
Եւ գեղեցիկ օրերով , յորս 'ի թռուսնսք պատանիք

Տես դիարդ նազի խայտայ սեդ եւ անձնեայ եւ գեղազէ ,  
Գեղեցիկ հօր շառաւիղ գեղեցկազոյն բողոնեալ զաւակ :

Որ 'ի հարցն եւ հայրենի առաքինեաց պայծառ հանգէս  
Յաւերուցու եւ զհանձար առատութեան սրբոթի , մլտաց ,  
Բղէզովի ճոռոսըն ճոթի եւ ըզբանից կորովութիւն :

Աւազիկ կայ պերճաբան յառննի մեծ հրապարակի  
Խուռնութաց ամբոթից , որ կան յակճիւս եւ յոան 'ի մտան  
Յարուցեալ 'ի տեսանել եւ 'ի լըսել բերանաբաց ,  
Հրապարեալք ըզմայլեալք ճարտարախօս իմաստից յուխն :

« Կապարճք մահաշըշուկ եւ հաստ աղեղըն գրկալիւր ,  
Կըշանակ ոչինչ պակաս կորովութեան ամրոտ մատանց ,

Հընչեն անձինն 'ի շարժել ըզթիկնաւէտ քաջին ուսովք ,  
Բան ըլլար կարծիր շըրթանցն հըզօրագոյն ճայթել շըթինդ

Աւ անըզչամս որոց դամ մի չուժեն բանք իրաւանց սուրբ ,  
Աւ ոխերիմըս զարմին . աղեղըն պինդ լի լայնալիճ՝

Որպիսի ոչ ոք ըզկընի քո զօրասցի լարել երբէք :

Յերեսաց իւրոց փախչին հիւսիս եւ գրունք արեւելից ,  
Եւ անցեալ լընու ծնընդովք եւ բարգաւաճ գաստակերտիւք :

« Յորժամ 'ի լոյս եւ յարեւ ելցէ կենաց այրըդ չբքեղ՝  
Սիք ծըժել ըզհրաշազան վայրիդ , Սիտակ անուն լիցի ,

Եւ պարծանք նահապետիք յաւերժացի տուն սխակեան :

« Յայս վայր՝ անարին նահատակաց ելցեն հանգեղք ,  
Թէպէտ եւ ոչ անքիրտն . այսուհետեւ արին եւ սուր

Յեզըր տեսցես վեճակեալ հայրենատուր քում աշխարհիդ .  
Այլ առ ազգ օտարածին , եւ ոչ որդւոց քոց ընդ իրեարս :

Ամպարիւռ այս կատաղանք մարգախոշոշ եղբայրազաւ  
Առաջին մարգասպանին՝ ոչ բնաւ երբէք եւ ոչ ուրեք

Ի տոհմիդ քում հարազատ երեւեսցի արեանառուս :

« Ո՛վ է գա գիւցաղն անպարտ , որ սըրածոխչ գեր քան զարծուի

Սաւառնեալ խոյացեալ 'ի հոլաթեւառն յաղթուծեան ,  
 Եւ 'ի Թոփա երեքթեւեան սլաքաց հընգից բիւր աղեզանց ,  
 Կախանձու հայրենեաց ւազցի սլանայ յաջ եւ յահեակ  
 Վանեկ զհէն օտարամուտ , եւ ըզսահմանսն հայրենիս  
 Եւ զեզրուն աստուածաշնորհ ըզհայկազեան Թռուցեալ տանեկ  
 Ընդ հիւսիս եւ ընդ հարաւ , մուտս յարեւու մինչ յԱլիս գետ :  
 Ահն 'ի Թիկոնս Թըշամեացն անկեալ պընդեալ հինահալած՝  
 Փախըստեայ տանի զվերագս հոյն մինչ 'ի ծոնն ասիական :  
 Արամ անուն սիգասցի քաջիգ յերկրի 'նդ արեգակամբ ,  
 Յարամեան անուն սարսեալ օտարք ըզնոյն յազգս հաստատեն .  
 Իսկ քո աուն , սիրտ անմուաց , 'ի քոյդ հայկեան պանծայ կոչումն :  
 Քինացեալ ասորեստան ելեալ ջընջել ըզհայկեան ճետ ,  
 Սասանեալ նըստի յահէն , շնորհէ զըլնոյն շուք տալարօ :

« Կա զարեամբ քըրտամբ գընեալ զեազաղուծեանն պարունակ  
 Ոչ ընդ վայր 'ի հեշտասեր զինչպիտուծեան վատնէ կորուստ ,  
 Այլ 'ի կարգաց պետուծեանն 'ի բարեգորգ պերճ յօրինմունս ,  
 Գիտուծեանց ուսմանց 'ի կիրթս եւ հայրենի ճոխ զբարուծեան .  
 Ոչ բանիւ եւեթ՝ որչափ արձանս 'ի քանդ ծաղկեցուցեալ  
 Ի գըծածըս վայելուչքս տոհմային նըշանագրաց .  
 Չորս եւ մինչեւ 'ի վախճան կալցի անձուկ սիրով յաւեժ  
 Եւ զթաղեալն յաւերածս իւր յարուցեալ եւ նորոգեալ  
 Պահեացէ գեղայօրէն յաւիտեան ազց Թորգոմածին ,  
 Ի ճըղքբիտ հանեկ պատկեր ըզբանաւոր զչաստից ծընունդ ,  
 Խօսել ընդ աչս , ըզսիրտ եւ զմիտըս նըկարել գեմ՝ յանգիման .  
 Ձանմըտունչ ոգւոցն ձայնս յերկայն անեալ 'ի շունչ ու 'ի հունչս՝  
 Աւաքել առ հեռաւորս եւ յետ մահուն իսկ բարբառել :

« Յ՞ բանակքդ արշափն ազանեգրօք 'ի հարաւոյ  
 Յայս կոյս լերանց Թորգոմայ յարուեստական գիմեալք մարդէ .  
 Այրասիրտ եւ կապարճեալ բամբէշն 'ի գլուխ գընդի նոցա  
 Հեշտ պատին եռացմամբ մարգըրտագեղ լանջքն ոււուցիկ ,  
 Այտից շող , աչք ազանոյ վառեալ 'ի լպիրշ հուր անմաքուր :  
 Դարձեալ սեր բաբելական տըռփանաց , քաջըդ , միւսանդամ  
 Մըխի յաշխարհ քո զինուք . ըզքեղ , Արայդ , ըզքեղցիկ ,  
 Ըզքեղ խընդրեն՝ ոչ սուրք նիզակք , այլ բազմաբիւր բուռն բազուկք ,  
 Բազուկք տիկնոջն մոլեալք 'ի վայելուչ գեղ հասակիդ ,  
 Կարկանտեալ սիրոյդ փոխան ըզտերուծիւն աշխարհակալ :  
 Գոյժ 'ի քո գոգոյդ յերկինըս զըգուելիդ արկանէ Կուարոյդ  
 Գիրկս ըզքեւ վարգածըլիս պատեալ յիրանդ եւ պարանոց ,  
 Սակայն քո զայնալանջ եւ գգեղեղէշ կուրծագ ամհհի  
 Ի գոչել մարտի փողոյն առեալ 'ի ջերմ ծոցոյ նորս ,  
 Ի գըրկապինդ գորովոյ գեղափըթիթ քաջըր որգեկիդ ,  
 Եւ մասնեալ 'ի սայրասուր ժանտ երկաթոյն սլաքեալ ժանիս ,



Աջգտնեալ առ սուրբ սիրով ըզգաւազան միահեծան ,  
 Անկանխս, սրբառէր քաջ, եւ ողջախոհ առաքինի .  
 Ոչ յարեանդ իսկ շիջուցեալ ըզկաթոգին բոց հրաբորբոք,  
 Որ յանգամըզ անտրին քան յառաջից կաթեալ խանձեր ,  
 Մոլեգնեալ յաւիւն ցնորեալ՝ Յարալէզ գէցն ածեւ 'ի գիրկս ։ —

Ատաննօր սիրա գիւցազինն աղէկիղեալ գորովագութ ,  
 Եթէ զմահ վասն Երկնից եւ իրաւանց արգարութեան  
 Եւ առ սէր քաղցր ամուսնոյ՝ կարէր գրել 'ի լուսառութիւն ,  
 Համարէր եւ զպատանին քան զամենայն հէք եւ եղուկ :  
 Այլ խրախոյս բարձ Զբարթունն . — « Ո՛վ գեղեցիկըզ վեհազանց  
 Զաւակ մարմնով, արփային հոգևով ծնունդ գեղեցիկազոյն ,  
 Զորով Երկնիք 'ի վերուստ գորովեսցին խանդակաթեալ .  
 Անարատ եւ զու նրմին զերկոսին գեղըզ պահեսցես ,  
 Եւ Գեղեցիկ քեզ անուն յորջորջանաց կազցէ պարծանք ,  
 Մանաւանդ առ գեղեցիկ եւ սուրբ մահուն քոյ յիշատակ :  
 Ընկալ, ի՛վ, ընկալ այժմէն ըզնախահօրդ եւ զիմ՝ զարմանս .  
 Ոչ կազցի անպատուհաս անկեալ արիննըզ վարդազուն ։ —

Ընդ երկուքիւն լուսութիւն յայնրմհետէ խաղաղութեան ,  
 Դարք հանգրստուէտք առաքինեացն քաղցրընթացք .  
 Յոր չիք զինուց շառաչիւն՝ չհնչէ 'ի վեպըս քաջազանց ,  
 Ի միանունս ուղից ազգաց լուզին Թեթեւք, ծանունք սուզին .

Ոչ այնպէս անդ, այլ՝ զորմեալ յերանդ ոսկի փայլեն անուանք : —

« Իսկ աստուած՝ մը լեզու, Թէ եւ հրեղէն եւ երկնաւոր,  
 Զարին Թըւել բաւեսցէ մի՛ ստ միտք զմեծ գիւցազունս ,  
 Որ 'ի կիրթ այգախեաց օրինակաց նախանձաւորք՝  
 Զհետ կարգեալ քան աւազիկ երկոյն հանգէպ քո գումարտակ :  
 Մանաւանդ յորժամ այրըդ սեղ եւ տեր՝ քան ըզբնաւս  
 Թագազկապ պըսակաւոր զըլուխ սեպուհ պարծ երեւի  
 Բարձր 'ի բեմ՝ աշտիճանին արքայական ըզկնի կանգնեալ :  
 Արուձեամբ քաջութեամբ հրգօրացեալ գեր 'ի վերոյ  
 Հեշտասեր եւ Թուլամիտ ասորեստան բըռնաւորին ,  
 Վրեժ հանէ քոյովք ողևով զամբիծ արեանըն զԱրայի :  
 Անցանէ զանցանէ զարի նախնեացն պանծանք  
 Մինչեւ 'ի շուք եւ 'ի փոքըս Թագակալ իշխանութեան ,  
 Ի վերայ գոռոզ գըլեոց ահեղ բաղկաւըն տերձայեալ :  
 Ի կորովս արդարութեան եւ մարդասէր սրբոյ խնամոց  
 Կարկառեալ ըզգաւազանն առ ընդհանուր այլազն արքայս  
 Իրաւասէրըս շուրջ զիւրեւ կողմանց կողմանց, Քըմեալս 'ի բռանց .  
 Որ բուռն հարեալ եւ կախեալ ըզնրմանէն՝ կանգնին 'ի փոստս ։ —

Անտի անգրը գիւցազունս յուով տեսեալ Թագապաւձոյձս ,  
 Անէկին աչք նոցա զանց, որքան զի յինքնն զօշոտէր  
 Քաջազն ոք վեհ եւ ահեղ, խաբարիշապեղ երիտասարդ ,

Երեսօք վառեալ վարդից գունեան զըւարթ, մեղուակն անոյշ,  
 Անձնեայ եւ Թիկնաւէտ, առոյգաբարձ եւ գեղեցկոտն .  
 Որ 'ի ձեռաց աննրման խորագիտին աչագեղոյ  
 Արի քեռըն իւրում պրակաւոր բամբռանն Հայոց  
 Զէն առեալ, եւ համբուրեալ ընդ գեղեցկին սիրոյ երգմամբ  
 Խընգրելոյ զքէն վըրիժուց նորա եւ զիւր եւ զաշխարհին  
 Յառնէ իւրմէ, — մի հայրենեաց սեր յաղթական բնուից տրուիմանց, —  
 Սպասազէն վառեալ փայլակն 'ի ճաճանչից շող արփենուոյն,  
 Ի գըրկաց նորա սլանայր անգէն՝ զարի երանան ածեալ  
 Ի նիւս բարձրը բոցաշունչ վարազաթեւ գուժ Վելչապի,  
 Ի ձիւնեղէն սառնաշէն լերանց Սայլին սեգ շահատակ  
 Յարձակէր ընդ արեւելա 'ի տէգ նիզակ խոյացեալ շեշա  
 Աւ Վելչապ մի անարի հաստահարուստ արիւնըուշա,  
 Որ շանթէր գալարէր մանուածապատ 'ի քընթըռնոց,  
 Եւ զեռասայր ըզլեզուն գաւտղ՝ սըլաք սուր խոցոտիչ  
 Արձակէր գէտ՝ գիւցազին, որ 'ի վերուստ էլ 'ի Վելչապն,  
 Եւ հերձեալ զերկամակուռ պատենազէն Թեփամորթ լանջոս,  
 Ի տէգ շամփրեալ նիզակին՝ յարեան 'ի ծով արկ հեղձամահ,  
 Եւ զանմոջ արեանց ծարաւ ժանտին յափոյց յարեան իւրում.  
 Ըուրջ տապաստ անկանէին արիազունդ խուռն ախոյեանք:  
 Գիւցազինն 'ի հարաւ այնուհետեւ սրովարեալ կոյս,  
 Եւ մատնեալ 'ի պարտութիւն ըզբըռնութիւն բարեխական,  
 Զոխերթիմ ըզթըշնամին Հայոց ըզհին առնէր նըրկուն:  
 Յամենայն սոսիաց ազգին առեալ վեժժա այսգունակ,  
 Եւ վանեալ վըրկանգեալ առհասարակ շուրջանակի,  
 Ոչ զահ միայն զիւր եւ ըզհոյն մեծ սոսկալի սարասփական  
 Ի սահմանսն հայրենիս կանգնէր նոցա խըրտուիլ խուճապ,  
 Այլ եւ յայնկոյս 'ի հեռի հելլենաստան առաքէր ծով:  
 Ի հանճար մեծիմաստ, եւ պերճախօս շըրթանց լարիւք  
 Ոլորեալ ըզհանուրց եւ յինքն ըզփրտըս կախարգեալ  
 Ըցնափնեօք հայկազամբ զանցուցանէր զամենեքումք:  
 Իւզ եւ մեղըր ծաւալեալ ծորեին գաղթը, լերինք Հայոց,  
 Կարգօք եւ ճոխումթեամբ պերճապայծառ պրսակաւորք  
 Աշխարհն եւ հանքին արիազունդ առոյգ հասակ,  
 Գաւառ այնուհետեւ էր գիւցազանց Հայոց երկիր:  
 Ինքն արգարեւ ցանկալի արքայութեան օրալ շըշգրրաեալ,  
 Տենչալի գեղեցկութեան, գեղոյ շնորհաց վեհ յօրինիչ,  
 Կըտնդոցաց յաղէբախս եւ 'ի փանդուռնս երաժըշտոց  
 Յերգ 'ի պար գեղաձեմիկ ոտից կուսից, մատանց բամբռամբք  
 Ամահացեալ, կայր գիմօք զուարթատեփիլ, խայտային աչքն  
 Ընդ բախտ երջանկափառ համաշխարհին բերկրապատասղը  
 Եւ ընդ շուք եւ հեշտութիւն Թորգոմասերին արի ծնընդոց .

Որ Թէ պաշտել գիտէին ինչ քան զերկնի Ցէր արարող,  
Ըջնոյն իսկ ինքն ըզգիւշազն տանուին մեծ՝ յանուշա պաշտան :

Ձայս ցուցեալ Քրոմբին, զանունն յայանեալ Տիգրան մեծ երուան

« Հիլան, յաւել, 'ի բքրքմացան լուսաթաղանթ առաջատէ (գեան,  
Վարդապետկ կուսին սիրոյ զըւարթագեղ Առաւօտուն  
Արեգակն ըզծիրանի եւ զհերսպանծ ամբանայ գլուխ  
Ի վերայ ծայրածաւալ յորձանայ ջուրց կապուտակաց,  
Լուծանել ըզտարակոյս տարտամութեան երկանց բնութեան  
Ընդ լոյս եւ ընդ խաւար պատերազմեալ երերածուի,  
Երկինք երկիր ծով անհուն յակնապարար լըրջանան շող.  
Նոյն ծագէ աւագիկ Վահագն արի ճեա վեհազին :

« Տես զխորդ վառի հրաբոց բոսորային յերեսս արին  
Արփախոյլ փայլակնացոյտ աչք, հերովք ոսկեվարեալ.  
Յայն անհաս գեր 'ի վերոյս անցեալ սլացմամբ ամենեցունց  
Արութեամբ քայլութեամբ անեղծախոս շահատակմանց,  
Ձի զբամբունսն գողթնացիս զերգեցողացն պարտասել,  
Եւ զփողոյ համբաւուն լըռեցուցեալ խոնջ արձագանգս,  
Անհասառ զըուցաց ազանց անհզ գործովքն հանգիսիւք  
Տալ պատճառս իրաւացիս, եւ նիւթ պայծառ յաւերժահրաշ  
Ընծայել զարմանազան եւ քըմազարդ առասպելեաց,  
Եւ պատկեր հասակաչափ հրսկայածեւ աստուածատիպ  
Ի պաշտան առնուլ ազգացն հիւսիսի անիւ սարեալ :

« Բիւրուորքք Թորգոմոյ լերանց՝ վեհազնրդ գու Վահէ,  
Ի վերայ գումարիս մակեդոնեան իսլ համբակին .

Եւ 'ի պարտել բանակաց արեւելից ծագաց երկրի  
Առաջի աշխարհաւեր ընգվայրապար գոռ գոռոզին,

Աշխարհազօր ամբոխութեամբ քոյգ հայակոյտ նահատակաց  
Կաս գու տակաւին, եւ ժուժկայլն՝ սիրտ քաջայանջ՝

Ընդդէմ փաղանգահոյլ եւ ձիախրոխան ասպատակի  
Թագակապ զըլիոյն 'ի շուք աւաղակօղ յեղուզակին,

Առ սեր ազատն Մասեաց, եւ անկանիս հրակայաբար,  
Եւսձիկել՝ Թէ ոչ անգլին մեծ ասպարիք լոյն հովանեաւ,

Գէթ յազթանգամ հասակիդ յահեղագոյն մարմնոյ իրան .  
Որ եւ անգ 'ի մահուն՝ առ ոխերիմսն հայրենեաց

Մահ չընէ տեսիլ անհղ, խոժոռ աչաց անգք զայրագին :  
Եւ 'ի հողոյ տապանիդ՝ սրտի բազկի հանես ժառանգ

Ըզվերջին շառաւիղ գիւշազն արեան ըզմեծն Արդուարդ,  
Որ մեծաւ քոյին հոգևով գեռեւըս կայ հանգարժէ

Քաջազն գիմամարտ ընդ մակեդոն պինդ ակոյտանս :  
« Որում հանգոյն Թէ դային ըզհեա արի արբ զորութեանց,

Մընայր տակաւին հայաստեղեցրդ պերճ գահոյք  
Անդրադոյն քան ըզքրասն գարուց աստեղց ճոխ ճախրազայտս,

Յոր բաւեաց առաքինի մեծ հանճարով՝ եւ քաղութեամբ  
 Բարգաւաճ՝ ի հեշտ արեւս արգարասէր խաղաղութեան,  
 Եւ ի շաշին շղթալ զինուց՝ առ հինավանգն եւ առ գոռու  
 Կաքաւեալ միայն եւեթ յարինաճնեմ ճահ սասպարէս:

« Եւ յամայր ամարդ տեսեր ինչ ոչ ՚ի քո հուակ պայազտաս,  
 Ընդ որ աչքդ ակրնկորեն եւ շիկնեցին երեւքդ յամեթ:  
 Եւ որ ծագ ծայրից բարձանց փառաց աղցի եւ ամթուոց,  
 Մինչեւ արիւնդ անապակ խաղայ յերակս երկրիդ պետաց,  
 Ի գըժոխոց ըզգայեւլոյ ժանտիցն երից քո սուրբ կայ տուն:  
 Ի տարրապաշա ցնորից, յաշխարհակալ անյագ պապքոյ,  
 Յընտանի եւ համատոհմ այր ընդ եղբոր պատերազմաց:

« Այլ աւագ, չիք ինչ անմահ եւ անյեղի՝ նդ արեգակամբ.  
 Արեւմուտք խուարեցին ընկլան զարեւ հայաստանեաց:  
 Այլ աւագիկ վերբաթին յառաւօտին լուսածին գրանց  
 Յամենազօր ՚ի ծագաց արեւելից խաղացեալ զայ  
 Նոր նըշքլ՝ աշխարհիկ պարթեւն այր՝ ճեռ արշակունի  
 Ի ծննդաց քետտուրտական զուակ ՚ի քոյգ խառնեալ սերունդ,  
 Ոյր նախահայր՝ յերկինս Սեմ, յերկրի Չըրտան անուն պատուեալ:  
 Փոխի տունն արքայազարմ, բայց աղն արին քո տակաւին.  
 Որ օտար ինչ՝ պարթեւին, ՚ի քում ոգւոյդ խորթ եղբւլոյ: —

Անդ գիւցազնն տեսներ, զի պաշտամանց օտարտեաց  
 Թագաւորն եւ իւրքն երկիր պագանէին. « Չի՛նչ այս, սահ.  
 Մըւընչէր, եւ ընդ երեսս արիական եւ զնհափառ  
 Արտասուաց յորգաժըտակ բըզնէր ազբիւր գառնափժան,  
 Եւ նուիրականն յողբա Արմաւիր վարսագեղզն հեծէր սօտեզ:

Յետս ընգզէմ զարձուցեալ Չըւարթնոյն զաշս իւր զերկնայինս,  
 « Այդ է, սահ, աւագիկ յերկնից ու՛ի քէն օտարութիւն,  
 Չարտուգի անկանել յոգւոյ քումմէ եւ յարարչէն:  
 Պըզժութիւն կուամը գրօշից եւ գեւապաշա մոլորութեանց  
 Իբրեւ գետ յորգեալ էլքէ ՚ի Բաբելէ՝ նդ երեսս երկրի.  
 Բայց ընդ քում երկնահանգէս այժմ արութեան եւ նախանձու,  
 Ախոյեան աստուածընգզէմն յառնել Բելայ եւ Բիւրասպեայ,  
 Ագք քո եւեթ եւ տուն սուրբ ՚ի խոհերաց անտի միտացէ,  
 Մինչեւ կացցէ ՚ի ձեւին ընտրականի քում զուակիդ  
 Գաւազան իշխանութեանն արգարատէր իմաստութեամբ.  
 Որպէս զի եկ Պարթեւին աւանդագրութ տարրատրոփի  
 Յանպաշտօնս եւ յանմահեանս ըզհայկազանցդ հասանել գրոհ:

« Այդ կըրօնք գիւցափեւար ընդ իւր յաշխարհ քո մըրանեն,  
 Այլ լուսնի արեգական իմաստնապոյն եւեթ ցընորք:  
 Բայց ըզկնի հս գան կանգնին աստի անտի աստուածոց լոկք,  
 Արամուտք, հեփեսա եւ Յիւր գիք, Ապոլոն եւ Հերակլէս,

Բարշամին, Կարոյ, Բահայ ընդ Բաթնիքազ եւ Փարսթայ.  
 Ոսկեմայրն Անահիտ ոսկեածինն եւ ոսկեհատ,  
 Աւ Կանէ եւ Աքտեմա, Ափրոզիտէ եւ Աթննաս:

« Եւ սակայն, փոխարէն սուղաճառաճ քրտն գարուց  
 Հարազատ քում զաւակից, եւ փոխանակ պինդ ունելց  
 Ձմարգասեր արգարամիտ բարեգորով սիրտ իւր բնիկ,  
 Եւ զքնատուր աստուածազիծ օրէնան 'ի նոն մարմնաքանդակ,  
 Պահեսցեն ըզնա Երկինք սուրբ յուրաւապալտ եւ յամբարիշտ  
 Ի զոհիչըն նըւերաց՝ 'ի մարդպղեն արեան տպանդից  
 Ի վերայ պրզծաշաղախ գիւաճննձեր բազնաց կրոց  
 Մարգածախ մնէլոց գից՝ արիւնարբու շաղգտկերաց.  
 Ձորս մարգիկ, մերկացեալ յանձանց ըզար գազանուծիւն,  
 Եւ զքնցուցեալ գից՝ վայրենիս եւ մարգախանձս սուսույանեն:

« Աւ նովաւ եւ կարգ մեծ հասաստեացի եւ Թաղի շուք.  
 Արքունեաց, ըսպայից, քաղաքանւոյ եւ աւանաց:  
 Ի հուժկու եւ յեանգուն քում մերմանէզ զըտեալ զաւակք,  
 Տանուտեալք եւ նահապետք ազգի արեանքք քում առուք  
 Ընտրեսցին 'ի բարձրագահս՝ երեւեալ մէն մի Թաղակալք,  
 Թագաւորքն պերճացեալ յազատախումբն ազգայից շոխ »: —

Ետես Հայկ յորեարն ըսկայ մի անճոռնի ստկալովԹխաբ  
 Աւ ծոզուն ապքանաղեան՝ լեառն նըստեալ 'ի մէջ լերանց,  
 Ոյժ եւ կորով անտխար, խոժոռագէ՛մ զբժնէհայեաց,  
 Զուարթնոց հոյք լըսափետուրք յոսկիազէն փազփոզեալ զարգ :

Գեանտքարչ ծանրութեամբն յերես երկրն սուրային գեւք ,  
 Այլ 'ի կոյսս ընկայտերոխս լեռնակարկառ եւ երկնագեղ  
 Անձոռնի հասակացն յոխորտընթաց ամբարտակեալ  
 Ի վերայ հանուրց գըլխոց եւ իրանաց ընկայալանց ,  
 Հրտանուէր զըզըրգմամբ գոռոզ մարտի հարեալ խօշիւն ,  
 Զեռն արկնն, ասպար 'ի վեր՝ զէն 'ի խոնարհ, տեղալ արդունս  
 Մուկրս հրոյն գըծոխոց 'ի Թորգոմնան զընգից կաձառս :

Ի ձայն անհզ բարբառոյ՝ Միքայելի բարձեալ իրտոյոս ,  
 Տիրանուէր բանակին երկնից հրաքերձ զօրացն պեւ ,  
 Դըրգէր յայնժամ մտ յառաջ ըզլըսաթեւ մանկըտւոյն խումբ  
 Ի վերայ Թեւոց հոզմոց 'ի Թուիչս օգոց Թեթեւութեան ,  
 Վահան ընգգէմ 'ի խոնարհ՝ յարձակելոցն սըլաբաց  
 Ի շացումն այլաց լըրբից 'ի շողալեաց ագամանգին ,  
 Եւ 'ի գընգին Ստոուծոյ հոզմնի մեծ ամրապահեստ .  
 Զէն մահազոյժ շեշտակի հրաշէկ շանթեալ կոպիէին Թոսզ  
 Յանգընգագուանգ ասպարաց կումբ, յամուր կորդակաղն գըծոխոց :  
 Անգ էր գոռ եւ բարկութիւն անպարտելի ակոյննաց ,  
 Որպեսի շեռես երկինք յօրէ անտի յորմէ մարտեան  
 Բոցեղէն Զուարթնոց բանակք ընդ ասըստամբ հրեշտակին զբոս  
 Հոռելով ըզնոսա 'ի տարտարոս խաւարակուլ .

Պատերազմ էր անարին, զի ոչ մարմնք, ջիւք եւ ակերք  
 Իին մարտկացն, այլ օգիք եւ ոյժ եւեթ, մահ ոչ ուրիւք,  
 Բայց ցաւ ամօթ պարտութիւն 'ի վերնամարտ անմահ՝ զինուց :  
 Ոչ դք այլ 'ի մարմնագէն զբոսկանէ անտի ետես  
 Զանհիւթաւոր զօրութեանց գումարս գընգիցն գուպարած ,  
 Բայց միայն 'ի հոգեմոուխ սուրբ այլեւոր նահապետէն ,  
 Ոյր աղօթից բոցաթուէչ սըլացեալ յերկնից ի ինչին Թեւք  
 Ըջհրարուն զարմ հրահոսակ ընդ գըծոխոց գէմ գըրծանաց :

Ի՛նչ ի՛ վէպ դալ հնարեսցի ազգ ազգ մարտից, պարտից, յազմից .  
 Բոյլ ի՛ բոյլ երկինից աստեղք թէ աչք էին անդ ՚ի ժամունչ,  
 Տեսանել ոչ բաւէին ըզբնաւ եզեալս յերկուց կողմանց .  
 Սմինայն ծառոց ակրեւք ըլուրք եզեալ համագումար,  
 Եւ հանուր հողմունք եւ սիք՝ շունչ կենդանի խօսել ՚ի նոյնս,  
 Ի հիւժոյ բանիցն յազմեալ՝ ոչ բովանդակ հասցեն շառել:  
 Դու սահայն, հրեշտակդ հայոց, գէթ ՚ի մասնէ գու ինձ ոգեա  
 Զոր ինքնին ՚ի տեղադրն գործեսցր անձամբ դըլխով՝  
 Ընդ մեծի սպարապետին լուսեղինաց գատուց բիւրուց,  
 Մի գնորհչդ զայդ զըլանար սիրեցելոյ քումըդ դրոհի:  
 Բնիշար զորագլուխ սամայելեան ազգիկ վաշտից,  
 Որ ոչ ՚ի գահ դժոխոց, ոչ յարարին ասելութեան  
 Տայր ումէք ըրիկորդք ամթռ աստուածընդգէմ բարձին պատուոյ,  
 Եւ յեա բուռն ՚ի կռիւ յոգոր ընդ անմահին եկեալ յերկինս՝  
 Պարզեմալ զանոռն էր պիղծ զիւր տիւսանեանըն ՚յերբովժայ,  
 Աստուածանալ ՚ի նըմին, տիրել ծագաց տիեզերաց,  
 Ի հոգի եւ յամրութիւն զինու զրահիցըն խիզախեալ,  
 Փռթորկեալ զերդ մուծ միբրիկ զայր թորգաման քաջին յեզեան,  
 Յայր հայեցեալ՝ տեսանէր ՚ի կորովի հասաղլը բազկէն  
 Դիակամբ ծածկեալ ըզգաշաս եւ ըզծործորսն ծով արեանց .  
 Ճօճէր կըշտէր զայր ահա զցրժոխաթոյն նիզակն ահեղ:  
 Ընդգէմ՝ նըմին խոյացաւ հայաստանեայց արի սրովբէն,  
 Ի ձեռին փայլահնահար սուսեր եւ աչքըն բոցալուռ .  
 « Գրոտի արդ ըզքեղ, ասէ, գլուխ առաջին իմ յիսերիմ՝  
 Ոչ մեկունդ միքայելեան արկ ամհին քեղ ահ եւ անձ,  
 Ոչ բարկացայս հըզօրին աջոյ հրացան փայլատակուճք՝  
 Որ ՚ի հուր սանդարամեալս շանթահար զքեղ խանձողեաց .  
 Արդ նորին սաստ այս սուսեր հասեալ ՚ի քեղ վըճարեսցէ »:  
 « Աստ իցեռ եւ դու, կըրկնեաց վիրք հայհոյիչ ոգին յահուրդ,  
 Տապգէ գու շիտիտի, գանգուրագեղ քաջդ վարձակ,  
 Երգեսցիկդ պարաւոր նուագող երկնից ամթռոյն շուրջ:  
 Աղէ դու նախ առ ընկալ զԲնիշարայ զեղարգեան համ,  
 Եւ գեղձան խոսողք վարտիցդ ընդ ազբ գայցեն սաս եւ ընդ խուղբ »:  
 Դիւսխորոխտ անգէն ուժով անդընդայինըն բըռնութեամբ  
 Արձակեաց ըզհեծանըն սըլաքեալ մահաշըշուկ:  
 Ընկալաւ զայն կորովին բազկաւ Զուարթնոյն կուրբ ադամանդ,  
 Իբր ընդ վիճի զապտիկի հարեալ ՚ի բիւր ցլնդեաց փըշուրս:  
 Զայդ ընդ նըմին ահաբեկ վաղակաւորն հրաբերան  
 Էջ կափեաց հրեղէն աջոյն ՚ի խորոխտ կառափնն փերագին:  
 Առ ցառոյն ՚ի գուռն անկեալ՝ մըռնչեաց հարիւր գլնդեց հանգոյն,  
 Կամ՝ իբր ալիս մայկգինըս խառվախուժ եւ փըրփրագեղ  
 Ըզծողըն աշխարհակալ, որ կոշիռնեալ ՚ի մնայլ միբրկաց

Տաղնապեալ կոհակակոծ ընդ ժայռս յափուանն զօշիցէ :  
 Տեղի վայրիկեան ետ ընդ կրօւկ , խածեալ զշքրթօւանս , իւրովն հանգերձ .  
 « Զի քեզ , քաջք 'ի սայր լեզուի , հենգներ անգրէն արի Զուարթօւանս ,  
 Այսչափ յոգի կրտընգոց նըւագածուի հարկանիցէ » :

Իսկ երկնից մեծ զորագլուխ հրեշտակապետն 'ի նմին պահու  
 Իբր հեղեղ ինչ հրեղէն յինքնակալին անգընգոց գե՛մ  
 Շարժեր զբանակն , ինքն յանձնէն եւ 'ի զինուց բոց շքնչերով .  
 Եւ նիզակ ընդ ասպար շիահեալ գի՛մէր յայն գեղուզեալ :  
 Իբրու զլեռանն զլ՛ծմանն նա կայր անգէն սարաւանդեալ ,  
 Ըջագաւթն ընդ երկինըս կարկառեալ զամբարտաւան .  
 « Եկ , ստեր . շէն այդ բազուկ եւ քաջի զէնք ինձ անծանօթ ,  
 Որ եւ այլ ուրեմն երբեմն բարկաճայթ հանգերձ շանթիւք  
 Ուժգնագոյն եւըս մատանց՝ զարբա կարծեաց սատակել գօւնդ ,  
 Բայց ահա կա՛մք աւասիկ մեք տակաւին . հէ՛ կաս եւ գու ,  
 Այլ՛ երկնապարծ գոռողին ծառայ եւ սարուկ գու եւ գերբի ,  
 Իսկ ես տեր միահեծան տիեզերացս եւ անգընգոց :  
 Օրն այն մեծ բարենրշան ընկէց վէճակ ընդ իս ու 'նդ քեզ .  
 Մնազատ ծառայամիա իշխիցէ սարուկ անաշտարէիկ  
 Մտաջի կալ երեւել ինքնակալու թագաւորի » :

Ասացեալ , եւ արձակէր զաշտէն հրեղէն ըզրրբրկոտ .  
 Այլ՛ 'ի կողաց ընկալեալ ասպար լուսոյ սպարապետին ,  
 Մայթաքեր զայն յայնկոյս անգընելի շիահմամբ արեկ ,  
 Որ արեան գնայր ծարաւի մըւընչերով ընդ օդ ունայն :  
 Բարկացաւ քրովքին սըրբոյ սըրտմըտութիւն . « Պանգոյք , ստե ,  
 Երեկնց՝ երկրի նա է տեր , եւ յանգընգոց սանգարամտոս ,  
 Ոյր բանտեսց բազուկ հըզօր ըզքեզ 'ի նմա խաւարարգել ,  
 Եւ փոխան փայլատականցն արդ 'ի ճակատդ տապէ՛ զոյս ,  
 Ի ճակատդ աստուածացեալ , աստուածորդւոյ եւս եզեալ հոյք » :  
 Եւ արձակէ զերկնաձայլ՛ զոսկեկուռ զէնըն բոցաթօնչ ,  
 Ընդ նըմին հազար հազարք եւ բիւրք բիւրոց տեզ եւ նիգակ  
 Արգն աշտե սըւին մըկու՛նդ եւ բոցաթեւ նետից տարափ  
 Հրեշտակափուռն բանակին շքեալ շիահեն գե՛մ զըժօրոց :

Ընկալու Մանգարապետն ըզսոսկալի գեղարգան սոյր  
 Ի լայնատարր ճակատ լեւնակուտակ խրոխտ կառավորին :  
 Իբրեւ բիւր հոգ՛ մըրբրկեալ եւ զգումարտակ ճըշեաց այսոյ  
 Որ բարկաշունչ գոչիցեն ընդ նեզ եւ նուրբ ծերպըս վէճոց .  
 Եւ առեալ ճախր 'ի թիկունըս կոյս զարկաւ զլուսի ըզքեանի ,  
 Մըւընչեաց հեծեծագին՝ երկողքին ձեռքն 'ի ճակատուն .  
 Մըւընչեցին յողորմ թաւանչ եւ խորք խորոցն անգընգափան ,  
 Զի բնաւ զէնք ստուցեալք՝ մէն զափոյեան արկին տապաւան :  
 Միախումբ անդ լուսաթեւ սպառազինացն զումարտակ  
 Զարաշար ըզխաւարուս ռազմն բեկեալ տարածանն ,

Որ վերջոսնին մեծ ասպարեզ՝ այր 'ի հարուածսնն տազնապեալ:

Ի վերացն Անդրնդեհէպեա պատըսպարեալ յարեաւ եկաց .

« Երկնաւոր ազամանդին բըթեցան զէնք մեր այս , ասե ,  
 Զօրաւոր այլօճառք ծն անզցեն 'ի մէջ արիապէս  
 Խորտակել զասպար նոցա , զթորգոմական ճըմել ճակատ » :  
 Զայս գոչէր , եւ առաջնորդ գիմեալ զընդին խրախուսելի ,  
 Բուն հարեալ յափըշտակէր 'ի գիւլ ըզլեանն ինչ ահագին :  
 Խըլեցան անգէն յերկրէ բըլուրք եւ սարք , ոտք , գարեւանդք ,  
 Գահաւանդք եւ հրբուանդանք 'ի բազմագոչ ծովուն արիանց ,  
 Որձաբար վէմք ապառաժք եւ սայրսուր ժայռք եւ խարակք ,  
 Եւ 'ի գլուխ հայկականացն տեղային մըրըկատարափ .  
 Որոց թէ չէր հովանի աստուածամուխ Զուարթնոցն ասպարք ,  
 Այն տիւ յետին էր Հայկայ , եւ մըրցարան պատերազմին  
 Բանակին թորգոմազանց մըշտագիշեր խոր գերեզման :  
 Ի գագիլ զինուցնն թոխլս՝ հայկեանց բացան աչք ւատրնեայց ,  
 Եւ վեհագոյն զօրութիւնք բնութեան՝ գ իրեարս 'ի կռիւ մըրցեալք ,  
 Թէ թէ գլորդ տիեզերաց առ ոտս հասեալ անդ մօտալուտ ,  
 Տապալել համագոյնից 'ի նախասկիզբն անգընդոց վէս :

Թաւամուր նըսեմաստուեր լերինք Հայոց հաստակմունք  
 Երկնաւոր սկայինցն 'ի մեծ բարձեալ վահանս տատանէին .  
 Զոր անդրէն ախոյժ Զուարթնոցն կաշմբուան անյաղթ բազուկ  
 Թօթափեալ 'ի թըշնամիս անդր ընկեցեալ արձակէր կուտ :  
 Էր զի լերինք պատահեալ լերանց ընդ օդս պայթեցին ,  
 Էր զի փրուզեալ ըզգըլթով զըժոխահեա յոխորտ վաշտուց՝  
 Զաւանդէն եւ զջորական խորտակելով անդ առ ետեղ ,  
 Եւ թաղեալ կենդանւոյն կորընչէին անգընդասոյղ .

Մինչ զբրբուել մընացելոցն եւ ապա տեղի ձիգ ասպարեա :

Ետես յետս ընդ կրուկ 'ի կայիցըն նահանջեալ 'ի շտապ տազնապ  
 Սամայելի եւ Բե՛լիար փոխըստական զընդին 'ի գլուխ  
 Ի կռիւ կան ամկաւին լեռնակարկառք եւ երկնաբերձք ,  
 Եւ զայն իրանն յաղթանգամ կանգնեն ասպար եւ մահարձան :  
 Զայն առ իւրան ամէնէր երկնից ըսպարապետն ահեղագոչ ,  
 Հետ ընդ հեա ձեռն 'ի կապարձս՝ 'ի լայնալիճսնն ոսկեղէն ,  
 Մըսանեղ ընդ աղեղն եւ 'ի գըրկացըն կորովեաց  
 Լխածիք զազգոյ մատանց հրացայտ ցատումնն թուուցանել :  
 Բոցասուր հրեղէն նեախց 'ի թըշնամին ընթանայր գետ  
 Զանեղին ուտել լափել զհակառակորդսն բարձրայօն :  
 Երեւաց տեղատարափ հրահոս ուղիւիցըն շառաւմանց  
 Արարտամբ բանակին թիկունս ընդդէմ գարձուցեալ յետս ,  
 Երկնազէն ազդեցութեանց հալածական երթ փախըստեայ :  
 Զօրութիւնն յայնժամ ահեղ ամենակալ արարելութեան  
 Ի բարձանց անտի ծայրից արփիաճեմ զըլծոյն Մասեաց



Եւ ըզմայն իւր առաջի բոց երեսոցն 'ի մարտին գտ :  
 Որոտաց նոցա երկոց՝ յերկոց գիմաց աստուածութեան ,  
 Երկոց առաքեալ ըզինի նոցա փայլաստեալունս  
 Սըրտմըտութեան հրոյ եւ նեաս ամենայտքի աղցն շանթից ,  
 'Նեա մի հըզոր զորութեանց , իմաստութեան մեւ նեա երկրորդ ,  
 Եւ երրորդ նեա այլ՝ հոգւոյ յաւերժ անմահ՝ կենդանութեան .  
 Սպասարարու անգ զըժոխոց խորտակեցաւ յանգընութիւն :

Միջորեկ քամակախոր եւ ունաձայն վայոց ճըշիւք  
 Սոււնաբայ իշխան մահուն եւ Բելխար , գունեք խաւարի ,  
 Ի լերինորն սրանային 'ի Մամրուտայ եւ Գըրգուտայ :  
 Զհեա պընդեալ հասանին երկնախորափոյս յալթօզ բանակք ,  
 Ընդ հրաշունչ եւ բոցափռ բերան բորեք խորխորտոյ  
 Մըղեալ հասն ըզնոսին 'ի զըժոխոց սանգարամես .  
 Անմահին զորապետն առ կուսանն անկեալ նիզափաճօժ ,  
 Ճեպեալ զնոսա տարնապեր արեագունչ իւր պարմանեք :  
 Ցեանալ զի ստուար բանակին նեզին անձուկ խորոցն ծոցք  
 Որ ահագին պատասմանց լայնածիր չոխն պեակքմանք  
 Ոչ բաւեն սակաւին անգընգասոյց կլանել ըզնա ,  
 Ի սեզ հըզոր գեղարգանն՝ որ 'ի ձեւին՝ բախեալ զերկիր ,  
 Փոսացոյց վերապ մի միհ անգընգախոր եւ անյտակ ,  
 Դարահոտ եւ զըլի՛իվայր անգք ըզնոսա թօթափեղով :  
 Եւ հարեալ ոսնատրոփ աստուածազոր առոյգ բարձիւք՝  
 Թաւալ առեալ տապալէ լերինս ըզհեա նոցա զերտեղք ,  
 Եւ 'ի սպառ ըզբոցաշունչ խընու զորհորըս զըժոխոց ,  
 Շիջուցեալ եւ զըզցայեալ հաւրն եւ ըզժուի անգընգային  
 Աղբերարուզին վտակեք ծոփացելովք ցարգ 'ի Գըրգուա :

Յերկնախումբ բանակին՝ հայկեան զընդին գեա պահապան  
 Ի գաւազրուժ զըժոխոց՝ ընդ Հրեշտակին հայոց ձեւաժք  
 Թողեալ վաշտ մի Կապուտոզ լերինն 'ի կողարն մեծանիսա ,  
 Զարգարոց ոգինս առեալ ընդ իւր երկնի սպային իշխան ,  
 Զայն որ յեա զաստուածամարտն վանելոյ սիպից եղեան  
 Ի բարձանց նըստեալ գըլուփս՝ 'ի կտտարածն եղին գետտին  
 Հայաստան աշխարհին արգարութեան աշխոյժ մարտոց ,  
 Սըլանայր խաղայր նորք , զուգապարկց երկնապուտորք ,  
 Որպէս երամս աղանեաց ողբափափառ սոււտանեւոց ,  
 Անգք 'ի ծագս այրարատեան աստուածաբարձ բարձրք Մասեայ :  
 Անգուսա յերկինս ըզինի հետոց անգւոյ կաւայն արարչակիր  
 Թալթական փառք 'ի ձայն աւազափող շեփորայից  
 Ի պէսպէս գեղջեղաձայն նուագս անմահից երաժըշտայ  
 Պերձանօք գեղեցիկանալ գունգ գունգ սողեալ անցանկին :  
 Զի զերկնից եւ զթորգոմայ վանեալ ճակաս արիաբար ,  
 Զսանգարամես զորութիւնս , եւ փոխանակ թողեալ իւրեանց

Ախոյեան երկնից ըզհայկ աստուածազբէժ պատուհասին ,  
Կալ տանել ըզյազթուութիւն , պըսակ առնուլ զանեղծութեան :

Իսկ ըսկայիցն երկոցունց դազանարար խառնեալ ռազմունք  
Գոռային ընդ միմեանս , իբրև հըրգեհ բոցածաւալ  
Տոչորեալ զԹաւուտ խարձից՝ ընդ լայնութիւն մեղեալ շամբին :

Ի ձախուժ Թեւին Կերթովք վիշապաձայն որոտալով  
Չաւնարուեստ զինուց ազգ 'ի գործ արկեալ , եւ յորդորեր  
Չիւրն ամբօս ծովակուտակ զաջոյ Թեւովքն Թորգոմեանց ,

Հարկանել զայն 'ի կողաց , եւ ըզԹիկամբ գալ պաշարել :  
Իսկ արք սկայն մեծըն Քարթլ հանդերձ եղբարբընն գիւշազամբք  
Խրտեւածեալ ըզմանկութեան հիւսիսագունգ արբունն հուժեկու ,

Քաջութեամբ ունին ըզչէ՛մ ըզզըրուանեանըն զուզալին ,  
Չըտալ Թոյլ գալ սքփուել տարածանել ընդ արեւմուտս :  
Չյանգընեալն առհասարակ արկեալ զի ցուրտ հովին տապաստ ,

Ըջիբզտի պատանեալն զումարտակ աննն նըւալ :  
Եւ Կովկաս վեհալն 'ի խուան անդ Թուրտի գիպեալ քաջին ,  
Շընչասպառ ընդ նոքոք անկեալ նոցին ժիր երիվարք ,

Իջեալ հեռի կըտուէին ըզյազթուութեան մըրցանակէն ,  
Ծարաւի արեան նըման սովալըրուկ կըրկին գայլոց  
Որ 'ի մատաղ եղբրուի վերայ 'նգ միմեանըս կօշիցին ,  
Եւ յարեանց բըզնեալ հեղեղ լըւանայցնն զմարմնս իւրեանց :

Ի կըմբեայս հաստ ասպարոցն զէնս յորով խորտակեցին ,  
Քիրան ասպածոյժ վըտակեալ ուտգաներ զանգամնն առոյգ :  
Կան արի նիզակակիցք ըզքանչացեալ շուրջանակի  
Ամհեհայն ըսկայից ընդ արարուած նորանըւան .

Որոց քաջ պատահեալ քաջի՛ տեղի տան 'ի միմեանց ,  
Եւ այլ այլուր արշաւն յարին խանձեալ մըրցամարտից :  
Աւսղ կոյր եւ զաչացու մարգկան երեւք առ հանգերձեալս ,  
Որ զբախտին ոչ նըմարեալ ճակատագիր՝ խընդայ 'ի զուր :

Չի յասակուն 'ի վեր ահա գրոյմեալ կայ քեզ , քաջըզ Կովկաս ,  
Վայրն եւ ժամ՝ յոր 'ի բազկէ Թուրտիք քեզ օրհաս կընքեալ .  
Սակայն չեւ է առ գուրս . 'ի շնորհս եղբօր քում երեսոց  
Դիւշազինըն Հայկայ եւ մեծի այսր աւար պատուոց

Յամեցոյց Տէր , զի քաջին մի լուսափայլ պերճ յազթանակ  
Սիրելոյ հարազատիք մահուամբ 'ի Թուխ ներկանիցի :

Իսկ քաջալն Հայկ 'ի միջի անգ ճակատուն Թորգոմական  
Հայրանըման ծընըդովք , արմենակեան հանդերձ զընգաւ ,  
Իբրև բոց ինչ լափլիզող ընդ անտառաց Թուխս ընթացեալ ,  
Չաւնայն ընդգիմակաց ուտէ զբարեանըն մարդատունկս :

Երկուս առաջ յորդորեալ ըզբոզմնգակ միջ ճակատուն ,  
Հարկանել ըզտօտանեանն յաջ եւ յահեակ Թեւոքն խաղայր .  
Չ'ի մըրաց կասեցուցեալ խորամանգեալ իւր խորհըրդոցն ,

Եւ զքամեան ջրերն յաջոյ թուէ անոռի զբրգուեցուցէ :

Գորովն խոռ եւ Ապահ եւ Գագմոս քաջն արմենահեան  
Առաջի աչաց ծնողացն քան ըզկար խրոխա պատանեաց,  
Քան ըզկար հողածին մահկանացուի շահատակեալ,  
Մէն մի հայկ յահէ ցնորից պակուցելոցն երեւէին :  
Ի բազկէն խոռայ Սուսան՝ Ըահէն անկան պետք զորազուփք,  
Առաջինն սուսերաւ ընդ մէջ հերձեալ փայլահնահար,  
Եւ Ըահէն՝ որձաքար եւ անհեղեք ապառաժիւ :

Ըզճակատն խորտակեալ, ցնդեալ զուզիցն ընդ մէջ յատակ -  
Մարնչէր խոռ . « Չեւ եմ չեւ վրիժուք յազեալ հարադատիս ,  
Ուրուին եւ գուք եւ քաղցր աչաց Արուսեկին լերուք ձօնի » :

Պատանեակն արմենահեան անէ արի նիզակին կուր  
ԸզՎրիւ եւ ըզՄաւուն եւ ըզՎարէն հուժկու մանկոռի :  
Ամհէն անդ Ապահ զհատու վաղակն առեալ 'ի կիր,  
ԸզԿառափնն ճեղքէր ըզՄասխուգայ դաժան սկային,  
Տեղաւ ըզՎին ընդ երանսն խոցոտեալ ընկենոյր ցուրտ ,  
Եւ զասպարն 'հիւքարայ պղնձի՝ լախուլուն պատանեալ  
Ջախջախէր ընդ նովաւ տախտապարեալ եւ զինքն բախցն :

Իսկ ըզհորն գիւցազին ո՞ բաւեսցէ զհայկայ երգել  
Ձըսկային շահատակին եւ զահաւոր բազկին հարուածս .  
Որ զեղք վագր արինարբու խանձեալ 'ի հօս մեծ բառաչառ  
Ոչ ըզսով եւեթ լընու՝ յափուցանել զիտէ զպատուք ,  
Այլ ո՞ղջն ընդ լայնասփիռ սուարած գազանն մտելեան  
Կեղեքեալ եւ ցըրցըտեալ ողողանէ յարեանց հեղեղ .  
Կամ թէ որպէս բարկացայտ մըրրիկ յամպոց սուր ոտաուցեալ  
Ի կարնուտըս մայրեաց, կապուտ թողեալ մերկ կողոպուտ  
Ձստողն գեղ 'ի սաղարթուցն եւ 'ի մըրգոց, եւ անցանէ  
Հասանել ասպատակաւ 'ի մեծ ոճիր եղեանաւոր .

Պատանիք քաջայանդուզն ականաւորք ընտիր ընտիրք  
Ի հողմոյ սըրտըտուծեան զինու սկային թօթափէին :  
Այլ այն չեւ եւս էին գործք նահատակին այնմ արժանիք ,  
Փուծայր 'ի մեծ ինչ՝ ժաման յարեւ քաջն բեկայ լինել :

Յաջում թեւի տիտանեանց եհաս սակայն յուսոյն իւրոց ,  
Ում գէտակըն կալեալ հայէր արի սկայն թորդոման ,  
Ձի բեկաւ այն առաջի բուռն ըսպային եւ Առնախոյ,  
Որ յայնժամ զըրուանեանցն յառաջագէմ շահատակեալ  
Խառնամուխ 'ի քուշացիան իբրեւ ըզգեւ մի կատաղ՝  
Ոչ միայն մէն մի զըսկայս, այլ եւ զըրկատարն գիմակացս  
Հարեալ փուղեալ տապալեալ 'ի սուր 'ի տէգ եւ 'ի նիզակ ,  
Ի բազում արեանց նախճիրս ուողանէր զառքստորեան ,  
Յամենայն վազ գիմազբաւ մի մի այլր գի արկեալ թաւալ ,  
Եւ վազիցն ոչ գոյր չափ, ոչ օրինակ եւ ոչ համար ,

Զի Վլաստամն իսկ նախանձորդ պարտեալ յառնէն զանձն իւր ետես :

Եւ Բիւրասայ, որ անդ էր այն օր ինքն անձամբ, եւ այրուծին Ղեկըսաւ առ սակաւ սակաւ ընդ կրուկըն նահանջել

Յերեսաց կարկըտահար տեղատարափ նետոյց ւարդեանց :

Անոր ՚ի դէպ եհաս ժամու եւ հրուգին քաջ իւրով վաշտուն, Փռւծացեալ ինքնին հանել զանպարտ արեանցն ըզքէն վերիուց

Չանօրէն մարգազոհին, զաչադեղոյն տառապանաց :

Իբրեւ կորձ կորակառուց լիամագիւլ յափըշտակօղ խոյանայր թեւատարած սլացեալ զընդան ՚ի կիւսահմայն .

Հատանէր ըզնա յաջոյ թեւէն անձուկ իւր լաշկարան

Ի ստորոտ Վապուտողին ՚ի մալլ մայրիս վտարական,

Որ եւս ՚ի մուծ թաթաւեալ աւուրն էին կարճատեղոյ :

Կա զթիկունան անդր ՚ի պուրակս հաստ արարեալ՝ սրբտապընդէր խրախուսէր որ ինչ զիւրեան արիք ուրիք մի սորորել,

Վալ ՚ի կայի անյողգողք՝ ունել զչընդին հրուգենայ գեմ :

Բայց վեասնդեալ տաքնապի յաշիոյժ քաջացն կորովաց :

Արք զօրուն, որ զիթաւալ ընդ զառ ՚ի թափսն անկեալ խաղան,

Ընդ նոսին եւ քաջն Արեշ արիաբար կըռուեալ անկաւ .

Ո՛ր կապարձըս զարձուցեալ՝ առապարաց, պրակաց, ձորոց

Յեր վայրացան ելանեն . մընայր միայն մերկ ամայի

Նրիւք սրբտեայ եւեթ արամիք ամեհագոյն զըլտապահօք :

Դիւթական արուեստիւ արբանեկին իւր զորութեամբ

Ներքուստ բոց ՚ի յատակացն ՚ի վեր բըղնեալ զբժօխական,

Հըրգեհօք յական թօթափել հարեալ լուցին զմայրեացն անտառ :

Ընդ նըմին եւ ձայնք տհեղ գզորգից թընդից եւ սասանմանց,

Ճիւ բարձեալ բոլորաբար գոչէին վեմք, լերինք եւ բլուրք,

Եւ հանգոյն իմն ընդ միմեանքս կոծելով հերձեալ ձայթեն :

Ինքն մտորակ ՚ի մըրրկոսն երիվարին արարեալ կուշտ՝

Անցանէր ձիարշաւ ընդ հուրն եւ արքն իւր երեքեան :

Հրուգենեան զընդին տեսեալ զայն, շքրոուցեալ յահէն հարթչին .

« Լերուք յորգին զօրութեան, շահատակեալ գոչէր հրուգին,

Ժիր լերուք, արք, խրախուսեալ յԱստուած Կոյի եւ ՚ի մեծն Հայկ :

Թե զքժոխոց իսկ անգանգս արար Բիւրասայ իւր ապաստան,

Օ՛ն եւ միք ըզինի նորա, նըմին անգէն պատահեսցուք » :

Իփղախեալ սկայից՝ քաջաւըն ձիաթափ անկանեկին

Ի հրատ անդըր բորբոքեալ իբրեւ զարծուխ յաղթ մեծաթեւս

Որ ՚ի մեջ փայլատականց ամպոց առեալ ձախր ՚ի թըւան,

Եւ ընդ ոլորտըս մըտեալ շողացեալ յօգրս խաղայցին :

Գիտէին ինչ ոչ ինքեանք, սակայն հրեշտակն Հայոց արթուն

Եւ Չուարթնոցըն զօրութիւնք, աներեւոյթ գառք լուսեղէնք,

Որ կային յառեալ ՚ի կռիւն անգ ՚ի գիտի Վապուտողին,

Մափաձայն եւ բերկրաբերձ ողջունեալ զերթն արիսական,

Ըզգահանարն զերկնաւորս արի արանցն արկեալ զքրքեալ,  
Տանկին անգլանելի ամրածածուկ հոգանացեալ :

Ի հնոցէ անտի արտաքս այն ինչ եղեալ եւ հասանն  
 Ի բերան նեղ եւ անձուկ կըրձի մոլ խորածորոյ  
 Յայս եւ յայն կոյս սեպացեալ ապառաժուա քարածայսիք :  
 Անգէն ուշ 'ի կուրծս անկեալ յարեթաղարժ 'նահատակին ,  
 Փախըստիչն կըրկնուղից զարան 'ի վերայ կացույցանէր  
 Յեւս 'ի մուտըս կապանի կըրձին 'ի գահ ըզցուշութեան .  
 Եւ , « Հըզօրիչց Հայկոյ հաս ինձ 'ի Թիկունս , գոչեալ յերկինս ,  
 Ըզգազանն անգառաղից արգել փակեա մեզ 'ի կախուշս » ,  
 Եւ մտորակեալ զերիժարն օգապարիկ եւ ամենի՛  
 (Նդ խարակն 'ի վեր Թաննել , հայել ընդ որ զըտանիցէ ,  
 Ելաներ կանգնէր 'ի քիւ մի մեծ վեմ պազանձաւին  
 Ի վերայ կարկասեալ անգընգային ինչ խորագոտի :  
 Չգիտնելն անդ 'ի Թափան ըզԹիւրտապին կիւս Նժգահակ ,  
 Եւ զգարահաս դահալժ ընդ վտխ հոսիլն մի ասնկ :  
 Գոյ պըսցեալ ընդ օգս՝ յարեւըն կախարգին սպառնալով սուք .  
 Ի Զուարթնոցն հոգիանիւթ բարձեալ 'ի Թիւս իջանէ գոյ  
 Պէս գունակ ընդ արամ գետին եւ ընդ յատակ ինչ զտա 'ի վայր :  
 Ի տեսիլ ահագնադոյն ըզբանելիւս եւ մալութեան  
 Պակուցեալ սասանեալ ընգարմացան կիւսին համհարգք ,  
 Պաղեցան երակք նոցա , երիվարոց կապեցան սոք ,  
 Յերեմից զք սպառաղէն համարեին իջեալ 'ի վեժ :  
 Չերեսին 'նա Թիկնապահարն 'նախ 'ի սայր մաշեր սրբոյն ,  
 Ապա կըշէր ըզիղակն 'ի քաւգէին սիրտ ամպաղէշս :  
 Ի սասուխն հաստարուն երկոյն հացւոյն զօրից երկից  
 Չարհուրեալ սոսկապէս զամբին 'ի վեր վազէ հրաշունչ ,  
 Եւ 'ի սիրտ իւր ընկալեալ զոչ իւր հարուածըն՝ տարալժ .  
 Տապալի եւ Բիւրասպ յերկիր յահեղ զըզօրգեալ Թունդ :  
 Մնեացեալ եւ յամիրայն յուտոյ հատեալ յօգնութենէ ,  
 Գեհնահաս բերանով եւ բարբառով զըժոխալուր  
 Զամնայն սոնգարամետս եւ զօրութիւնս անգընգական  
 Ի Թիկունքս ձեւընաու տաղնապելոյ կարգայր ժամուն :  
 Եւ զարուեսարն զընտանի զնըշանակերա 'ի ձեան սոսկալ ,  
 Յուպ սրխրապարժ մօտ Թէպէտ չէր , այլ՝ մըշտ առ իւր ստաման մանուկ՝  
 Եւ ընութիւն օձախան օձորովոյն եւ օձամուխ՝  
 Ըստ համբաւուց վազեմի ստուգապատումն աւանգութեանց ,  
 Իբր անկեանն էր 'ի գետին՝ վշապանայր անգէն Բիւրասպ :  
 Երկայնէր ուն եւ սոսորդ , զըլուխ եւ վէհ արեանց բերան ,  
 Եւ 'ի նմա մահու ժանիք , աչք 'ի ճակատն ըոցապիկք .  
 Հանէր Թեւըս մաշկութեւս իբր ըզնաւոյ ինն պտապատս ,  
 Զ իրան՝ ըզգիտր քընթընեցոյց , 'ի քառընթաց արներ Չիրանա ,

Ըջարան քարէր պարոյրս խոյտարդէա մարմնոյն 'ի ակա .  
 Գայարեր շանթեր մերնէր , մերթ ըզչետին խարաղանեալ ,  
 Մերթ 'ի վեր կանգնեալ ողորկ աբաունն իբրև նոճ հաստաբուն ,  
 Մինչ յամպ օգոց սուսանին թաղանթամաշկ վարազաթեք .  
 Ընդ քիթս եւ ընդ որկոր զբժոփացեալն հազադի  
 Հուք եւ բոց շնչէ ցանկ հրահոս լերին որպէս փրօպ ,  
 Յաշացն ահնակապճաց հասանէին փայլատակուհք .

Եւ վշապք այլ եւս մանունք յուսոցն ըզվիզըն ամարձեալ  
 Ըբէին ճրջօղ սուլիք՝ ճօճեալ լեզուս սուք եռասայր :

Սի՛ն զերախըն խոր բացեալ՝ կամի կլանել զարին հրուգին ,  
 Որ ձրդեալ զտէզն 'ի լանջաց դեմթաւալ անգրուվարին՝  
 Սկայարար հարոյր 'ի զլուխ 'ի կուրծս 'ի կողս Վժգահակոյ .  
 Ընդ բոցաշունչ կայծակունս վշապին ժամս հապուստ մըրցեալ՝  
 Որ զերգ մըրբիկ զայրազին հնոցի հոսեալ 'ի կողորդին ,  
 Գնայր քրբոսան ուկիք ապաժոյժ ընդ մազեղ լանջս , յաղցերսն առոյգ :  
 Տետեալ ապա զի չաղցին 'ի գիւտարին գաղանըն զհնք ,  
 Ոչ այլ գառք ինչ գոյ հարկոյ , ձեան 'ի թամբին ձրդեալ ճամբրուկ ,  
 Յոր պղնձին եին սարիք 'ի կալ եւ կապ մարտին գերեաց ,  
 Յայն խեղցին աճապարեալ , կըրհեալ հանգոց իբրև շուպան ,  
 Ի վերցոլուոյց ուլնն հրարուգն արկեալ ձեպով , կըղծեալ ուժգին ,  
 Ընդ անութ առեալ քարէք երկվարուն հեղձամըզձուկ :  
 Ո՛վ զարմանք . զոյք նըմին խափուցաւ հուրն փորատեալ ,  
 Խըքեալ ուրգք ցընցուգք եկց պարանոցին ընդ երկայն փող .  
 Ըխթաներ եւ գիւթական բոցասալար մայրեացն հըրդեհ :

Չահափեա ճիւտոն ընդ քարչ արկ 'ի հրադեղ փէ՛ ծըծըմբոյ ,  
 Որ յանձաւս ինչ փապարաց ուրեք անգէն 'ի խորխորին  
 Ի պախմանց եւ պատառմանց աշխարհակուլ հեղեղաց ջուրց  
 Կայր յոյնժամ՝ բերանացեալ 'ի մեջ լերանց գոյզն 'ի բացեալ ,  
 Եւ պըրկեաց անգ 'ի սարեխ քարանձաւին շղթայակապ .  
 « Հայկանոյ՛ 'ի խարուկէն , զոսայր , կապէ գեեղ սաս 'ի հնոցդ » :  
 Եւ զի քի յանկարծ երբէք խըզեալ զիսպանսն ելցէ յորջն  
 Միւսանդամ՝ ապականել զերկիր յարին եւ յըզձութինս ,  
 Մերկացեալ ըզցին եւ զարգ յանձնին , հանդէպ անգ արտոյեան  
 Սկայակերպ փռեալ կանգներ զինքն յայրին զուրս խըրտուկ խուճապ :  
 Յահէ անտի ստեղացեալ՝ փեմտառեալ կաց անխըլլիրտ :

Չայն առ իւրսն ամներ անգուստ առիւծարար եղեալ գոչին .  
 Գան հփացեալ ընդ եղեպուն , անունն զանկեալ սկայից կապուս ,  
 Ըզվիոյն ինքըն հրուգին զանձամբ արկ զէնս , հեծաւ 'ի ձին :  
 Առեալ տաներ ըզնոսս եւ զգըժոխոց եցոյց պատրանս ,  
 Չերկնաւոր արջերութիւնն եւ ըզբիւրասպ 'ի փէ՛ հրեղէն  
 Չի հեծեր եւ բոց մըրնէր լուգեալ 'ի փէ՛ ծըծըմբավառ :

Պար կըրձուիք զխստակարեկ զգրապետուն առեալ վաշտուն ,

Վարձ արարեալ գան ըստէպ առ զօրն ընդ նոյն կապանն անձուկ ,  
Ինք զանխուլըս վայրացն որոց տեղեակ էին հրմուտ .

Եւ եկեալ ժամանէին 'ի Թորդոմեանն յազԹող ճակատ :

Ձայնք հընչեցին աւետեաց 'ի զըրուանեան նախ 'ի Չոլքր ,

Անտի շփնդ համբախն ընդ երկոսեան հարաւ բանակ :

Ձայն առեալ ցընծութեան հայկեան գօշին գունդք ընդ երկինս .

Աւետիս մեծ յազԹանակ ընդգէժ կրրկնեն լերինք եւ բլուրք ,

Եւ 'ի սիրտ տխտանացոց ընկենուին գոյժ բօթալից :

« Ո՛հ աստուածոց ըստեղծօն , սսեն 'ի հենգն արկեալ զԲիւրասոյ .

Հօրն ըզկնի աստուածութեան՝ ծն եւ զցընկնեալ աստուածորդին ,

Ուր ծննդն է աստուածոյն՝ հապ եւ ծննունդն անգր իջցէ » :

Բայց խընդութիւն Թորդոմայ փոխէր յայնժամ 'ի մըլժին սուգ :

Արեւն անցեալ զցարգածամբ լերանց Սասնոյ եւ Շատտիսու ,

Բջրեալին ճառագայթան առ իւր կոչէր գառնալ 'ի մայր .

Այլ ոչ գուլ էր ոչ գազար արիւնտխանն զինուոց մարտին ,

Մոլէր սուր , նիզակ եւ նեա ընդ մեծամիգ ռազմին ճակատ ,

Եւ քան զնոսա բարկութիւն սրբամբողութեան անընկճելի

Յանհնարին քէն յիսութեան գազանեւոց տխոյեանից :

Յարեթեան արին Փառնակ , յոգի եւ սիրտ հայր կարեղէր .

Եգեալ այն օր յաչս ըզմահ , մի տեսանել այլ եւս արեւ

Յեա ճրագին շիջանեւոյ ասն՝ միածնի իւրումն ուտար ,

Ընդ բանակին տխտանեան ընդ լայնալէր երկայնութիւն

Որոտեակ յուզեալ անձին մահ անուանի՝ զբասանի ոչ :

Ինքն անժիւրս կոտորէր՝ որգոյն արեանըն փոխանակ ,

Ձայն վըրէժ հասուցեալ վազազրբաւ ոգւոց նորին .

« Արգ մշտագիւր մեռայց » , ստէ , եւ յարժանին իւր տխոյեան

Ի գեղարգնն ստեղծի բեշեան բազկին զանձն ընկնուտ :

Չեւ 'ի նա հասեալ՝ եհար եւ սատակեաց զԱրշամ , զԹեմուր

Եւ զՊառակըն կատաղի , սկայս անձնապահ տխտանացոյն ,

Եւ այլ եւս հինգ իրանս յաննըչանից արանց քաջաց :

Չվերջին աշտն առաքեալ յեալին որգով Բեկայ 'ի կողս ,

« Արտ ուրեմն , ստէ , մեռայց , ծն առ զաւակս յըրեա եւ զեա » .

Եւ կորզել աճապարէր անարգիլ վէժ մի սպասած ,

Որ անկեալ յաւիտանից եւ այսրը կայր անդ 'ի գետմին :

Մինչ կըռուեալ գեւ ոգորէր ընդ զժժուրէին խըրեալ խարակ , —

Յիւր 'ի միտսն խըրում , իսկ 'ի բնէ խութ ինչ ջեց ժըւից — ,

Հաս տխտանեան մեկունգն ըստուար , Թափանց ընդ ողքն կորով

Ընդ գետին վարսէր ըզքաջն , եւ ոչ եւս այլ յառնէր կանգնել :

Այսպէս զափամբ Նիլոսի մըրցի տխտեան ընդ աւիճուան

Որ ըզարմ եւ ըզաւակ ըզոյս բուռոյն իւր անձիտեաց .

Աչքն բոց , կոկորդ փեռեկ բերանաբաց , կարկառ ճիրանք

Ճակատեալ կայ յաւազին 'ի խորիստ վիրագն ամհարար :

Չափ առեալ զլայրին առիւծ՝ 'ի մի եւեթ խոյանայ վազ,  
 Բամահեալ զթեփոտ մորթոյն եւ զեփա առ խիտ արասն ճողփին,  
 Զպատենաղէնսն եւ ըզկողան 'ի մի հերձու հարուած ժանեաց:  
 Թեքթեքեալ մոյլին նըհանք ճապուկ ճոճիւք կոծէ զտըտունն,  
 Ահաւոր ընդ երկինս արձակեալ ճուշ գառնակոտոյ,  
 Փըրփրերափ գազանացեալ կազմ 'ի գօշեւ կայ զոխերինն՝  
 Ըգճապուռնն սոսկալիս մըխեալ 'ի փոր սէգ ոսոխին:  
 Երկիր յարին ճապազի, գետափն յահեղ հընչէ գօշեւն,  
 Դեռ եւս յերկայս յաղթանակ, գեռ եւս յոգիւրն կայ ճըգնի:  
 Այլ 'ի գոռս արիական լանջաց մունչից անգանացայտ  
 Ոստեալ առիւծ՝ արկ տապաստ, զոսկերսն երկկ, ճըրձեաց զաղփս,  
 Պատանեալ ըզսիրսն՝ արրոյց զարեանսն ւպատեք եւ զբարկութեանս:  
 Խրախուսեալ ւարժանեք տիտանեան գունդք բարձին ըղձայնս.

« Թեպէտ եւ չէ վայելուչ ընդ Բիւրասպի հօր սա կըշուել,  
 Եփեացէ հեռ ընդ հեռ որ զարժանին լուծցէ վըրէժ:  
 Ըզինամին որս այս տարցի, եւ վազուի այգ ըզինամիտսն,  
 Ուր փեսայն է ճեպել, եւ կատարել անդ հարսանիս »:  
 Դիւցաղին Հայկայ լըւեալ ըզգառնաղէտ զոյն մահու բօթ  
 Եւ ըզմեծ ոճիր վնասուն ընդստուցեալ իւրում գընդին,  
 Երկզքումք բախեալ ձեռք զաղցերսն՝ եհար ծափ ըղծափի,  
 Գօշէր աբեւժաբար, վարազախառն անկեալ կամեր  
 Հասանել վիրազին թափել ըզգէն վըխժուցն 'ի ծոց:  
 Թեպէտ եւ զմութ տեսներ տարածամեալ երեկորոյ  
 Մինչ 'ի գլուխս էլեալ մածեալ բըլրոց բարձանց եւ անտառաց,  
 Ոչ նախ կամեր ինքն առաջին գուշ առնուլ կալ 'ի գուպարէն:

Իսկ Բեյլայ զսուգ կորըստեան ասպաւինին իւր Բիւրասպեայ  
 Եւ զստակմանն ւարժանս յաբեթասերմ մեծ իշխանին  
 Շատ առ այն որ համարեալ, ձեռս 'ի ոսղէն ելեալ 'ի գլուխ,  
 Եւ զի մույլ երեկորին մի առաւել վրասնագեսցէ  
 Զվայրացն անփորձս, ետ հրաման՝ խաղաղութեան հարկանել փող:  
 Ինքն 'ի նոյն՝ ուստի զայգոյն էջն՝ 'ի բըլուր գարձեալ ընդ կրուկ,  
 Ելանել 'ի միջոցի անդ ամբանալ խորհի սպային.  
 Յեա անբաւ կոտորածի՝ գեռ տակաւին ամբոխ սաստիկ,  
 Որ խուսեալ հեզան զեզան՝ պատ ըզբըլըոյն տուեալ իւրեանց,  
 Եւ 'ի ծաւալս առաջից զառըստորեան համայն լըցեալ,  
 Մինչեւ հասցեն բովանդակ ոյց ակն ունէր եւ այլ գընդաց,  
 Եւ յանձն իւր զայրանայր ընդ գանգաղկոտ յամել չըւոյն:  
 Տեսեալ սափայն զի չեմուտ 'ի ճամբար Հայկ, ոչ ընդ ջուրն սնց,  
 Մընացոյց եւ ինքն ըզզօրն իւր ընդ բըլրոյն ըստորոտով  
 Ամենայն զինու զարգու վառեալ գրօշուք, զօրագըլխեք,  
 Ի Թորգոմեան գիշերախառն յարձակմանէն երկիւղած: —  
 Հայկ 'ի մարտին ասպարէս, անտի տիտանք, աստի հայկեանք:





**ՀԱՅԿ**

**Դ Ի Ի Ց Ա Ջ Ն**

---

**Դ Ր Ո Ի Ա Գ Ք Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ**

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Գիշերօթ բանակաց 'ի բացի. նշան Ստաուածուստ երեւեալ յո՛հ եւ յերկեւջ ամպարչապոն: Ի գծոնաց սպառազինեալ թէ՛լ՝ քաջաւերի յազմել: Ընդ այդն խառնին երկրքեան բանակքն. քաջութիւնք թորգոսեանց եւ ճնուանդ նորին ինքեան Հոյկոյ: Ընկրկեալ տխտանեանց՝ զօրանան ընդդէմ կոլ միւտանգամ. վանին գարձեալ եւ գնան ժողովին պատեն զքլուրքն՝ ուր էին աճրանայ թէ՛լ ընտրիւք: Հոյկոյ գերեքանկիւնին իւր կազմեալ՝ խաղոյ ընդդէմ նոցա 'ի բլուրն: Ատաուած զմահն առաքե առաջէ Հոյկոյ 'ի վերաց թերաց: Վրտամ մեծ ինչ առնել կամեցեալ կամ մեռանել, անկանի քաջութեանք: Ներձեալ Հոյկ զառաջն բերեանց, ստտակէ նեախ զթէլ, հալածեալ եւ զաճրին, գառնայ գոյ: Գահութիւնք առ Ատաուած, հանգերձ մարգարեախառն նապօր Նոյի: Ազոս ողբունեալ ամենեցուն զՀոյկ տանուաւերական զլուխ եւ գնա Հոց ըստ պայմանաց օրինուար իշխանութեան, եւ զայն գիշեր 'ի հանգիստ եւ 'ի իրախճանս անցուցեալ անդէն, ընդ առաւօտն գառնան 'ի Հոյկաչն, եւ որձակի բանակն:

# Հ Ա Յ Կ

## Դ Ի Ի Յ Ա Ջ Ն



### Դ Բ Ո Ւ Ա Գ Ք Ս Ա Ն Ե Բ Ո Ր Գ

Մահապետըն թորգոմեան ջերմ արտասուաց յորդ վատակոջ  
Ջհարի գըթոցն հատուցեալ առ Փռանակայ քաջին մարմին,  
Ընդ ապրացու վիրաւորսն տայր հրաման բառեալ պատուով,  
Եւ տանել 'ի ղակիշն յիւրում վրանին հանգուցանել  
Առ վաղիւ՝ յոր վըճարել ուխտեր ըզկոխն եւ ակն ունէր :  
Ամբարձեալ գիւցազնն հայր 'ի գիտկոյտ բեշեանց կարկառ՝  
Ձայն արար առ գունգարն, « Մի գէ՛մ՝ դը գիցէ գցայգս 'ի ճամբար :  
Աստ Աստուած, աստ հայրենիք : սիրօղն աստէն արձանասցի » :

Ինքն իւրովք ձեռականօք առանց ինչ կապ լուծանելոյ  
Ապառազէն 'ի բացի անցուցանել կայր զայն գիշեր,  
Ոչ հայ առնոյր եւ ոչ ջուր, արուսեկին մընայր ծագման,  
Բոց մարտից յաղճանակի վառեալ 'ի լանջսն թաւարծիս,  
Եւ զի մի գիշերագնաց գերծցի Տիտան որս անձնապուր :  
Չնոյն առնէին ընդ նրմա բազում աւագ զօրազրէնեան,  
Այգուն իզձք լինելով 'ի գառնութեան ձեռնարկել գործ :  
Որպէս գայլք գիշերընթացք որ առ հօտից գարանեալ գոմս  
Ըզպապեռեալ եւ զպապակեալ լիզեն լեզուս 'ի հոտ մարմնոց :  
Իսկ այլում զօրականին ոչ ինչ զանձանց արգել գարման :

Յեցեալ առհասարակ յարիւնտաթոր նիզակաբունս  
Ըսկէին առքնութեամբ այնպէս ըզցայգն այն ահաւոր  
Ի միջի անդ հովտին արիւնտուդ ծովացելոյ,  
Լուզիլոյ զինուք արանց, տեսլեամբ մահուց եւ արհաւրօք :  
Որ եւ ոչ գագարեին ինչ վայ աւագ ձայնից հընջմուռք,  
Թըւէին գեռ եւս անգէն մըզել ըզնոյն արւընջեան մարտ :

Խայտալին սկայք ամենիք եւ քաջախիտք ընդ ստաժոյժ ,  
 Որպէս առեւծ բաշաւոր , արինասեր եւ քաջաշունջ  
 Ի նախնիրս անհուն հօտից եւ հօրանաց կոտորելոց  
 Ըզմայլեալ յարեանցն 'ի բոյր' բոսորայնն կայտակ անձամբ :

Տիտանեան պետք եւ իշխանք 'ի Թորգոմեանց զանգիտեալ ,  
 Հայկ անփոյթ զարշաւանէն՝ իակ գործածաց ընկեանց 'ի խելժ ,  
 Վաստակեալ առհասարակ գունդք հուսկ ուրեմն եւ զբաժառք ,  
 Ո՛ր անգէն յառնկելիսն յեց 'ի նիգակաւն ներհնչցին ,  
 Ո՛ր զգեակամբք անկելոյ սկայից յանջոյթ մշտն 'ի քուն :  
 Արի գիւցազնըն խոհեմ , խայտակն ըսկայն հայրըն Հայոց  
 Բացեալ զաշն յարինալից 'ի գաշա անբաւ կոտորածին ,  
 Արտասուս բլբլեալ ընդ այսս յանպարտ մուշեալ սրոյն 'ի զոհ ,  
 'Կա եւեթ արձանացեալ բախախն Հայոց կայր գէտ արթուն ,  
 Եւ աթօք Հայրապետին մեծի երեալ ընդ Ազնն գրախ  
 Եւ ընդ գունն արեւելից յաթոս Արբոյն՝ հրակեր յերկինս :

Լուսաթիւջ ստկայն բանակ ամենազօրըն զբուժեան ,  
 Բոցանիւթ Զուարթնոցըն գունդ՝ սաւանանթեւ իրեալ անգէն ,  
 Զերդ հրեղէն գէտ ծաւալեալ 'ի կոհակէ Կապուտողն ,  
 Ընթացեալ զեռայր գայր 'ի բացօթեալ հայրեան ճամբարն ,  
 Եւ պար առնոյր շուրջ ըզնփաւ՝ ծայր 'ի ծայր ծուպ 'ի ծուպ խառնեալ :  
 Ի սրարշաւ հիւրն գարոց զմեծատարածըն բանակաւ  
 Բոլորակ մի մեծ հրափայլ եւ հրապարփակ շքրտազարոյր  
 Պատ առեալ պարունակեալ մանեկածեւ գայր յերեւոյթ ,  
 Զերդ զահագին եւ զանյայտ ջրքնոյ շքնչանն Արտախաւրթն :

Յսակացան յոյն միտայիշ տիտանացոց ըսկայից աչք ,  
 Զմարթացեալ համեմատել գիշերադէտ արկեալ հրատից :  
 Եւ անմահ զորութիւնք Զուարթնոց երկնից ցայգապաշտանք  
 Գունդ առ գունդ կաճառեալք յերազանչիւր յօրինուածոց  
 Ի վերոյ դադաթեան հայրեանց գրբեոց լուցեալ ըզընհս  
 Խարուկածին զերդ բորբոքեալ բոցս յերկնից գաշաըն կապուտակ ,  
 Լըրջամիտ սքքնութեամբ աստուածապահ սկէկն զընդին :

Զայն տեսեալ ըզքանչելի ամենազօր ձեռին նըշան ,  
 Տայր սակաւ մի զանձն եւ Հայկ անօտք քնոյ յեց 'ի մըխանդ :  
 Զակն 'ի վեր մերթ ամբարձեալ՝ նըշանորկ մի ահեղ վազաժ  
 Միգատարր եւ լայնասփիւս վտեալ արտամբըն ստակաւս ,  
 Ընդ կապոյտ խորանայն անգընգախոր ձեւեալ կամարս  
 Ի կողմացոյ սայլաթափին 'ի ծիւրն երկնից սեղ ընթացեալ ,  
 Տարածեալ պարզեալ զարտուն նիգակածեւ վազախաւոր  
 Ի ճամբարըն տիտանեան յահարկութիւն ամպարըշտոց :

Բեկեանք գէտայն 'ի խոնարհ 'ի լուսեղէնն օդամանեակ  
 Բակ առեալ ըզթորգոմեան արի արանըն բանակաւ ,  
 Կառուցեալ 'ի վեր յերկինս աչս 'ի տեսին Հիասարասփ ,

Հանկէն անձանց եղևոքն կարկառեալ յայնր՝ կուտէ :  
 Տաղմապեալք 'ի սոյն վարանքս հասարակ գիշերաւ չափ,  
 Անտի անգր անկեալ 'ի քուն խորին եւ Թանձրք խորզային .  
 Բայց Բեկայ պարգև քընոյ յարեւանունսն իջաներ ոչ,  
 Ձի եղևալ կասկածա՛հար զեկեց մարտին կայր մըտափոծ :  
 Առաքէ 'ի բուն բանտին 'ի գլուխ բըլըոյն բուռն հրաման,  
 Հանել անտի արձակել գիշերախառն ըզկանանին ,  
 Չճանրազին աղի եւ ըզկահ եւ զամենայն սարուփարթայ .  
 'Նոքա էլին, եւ անկեալ 'ի չու խորոյր մեծ կարուան :

Ոչ ընդհատ ինչ 'ի Բեկայ Սանգարապեան յանդունգս 'ի խոր  
 խեթա՛հար ցամամբ քինու զընտաւ անեալ զիւր պարտութիւն,  
 Եւ զի զէնք եւ զրահք Հայկին յերկնաւորացն զօրութեանց  
 Ջըրգեղեալք՝ են 'ի սլաքացն մարգէլայնոց անգըծեկք ,  
 « Թէ մեր, առէ, բըլթեցան անթք մարտի առ Միքայէլ ,  
 Փըշրեցնն սակայն զՀայկին, եւ կամ Թէ գէթ ունիցին առկ » :

Ըջփերասպեայ զարանեակն ապա զմանուկ իւր սփրելի  
 Որ ընդ կորուստ կախարդին կայր մեկուսի յոյժ կորակոր,  
 Կոչեցեալ՝ աոյ զգըծոխոյն ահեղ 'ի ձեռս ըսպառազնս ,  
 Եւ սուտեր, գեղարքն, առպար ձուլեալ 'ի քրոյս անգընդային :  
 Առաքէ առ սխտանանց պեան 'ի վերայ կապեալ պատգամ .  
 « Առ Կապուտաղն աղեղն հըզօր խորտակեցաւ Արիական,  
 Սակայն Հայրըն Բիւրասպի ոչ ընդ մեռեալս երկրի նընիէ,  
 'Նա 'ի խոր սանգարամեստ ընչ երկրաւոր գէջըն յակումբ  
 Կենդանուց ել խառնեցաւ, եւ չէ աստուած ըզքէն անփոյթ,  
 'Նա զայն առ քեզ առաքէ զպարգևըս զից վեհապետին » :

Ըստանձնեալ գիւին զաւանդն եւ զհերպարանս ժանտին Քամայ,  
 Գայր ուր նըստէր սխտանեանն 'ի սարահարթն իւր իշխանօք .  
 Իբնէ զկաղմածն առաջի, զհրեշտակութեանըն աոյ պատգամ :  
 Մինչ 'նա գեռ սպիւռցեալ բառնալ կամէր ձայն առ խընդին,  
 « Հայր, զիմօրդ եւ կամ ընգէր զիս մոռացար մինչեւ ցայտօր,  
 Ձի եղին եւ յո՛ չոգան ուխտք զըծոխոց, ո՛ր օգնութիւն » ...  
 Սեռա ողին եղևալ անհեռ ծածկէր 'ի մաշլ գիշերին մութ :

Բէլ անգէն 'ի վեր վազեալ՝ պերճ արարգեւին ունէր չընորհ,  
 Երգնոյր յունին անգընդոց զերգումըն սուտ եւ զանկատար .  
 « Լըւիցնն արդ զայս գըծոխք, սանգարամեստք եւ տարտարոսք,  
 'Նա չուիցնն եւ երկինք, եւ որ յանուան Բարձրելոյն զահ .  
 Երկիւղ եւ ոչ մի բնու 'ի միտս ի՞մ ծընանի, Թող Թէ 'ի սիրա :  
 Օ՛ն եւ ծն, վաղիւ ընդ այգն, եթէ կենօք եւ Թէ մահուամբ,  
 Բայց կենօք մանաւանդ անշուշտ յուոյ քան Թէ մահու ,  
 Չախանեանըն Բեկայ հանից 'ի լոյս ըզյաղթութիւն,  
 Եւ զյաղթթեան զածածի զկորանս որդւոցնն Թորգոսայ » :

Բուռն հարեալ զպողոթատիկն եւ ըզլրկունդ նորապարգև,

Փորձ փորձեր, հանգէս առնոյր 'ի զէնս երկուց Թանձր ըսկայց  
 Յիւրմէ գրնգէն վերս վառեալ պահպանակօք անպարտելի :  
 Չմին կոփեալ ընդ գրչանոցն պողպատեայ՝ ձեղքեր յերկուս .  
 Թափ միւսուսն 'ի լանջլս զարգն անցուցեալ կողմն 'ի կողմանէ՝  
 Արկաներ տապաստ . կային ամենեքեան հարեալք զահի .  
 Ոչ զք ձիկ իշէեր հանել ընդգէմ՝ կենաց տեսն եւ մահու :  
 Չարի սկայից սիրտ 'ի Թունգ հաներ վերջին այգոյն խօսնակ .  
 Չարեզակն 'ի սարոյն ձայներ արծուին յոտորտ կանչին .  
 Իբրեւ փոզ գոչել մարտի զարթուցանել ըզնահատակս :  
 Արուսեակն 'ի կատարսն համբառնայր բարձանց Մոկաց՝  
 Գոյժ յայնկոյս յարուայիկ գաշտ, տալ աւետիս լերանց հայոց :  
 Առկայծեալ ջահք աստեղաց նուազեալ տակաւ շիջանէին .  
 Վարսաւորն ահեզ միայն կայր տակաւին երեւեալ գեռ  
 Ի հասպուտակն ասպարէս հրկայպբայլ ճօճեալ 'ի ձեմ ,  
 Ոչ յերեսաց պատկառեալ իշխանական ախան տուրնջնան ,  
 Ոչ ճաճանջիցն արփենից կամեր զօղել 'ի ծով անհուն .  
 Ոխերիմ ազդեցութեամբքն 'ի ախտանանց չղպացեալ գլուխ :  
 Եւ մանեակըն բոցեզէն պարայածեալ զհայիեան գրնգաւ՝  
 Գայբայեալ լուծեալ սրփուեր յօգսն տակաւ Թափանըչալ :  
 Լուսանիւթ հրարուն սրովբէք հրեշտակախումբ այնր ջուկոյ .  
 Սկըզննապար արիական առեալ գասու զհայոց հրեշտակ .  
 Փող 'ի գրչոց շուրջ բարձանց հարկանէին աւագափող ,  
 Չաստուածազօր բանակին վառել զօղին նահատակաց :  
 Եւ գիւցազիննն վահան զարձոյց 'ի նոյն պտտասխանի  
 Աւ Չուարթնոցն շեփորից ձայնս , « Աւասիկ մէք 'ի հրամանդ » .  
 Դբբրդէր ճամբարն ողջն , 'ի զէն 'ի զէն , նըշանք 'ի վեր .  
 Ոստնոյր հայի 'ի Յողակն օգասպարիկ ճանճաճերմակ ,  
 Որ ուս տըւեալ խոնարհեալ սիրեցելում կայր վեհազին :  
 « Արի Յոչակ իմ կայտառ , արի եւ մի զանգիտեր ինչ .  
 Դարձուցից այսօր յաղթօղ զքեզ առ Անոյշ եւ Հայկանոյշ .  
 Որ քեզ բուռ ջամբեսցէ իւրով փափուկ եւ գեր ձեւամբ ,  
 Իբր ինձ հօրբս խորտիկ մատուցանէ ցանդ 'ի սեզան ,  
 Եւ քեզ զարի կախեսցէ 'ի պարի՝ անկուած իւրոց մտատանց » :  
 Բէլ՝ զէտակըն նորագունդ զօրուն եկից եզեալ անասք .  
 Ըուրջ հայեր նըկատել ըզյարուցեալ փոշին տոկց .  
 Լըբաներ 'ի խելթ մըտացն յահէ աւուրքն զնայեղոյ ,  
 Որ կայեալ էր մանաւանդ ըզլըթուցեալ եւ զխոնջ բանտին :  
 Այլ վերին երեսօքն եւ 'ի նոր զէնսն խրափուտեր .  
 « Այս արեւ , իմ քաջազունք , բախտի Թագին է 'ներքովթայ .  
 Տեսցէ այսօր եւ ցուցցէ սա զյաղթանակ ձեր աշխարհի :  
 Պինդ եւելթ կացլիք յուխտիդ , եւ լաւ անձանց համարեսցաք  
 Մեռանել քան զպարտութիւն առաջի բուռն մի մարդկան

Լէւնականաց սակաւածեռն հոգևաց խումբի հուշկահարաց :  
 Արք էիք մինչև ցայսօր , արդ եւ զանձամբք անցընք 'ի վեր :  
 Շատ և ձեզ ընդ ուշ տանել՝ որոյ զընդի էք մորականք ,  
 Յէր վերայ 'ի գուպարած առ ապրտամբորդ մատուցեալ » :

Ձայս ստեղ եւ ըզձականորն յասպարէս մղէր մարտին :  
 Խաղայր գայր իջանէր անկարդ հրոսեալ սկայից ամբոխ  
 Խառն 'ի խուռն եւ յանգուզն յարձակմամբ շահատակեալ .  
 Զօրապետաց գոռային սաստկացեալ ձայնք անհզագոջ՝  
 Վաշտանալ զընդիցն 'ի ուզմ , 'ի ճակատու կազմս յորինել :  
 Խումբեցաւ պատերազմ , մահու՝ կենաց յետին օրհաս :

Խաւարին Բէլ՝ Թուփ զինուք յամենին սեաւ ամբարտակեալ ,  
 Վառերուք ընտրիւք ըզկնի՝ գայր որպէս լեռան ինչ ահագին  
 Կայծակնահար խանձառեալ սարաւանդեալ 'ի մէջ բըրբոց :  
 Զերկածի զմտախի՛լապատ ըզգրծոխոցն սաղաւարտ  
 Ագուցեալ 'ի գլուփ վերջք նըշանաւոր փողփողելուք ,  
 Պըզընձիս Թիկանց լանջաց բազկաց բարձից պատենազէս .  
 Գօտի գմբղով , յահեկէ Թանձր զբառին սուր երկայտի ,  
 Ի ձեռին արջ նիզակ ամհհամուղ , յահեկն ասպար ,  
 Եւ ընտիրք յարմէ քաջին եւ 'ի ձախմէ սկայք սիտանևանք :

Ձայնարկէ Հայկ 'ի բանակըն Թորգոմեան 'ի Յոլակէն .  
 « Ի մօտոյ եւս է տեսեալ ձեր զԹըշնամուրդ երեսս , ո՛վ արք ,  
 'Այն նորք են որ երէկ , ձեր իսկ սուսերբըզ ձանաշին :  
 Օն եւ ծն , ճըշմարտիւ , ոչ Թէ կանայք , զբոտերք , մարդիկ  
 Կան ձեզ այսօր 'ի զընին 'ի շուրջ գիտակ տեղեաց մարտիգ ,  
 Այլ երկինք 'ի վերուստ , բիւրից բիւրուց աչք արփեննիք ,  
 Եւ վերին գընտին Չուարթունք 'ի կամարաց վեհագունից ,  
 'Կա եւ Բարձրեալն իսկ ինքնին յամենակալ բարձր աթոռոյն .  
 'Արք զհարուածուրդ Թուեսցեն , զոր զԹըշնամիս Երկնից հարջիք » :

Ձեւ ըզխօսսըն յանդ հանեալ՝ յառաջ զորդէր ռազմին ճակատ ,  
 Ձայն ինչ ժիր ոյժ եւ զոգի եւ զհաստաբուռն ըսթափ բազուկ  
 Ի մէջ անցուցեալ 'ի մեծայաղթ արութեան գործ ,  
 Իբրեւ այն Թէ գեռ եւեթ 'ի կոիւ մըտեալ ախոյնեաց :

Ձիկէն խուռն մի շոգի յուանդնապտոյտ յորձանից սան  
 Փողեալ հրաբուզն բըռնութեամբ շարժէ զգործեաց կազմած հըզօր ,  
 Ճախրաւայաց մրբրկութեւք հերձեալ զանգունգրս փըրփրադէզ  
 Չահագին վարեալ ըզուսա ընդ ամենի տանել ալիս ,  
 Կամ զերկրաւ ըզմեծամուր զաղխազխեալ կառս յափըշտակեալ  
 Ընդ հորդեալ շաւիղս անուոցն երկաթակուռ հարթ արահետ  
 Թռուցանել փոթորկաբար յանհուն զաշտաց սուր ասպարէզ ,  
 Միտք անիւ արշաւանացն յանասատելի անդունդս ափշին .  
 'Այն եւ զոյգն ինչ բերանոյ սպարապետին ցընդելի շունչ  
 Զօրութեամբ մղէր ողոյ զբանակն անհզ կազմ 'ի նպատակ ,



Ի Յողակին ոսս՝ Յազ[Թու]թեան հորգեալ զանկոս Գաջութեան հետս :

Իբր յարեանց ելեալ ծովէ ակն արեւուն արիւններանդ  
 Ծագէր այն օր Թորգոմեան վառեալ զընդիցն 'ի հանգիսոց  
 Յերես իւրեանց եւ 'ի զգեստ զինուն զարգուն փայլառակեալ :  
 Թէ զնոսս գուն ինչ նեղէր ընդ ըբրտ աչացն խոցելով,  
 Այլ պղնձոյն եւ երկաթոյ բոց ճաննչից արփիտացոյս ,  
 Մանաւանդ որ 'ի փայլուն ջինջ ասպարոց զեռեալ շոքին ,  
 Յոլա հատեալ ճառագայթից յապակեղէն իբր 'ի ծովէ՝  
 Ըջնոյն ինքն իսկ զարեգակն աճեցուցեալ ըբւրս 'ի ըբւրոց ,  
 Յամենուսա ըզտեանեան ճակատուն աչս հար չբլացոց :  
 Երկրքեան առ միմեանս հասեալ բանակքն բախեցան ,  
 Յազթ հասակաց ըսկայից ամբոս հրոճուս պատերազմոց ,  
 Մեծամեծք իսկըբանէ յաւիտենից արք անուանիք :  
 Որգունակ յամպրոպացն 'ի մաշլ ծոցոյ Թափեալ շանթի ,  
 Ի Թուխ Թեւըս փոթորկին Թուուցեալ յերկիր որոտընգոսս  
 Ի վիմարգ մըթերանոց յանգընգահիմն 'ի հաստարեսս  
 Ձընգանարգել սեաւ լուցիկաց ըրմբաձիգ հրազէն ճայթմանոց ,  
 Ի հեռուսս՝ հուր հոտոտեալ խանձ առեալ լուս մըռուս Ժանտին ,  
 Ընգզեմ՝ գոչէ որոտամբ եւ զըզըրգէ զիւր զոյսագիգ ,  
 Պատառէ զտիրտ անգընգոց եւ զապառաժսն տապալեալ  
 Յընդէ յամպս հասորս վիմաց իբրեւ փոշի ցանեալ յերկիր ,  
 Ծուխ բոցաշունչ , մեզ ծըծմահոս 'ի զըժոփոց անտի զցոյտի ,  
 Մասանին յահեղ ցասմանցն երկինք երկիր սարսափտեան .  
 Այսանակ 'ի պատահելն գոտացին միմեանց ճակատք :  
 Եսաաշնում՝ անգ յարձակել անհընարին եղեն խառնուրդք .  
 Ձի ոչ ազամ եկաց , ոչ կարգ ինչ յօրինի շահատակաց ,  
 Այլ՝ ամենայն վեր 'ի վայր հարեալ վըրգով եւ ազմբեկեալ  
 Ի կողմանցն երկոցունց վարազախառն յարձակմանն .  
 Ահագին պահուցանող կր տարազուցն ոտամանց տեպիլ :  
 Անգ 'ի խառն ըսկայակոյտ մարգիկ զընգազըն ազմբարանց  
 Բերանոյ սրոյ եւ 'ի սայր գիպեալ արգեանցըն բոցաթուխի  
 Արի հասակք անգամայազթք կործանէին տապալ յերկիր :  
 Իսկ ո՞ նախ 'ի Թորգոմեանոց հար զտեպեան , Ոգիգ Զուարթուն :  
 Արմայիսըն գեղեցիկ , արբուն նոր այն ինչ գեռ հուժեղս ,  
 Պատանեակ սրտեայ եւ քաջ ընգ Ընձտեայ հասակակիցն ,  
 Որ սիրելիքն անմեկինք էին յարի ճակատամարտս ,  
 Իբրեւ կըրկին առիւծուց կորկնք առոյգ եւ քաջալունջք ,  
 Ի վայրի խաչին նախձիրըս խայտայեալ արիւնտխանձ :  
 Մանկական յոխորտանք խիզախք 'ի զէն փայլակնընթաց ,  
 Պաշտպանեալ զայն միմեամբք եւ առ իրեարս հարեալ խորտայո ,  
 Քան զանձամբ՝ ըզբրայնոյ միմեանց զըլխով արկեալ զտապարս ,  
 Կարկառեալ ըզտէգս յառաջ 'ի զլուխ զընդի ծաղիկ մանկայոյն :

Եւանդիստ աշխոյժ արքուն՝ սոքա հարին նախ զախոյեանս ,  
 ԶԱնդրեան ըզհարձորդի բարեխիւան բռնաւորին ,  
 ԶԱնդրեան որ գայր խրոխտով ընդդէմ երկուցն համատիոց .

Ի բազուկ իւր կորովի եւ 'ի գեղարգներն քաջամուտ .  
 Յուսացեալ , սաստանելով զվագրակերպեան ձոյլ գրվանոցն ,  
 Յարձակմամբ թափով զաշտէն յարմայխեանն առաքէր սիրտ :

Ճիչ երարձ ընձակ առ գութ սիրեցելոյ պատանեկին ,  
 Ըզվահանն արկեալ ընդդէմ՝ կանուխ զհարուածն յինքն ընկալաւ ,  
 Ի տէգ նիզակ առժամայն շամփրեալ ըզսիրտ ըսկայ մանկանն :  
 Խարտէջ վարսիցն զանգուրք եւ վարդ երեսք հոգեալ յերկիր ,  
 Զէնք ոսկի , փառք պատանւոյն , յարին՝ փոչի թաթաւելով ,  
 Դեռափթիթ հասակին , աւաղ , արեւըն խաւարի :

Որ զքոյըն ափնիս ինչ 'ի հունձս հասկաքաղի զլացսւ մանկան ,  
 Յորմէ մօրն՝ հիւժեալ այրոյ՝ խիւս 'ի դարման կամեր տանել ,  
 Արդ զբժարչին այն յեշտասկ գահիճ նրմա լեալ չարաշուք ,  
 Կըպին փետէ զմրտաց խիղճն , եւ 'ի զբժոխս ընդ քարչ ճեպէ :

Վարազու խանչիւն ահեղ անդ առ սըրտին ցաւս արձակեալ  
 Բազլահա առւիտղ իւր գաղտ եւ սաստկանդամ սկայ մոլեկան ,  
 Սուր հանեալ վերացուցեալ գայր պատասեւ զհամբալին յաղթօղ :  
 Մանուկն անդէն հայկասերձն եւ հայկասիրտ հաստաբազուկ  
 Ձայն եգեալ առ սիրելին՝ զփոխարինին պարոս իւր թողուլ ,  
 Մըտանէ կորիւնն առիւժ ընդ միջ սըրոյն եւ ընձակայ ,  
 Սուտանէ յահեկէ փայլահարար ածեալ ընդ ալ ,  
 Հեշա 'ի քօգ սաղաւարտին եւ փողպպաա զրեհին օձեաց ,  
 Գաբժրլից իրբեւ զի ոք 'ի բլուր Կարեղ հար խաւարծիս ,  
 Այնպէս յերկիր ընկենու զահեղ կառափն եւ զահապին ,  
 Գաղանային առամամք բերանարաց օլեռեքեալ վիչ .

Զհետ զիթաւալ թընդեալ եւ յաղթ իրանն ունէր մեծ արտավար :  
 Յանկանել զօրաւորին յետս ընկըրկի տիտանեան վաշտ ,  
 Ձայն բարձեալ գոլնն հայկեանք յայն գործ մանկանցն քաջութեան  
 Փարաւազք գալար սըրտից , յոսոխան անկաւ մուժ շափառուկ :

Ամբարձեալ Արմենախայ գէտափն յայնկոյս արեանց գաշտին ,  
 Եւ յայլոց 'ի մտալուտ մանկան վտանգիցն զանգիտեալ ,  
 Վարէ գայ մրարակ 'ի կուշտ , եւ 'ի տեղի անգր անցեալ մօա  
 Առ որդուրն քերեալ ըզգեղաղէն համբուրէ գլուխ :  
 Զերկվարն 'ի խուռն ամբոխ մըզեալ սկայիցն տիտանանց՝  
 Հասանէր ըզփնի եղբօրն եւ Մանաւաղ , սիրտ առիւժու ,  
 Մընթեր ունելով զմանուկըն , Բազ զիւրըն կորին :  
 Երկոցուն հարազատից ոչ արժանի թուեցեալ ինքեանց  
 Խաժամուժ խուժանին անարգ գըլուխք սաղաւարտեալք ,  
 Զոր քաջաց թօթափնն ձեռք զերք թըզենեաց վաղահասուկ ,  
 Եւ մանրեն սրմբակակոխ որպէս օրան ըայն վահանակ ,

Ի բարձրաբերձ կառափունըս գե՛մ կալեալ ընթանային :  
 Ձմարացին զարի Մագայն, ըզկուռ վառւալ յերկաթ Մարաց ,  
 Որոց ոչ ինչ համարեն յաչքս իւրեանց ոսկի արծաթ,  
 Հարկանէր քաջն Արմենակ եւ զԹԹնեսօն զէւր փուշտօպանս ,  
 Ըզմիմեամք տապալ յերկիր կանգնէր գիտց խաղաղակոյտ :  
 Մանաւազ ըզգրբուանեանս պետս ըզԴադեր, գՅեկտան, զՄտադ .  
 Արին Բազ առ հօրն ընթեր մատուցանէր տէգ եւ նիզակ :  
 Յընկերրկեւ խրմբի սկայիցն ըզգանգաղեալն յետամընաց  
 ԸջՄըչկան մըկընգահար շամիրէր ընդ լայն Թիկանց Թոռոց ,  
 Մինչքեռ նա զերեսանակս անվարժ տըրմուզ երիվարին  
 Կամէր դարձուցանել ըզխրստերախ բիրտ անասնոյն :

Ի խոան անդ կուռ ամբոխին ոչինչ նըւազ մըխեալս յարեւն  
 Չայլ կորինս ե տեսնել եւ զհարազատքս գիւցազան  
 Ձհիւսիսախումբ քաջաղունս, եւ զընդոծինս հօրքն Հայոց ,  
 Ո՛ր 'ի մի, որ 'ի միւս կողմ, յաջ յահեակ Թեւս եւ 'ի միջին :  
 Ոչինչ պակաս Չարեհ, Արնակ, Արբակ, Վըստամ 'ի մի կողմանց,  
 Ո՛ր 'ի սուր, որ 'ի գեղարգն, որ գիւսգին մոլեալ վազերբ .  
 Եւ արիւն ջերմաջերմ ողողանէ զձիոց աքեացս :

Այլ իբր 'ի պարզ գեշերի յիւրաքանչիւր կայանս աստեղք  
 Անաղտ փայլեն վառմամբ եւ ըզմիմեամք պայծառացեալ,  
 Իսկ իշխանին տուընջեան եկիցն յարեւելից երեւելոյ,  
 Այն շողող աչեր շչանան, կան փայլակին եւ չքծագեն .  
 Սոյն օրինակ 'ի մտանել գիմաց Հայկին յարեաց գուպար  
 Մեծազոր փայլմանցըն փառք նրսեմացան նահատակաց :  
 Յանբաւիցն եւ յանորտտ բուռն բազկին գործեալ նախձիբս  
 Ահն եւ հոյն շուրջ բակ առեալ պատէր զնովաւ լայն ատարթոլ,  
 Ահն եւ հոյն 'ի սպառնայից սուրբ երեսաց ցայտեալ վեհին,  
 Երեկի եւ եռանգի սոսկումն ըզսիրտսըն Թօթափէր ,  
 Ոչ որ ահեղ զարկուածոցն 'ի խօզ սկայից գիմագրաւեալ :

Տիտանեանն իբրեւ ետես Բեյ զորձ կորինսըն Թորգոմոյ  
 Ի բոսոր ներկեալ արեան եւ յապաժոյժ հուժկու մանկատոյն,  
 Բարկուժեան բոց 'ի սրբաէն յերեսս եւ յաչսըն ցողունայր,  
 Մըռնչէր առիւծաբար, ընարիւք ցանկեալ Թիկիտապահք՝  
 Արձակեալ զերեսանակս սեւին մըղէր զանձըն յառաջ .  
 Ճօձէր գայր զահեղ Թոռուցեալ գրլխանոցին պերձ դարգմանակ  
 Եւ զնիզակն ամհամուռ . իբր ըզսեաւ մահ խաւարաբորբ  
 Տեասնել համարեցան հանդէպ ըզնա Թորգոմեանք քաջք,  
 Այլ ոչինչ յարուժենէն կասեցուցեալ զըրգուէին ինչ :  
 Առ սրբաին մըղձով նա լուռ իբրեւ զամբուս ինչ մըլժագին,  
 Որ զորտ, շանթից ցասումն անմուռնչ 'ի ծոց իւր բերիցէ,  
 Ոչ ուրէք որ գիտելով յոր զլուխ գանձեալ գայ պատահասն  
 Եւ յանկարձ ճայթեցեալ ցայտէ հրացան փայլատակունս .

Նոյն նըմին ընդդէմ ելինքն արի արանցըն տրոփէր սիրտ :

Ինքն 'ի տէգըս նիղակաց քաջ զախոյեանս ընկէց տապաստ ,  
Դիաթաւալ խաղացին յարի 'նդոծնաց անտի Տարբան ,  
Եւ Գիշկէն եւ Գորութ , նա կայր գուայր ընդդէմ բերուց .  
« խայտաջէք ' հօտ անհոգիւ գըտեալ գայլոցդ Թորգոմայ ,  
Այլ աւաթիկ ցուպ հոգուին եկեալ փըշրէ զգլուխս եւ զժանիս ,  
Ընդ կառափն հանել ընդ ձեր զոր լիզէցէք սկայից զարիւն » :

Կափ մի հըզօր անհեգեգ զառ 'ի սեւեկան ձրգեալ Թամբէ ,  
Չհարմայի քաջին հարեալ զսասար ' ճըմէլ զինքն ընդ նովաւ ,  
ՉՄանասայ գըլխանոց հարթեալ , տափէ զգագաթն 'ի նմին ,  
Եւ 'ի սիրտ արւոյն Մուշկայ կոփեալ յորսայս տախտապարեալ  
Տայր ընդ քիթս եւ ընդ բերան ժայթքել արեան կարմիր հեղէղ .  
Արաթուր սալարմբաւ ոտնատրոփին կոխեալ եւ զնա ,  
Չհահազին վաղակաւորն անդէն Թափեալ ճնդգեր ընդ մեջ  
Ըզիւրնգակայ խորխարն գըւխ ' աստի անտի կախեալ զուսովքն .  
Եւ յայնկոյս ածեալ բազկէ զըսկայն հաւուկ յուսոյ յանութ ,  
Եւ աջը Թիկամբըն հեռ ըզկէս մարմնոյն ընկէց յերկիր ,  
Դեռ կայտուէ Թեւն 'ի գեանին , եւ ինքն յահեակ տապալի կոյս .  
Եւ կորովոյն Դեմեոփ տըւեալ ժրպիրհ սայրիւն ըզգոր ,  
Թափէր զազիս զախոնդանս խոխոյնձայն զեռիք 'ի դուրս .  
Այս ամենայն քան ըզփայլակն եւ ըզանթ բուռն երազ գործեալ :  
Հեծեցին լանջք Թաւամազք , ճեռք Թորգոմայ 'նդ խոշոյն ժանտ ,  
Այլ հազիւ առ այրնաիրարն փուշտիպան բաւեն սալարս  
Որ զիւրեւըն մոլէին սուզ ինչ սակաւ ընդհատ յերմէ :

Թորգոմեան գիւցաղն ահեղ նիղակաւորն հաստարազուկ  
Ամբարձեալ գետակն 'ի վեր յայն ահաւոր 'ի մեծ տագնապ ,  
Խրախոյս որպէս բանակաց անհուն զօրու մարտամբոխից  
Միաբարբառ գոչելոց բարձեալ , արկեալ ձի Թափ ընդ այն ,  
Ուստի կայրն յաւեր գընդաց տիտանացուց եւ 'ի սպառուած ' ճախր  
ատեալ զայ խոյանայ յորան առաջի իւր պատրաստակ :

Որպէս Թէ ցին , անգղ , որոր 'ի մանր հաւուց մոլեալ երամ  
Ըզարաթեւ յանկարծ ըզկորձ կորակըտուց եւ ճապաւաւոր  
Նըշմարիցին ոստուցեալ յանձաւախիտ ժայրին ծագաց ,  
Յահաւոր տեսլինէն սոսկացեալ այր իւրաքանչեւր ,  
Եւ ակն ածեալ պատկառեալ առ 'ի յանգուգն յարձակմանէն ,  
Խոյս առեալ Թողու զորսն լըքանէ գլուսոյն իւրոյ .  
Այսպէս համայն Թորգոմեան ըսկայքն 'ի Բէլ մըտաբերեալք  
ՁեռընԹափք 'ի դուժ ժանտէն , եւ յամբոխին բացեալ փողոց  
Քառատրոփի դուրեալ ոտին տան Յոյակայ ճոխ ասպարէղ :  
Անց հայրն հայոց քաջալանջ , յաղթ իրանին լայն հովանի  
Ծածկէր զօրգինս յերեսաց օրհասաբեր պատուհասին :

Ձայն առ իւրան եւ տիտանեանն արկանէ անդ Թողուլ միայն

Ընդ բնիկ զինքն ոսոխին, գայ ձիաթափ փոթորկելով.  
 Խաղաղին մեծ ախոյեանքն աստի անտի յարձակ յարձակ,  
 Երկոքին ընդ երանօք սկայից զազանքն յերեսաւս հասեալք  
 Թոպեալ ճակատ ընդ ճակատ՝ ընդհարան անդ այր ընդ ընկեր,  
